

9/1994
Դավթ

1 / ՉՄԵՌ 2000

Եթե դեռ Արամին, Տիգրանին, Արտաշեսին եւ Վա
 Յաթանակող զօրութենէն քու մէջդ չունչ մը մնաց,
 Եթե Սերոբներու, Փարեաններու, Պետոներու եւ ԺԻՐ
 Դիպագնական քայլերէն քու երազողի նայուածքներու ա
 Մանուիրութեան, վրէժի եւ քաղաքութեան ճանապարհ մ'
 Ուրբէ՛ կեցիր այն ատեն, եղբայրացի՛ր խումբերու ու միջոց ի՛
 Որովհետեւ, գիտցիր որ այս գոհաբերումի, ընդվզումի եւ յոյսի
 Մեր ամէն մէկուն համար անկողնի մէջ հոգի տալը վատութիւնն
 է վատութիւններուն»...

ՍԻԱՄԱՆԹՕ

Երկրում, Սասունի լեռներուն թառած նա անընդհատ
 կռիւների մէջ է եւ կուսակցական կարգապահութիւնը նրա հա-
 մար Հէնց այդ անձնութեան ու կատարի ոգորումներն են յանուն
 Հայրենիքի ազատութեան Նա գիտէ, որ իր կուսակցութիւնը
 միակն է, որ իր պէս համոզւած ու հաւատով պայքարում է թիւրք
 բռնապետութեան դէմ եւ այդ պատճառով ինքը Դաշնակցական
 է. նա գիտէ նաեւ, որ կուսակցութեան պարտքն է ազգամայրերը
 ու նիւթական-աջակցութիւն Հայկայթել իրեն եւ իր պարտքն է
 կուռել անխնայ անձնութեամբ իր ժողովրդի փրկութեան
 համար:

ԱԻԵՏԻՍ ԱՅԱՐՈՆԵԱՆ

Յեղին սրտէն բխած
 Ցասումի զայրալից շառաչով
 Դուն մենչեցիր ահեղաձայն
 Արդարը պատսպար գտաւ սուրիդ փայլակին մէջ
 Եւ արցունքը որբին ու այրիին
 Հոգիիդ թեւերուն վրայ ծանրացաւ...

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.- Վ. ԹԵՐԵԱՆ.....	Նիւ Եորք, Նիւ Եորք
5.- ».....	Յաւիտեանութիւն
7.- ».....	Մամա
9.- Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ.....	Աշման տերեւոներու պէս
15.- ՎԱՐԱՆԴ.....	Նորա
18.- ՇԱՀԱՆԴՈՒԽՏ.....	Յուշարար հայելին
26.- Փ. ՃԵՐԱՆԵԱՆ.....	Տպաւորութիւն
26.- ».....	Մատեներուդ սառն մոմերէն թեւած
27.- Պ. ՄՆԱՊԵԱՆ.....	Անկիւնադարձ
45.- * * *.....	Սլաւիկ Ձիւղեանի երկու ամեակները եւ օրատորիան
48.- Ս. ԶԻՆՅԵԱՆ.....	Վրացի միւր Իլլիչ Լենին (Օրատորիա 10 մասով)
61.- Ղ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ.....	Օրերի փոփոխը
62.- Խ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ.....	Թէ ինչ կատարուեց յետոյ
63.- Ա. ՅԱՎՈՐԵԱՆ.....	Հիմա դու եեռացել ես
64.- Մ. ՂՈՒԿԱՍԵԱՆ.....	Բանաստեղծի յուղարկւորութիւնը
65.- Ռ. ԱՌԱՔԵԼԵԱՆ.....	Որքան մեծ է երազը, այնքան ծանր եմ արցունքները
67.- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ.....	Մարդ մը՝ ամուսնի Ձախորդ
69.- * * *.....	Ամբողջին համար տեղ կայ
71.- Ս. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.....	Ազատութեան հայկական զգացումը
90.- Պ. ՍԻՄՆԵԱՆ.....	Շահան Շահնուր եւ Վազգէն Շուշանեան
101.- Հ. ՄԱՐԿԱՐԵԱՆ.....	Կիրճն ու սեռայինը Օշականի քատերախաղերուն մէջ
112.- * * *.....	Վերադարձը
115.- ՍԻՍՄԱՆԹՕ.....	Անդրանիկ
117.- Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ.....	Անդրանիկ
124.- Ա. ԵՐԿԱԹ.....	Անդրանիկ
126.- * * *.....	«Ես Անդրանիկի գինուորն եմ»
129.- * * *.....	Անկատար հրատարակութիւն մը՝ «Օրագիր»
135.- Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ.....	Օրագիր
142.- * * *.....	Նշարներ
145.- * * *.....	Լոյս տեսան
150.- * * *.....	Մշակութային յուրեր

ՎՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՎԱՄԱԶԳԱՅԻՆ»Ի ԿԵՂԻՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Բագին

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԹ. ՏԱՐԻ ԹԻԻ 1 ԶՄԵՌ 2000 ՊԷՅՐՈՒԹ

Վ. ԹԵՐԵԱՆ

ՆԻԻ ԵՈՐՔ, ՆԻԻ ԵՈՐՔ

Այս քաղաքին երկնաքերներու քերքը,
երկինքը հազիւ-հազ կը շնչէ.
գործատր գեպը գորշացած
գրօսանաւերու աղմուկը կը հաւարէ
գիշերուան՝ բոլորին աջիւ գգունելու համար:
Տանիքները առաւելաւարք կը խաղան
եւ քամին չկարենալ շարժելուն համար
գլուխը փեղ մը խցած՝ կը բառաչէ,
խակ պոչը՝ կայարաններու մէջ աղբեր
կը փարփոզեն:

Միայն շուներն են որ փարթամաշուք կը քալեն,
կամուրջները՝ գրկանքներու եւ վայելքներու միջեւ
հեռապառ՝ օր մըն է կ'անցընեն.
փողոցներու բոլոր ցեղերը անփայթ կը ծերանան
պարմելով այնպիսի բաներ որ ոչ որ լսելու
ժամանակ ունի
բացի փրէշըլ ծախողներէն

և Կեղղոմական Այգիի տարեց քաղաքացիներէն:
Միակ քաղաքն է ուր գմբէթները այսքան ցած են
բարձրաբերձ են թերթերու կապոցները
շէնքերու անունները
անճեթթին ձայնը:


Յերեկուան ելեկտրական ցնցումներէն ետք
ուր թաքսիներ ձայնագրգիտ մողէզներու պէս կը տարան:
Ան, լուսեղէն մրմունջները իրիկուան,
սրսկուած լոյսը Պրոփուէի
ուր հասուն փորձառութեամբ մայրեր
իրենց պսպղուն ծունկերը կը թխկացնեն
գուգուելով ամէնէն փարթամ եւ ամէնէն անշուք
ճաշարաններուն հետ:

Նիւ Ետրքի արունսպը՝
վերաշինել է ամէն ինչ որ կարելի է եւ անկարելի:
Հաւաքել փնդեսական ուժ, քաղաքական ուժ
կենդանական ուժ, իրաւական ուժ,
հաւաքել արունսպը հզօրագոյն
եւ ցոյց տալ աշխարհին
հաւաքել գոյնզգոյն յիմարտութիւն
ու բարձրագոյն հանճար
եւ ցնցել մարդկութիւնը:

Թաքերասրան՝
ուր բեմայարդարումն է միակ յաւերժականը,
մանր՝ կեանքի սովորական ձեւերէն մէկը,
իսկ մարդկային կեանքը՝ յարաշարժ արուերներու
աւազան մը
որ ձգախէժէ ձեռքերով խառնելու է
բան մը հասկնալու համար:

Հասկնալու՝ համար.
ի՞նչ պիտի հասկնաս:

Ծեր կինը հանրակառքին մէջ.
մարմնով եւ կասկածներով գէր,
երակները՝ վերելակի նման
դէմքի թխութեան կշռնած,
երկար գուպային վրայէն՝ կարճ գուպայ



20558-247 digitised by A.R.A.R.@

ամէն մէկ կարճը՝ փարբեր գոյն,
փորը մածունի փռաքրակի պէս վար կախուած:
Ի՞նչ կը յիշէ արդեօք:

Ջղագար է նայուածքը
խոնանցի զոգնոցը դեռ վրան,
իր ցանկութիւնը՝ նոր ճերմկած մագի նման է
անուժ, միայնակ:

Ամբողջ կեանքը պայքարեր է ջրանոյշի չվերածուելու,
դասնամանակներով եփեր է տուր եւ իրականութիւն
զաւակ, թռնիկ, ճոգերոյժ եւ դրամապոն.
այսինքն սորվեր է
կոփոքած բաժակները շարքել անձեւ,
բայց, բայց միայն՝
ինքզինք վիրաւորել է ետք:

Եկեր է զաւակը վիժեցնելու
ուռած որովայնը՝ հում հաւկիթի պէս
կը սպասէ ճեղքուելու.

գիշերային նէոնները հեռացեր են.
ո՞ր մնաց Սոթըպիի մէջ աճուրդի դրուած
Քաղապական ֆիլմին դաշնակը
- Նուագէ՛, Մէ՛ծ, նուագէ՛...

Մտերիմ բուրումներ կան, որոնց այլեւս չես կրնար հպիլ.
ձիւնին մէջ ցցուած գինեփունները՝
զոն փնտրող կափկափուն կզակներ
նին, ատերակ ակռաներով լեցուն:
Այս կինը եօթանասուն տարեկանին դեռ կ'ուզէ պարել՝
ասպրաւորի համար:

Կայր Սամառները յաղթառոյգ մեռան,
միայն Տալիթան է որ աչքերը բաց՝ ծերացաւ
քառասուն տարուան մեղաքար իր մարմնին շուրջ
պլլուած:

Ձի յիշեր քանի՞ բանալի կորսնցուց
ո՞ր մռցաւ ցանկը իր ցանկութիւններուն
որ կա՛մ ձրի փուստ
կա՛մ սուղ վճարեց:

Հիմա միակ բանալի մը ունի
կարճուկ, կրծուած կողերով,

ուշադիր կը նայի չորս կողմը, արագ կը բանայ դուռը
եւ փան խորերէն իր ծերացած կատուն
կու գայ լնկնկալէն:

Նրկար սեւափայլ մոյկեր եւ կարճ փեփրակ մը ունի
իր սեռային ֆանթեզիներու նոթերուն համար,
պիփրոտվ կ'աշխատի.
իր մարմինը քարտէս մըն է
ուր ամէն մարդ իր ուզած փեղը կը գտնէ,
եւ փոխանակ մարդիկը ճամբայ գտնելու
կամ կորսնցնելու`

այդ քարտէսը կը հիննայ:
Քարթիէէն նոր ելեր է, շրջասփիւս մուշտակէ
վերաբկուն ուսին.
խուժան մը կը ցցուի իր դէմ
- Անասնասպան,- կը պռռան,- քանի՞ կենդանիի
արիւն փակած է մարմնիդ:

Դիմացի սրճարանին անկիւնը,
փայտէ սնդուկին վրայ
իր միակ քոտորակը գանձի պէս զրկած
անփուն կիներ
ափամները թափած` կը խնդա՜յ:

Տարուան կէսը` ուրուականներ
Կրիմիչ Վիլլէճի ճաշակներու ճազին մէջ
արուեստի ազատութիւն,
վերելք, վայրէջք,
ցոփութիւն եւ վայելչութիւն կը ցուցադրեն:

Տարուան միւս կէսը`
պեփական շէնքերը յեցուած են ծրագիրներով
անօթի կէսը սնանեցնելու-
դաստիարակելու, վեհացնելու,
հարստացնելու, յափշտակելու,
անգտուններու եւ փաստաբաններու այս մեծագոյն
մայրաքաղաքը ճոխացնելու,
մինչ անդադրում կը թորի դարերու խոնավութիւնը
եւ քաղաքը աղմկայոյզ պարտունցներու մէջ
հազարաւոր լեզուներ կը կլլէ:

Կեանքի կիրքը այնքան յորդ է մեր երկրագունդին մէջ
որ ուրիշ մոլորակներու փեղ չկայ.
քանի որ չեմ կրնար այնպէս ճամբել
ուրուականը մահուան` որ ես չդառնայ
կարենայի՞ զօնէ
մարդկային բնութեան աստուածութիւնը յայտնել

բոլոր բնակարանները վերածել փունի,
 բոլոր մարդիկը՝ սիրահարներու,
 բոլոր կիները՝ ծնողներու,
 բոլոր մայրերը՝ կիներու,
 բոլոր փխրաթիւնները միացնէի, ըսէի՝ վնաս չունի՝
 մի մտածէ՛ք թէ ինչո՞ւ սկսաք եւ ո՞ւր աւարտելու էք.
 բոլոր զոները
 կույրդաժ բաժակներու պէս ալլէի թափէի,
 եւ այս բանաստեղծութիւնը վերջացնելէ ետք
 սուրճը հանդարտօրէն խմել կարենայի...

Փարամբոս, Նիւ ձըրզի

ՅԱԻՏԵՆՈՒԹԻՒՆ

Թէպէտ մութ է աշտարակը
 ծովերը խոր կը խեկան,
 փայտաները գերաբթուն են
 քարերուն մէջ շոգեթաւ.
 Ինքն է, ինքն է, իր ձայնն է միշտ
 երկրասարդ, սիրաջերմ,
 երբեմն ճեռուէն, երբեմն մօտէն
 «Նուշիկ,- կ'ըսէ,- ես հոս եմ»:

Այ չի խօսիր, բան չի պատմեր
 փառապանքի աշխարհէն,
 արդէն երբեք չբողոքեց
 ցաւի անյաղթ զուպարին դէմ:
 Զուգե՛ց ըսել թէ մերեր է
 մանը սենեակն իր վարդէ,
 թէ չհաւատաց թէ Տէրը իր
 խնդրանքը պիտի՝ չկատարէ.
 միշտ յոյս փութաւ որ պիտի ապրի
 դեռ վաթսուներեք՝ փո՛ւն պիտի գայ.
 «Յիսուս, ըսաւ, կա՛մքդ ըլլայ»
 եւ մեղրի պէս քնացաւ:
 Զո՛ւր, Զուր ուզեց, Զո՛ւր կաթիլ մը,
 հալած շրթները մարեցան.

Աստուածաշունչ բացեր էի
շունչը կ'իջնէր հեպոզներէ,
բժիշկին հետ կը վիճէի
որ նորէն «բան մը ընէ»
Իմ վարդապետն մօրս դէմքը
մագաղաթ էր դեղնատուն,
քոյր ու եղբայր չորս կողմն էինք
կ'աղօթէինք օրն ի բուն,
ձեռքը բռնած՝ կու տայի յոյս
եւ զաւակի դարմանարար տաքութիւն:
Յետոյ՝ սպող էր, յետոյ սառ էր,
յետոյ աղմուկ էր անձայն,
կանաչ մեկտաքս աչքերէն՝ ժիր
թռչունները հեռացան...

Մէջ մը երկինքը կը դիտեմ
մէջ մը՝ շիրիմը կանաչ,
Ո՛ր ես, մայր իմ, ուր ես, մա՛յր իմ,
ապրումութիւն իմ հանգած.

Ծովե՛ր կ'անցնին, հովե՛ր կ'անցնին,
Աստուած կ'անցնի սիգաճեմ,
եթէ կարենամ՝ պիտի Իր մէջ
մարդկային ճիշդ խրեմ:
Նոճիններէն ձայն մը կու գայ
հանդարտաբոյր, սիրազեղ.
«Հանգիստ ձգէ Աստուած-մաստուած,
մի՛ վախճար, ճանս, հոս եմ»:

Յաճախ կարմիր վարդեր շալկած
կ'ուղղուիմ ճերմակ գերեզման.
այ չի խօսիր ինք: Իր մասին
կը խօսինք ես եւ Աստուած:

Յունուար, 2000

ՄԱՄԱ

Մամա, ճերմակ մամա, աչքերդ սուտարաններ են,
 աչքերդ միշտ բա՛ց պանէ, որ հաւաքամ բարիին,
 որքան տարիքս աճի՝ այնքան չարի ու մահուան
 ցիցերը՝ աւրբ տրտիդ մէջ հանգած ածուխ կը դառնան:
 Աչքերուդ մէջ հատուն են գերմայդկային բարութեան
 դալարագեղ ոտերը, ուր գաւակներդ կը մեծնան:
 Քու ձայնիդ մէջ արեւի ջերմութիւնն է որ կը զգամ
 այգեստանները բերրի քնքշութեան ու կարօտի,
 ինչքան բերկրանք ցնծաձայն ու գգուանք կայ մեղմօրօր
 խաղաղ տունիդ մէջ, որտեղ Մէրը լուսեղ կը հանգչի:

Մամա, կապո՛յր մամա, իմ մանկութեան հեքիաթ,
 ուժը՝ որ կը զգեցնէր ամէն անկարելին,
 օրօր էիր քիչ մը, քիչ կապոյտ երկինք,
 քիչ մը կաթ ու պտոյտ, քիչ մը այբբենարան:
 Մագերուդ մէջ արծաթ խունկ կայ նաճապետեան,
 մանիճիս մօտ բնդմիշտ դարչինի բոյր էիր,
 դուռի նման եղար կեանքիս անցքին խարդախ:
 Բարին դրկեցիր ներս, Չարին դէ՛մքդ տուիր:
 Մամա, երգ մը երգէ՛, որ դուն եւ ես գիտենք,
 թող մանկութիւնս գայ կապոյտ արտայտներով,
 ես չեմ կրնար ցայտել առաջուան պէս անփայթ
 բայց դուն կ'երգես, գիտեմ, եին ժպիտս տալու:
 Քու ժպիտդ նայնն է, ախօս չունի, թէն
 լռիկ լացերը քեզի շար ալօսներ տուին,
 իմ վարդագոյն մամաս, կրակին մէջ սիրոյ
 ծուխ ու մոխիր դարձար՝ որ գաւակներդ ապրին:

Հակառակ որ բարձրահասակ, պապենակուն այդ տունին
 ծխան սլաքերը փլան, եղան գեղնին հաւասար,
 մեր տան փոխան՝ յիշատակի լուսասիւններ կան հիմա
 որովհետեւ քեզի նման մայր մը կար:
 Լուսամուտներ կան յոյսի, տարիներու հայելիներ,
 տարիքը եին տանիքին եւ անտարիք թզենին,
 մեր սենեակները կռկիկ, օճառի բոյրը դալար

ու բերկրանքը ճարճապող՝ փանդ ամէն անկիւնին:

*Դեռ կը յիշեմ շարաքօրեայ լոյսի հանգուանը փաքուկ,
կիրականօրեայ արեւի շարականները փաքուկ,
հօրս ձայնը, փօները, եւ մըմըմըքը փաքուկ,
խոնանոցէն ձայնդ փաք. «Եկէ՛ք, ճաշը չպաղի»:*

*Տարբեր աշխարհ ենք հիմա, ուր կայծակներ ցնցումի
սասանեցին հաւաքքս ամուսնական սրբութեան,
հին բիրերուդ՝ վեհածիլ շող կայ յոյսի, ներումի,
Մամա՛, ինչպէ՛ս դիմացար, ինչպէ՛ս այսքա՛ն մայրացար...*

*Ա՛աղօթեմ որ Հայր Աստուած
որ աշխարհին ջափ աշխատանք չբարաւ,
քու հոգիիդ գերմարդկային փառքերէն
ամէն մարդու պե՛տք մը փար...*

Փարամբս, Նիւ Ջըրզի

ՎԵՀԱՆՈՅԾ ԹԵՔԵԱՆ

Ն. Չարխուտեան

ԱՇՆԱՆ ՏԵՐԵԲՆԵՐՈՒ ՊԷՍ

- Եկո՛ւր,- ըսաւ Հերրի,- այս կողմերը կայ իտալական փոքրիկ ճաշարան մը, որ կը կոչուի Սորենթօ եւ կը յիշեցնէ Նափոլիի ծովեզերեայ թրաթորիաները: Հոն ամէն ինչ Հարազատ է՝ ուտելիքը, ըմպելիքը եւ երաժշտութիւնը: Եթէ այցելած ես իտալիա, անպայման պիտի սիրես այս անկիւնը, որ կը յիշեցնէ Ամալֆիի ցից ծովափը:

Գէպի Հիւսիս, Սանթա Մոնիքա պողոտան կը հետեւէր ծովեզերքին եւ կը միանար նեղ քորնիչի մը, որ կը յիշեցնէր Ճունիէն Թրիփոլիի ճամբան՝ մէկ կողմէն ցից բարձունք մը եւ միւս կողմէն ցից ապառաժ մը, որուն կը բախէին ովկիանոսին ալիքները: Սորենթօ ճաշարանը նստած էր ծովուն կողմը երկարող պատշգամի մը վրայ: Արմէն օտար չզգաց, կը կարծէր զտնուիլ Պէյրութի Աղանիներու քարայրին առջեւ, բայց դիմացը տարածուողը Մէն Ժորժի ծովախորշը չէր, այլ՝ Մալիպուի ծովանոցը:

Քաղաքականը իրենց առջեւ կը տարածէր իր անծայրածիր անդաստանը: Անոր ջուրերուն վրայ, վերի բարձունքէն, ամրան պայծառ օրերուն, կը տեսնուին կղզիներ. Սանթա Գաթալինա, Սան Գլեմմենթէ, Սան Նիգոլաս, իսկ դէպի Հիւսիս՝ Սանթա Գրուզ, Սանթա Ռոսա, Սան Միկէլ:

Արմէն ինքզինքը կը կարծէր Միգենայի Հրուանդանին վրայ, ուրկէ կը տեսնուէին այդ առասպելական կղզիները՝ Գաիրի, Իսքիա, Փրոչիտա, որոնք ներշնչած էին մեծ ու պզտիկ բանաստեղծներ:

Ճաշարանապետը անձամբ դիմաւորեց նոր յաճախորդները: Հերրի եւ ինք բարեկամներ դարձած էին:

- Ճի՛շդ ժամանակին եկաք,- ըսաւ Ճորճիօ, որ միջին տարիքով՝ միջահասակ մարդ մըն էր,- ձեր սեղանը քիչ առաջ պարպուեցաւ:

Արմէն եւ Հերրի տեղ առին սեղանին առջեւ, որ կը զտնուէր պատշգամին անկիւնը եւ երկու կողմէ կ'իշխէր ջուրերուն վրայ:

Սպասեակը չհեռացած, Հերրի, առանց ճաշացանկին վրայ նայելու՝ ապսպրեց ըմպելին եւ կերակուրները:

Օրուան գլխաւոր դէպքը Զելենճըր անջրպետանաւուն պատահած զարհուրելի արկածն էր եւ անոր մէջ տեղ առած եօթը աստղանաւորդներուն ողբերգական մահը:

- Կը կարծե՞ս որ այս արկածը վերջ մը պիտի դնէ մարդոց խիզախումներուն,- Հարցուց Արմէն:

- Ի՞նչ է քու կարծիքդ:

- Եթէ նկատի առնենք դարուս կէսէն ի վեր մարդկութեան արձանագրած յառաջդիմութիւնը դիտական մարդի մէջ, անջուպետը նուաճելու ծրագիրները ո՛չ միայն պիտի շարունակուին, այլեւ պիտի զարգանան: Պրոմեթէոսէն ի վեր, մարդ արարածը կը հետապնդէ գերմարդկային երազ մը՝ նուաճելու համար անկարելին:

- Այդպէս կը թուի ըլլալ: Ես կը կարծեմ, որ մարդը կ'աշխատի, կը տքնի ո՛չ թէ երազ մը իրականացնելու, այլ՝ ժամանակը սպաննելու: Ներկայ մարդկութիւնը բռնուած է մահուան մղձաւանջէն: Վաղը քաղաք իջիւր եւ նայէ անցորդներու աչքերուն մէջ: Հոն պիտի տեսնես միայն անձկութիւն եւ վախ: Անոնց գէմքին վրայ կը կարգաս միայն ծուղակը ինկած անասունի մը արտայայտութիւնը: Կարծես Մահը թեւանցուկ կը քալէ անոնց իւրաքանչիւրին հետ: Ինչպէ՞ս ձերբազատուիլ Մահուան այս սոսկալի մտերմութենէն: Մէկ միջոց կայ միայն. անտեսել մահուան ներկայութիւնը եւ նայիլ հեռուները կամ տարբեր ուղղութեամբ՝ դէպի աստղերը կամ միւս մայթին կողմի շուսայորդ ցուցափեղկերուն, որոնց առջեւէն կ'անցնին իշխանուհիներու պէս զարդարուած կիներ, կամ պերճադիճներու պէս գրգռիչ պարմանուհիներ: Մահուան մղձաւանջէն ազատելու համար կը բաւէ հետապնդել գիւրամատչելի երազներ եւ դիմել արուեստական այն դրախտներուն, որոնց դրան բանալին կը կոչուի Դրամ: Ժամանակին կ'ըսէին, վերը Աստուած, վարը՝ դրամ: Հիմա կ'ըսեն. վարը դրամ, վերը ոչինչ: Մի՛ մոռնար, որ Աստուածորդին վաճառուեցաւ երեսուն արծաթի: Երկրային հաճութիւնները անմիջական են ու մատչելի բոլորին: Ո՞վ չ'ուզեր ունենալ հանգստաւէտ բնակարան, ճոխ սեղան եւ գեղեցիկ կիւն: Նայէ՛ շուրջդ եւ պիտի տեսնես, որ յետին աւագակը, եթէ նոյնիսկ աւելի տգեղ է, քան Քաղիմոտոն կամ Թրիպուլէն, կրնայ վայելել կեանքի բոլոր բարիքները եւ ունենալ աշխարհի ամէնէն գեղեցիկ կիները, եթէ դրամ ունի:

- Դրամը սատանային մեծագոյն գիւտն է, որուն շնորհիւ կը տիրապետէ աշխարհին վրայ: Դրամին տիրանալու համար ինչ ահաւոր ոճիրներ կը գործուին, ինչ կեանքեր կը փճանան: Մատղաշ աղջիկներ կը վաճառեն իրենց մարմինը, երիտասարդներ իրենց ծնողքին խնայողութիւնները կը մսխեն կանաչ սեղաններու շուրջ, պաշտօնեաներ թշնամիին կը ծախեն իրենց երկրին պետական եւ զինուորական գաղտնիքները: Դրամը դադրած է միջոց մը ըլլալէ եւ դարձած է գերագոյն նպատակ: Ժամանակին մարդիկ իրենց հոգին գրաւի կը դնէին խաւարի իշխանին՝ քանի մը տարի երիտասարդանալու համար, այսօր մարդիկ կը ծախեն իրենց հաւատքը, պատիւը, ազգութիւնը եւ սրբութիւնները՝ դրամ դիզելու համար: Այդ դրամը, որ հարուստները կը մսխեն, հազար հնարքներով, սուտերով եւ խաբէութիւններով, աղքատներուն ձեռքէն խլուած հացի արդար բաժինն է: Հարստութիւնը կը սպաննէ մարդոց հոգին:

- Ի՞նչ կը հասկնաս Հոգի ըսելով:
- Հոգին ներքին ուժ մըն է, որ մարդուն մէջ կը ստեղծէ ժամանակին եւ միջոցին մէջ տարածուելու, ըսենք՝ անմահա-նալու ձգտումը:
- Այո՛, կը հաւատամ այդ ուժին:
- Վերցո՛ւր այդ ձգտումը, ջնջէ՛ այդ ուժը մարդուն մէջ եւ կ'ունենաս երկոտանի անասուն մը, որ կապիկէն շատ քիչ կը տարբերի:
- Ապա միտքը, իմացականութիւնը:
- Առանց Հոգիի՝ միտքը պիտի ըլլար անասնական բնազդին մէկ նրբացած տեսակը, Հաղորդակցութեան կապ մը իր եւ իր անմիջական շրջապատին միջեւ: Առանց Հոգիի՝ մարդ պիտի չմասժէր իր սկիզբին եւ վախճանին մասին, անդենականին եւ յաւիտենականութեան մասին: Պիտի չզբաղէր փիլիսոփայութեամբ եւ գիտութեամբ, պիտի չստեղծէր գրական եւ գեղար-ւեստական գլուխ-գործոցներ:
- Նայէ՛ շուրջդ եւ տե՛ս. միլիաոններ Հաշուող մարդկու-թեան մէջ քանի՞ Հոգի կը լրացնեն քու սահմանումդ: Ի՞նչ անուն պէտք է տալ մնացեալներուն:
- Ես զանոնք կը կոչեմ մարդակերպ: Մարդոց մեծամաս-նութիւնը կը ծնի առանց Հոգիի: Ուրիշներուն մէջ Հոգին մեռած է կամ մահաքունի մէջ է: Հետեւաբար անոնց միտքը վերած-ւած է անասնական բնազդի, որ գիրենք կը մղէ անմարդկային արարքներու:
- Ձեռ՝ կարծեր, որ վճիռդ շատ ծանր է ու անարդար:
- Ես վճիռ չեմ արձակեր, այլ կը նկատեմ: Ուրիշ ձեռով չեմ կրնար բացատրել աշխարհի անհեթեթութիւնները:
- Յոռեռեսութիւնը արդար մօտեցում մը չէ՝ աշխարհի բաները բացատրելու համար: Դո՛ւն, որ փիլիսոփայութեան մասին կը խօսիս, պէտք է յիշես Մեծն Լայպնիցի այն տեսու-թիւնը, թէ «Մեր աշխարհը կարելի աշխարհներուն լաւագոյնն է»:
- Լայպնից կ'ապրէր Ժէ գարուն, երբ տակաւին կը հաւա-տային մարդուն արժանապատուութեան, անոր ազնուացման եւ յառաջդիմութեան: Եթէ Լայպնից ապրէր մեր օրերուն, ան պիտի ըլլար նոր Շոփենհաուերը մը:
- Կ'ուզե՞ս որ քեզի թուեմ մեզի ժամանակակից Հարիւ-րաւոր Լայպնիցներ, Համբաւի եւ գիտութեան տէր մարդիկ, որոնք կը փառաբանեն մարդը եւ անոր զարգացուցած քաղա-քակրթութիւնը:
- Ի՞նչ աշխարհ, ի՞նչ քաղաքակրթութիւն, ուր՝ տեղ չկայ պարկեշտ մարդոց համար, ուր կ'ոտնակոխուին չքաւորները եւ համեստները, ուր կը բռնաբարուին փոքր ժողովուրդներուն արդար իրաւունքները: Թո՛ղ այլեւս լռեն մեծ ու պզտիկ փերե-զակները, որոնք միջազգային բեմերէն կը բարբառին ազգերու ինքնորոշման եւ մարդկային իրաւունքներու մասին: Թո՛ղ

վերջնականապէս ոչնչանայ կեղծիքի այն վարագոյրը, որուն ետեւը կը սարքուին սուտի եւ մահուան սաղայէլական զանգուտներ:

- Ես Համաձայն եմ ըսածներուդ, բայց գիտեմ, որ ո՛չ մէկ ուժ կրնայ քանդել մամոնայի ամրակուռ բերդը եւ վերջ դնել փերեզականերու Հիմնած դրութեան: Պէտք է Համակերպիլ կամ անձնասպան ըլլալ:

- Կամ պայքարիլ՝ առանց խտրութիւն դնելու միջոցներու միջեւ: Մէկ խօսքով՝ Թշնամիին դէմ գործածել անոր զէնքերը, անոր ուղղամարտութիւնը...

*
* *

Լոյսի փունջեր կը ծփային ովկիանոսին վրայ ու կը զարդարէին գիշերուան փէշերը: «Թոռնա ա Սոռիէնթօ» Թաւշային եւ կարօտաբաղձ մեղեդին կը սփռուէր ջուրերուն վրայ, բայց այս ծովը Միջերկրականը չէր եւ դիմացի կղզիները չէին կոչւէր Իսքիա կամ Գափրի:

- Մենք՝ Հայերս,- ըսաւ Հերրի,- վաշկատուն եւ նստակեաց ցեղախումբերու խառնուրդ մըն ենք, այդ պատճառով, Հակա-ռակ մեր Թիւին, չենք ունեցած մեծ ոստաններ, ինչպէս Նինուէ, Բաբելոն, Անտիոք կամ Տիգրոն: Ու գաղթած ենք ըստ բախտի եւ ըստ կարելիութեանց՝ քանի մը Հազար այստեղ, քանի մը Հարիւր այնտեղ: Ո՛ւր են այսօր Լեհաստանի Հայերը, ու՞ր են Հնդկաստանի, Պուկարիոյ եւ Ռումանիոյ Հայերը: Ու՞ր պիտի ըլլան քանի մը տասնեակ տարիէն Եւրոպայի եւ Ամերիկաներու երկու միլիոն Հայերը: Եւ ի՞նչ կ'ընեն մեր դեկավարները այս ազգակործան յորձանքին առաջը առնելու Համար. դրեթէ ոչինչ: Մեր դեկավարները միշտ ուչ մնացած են եւ փոխանակ կանխելու եւ առաջնորդելու զանգուածը՝ Հետեւած են անոր:

- Իրաւունք ունիս. Հայ ժողովուրդը միշտ նմանած է ոչ-խարներու Հօտի մը, որուն Հովիւը կը քնանայ եւ երբ արթննայ՝ կը վազէ Հօտին ետեւէն: Բայց արդէն Հօտը ցրուած ու կորսուած կ'ըլլայ: Միջին-Արեւելքի վերջին դէպքերը այս ամբողջութեան վրայ Հարիւր Հազարաւոր Հայեր նետելով կասեցուցին կորստեան եւ ձուլման Հոլոքոսթը, բայց քանի՞ տարուան Համար: Այդ նորեկները երբեմն շատ աւելի արագ կը ձուլուին, քան Հինէն եկածները: Անոնք մեծ փութկոտութեամբ եւ մեծ Հաճոյքով կը Հրաժարին իրենց անցեալէն եւ ինքնութենէն, ծիծաղելով Հայ մնալու մեր յամառութեան վրայ:

- Բայց այն ատեն, ի՞նչ պիտի ըսենք այն միլիոնաւոր նահատակներուն, որոնք կը սպասեն, որ իրենց զաւակները

«ղայիմ պաճեն իրենց Հաւատքը» եւ արժեւորեն իրենց արիւնով գրուած կտակը: Ինչո՞ւ մեռան անոնք, եթէ մենք այսքան դիւրութեամբ պիտի դրժէինք մեր ուխտը: Ինչո՞ւ այսպէս ալ Հայերը, որոնք արհաւիրքի օրերուն կրօնափոխ եղան՝ փրկելու Համար իրենց կեանքը եւ ինչքերը: Այսօր արհաւիրք չկայ, կեանք եւ ինչքեր փրկելու հարց չկայ, բայց Հայութիւնը նա՝ Հանջի մէջ է եւ եթէ այսպէս շարունակուի, քանի մը տարիէն Հայերէնը պիտի դառնայ մեռած լեզու մը եւ Հայերէն կարդալու Համար պէտք պիտի ըլլայ դիմել գերեզմանաքարերուն:

Ովկիանոսը խաղաղ էր՝ մարդագետնի մը պէս, որուն ծաղիկները լոյսի փունջեր էին, իսկ քաղաքը դարձած էր լոյսերու ովկիանոս մը, որուն բոցավառումը կը խափանէր երկինքի աստղերը:

– Գիտե՞ս որ ամբողջ աշխարհը Հիացումով կ'արտասանէ այս քաղաքին եւ այս նահանգին անունը եւ կը նախանձի անոր բնակիչներուն,– ըսաւ Հերրի:

– Մեր պարագան տարրեր է: Եթէ աշխարհին Համար այս նահանգը կը ներկայացնէ երազային էլտորատոն, կորսուած դրախտը, մեզի Համար ան կը նշանակէ «վերջին Հանգրուանը»:

Հերրի չպատասխանեց: Իր բարեկամին անձկութիւնը սկսած էր գինք ալ վարակել: Մէկ ումպով պարպեց գինիի բաժակը:

Ճաշարանը գրեթէ ամայացած է: Հերրի ապսպրեց նոր շիշ մը:

– Ճորճիօ՛,– ըսաւ Հերրի,– գինիդ պատուական է, բայց մեզի տխրութիւն պատճառեց:

– Ձեր խօսակցութիւնը չհասկցայ, բայց գիտեմ, որ Հայերէն է: Երբ երկու Հայեր քով քովի գան, կը խօսին իրենց Հայրենիքի մասին: Մի՛ մոռնաք, որ գինին ձեր ազգային ըմպելին է եւ ձեր մէջ կարօտ կ'արթնցնէ: Ճիշդ է, որ այս գինին խաղաղական է: Եթէ խմած ըլլայիք ֆրանսական, սպանական կամ նոյնիսկ ամերիկեան գինի, արդիւնքը նոյնը պիտի ըլլար, որովհետեւ աշխարհի բոլոր գինիները ձեր հողէն բան մը կը պարունակեն: Պաղովին Հայրենիքը Հայաստանն է: Նոյն նահապետ, երբ դուրս ելաւ տապանէն, գինին պատրաստեց այդ Հայկական խաղողէն:

– Ուրեմն խմենք Հայաստանի եւ բոլոր Հայրենիքներու կենացը: Խմենք կենացը այն բոլոր մարդոց, որոնք կ'ապրին իրենց Հայրենիքէն հեռու եւ խմենք կենացը այն բոլոր Հայերուն, որոնք Արարատ մը կը պաճեն իրենց սրտին մէջ:

Խմեցին:

– Ճորճիօ՛, գիտեմ որ գինիքը բաւական յառաջացած է, եւ դուն ալ Հանգիստի պէտք ունիս: Կը խնդրեմ, որ այդ խաղաղական գեղեցիկ երգերէն ետք, քանի մը Հայկական երգ ունկրնդրենք:

Ու Հերրի, գրականէն հանելով քսակէ՛ծ մը, տուաւ ճաշարանապետին, որպէսզի զայն զետեղէ ձայնասփիւռ մեքենային մէջ:

Արմէն՝ զարմացած, կը նայէր բարեկամի երեսին:

- Զարմանալի բան չկայ,- ըսաւ Հերրի ժպտելով,- այս քսակէ՛ծը միշտ հետս կը պտտցնեմ. Սայաթ-Նովայի երգերն են: Ո՞ր մէկ հայը չի սիրեր Սայաթ-Նովան, ո՞ր մէկ հայը «Հայր մեր» մը չ'ըսեր քնանալէ առաջ:

Ու աշխարհի մեծագոյն ուղիւսնոսի ափին հնչեց երկու դար առաջ եկեղեցիի մը մէջ նահատակուած հայ աշուղին երգը.

«Դուն էն գլխէն իմաստուն իս»...

Փաստենմա, Յուլիս 1986

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

Վարանդ

ՆՈՐԱ

*Քու երգած սերդ, Նորա՛, սիրոյ ա-
ռաքին երգն է, սկիզբի երգը, առողջ,
բնական եւ կեանքի պէտքին ծառա-
յող. որուն կը սիրես ծնունդին հա-
մար...:*

Լ. Շանթ - «Հոգիները ծարախի»

*Դու ինձ հետ ես եղել միշտ, Քեզ հետ քայլել եմ որքա՛ն
Թէ՛ քնի մէջ, թէ՛ արթուն. Նորանցքներով ամպեղէն,
Բերել ես խինդ, բերել վիշտ, Որ միշտ խնդայ կեանքը՝ լայն
Թէ՛ յաղթանակ, թէ՛ անկում: Ու չդառնայ սեւ ծովն...*

*Ունեցել ես մեղքի գոյն, Քեզ հետ նստել եմ, Նորա՛,
Աղի ժամը կորստի Պտրակներում անցեալի,
Քեզնով զինով եմ, արթուն, Ուր միշտ եղել է ներկայ
Տէրը հազա՛ր խորհրդի... Տրտիւնը Նոր Դարի...*

*Քեզնով հարուստ եմ, Նորա՛, Քեզ հետ մտել եմ, հոգիս՝
Անկարելի բաղցիս մէջ. Համբոց, կինո-սինեմա,
Ն՛ւ աղբատ եմ, ե՛ւ արքայ Ուր միշտ ծախել է հոգին
Չպանպանուած գանձիս մէջ: Դոկտոր Ֆաուստն ի տաղանայ:*

*Իմ գանձարանը, զիտե՛ս, Բայց դրանով չէ՞ որ նա
Միշտ ծախսել եմ քո ճամփին. Ջանելագել է յանկարծ,
Դա՛ երազներու բենեզ, Ու ապրել է՝ անխնայ
Միշտ դրել եմ քո ճակտին... Աորած օրերն իր անդարձ:*

*Ջուգել եմ քեզ մանեակով Բայց դրանով չէ՞ որ նա
Ու յակինթով անուրջիս, Հմայել է, իբր չաստուած,
Որ պապղաս դու բազով, Այն ամէնը՝ ինչ որ կայ
Ու կախարդես իմ հոգիս: Կնոջ հոգում թաքնուած:*

Քեզ փութիլ եմ լուսեղէն Բառն ու բանը քերթուածիս, Որ երբ փարտում ես գեներն Դու ինձ դառնաս՝ ռվագիս...:	Իսկ դու, Նորա՛, կանացի Այն ամէնն ես, ինչ որ կայ Տիեզերքում այս անծիր, Աստղաբոյլում այս ճակայ:
Դու ամէնն ես, ինչ որ կայ Գոյնում բոցի, կրակի, Սրտում խելառ աղջկայ, Բոյրում բոյսի, ծաղիկի...	Նամակն այդ պիտի՛ ասի Անծանօթին մի ոչինչ, Ու՛ր չի փետել Կաթն-ծիր Ի՞նչ կ'իմանայ ակից ջինջ:
Դու ամէնն ես ինչ որ կայ Գոյնում զինու եւ արեան, Ծողարձակման մէջ ճակայ Ծննդոցի ու մահուան...	Դու այն ակն ես երկրում այս, Որի օղն է եթերն ողջ, Փայլադարձումը իր անաստը, Ծողարձակման իր առողջ...
Դու ամէնն ես, ինչ որ կայ Քանդակներում քարերի, Անձրեւների մէջ անկապ, Ծփանքներում ծառերի...	Դու այն շուշանն ես մեղրի, Որ գուգում է եօթ փառար, Ուր իջնում են աղօթքի Մոգ, քրմապետ, փանահայր:
Դու ամէնն ես, ինչ որ կայ Նուռում բացուող արեւի, Կամքերի մէջ աներկբայ, Գաղփրներում սեւ աչքերի:	Դու այն նեկրարն ես, որից Մեղր է առնում եօթ աշխարհ, Ու դառնանում է նորից, Երբ դառնում է սիրտդ՝ քար:
Դու կախարդանք ես, Նորա՛, Դու ինքը կինն ես՝ նոր կեանք, Որ բերում է ապագայ, Բերում խինդ, լոյս ու գրկանք:	Այն թալիսմանն ես, որով Մարդ դառնում է չար-բարի Ու վառում է գիշերով Քաղաքները աշխարհի...
Ու որքան որ լինի թէ՛ Մենեանք քո արդուշան, Պիտի՛ բնկովի բոցիդ մէջ Մարդը՝ անգոր յաւիտեան:	Մէկը վառում է կանթեղ, Որ լռյս քաշիս ամէնուր, Մէկն էլ այրում է մէկփետ Աւան, խրճիթ ու բարձուր...
Պիտի դառնայ ողջակէզ Քո բազինին մարդն անուժ, Անէանայ պիտի՛ քեզ մէջ, Իբրեւ չեղա՛ծ մի անուրջ...	Դու այն անօթն ես, Նորա՛, Ուր պղպշում է անվերջ Հոգին, իբրեւ կեանք ու մահ, Մեր կառեղէն մարմնի մէջ:

Պիտ' խորագրակուի քո հոգում
Հոգին, իրրեւ խօյ նաւակ,
Ու պիտ' մնայ եզերքում
Նրանից լուկ մի նամակ...

Եւ դու դաժան ես նոյնպահ,
Չունես ոչ սիրտ, ոչ հոգի,
Մէրդ թոյն է անապայ,
Խինդդ՝ ակունք մորմորի:

Դու հայրում ես շունչը մեր,
Որ դաւանենք նորից քեզ՝
Աղերսանքով մեր կերկեր,
Ներշնչանքով մեր երկէզ:

Թափանցում ես բոյրի մէջ,
Որ մեզ թուաս նաւոր ծաղիկ,
Յեպոյ թերթես, էջ առ էջ,
Գրքերը մեր խոր ցաւի:

Դու ջնջում ես կերպը ջինջ,
Որ նորից նոր մոգոնեն
«Վարպետները» ամէն ինչ՝
Քո գեղադէմ կուտքի դէմ:

Դու եղել ես միշտ ինձ հետ,
Թէ՛ քնի մէջ, թէ՛ արթուն,
Դարձել խելօք, դարձել խենթ,
Ինձ դարձրել՝ գիծ-իմաստուն:


Վերածում ես վէմը՝ նոր
Միջնադարեան նկարի,
Որ փաղանդները հզօր
Քո դէմ փոխուեն սպուների...

Ունեցել եմ սիրոյ գոյն,
Աղի համը արիւնի,
Քեզ հետ գնում եմ անկում,
Սակայն՝ ճամփով անճունի՝...

14-15 Սեպտ. 1999 Թեհրան

ՎԱՐԱՆԴ

146-2001



Շահանդուխտ

ՅՈՒՇԱՐԱՐ ՀԱՅԵԼԻՆ

Ոցիկ մըն էր իր բնակարանը: Ուրկէ՞ եկած էր Հոն: Արդեօք երկար տարիներէ ի վեր Հո՞ն կ'ապրէր, երբ մայրն ալ ողջ էր դեռ: Այդ մասին վկայութիւններ բերողներ կային, թէ ժամանակին բարեկեցիկ վիճակ մը ունեցած էին, իսկ այսօր, կեանքի վերիվայրումները դինք առաջնորդած էին այնպիսի կացութեան, որուն գլխաւոր փաստը իր խցիկն էր, Հագիւ փոքր լուսամուտով: Հնամենի շէնքի մը մէկ անկիւնը կը գտնուէր այդ խեղճուկ խորշը: Տեղական եկեղեցիի մը կալուածն էր: Շրջանի Հոգեւոր Հայրը, Ոուրի Միխայիլը շնորհք բրած էր գործէ դադրած Հայուհիին, որ ընչին ամսականով պատսպարուելու վայր մը գտած ըլլալու գոհունակութիւնը կ'ապրէր: Դրացիներուն հետ Հարկ էր բաժնէր բնակարանային «յարակից մասերը»: Բայց ամէն դրացի նոյն բարեացակամութիւնը չէր ունենար, հետեւաբար յաճախ կ'արգիլէին իր մուտքը այդ անհրաժեշտ անկիւններէն ներս: Ու որքան կը տառապէր Հասուն տարիքի Հասած Հայուհին: Երբ այդ մասին բողոքէր Ոուրիին, եկեղեցականը անոր կը յիշեցնէր Հայկական բարեսիրական Հասցէները՝ խէչրիէ միութիւնները, որպէսզի դիմէր Հոն եւ աւելի նպաստաւոր պայմաններ ստանար: Ոուրիին կճու թեազրանքներուն մասին շատ կը մտածէր Աշխէն, բայց անկարելի Հարց մը կը թուէր իրեն դիմել Հայկական բարեսիրական որեւէ միութեան, բանալ իր սիրտը, պատմել իր չքաւորութեան մասին, թէ բացի սնունդէ, զուրկ ապրելուն, չունէր նոյնիսկ բնական պայմանները գոհացնելու դիւրութիւններ:

Աշխէնին մտահոգութիւնը յստակ էր. եթէ դիմէր եկեղեցւոյ տիկնանց կամ այլ բարեսէր ակիւններու Համախմբումի մը, անոնք պիտի զային ու պիտի տեսնէին իր նողկալի վիճակը, ու ինք շատ պիտի ամչնար:

Ինք, երէկուան ուսուցչուհին, Հարիւրաւոր աշակերտներու վրայ շունչ սպառած, անոնց սորվեցուցած էր Հայոց լեզուն, իւրաքանչիւր բառի իմաստը չեչտելով, առողջանութեան կարեւորութիւնը բացատրելով: Ան կը բաղձատէր իր աշակերտներուն խօսած Հայերէնը ներկայ օրերու աշակերտներուն խօսած Հայերէնին հետ, ու կը զարմանար՝ տեսնուած լեզուական թերիւններուն, սխալ ըմբռնուած բառերուն չըջանառութեան ի տես: Եթէ իր դժբախտ վիճակին մասին արտա-

յայտուէր բարեսէր կանանց... Այս հարցը կը չարչարէր զինք, որովհետեւ անոնք պիտի այցելէին իր խցիկը, անձամբ հաստատելու թշուառութիւնը, ու իրենց ունեցեալը պիտի սեղմէին՝ չզգալու համար զարչահոտը, որ սօսինձի նման փակած-չաղուած էր խցիկի պատին, հոն գտնուող խառնափնթոր առարկաներուն, Օրիորդին հագուստներուն պահարանին, որ միակ ներկայանալի գոյքն էր, որուն համար պարծանքով կ'ըսէր, թէ հօրը յիշատակն էր, զայն գնած էր սուղ գինով, որովհետեւ զէն փայտէ շինուած էր:

Ինչ նուաստութիւն պիտի ըլլար Օրիորդ Աշխէնին համար: Ո՛չ, ո՛չ, չէր բանար իր դուռը ոչ ոքի գինաց. ինք առանձին կը մնար իր դժբախտութեան նեխանքին հետ: Անգամ մը եւս կ'աղաչէր Խուրիին, որ բարեխօսէր դրացուհիին քով, օգտագործելու բաղնիքը: Այդ ալ ըրած էր, իսկ Խուրին անգորդուելի էր. կ'ուզէր փշրել իր խեղճ վարձակալին արժանապատուութիւնը, զայն մղելով դէպի Հայկական բարեսիրական կեդրոններ: Եկեղեցականը չէր մոռնար անցնելու.

- Ի՞նչ՝ Հայերդ, սմալլա հարուստ էք, թող հողան քեզ... Մենք ալ մեր աղքատներուն ցաւերը կ'ուզենք ամոքել: Քու ժողովուրդիդ գնա՛, ամօթ չէ՞՞ ձեր ժեմաւթին (ժողովուրդին), որ քեզի նման անտէր ու ծերացած կին մը մէջտեղ ձգած է:

- Ես ծեր չեմ, - ապուսա (Հայր), առողջ եմ, կ'ամչնամ... Ո՞վ պիտի կրնար զուլակել, վերծանել կամ պատկերացնել, թէ ինչու՞ յոխորտ, փքուն եւ ինքնագոհ կեցուածք ու պարծենկոտ քալուածք մը ունէր այդ կինը: Հետո քալող բարեկամուհիա նոյն ակնարկը ըրաւ, երբ տեսանք մեր դիմացէն եկող յոգնած երեւոյթով, բայց իր յոգնութիւնն ու ծերութիւնը պահել փորձող Օրիորդ Աշխէնը: Երկուքս ալ կը ճանչնայինք զինք մեր մանկութենէն: Հին օրերու քալուածքը կ'ուզէր պահել: Այդ օրերուն ուրիշ էր, երիտասարդութիւն կոչուած տարիք ու տրամադրութիւն մը կար: Իր կօշիկներուն կրունկը այնպիսի ուժգնութեամբ կը զարնէր գետին, որ հեռուէն իսկ կարելի էր գիտնալ, թէ եկողը Օրիորդ Աշխէնն էր: Բայց այդ օրերը անցան-գացին: Երբ իրարու շատ մօտեցանք ու մեր աչքերը խաչաձեւեցին մէկգմէկու նայուածքները, բարեւեցինք: Ճանչցաւ մեզ, որովհետեւ իր դպրոցին աշակերտուհիները եղած էինք:

- Ինչպէ՞ս էք: Կը յուսամ զո՛հ էք ձեր կեանքէն: Ես շատ դժբախտ եղայ, աղջիկներ: Ձամուսնացայ: Կեանքը առանձին քաշքշելը համ չունի:

- Բայց դուք միեւնոյն Օրիորդ Աշխէնն էք, քիչ փոխուած էք:

- Ի՞նչ կ'ըսէք: Ուժ չունիմ քալելու:

- Բայց մենք հեռուէն խեցինք ձեր կրունկին ձայնը...

– Ի՞նչ կրունկ, ի՞նչ կօշիկ...: Մուճակ մըն է հագածս, հիմա կօշիկ իսկ չունիմ: Եթէ ունենամ իսկ, չեմ կրնար հագնիլ...: Ոտքերս ուռած են...

Կարճ գրոյցը առիթ տուաւ զննելու Օրիորդ Աշխէնին աչքերն ու դէմքը: Սեւ ու խորը ինկած աչքերը արտասովոր էին, հոն սարսափ մը կար ծրարուած, պատրաստ՝ դուրս ցայտելու եւ իրեն նայողը խեղդելու: Եթէ բեմադրիչ մը հանդիպէր այս կնոջ, անպայման պիտի ուզէր վճռակի մը դերը տալ անոր:

Նախկին Թաղին Հին օրերու «Օրիորդէն» բաժնուեցան երկու երիտասարդուհիները, իրենց սրտերուն ահագին յիշատակ ու ծանր բեռ մը, զոր յանձնած էր երբեմնի երիտասարդ, ներկայի վճռականման կինը...

Այս հանդիպումէն քանի մը տարի ետք, բարեկամուհիի մը տան դէմ դիմաց կու դանք Օրիորդ Աշխէնին հետ: Տխուր կացութիւն մը կը ստեղծէ դժբախտութեան մատնուած անձի մը ներկայութիւնը, երբ մանաւանդ ճանչցած ես այդ անձին անցեալը: Հազիւ ընկալեալ բարեւը, «ինչպէ՞ս ես»ը արտասանած, ծունկը շփելով ըսաւ.

– Մունկերս կը ցաւին, կը դողամ քայելու ատեն: Ամէն երկուշաբթի Օրիորդ Լուսինը զիս կը բերէ իր տունը: Հոս կը ճաշեմ, լոգանք կ’առնեմ, ապա տունս կը վերադառնամ:

– Ամօթ է, Օրիորդ Աշխէն, ըրածս ինչ է որ... պատառ մը հաց... այս մասին խօսիլն իսկ աւելորդ է... անուշ ըլլայ:

– Ձէի՞ք փափաքեր Հայկական մեր ծերերու տունը երթալ: Հոն առանձին չէիք զգար, հոգատարներ կան: Վերջապէս Հայկական տուն է...

– Մերանո՞ց... Ի՞նչ կ’ըսէք...: Այդ բառը դող կը բերէ ամբողջ մարմնիս:

– Բայց կ’ըսէք, թէ ձեր բնակած վայրը անտանելի է, թէ՛ ոչ ոքի դուռ կը բանաք... նոյնիսկ ձեզի օգնելու եկող անձերուն դուռ չէք բանար: Այդպէ՞ս է, թէ ամբաստանութիւն է...

Լուռ մնաց ծերացած աղջիկը, սեւ ու խորը Թաղուած աչքերը չեչտակի սեւեռելով ինծի: Ու ես վախցայ այդ նայուածքէն, որ անէծքին զոյնը ունէր: Մերանոց բառը յիշելով վերաւորած եմ զինք, պատճառ դարձած, որ խոստովանի, թէ իր բնակարանը շատ աղտոտ է, նեխած, որովհետեւ «յարակից մասերէ» զրկուած է...

– Բայց այս կեանքը կարելի չէ այս ձեռով շարունակել: Հիւանդ էք, պէտք ունիք դեղի-դարմանի, սնունդի, հոգատարութեան...

«Ճինիշեան»ը քիչ մը կ’օգնէ,- ըսաւ հիւրընկալ Լուսինը,- ապա իմ կողմս մօտենալով ականջիս փափսաց.

– Իբրեւ նախկին ուսուցչուհի՝ Ազգային Առաջնորդարանն ալ «բան մը» կու տայ: Այդքանով կը գոհանայ:

Տարիները իրենց ճնշիչ անխնայություն տակ ճգմեր էին Հին օրերու ուսուցչուհին, որ տակաւին կ'ապրէր պատրանքի ու երազի աշխարհի մը մէջ, յիշելով իր աշակերտներուն անունները:

«Մափիկ, ծափիկ ծիրանի,
կարմիր խնձոր կը նմանի»:

Թարմատի, դիւ ձայները կը հնչէին դեռ իր ականջին մէջ, ինչպէս փեթակին մէջ բզզացող մեղրածոր մեղուններու քաղցր համերգ: Ո՛ւր մնացին այդ օրերը, ու Հիմա ծերանոցին դուռը ցոյց կու տան իրեն:

Իր առանձնութեան մէջ Աշխէն կը կրկնէր բազում «ոչ»եր, իբրեւ մերժում ծերանոց մուտքի: Նոյն ատեն կը յիշէր իր երիտասարդութեան յայտարարած «ոչ»երը, բայց այդ «ոչ»երը տարբեր հարցի ու խնդրի կը վերաբերէին: Իր ձեռքը խնդրող թեկնածուներուն դիմաց «ոչ» պատասխանն էր այդ, որ սուղ արժեք իրեն:

– Ո՛չ, հազար անգամ ո՛չ, ծերանոց չեմ երթար,– կը կրկնէր առանձնութեան մէջ: Ինք ուսուցչուհի եղած էր, սերունդներ դաստիարակած, չէր ուզեր պատաններուն հետ ճաշի նստիլ, ծանօթ այցելուներու հանդիպիլ, որոնք պիտի զթալին իր վրայ...

Դեռ ծերութեան տարիքին չեմ հասած, կը մտածէր ան: Ոչ ոք տեսած էր իր անձնաթուղթը. ինք գիտէր միայն, որ հրաժեշտ տուած էր 76 տարիքին, բայց երբ յօնքերը կամարկամար գծէր ածխազոյն մատիտով, ու խօսէր մաքուր հայերէն, ո՞վ պիտի ըսէր, թէ ինք 76 տարեկան էր...: Հազիւ 60 ցոյց կու տար, կ'եզրակացնէր ան ինքն իրեն, ու այս մասին յաճախ կը հարցնէր իր մտերիմ քարեկամուհիին, իրմէ շատ փոքր տարիքով Լուսինին.

– Ըսէ, Լուսին, քանի՞ տարեկան կու տաս ինձի:

– Ձեմ գիտեր, Օրիորդ Աշխէն, հազիւ 60...

– Ինչպէս ճիշդ գուշակեցիր...: Հազիւ այդքան...

Լուսինը ծերացած օրիորդին հաճոյք պատճառելու համար կու տար 60 տարիքը, մինչդեռ համոզուած էր արդէն 70ին, ու չէր ուզեր աւելի վեր ելլել, ծերացնել Օրիորդը...

Տարիքի հարցը շատ կը մտահոգէր Օրիորդ Աշխէնը: Ինքն իսկ չէր հաւատար, թէ տարիները այդքան արագ սահած են, ու հասած մինչեւ 76...: Դեռ երէկ Օրիորդ Աշխէն կ'ըսէին իրեն ու յարգանքով կը բարեւէին իր աշակերտներուն ծնողները: Իսկ իր պարման տարիներուն, երբ տեսնէր տարեց կին մը, հազիւ 40–50 տարեկան, ծեր կը թուէր իրեն...: Իսկ Հիմա՞...: Ասկէ ետք ինչպէ՞ս պիտի կարենար տոկալ դալիք դաժան տարիներուն ծանրութեան:

Մունկերը չէին ենթարկուեր իր կամքին: Պէտք ունէր դեղերու: «Ճինիչեան»էն դարման մը կը ստանար: Բայց այդքանը

բաւարա՞ր էր: Ինչո՞ւ չէր կրնար երթալ մասնագէտ բժիշկի մը քով: Գաւազան մը բռնելով քայլելը արդէն իսկ անհերքելի փաստն էր ծերութեան: Քայլէ՞ր գաւազանով...: Պատուած ըլլալու ցուցանիչ չէ՞ր: Ո՛չ, ո՛չ, ինք դեռ կրնար տոկալ: Տանտէր Խուրիէն կը խնդրէր քիչ մը եւս ըլլալ բարեացակամ:

Օրը դարձեալ նոր երկուշաբթի մըն էր: Արեւը յանդգնած էր Օրիորդին աչքերը չլացնել՝ լուսամուտին ճեղքէն ներս նայելով: Աշխէն չփեց աչքերը, յետոյ՝ ծունկերը: Աստուծոյ ողորմութեան դիմեց, դիմեց սուրբերու եւ սրբուհիներու: Ոտքերը երկարեց բզկտուած մահիճէն դուրս, բայց զօրաւոր պրկում մը զգաց, սուր ցաւ մը, ու եղած տեղը զամուռցաւ...: Գէշ կասկած մը անցաւ միտքէն, չըլլայ թէ ոսկորները վատթարած ըլլային: Կրկին չփեց ծունկերը, որոնք փայտի կտորի մը վրայ դամեր դամելու զգացողութիւնը ձգեցին: Այնքան կարծրացած ու քարացած էին անոնք: Բայց օրը երկուշաբթի էր ու հարկ էր, որ կատարէր երկուշաբթի օրուան այցելութիւնը: Օրիորդ Լուսին իրեն պիտի սպասէր ճաշի...: Ինչպէ՞ս իմացնէր անոր, թէ անկարող էր տեղէն շարժելու: Միակ լուծումը դրացի Ժորժէթը կանչելն էր, բարձրաձայն: Բերանը դարձուց դէպի լուսամուտ: Ուսերէն ոսկորի մը կարծր խշրտուքը լսեց: Հա՛, չըլլայ որ ուսիս ոսկորներն ալ...: Կի՞ր լեցուած է արդեօք...: Ձայնեց Մատամ Ժորժէթին, ձայնը պէտք եղած զօրութիւնը չունէր, խուլոտած էին կոկորդին լարերը...: Դրացուհին եկաւ, տեսաւ անկողնին մէջ զամուած աղջիկը, զարմանքով դիտեց պահիկ մը, մինչ այդ Աշխէն բսաւ.

- Ոնդրեմ, Մատամ Ժորժէթ, հեռաձայնէ Լուսինին, որ դայ մօտս, ու տեսնենք, թէ ծերանոց երթալու դիւրութիւն կա՞յ...

Դրացուհին հեռաձայնեց. Ժամ մը ետք եկաւ Լուսինը, նայեցաւ տատապող Օրիորդին, ու բսաւ յանդիմական շեշտով.

- Քեզի քանի անգամ բսի, թէ այսուհետեւ քու տեղդ հայկական ծերանոցն է: Հոն կը ստանաս բժշկական խնամք, երեք ժում ճաշ, լոգանք, մաքուր սաւանով անկողին, բաղնիքով սենեակ, եւ հոգատարներ: Կը լսե՞ս. բաղնիքով: Տարիներէ ի վեր բաղնիքի երես չես տեսած, բացի մեր տունը առած լոգանքներէդ...

- Ի՞նչ կ'ըսես, Լուսին, ուրեմն ծերանոցի արժանի՞ կ'ընէք զիս...

Ու լացաւ նախկին ուսուցչուհին:

Հիմա ինքզինք կը նմանցնէր գետին տապալած ծառի մը ճիւղերուն: Եթէ ծառին բունը բաժնուած է արմատներէն, ճիւղերը անկարող են դալար քաղցրութիւն եւ թարմութիւն ցուցադրելու: Այս մտածողութիւնը կը ճնշէր Օրիորդին սրտին: Բայց ո՞ւր գտնէր ելքը այս կնճռոտ հարցին...

Ազգականներու դիմելու հնարաւորութիւնները չքացած էին: Անոնք լքած էին զինք: Երրորդական կարգի ազգականական կապը թաց պարանի նման կարծր էր, որ կը մերժէ ծովը,

ճկիլ, կապի զեր կատարել: Որո՞ւն պատմէր այսքան մտահոգութիւն...

*
* * *

Մերանոցի սպասման սենեակին մէջ, նստարանի մը վրայ, նստած են Աշխէն եւ իր բարեկամուհին՝ Լուսին, կը սպասեն տնօրէնութեան կողմէ կատարուող մուտքի արձանագրութեան աւարտման: Օրիորդ Աշխէնին դէմքին վրայ կարծէք մըջիւններ կ'երթնեկեն: Կնճոռտած մաշկը մեղրամոմի գոյն ստացած է. անդադար երեսը կը չփէ եւ քերուտութի զգայնութիւն կ'ունենայ: Աչքերուն առջեւ սեւ մօեղներու նման միջատներ կը թռչին վեր-վար: Շփեց աչքերը, ետքը ծունկերը լիչեցուցին սուր ցաւեր, երբ ավերով չփեց զանոնք: Պաղատազին նայեցաւ Լուսինին, որ կողքին նստած անՀամբեր կը սպասէր տնօրէնուհին ժամանման: Բիչ ետք երեւցաւ Հանդարտաբարոյ տնօրէնուհին, որ մեղմ շեշտով խնդրեց «նորագիր»էն Հետեւիլ իրեն դէպի բաղնիք:

- Մեր օրէնքն է՝ մեր յարկէն ներս մտնող պատասխարեալը նախ լոգանքի առաջնորդել, ապա տանիլ իր սենեակը, ըսաւ տնօրէնուհին, որուն քով լուռ կայնած էր սպիտակ գոգնոց Հազած երիտասարդ կին մը, որ լոգարաններու պատասխանատուն էր:

- Նոր լոգած եմ, ըսաւ Օրիորդ Աշխէն, մերժողական շեշտով, մաքրուած եմ:

- Գիտենք որ մաքրասէր կրնաք ըլլալ, բայց մեր Հաստատութեան օրէնքն է լոգանք տալ նորագիր պատասխարեալին, կրկնեց տնօրէնուհին:

- Մազերս սպիտակ են, երկար ատենէ ի վեր չեմ ներկած, յայտնի չէ՞, որ մաքուր են մազերս, ըսաւ Օրիորդը, խուսափողական շեշտով: Ակներեւ էր անոր տրամադրութիւնը. չէր ուղեր լոգանք առնել:

- Ինչո՞ւ կը Հակառակիք, Օրիորդ Աշխէն, միջամտեց բարեկամուհին, աւելի լաւ չէ՞, որ լոգնաս, մարմինդ կը փափուկնայ, ծունկերդ կը տաքնան, կը թեթեւանաս...

- Բայց, բայց, ըսաւ Օրիորդը ու չկրցաւ շարունակել: Ձեռքով նշան մը ըրաւ, մօտը կանչեց տնօրէնուհին, ու ըսաւ անոր ականջին, փափաքով.

- Գիտէ՞ք, յօնքերս նոր գծած եմ մատիտով, որովՀետեւ յօնք չունիմ...

Տնօրէնուհին թէեւ գարմացաւ, բայց բնական երեւոյթ տուաւ իր Հակադդեցութեան ու ըսաւ լսելի ձայնով.

- Հոգ չէ, Օրիորդ Աշխէն, լոգանքէն ետք դարձեալ կը գծէք. չատ ժամանակ ունիք Հոս...

Աշխէնին մօտեցաւ լողանքի պաշտօնեան, թեւը մտնելով
զայն ոտքի Հանեց ու ըսաւ.

- Հրամանեցէք, մայրիկ, այս կողմէն պիտի երթանք...
- Տեսա՞ր, Լուսին, մայրիկ ալ եղանք...: Ահա թէ ինչո՞ւ
չէի սիրեր ծերանոց բառը...
- Հաճիք, «Օրիորդ Աշխէն» ըսէք իրեն, եւ ոչ՝ մայրիկ,
- Թելադրեց բարեկամուհին, երբ տեսաւ, թէ Օրիորդ Աշխէն
արցունքը կը սրբէր...

Ու երբ դէպի լողարան անցքէ մը կ'անցնէին, մաքուր
սալաքարերուն վրայէն, ոտքերը գետին քակրտելով, ամուր
բռնած օգնական կնոջ բազուկէն, սպանդանոց տարուող
ոչխարի մը եղերական տեսքը ունէր Օրիորդ Աշխէն...

*
* * *

Առանձնասենեակ մը տրամադրեցին Օրիորդին, արեւին
նայող պատուհանով, վարագոյրներով ծածկուած: Մաքուր
մահիճ ու անկողին, արդիական յարմարութիւններով օժտուած
յարակից բաժիններ...: Կեանքին մէջ իր շտեմած Հանդատաւէ-
տութիւնը Հոս կը վայելէր Հիմա, բայց ափսոս, որ ծերացած
էր...: Ոստանակ մտածումներ, ընդդիմադիր կարծիքներ, դրա-
կան տրամադրութիւնները խաչաձեւող: Լաւ ու վատ հաղոր-
դիչ դրութեան նմանող վիճակ մըն էր սա: Ինչո՞ւ այսքան
ուշացած էր այս մաքուր ու կոկիկ առանձնասենեակը: «Ուշ
լինի - նուշ լինի»ն ալ դարման չէր մխիթարուելու Համար:

Արդէն կէսօրը անց էր. ճաշի ժամը անցած, բայց չմոռացան
Աշխէնին բաժինը: Դուռը բախեցին, ու ներս մտաւ ճաշի ափ-
սէով բեռնաւոր պաշտօնեայ երիտասարդուհի մը. ան յարգան-
քով մօտեցաւ մահիճին ու ժպտուն ըսաւ.

- Հրամանեցէ՛ք, մայրիկ...

Օրիորդը թթուեցուց դէմքը, խոժոռ դէմքին վրայ անա-
խորժ տրամադրութիւն մը ուրուագծուեցաւ, մերժեց ձեռքը
երկարել ափսէն ընդունելու. շառաչուն ապտակ մը ստացած
աշակերտի մը զայրոյթը ունէր ան այդ բոլորին, մինչ սպա-
սարկող տիկինը զարմանքով ու անշարժ կը դիտէր ծերացած
աղջկան զայրացած դէմքը, ի վերջոյ ըսելու Համար՝

- Մայրիկ, Հրամանեցէք ըսինք, առէք ձեր ճաշը եւ կշտա-
ցէք: Ինչո՞ւ այդքան զայրացած էք, գէշ խօսք մը ըսինք:

- Դեռ ինչ ըսէիք...: Ես մայրիկ չեմ, Հասկցա՞ք, ես Օրիորդ
Աշխէնն եմ, տարիներով ուսուցչուհի եղած եմ, սերունդներ
պատրաստած եմ: Մայրիկը քու նենէ՛դ է...: Հիմա Հասկցա՞ր,
որուն Հետ կը խօսիս...

Օրիորդ Աշխէնին զայրոյթը փոխակերպուած էր արցուն-
քի. ինչպէս կ'ըլլայ փոթորկոտ երկինքին մէջ փայլատակող
որոտումներէն ետք տեղացող անձրեւը: Երբեմնի ուսուցչուհին

կու լար՝ իր կորստած երիտասարդութեան ու ներկայի ծերութեան զարմացնող եւ յուսաբեկող իրականութեան մասին մտածելով: Ուղեղը տակաւին չէր մոռցած Հին երջանկութիւնը, ու այսօր նոյն այդ ուղեղը չէր հանդուրժեր կացութեան մը, որ իրենց ցոյց կու տար կեանքի մը վախճանը:

Մերանոցի իր սենեակին մէջ թոխքէն զրկուած թռչունի մը յուսաբեկ թափահարումը կը զգար: Անզօր թեւերը ինչպէս դուրս թռչին, հասնէին իր խցիկը, գուցէ ճանապարհին հանդիպէր նախկին աշակերտի մը, ու բարեւէր զայն ժպտուն, երջանկութեան պատրանքը շոյելով հոգիին խորը:

Մառայող կիներ ճաշի ափսէն դրած էր մահճին կողքին գտնուող սեղանին վրայ ու արդէն մեկնած, իսկ Սրիտրդը աչքերը սրբելէ ետք, թաց ափերով սկսաւ չփել ծունկերը, որոնք կը ցաւէին անողորմ խստութեամբ:

Ու Հիմա ուտէ՞ր ճաշը...: Բայց ինչ ախորժակով: Նախ հացին ծայրէն բրդուն մը կտրեց դողացող մատներով, դրաւ բերանը. Հա՞ց էր, թէ թոյն...

Արցունքը դեռ կը յամենար կոկորդին մէջ, արգիլելով կու տալ համեղ ճաշը: Միտքերը քարացած պտուտակի նման կը մերժէին կլոր դառնալ. առանցքի մը զամուսն էին մտածումները: -Ինչո՞ւ զինք ծերանոց բերած էին, իրա՞ւ ծերացած էր: Պայտուակէն հանեց փոքր հայելի մը, երիտասարդական օրերէն մնացած թանկագին յուշարարը, նայեցաւ անոր, տեսաւ թոռմած դէմքը, որուն վրայ սեւ մատիտով դժուած յօնքերէն պղտոր բիծեր տարածուած էին. ճակատագրի ծուխէն ծնւած դէմք մը տեսաւ հայելիին մէջ...

Պէրուր, Հոկտեմբեր, 1999

ՇԱՀԱՆ ԴՈՒՆՏ

ՏՊԱԲՈՐՈՒԹԻՒՆ

*Ձեր անբնական տան վերեւ,
ակօս-ակօս կղմինգորէ կտորին՝
հարսի նման աղաւնիներ կը թափին:*

*Վանապտան մը աղաւնաթեւ սանդուխին,
մենակեանցի ռոմանները նաշխած՝
կարծես հանգչող հրեշտակներ ըլլային:*

*Անոնց նիւթին մէջ անապի,
երէ յանկարծ արթննար ալիք մը լուրջ քղանցքէդ,
կը փշրուէր ապակիի շուքն անգամ...*

*
* *
*

*Մարներուդ սառն մտմորէն բեւաժ
ճաճանչը լոյսի ես օր մը ճանչցայ
աստուածամօր թաց այտերուն վրայ:*

*Խօսքերու կանաչ թերթով առի՝
խօ՛յ քամիներու գալուստը մարմնող՝
փախչող զեփիւռի դողոք մեղեդին:*

*Ու սաղմոսաձայն իմ շշուկներով
զգուելի՛ յեպոյ կնճճ մարմինը,
ես նոր զգացի համը կրակին:*

*Ինչպէս տարիներ շրջելէ յետոյ,
տողերու գոյն-գոյն մրգատարանին մէջ,
ես նոր շնչեցի բուրմունքը բառին...*

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

Պ. Մնասեան

ԱՆԿԻՒՆԱԴԱՐՁ...

Առտու ամէնէն առաջ ես կը Հասնէի վաճառատուն եւ անձկութեամբ կը սպասէի Հարմանին: Հիմա ան միակ անձն էր իմ կեանքիս մէջ, բարեկամ մը, եղբայր մը, գործին գաղտնիքներն ու վայելքներուն ճամբաները ինծի պարզող շոյլ ոգին:

- Պարոյր,- բաւ ինծի առտու մը, Պարոն իսահակ Մուշեղեանին ժամանումէն առաջ,- ինչպէս կը տեսնես, մեծ կարողութիւն պահանջող գործ մը չէ վաճառորդի այս գործը: Միակ պահանջուածը ցուցադրուած ապրանքին շուրջ տրամադրութիւն ստեղծելու ճկունութիւնն է, որուն արդէն ըստ բաւականին վարժուեցար անցնող ամիսներուն: Մատ Հետաքրքրական զբաղում է, երբ մահաւանդ կնոջական նորոյթներու հետ է գործը ու երկտասարդ ես: Կին ու աղջիկներու բոլոր տեսակներուն կը Հանդիպիս, բոլոր երկիրներէն, գեղեցիկներու, Հաճոյակատարներու, բայց յետոյ...

- Յետոյ ի՞նչ,- Հետաքրքրուեցայ անձկաւ:

- Հոս ինծի ապագայ չկայ: Ես պէտք է հեռանամ այս երկրէն:

- Ի՞նչ,- ճշացի ցաւագին շեշտով:

- Քեզի Հոս տեղ բացին իմ առաջարկիս ու արհեստին գաղտնիքները փոխանցելու խոստումներուս վրայ: Կարծեմ ո՛չ Պարոն Մուշեղեանը եւ ոչ ալ զուն ալեւս պէտք ունիք ինծի:

- Բայց ինչո՞ւ, ի՞նչ պէտք ունիս այլուր բախտ փնտռելու: Ի՞նչ կը պակսի քեզի Հոս: Ո՞վ չի նախանձիր քեզի՝ գործիդ, կենցաղիդ, վայելած ազատութիւններուդ Համար:

- Այդ բոլորը ճիշդ է այսօրուան Համար: Բայց վա՞ղը:

- «Վա՞ղը», երկարեցի ձայնս խրովի: Հարման ինծի պէս չէր: Ողջ էին Հայրն ու մայրը: Էշրէֆիէի բարձունքին սեփական յարկաբաժին ունէին: Հարսնացած երկու քոյրեր ունէր, բարեկամներու բանակ մը, ու ճիշդ այդ պատճառներով անորոշութիւնները ցմրուր ճաշակած մարդու իմ ակնոցով իրաւունք չունէր վաղուան մասին մտածելու: Յայտնեցի իրեն մտածումս:

– Մի մոռնար, որ ի վերջոյ սովորական վաճառորդ մըն եմ, տարիքի Հետ կապուած գործ մը, իսկ տարիքը, տարիները կը թոխն-կ'երթան: Մօտ ատենէն, երբ մազերս ալ քունքերուս պէս սկսին ճերմկիլ, ո՞վ այլեւս գին կու տայ ինձի: Միակ դրամապոետս երիտասարդութիւնս է, որ սկսած է արդէն կամաց-կամաց դաւաճանել ինձի: Գրեթէ պատանի էի, երբ գործի սկսայ ու քսանէ անի տարի կ'ընէ, որ այս ասպարէզին մէջ եմ: Հիմա արդէն պարսպի մը մէջ կը զգամ ինքզինքս ու ստիպուած եմ ուրիշ տեղ փորձել բախտս:

Ոչինչ ըսի: Զգացի միայն, որ նաեւ իմ սրտիս պարսպ մը կը գոյանայ եւ առանձնութեան նոր վտանգ մը կը սպառնայ ինձի:

– Քու պարագադ տարրեր է,– վերսկսաւ Հարման կարծ լուծենէ մը ետք,– դուն դպրոց տեսած ու դեռ շատ երիտասարդ ես: Առաւել՝ շուկայի փորձառութիւններ ալ ձեռք ձգեցիր, Հետեւաբար կրնաս սեփական գործի մը մասին մտածել օր մը ու ապահովել բարեկեցիկ կեանք մը: Ես ուշ անդրադարձայ այդ կենսական Հարցերուն: Քանի մը լեզու կը խօսիմ, բայց որեւէ մէկով չեմ կրնար անսխալ էջ մը բան գրել, Համարձակ պատուէր մը տալ: Բարեկամներս շատցած են ու անոնց թիւին Հետ անած է սրտիս սովորական վաճառորդ մը մնալու բարդոյթը: Ես պէտք է քաղաքս փոխեմ: Պէտք ունիմ անսովոր ձեռնարկի մը, արկածախանդութեան մը, զուցէ տառապանքի մը:

Հարման ատկէ առաջ ալ ակնարկութիւններ ըրած էր իր ցանկութեան մասին, բայց քաղաքը փոխելու կապակցութեամբ խօսք չէր բացած եւ գուցէ ատոր Համար էր, որ իր բառերը ո՛չ այսքան թախիծ կը բովանդակէին, ոչ ալ ես այսքան կը ցնցուէի անոնց ցաւազին ուժէն: Ինձի այնպէս թուեցաւ, որ կայուն ապագայ մը փնտռելէ անի՝ իր ներկայէն կ'ուզէ խոյս տալ: Պարզ վաճառորդ մը մնալու Հարկադրանքը իրապէս սկսած էր բարդոյթի վերածուիլ մէջը, որուն բուժումը անծանօթ Հորիզոններուն մէջ կը կարծէր գտնել: Նոր կ'անդրադառնայի, որ նոր չէր իր կսկիծը: Բարձր չըջանականերէ խոյս տալով գիշերուան մինչեւ ուշ ժամերը սրճարանի մը կամ Հաճոյավայրերէն մէկուն անկիւնը անցընելու իր նախասիրութիւնը Հաւանաբար ունէր նոյն չարժաոքիթը: Իր անձին շուրջ ստեղծած Համարումը նախանձը կը զրգոէր ամէնուն, բայց ինքզինք նախանձելի չէր Համարեր երբեք, զինք զրկարաց ընդունողներուն Հաղիւ Հանդիպած՝ Հապառապ կը Հեռանար անոնցմէ: Ծանախ կը յիշեցնէի իրեն նաեւ իմ նախանձս:

– Կարելոյրը,– ըսաւ դարձեալ այդ մասին խօսք բացուած պահու մը,– ստեղծած արագ Համարումներդ չեն, այլ երկարատեւ Համարումներն են, որոնք կը կազմուին ճշմարիտ ու ամուր խորքի մը վրայ, մինչդեռ իմ վրայ ուրիշներու ու քու

տեսածներդ փրփուր են միայն, ջնարակ: Երանի՜ քեզի, որ տարբեր են քու կարեկրթութիւններդ:

- Երանի ինձի՞,- զարմացայ ես:

- Այո, երանի՜ քեզի:

Հարման այնքան բարձր կը գնահատէր իմ չնչին պաքա- լօրիս եւ Փարիզ անցուցած ուսումնական մէկ տարիս, որ ուղղակի ապշութեան կը մատնէր զիս: Իր եռուն առօրեային, ծանօթութիւններու ճոխութեան, բարեկամներու ցանցին ու ճոխ կենցաղին քով այնքան խեղճ կը թուէր ինձի իմ դրամա- գլուխս, որ կ'ամչնայի նոյնիսկ այդ մասին խօսիլ հետը: Ես կը նախանձի իրեն, մինչ ինք երանի կու տար ինձի, այդ թուղթի անարժէք կտորին ու Լուսոյ քաղաքին մէջ քաշքշած տառա- պագին օրերուս համար, կարդացած քանի մը գիրքերուս համար, որոնք ժամավաճառ ըրած էին զիս, ուսանողական մէկ տարիիս համար, որ այնքան նուաստութիւններու ենթար- կեց զիս...

- Վերջին թելադրանք մը քեզի,- ըսաւ Հարման՝ մեկնելէն քանի մը օր առաջ.- Պարոն Մուշեղեանը, ինչպէս տեսար, վա- ճառականի խառնուածք չունի եւ եթէ իրեն ձգուի գործը՝ չու- տով կը գոցէք վաճառատան դուռները եւ միասին դուքս կու գաք: Նախկին իրաքաբնակ եղբօրը կը պարտի այս բոլորը: Լաւ ուշադրութիւն ըրէ: Եթէ ապսպրանքները անձամբ դուն չկատարես, ինչպէս ես կ'ընէի, ձախողութիւնը անխուսափելի է:

Մեր արտաստուազօծ հրաժեշտէն ետք, հակառակ իր պնդումներուն, ես ու Պարոն Մուշեղեան արշալոյսին օդակա- յան գացինք եւ, տարօրինակ տեսարան, հոն հանդիպեցանք մեր վաճառատան յաճախորդներէն ու յաճախորդուհիներէն բազմաթիւ դէմքերու, ոմանք տխուր, ոմանք ամպամած ժպիտներով, ամէնքը խոռով: Օդանաւի թռիչքին հետ բոլոր ձեռքերը սկսան շարժիլ ու տեղի ունեցաւ ընդհանուր փղձկում մը: Կու լային ամէնքը, ֆրանսուհիներն ու հելլէնուհիները, աւելի՜ իտալուհիները...

Այդ օր տրամադրութիւնս չկրցայ վերադառնիլ:

- Հարմանը սքանչելի երիտասարդ էր,- սկսաւ երեկոյեան Պարոն Մուշեղեան,- քաղցրարիւն, ճկուն, յանկարծօրէն բարե- կամութիւն հաստատելու փնտռուած խառնուածքի մը տէր, բայց ինք իր յարգը չգիտցաւ: Օդակայանին մէջ պարզուած տեսարանը աչքովդ տեսար: Այդ պատկերէն կրնաս գուշակել իր կենցաղը: Ամբողջ շահածը հաճույքի ճամբաներուն մախեց: Երբեք չգիտցաւ դրամին յարգը:

Պարոն Մուշեղեանի նկարագրութիւնը որեւէ անդրա- դարձ չունեցաւ վրաս: Ընդհակառակն, Հարմանի հանդէպ համարումս աստիճանաբար աւելի խորացաւ, արդէն սկսած կարօտիս պէս:

Ինչպէս նախատեսած էին, վաճառատան գործը գրեթէ ամբողջութեամբ վրաս ծանրացաւ եւ զարմանքով նկատեցի,

որ աւելի Համարձակ դարձած եմ եւ ամբողջութեամբ կը կիրարկեն Հարմանի ոճը: Անձնասիրութիւն չոյող անոր բառամբ-թերքը եւ արտայայտութեան լուռ կամ բարձրաձայն բոլոր ձեւերը իմ սեփականութիւնս կը նկատէի, մանաւանդ նոր յաճախորդներուն առիթով եւ Հրճուանք կը պատճառէր ինծի արձանագրուած ամէն յաջողութիւն:

Կար սակայն կաղացող բան մը, որ Հետզհետէ աւելի զգալի կը դարձնէր ինքզինք: Գնորդներուն նօսրացող թիւին Հետ Պարոն Մուշեղեանի աճող չէզոքութիւնը գործին Հանդէս: Կը յիշէի երբեմն Հարմանի ախտաճանաչումները ու կասկած մը կը սպրդէր մէջս: Պակսող պայուսակներուն, զօտիններուն, ձեռնոցներուն, վզնոցներուն թէ զարգեղէններուն առիթով կատարած յիշեցումներս յաճախ անտարբեր կը ձգէին զինք. եղածը ռաւարար կը Համարէր շարունակ, շարունակելով եկող-գացողին Հետ ազգային ու քաղաքական Հարցերու մասին անվերջանալի իր գրոյցները: Ուսուցիչ, ազգային գործիչ կամ ասոնց պէս բան մը ըլլալու յարմարութիւններ աւելի ունէր ան, քան առեւտրական Հետաքրքրութիւն, ինչպէս յաճախ կը յիշեցնէր ինծի Հարման: Կը մտաբերէի այդ Հաստատումը ու կը յիշէի գործին դեկը ձեռք առնելու միւս պատուէրը, բայց Համարձակութիւնը կը պակսէր ինծի ու պակսող ապրանքները թուելէ աւելի՝ կը նախընտրէի լուռ մնալ: Յետոյ՝ կը վախնայի պատասխանատուութենէ: Անցած էի Հարմանին տեղը, բայց ի վերջոյ ես Հարման չէի: Ինչպէս պիտի նայէի Պարոն Մուշեղեանի աչքերուն, եթէ իմ պնդումովս գնուած ապրանքները ընդունելութիւն չգտնէին: Երբեմն կը մտածէի նաեւ, որ շուկայի մարդու խառնուածք չունենալու պատճառէն տարբեր շարժառիթ մը կրնար ունենալ ինք: Միջին Արեւելքի քաղաքականութիւնը պայթուցիկ կացութիւն մը կը ներկայացընէր ու պատերազմի վախը Դամոկլեան սուրի մը պէս առկախ էր շրջանին վրայ: Պերճանքի գոհացում տուող խանութները նախկին եռուզեռը չէին մատներ: Դրամատուները նոր վարկեր չէին բանար վաճառականներուն: Պառնափնթոր ժամանակ էր եւ ամէնքը այդ մասին կը խօսին, նորանոր կասկածներ ու անորոշութիւններ սերմանելով իրենց շուրջը:

Իմ Հաշուոյս առանձնապէս դժգոհելու շատ պատճառներ չունէի: Ամօթխածութիւնս Հարմանը ինք բուժած էր ու երկչոտութիւնս արդէն անցեալին կը պատկանէր, իսկ Պարոն Մուշեղեանի վերաբերումը ինծի Հանդէս օրըստօրէ աւելի կը խորանար ու ապաղայիս մտահոգութիւնը ստանձնած մարդու մը գործովով կը հսկէր բոլոր շարժումներուս. ամսականներս ամբողջութեամբ չէր յանձնէր, երբեմն մէկ երրորդը եւ երբեմն ալ կէսը իմ անունովս պահ դնել կու տար անգլիական դրամատունը:

- Դրամին յարգը գիտցիր,- կը յորդորէր,- Հարմանը չգիտցաւ: Հարմանը որք չէ եղած:

Դրամին յարգը...

Գիտէի՛:

Եւ ինչպէ՛ս

Այդ ճամբուն վրայ այնքան քիչ հետաքրքրուեցան ինձմով շատ դրամ ունեցողները, որ այլեւս ոչ ոքի փորձած էի սիրտս բանալ: Այդ էր պատճառը, դրամին չզոյութիւնը, որ դիւ բժիշկ տեսնելու հօրս երազը անկատար ձգեցի եւ մարդոց ատողջութեան նուիրուելու փոխարէն, պատէ պատ զարնեմ ինքզինքս ու ի վերջոյ յանձն առնեմ վաճառորդի պաշտօն մը:

Դրամին յարգը...

Մէկը ըլլար իրեն, Պարոն Մուշեղեանին յիշեցնէր դրամին յարգը. ի՛նք՝ որ կրնար եղբօրը տրամադրած դրամագլուխը բազմապատկել, եթէ քիչ մը աւելի դորժին նայէր եւ նուազ ժամանակ յատկացնէր բարեկամներու, թերթերու, յօդուածագիրներու կարծիքներուն ու չափ դնէր եկող-դացողին հետ նոյն բաները կրկնելու անդարմանելի հեշտանքին: Երբ մարդ չգտնէր շուրջը, զիս կը կանչէր մօտը ու կը կարդար օրուան թերթին մէջ իր ընդգծած հատուածները կամ առանձին մտածումները: Ես հաւանութիւն կու տայի իր բոլոր կարծիքներուն, երախտագիտութենէն ծնունդ առած յարգանքիս մէջ չուզելով թերանալ մարդաչափ անգամ: Կիրակի կամ տօնական օրերը կը ստիպէր, որ ընկերանամ իրենց ընտանեկան սեղանին կամ պտոյտներուն՝ կնոջ ու տասնամեայ աղջնակին հետ, եւ ճաշարաններուն թէ՛ շրջազայութեան ընթացքին խօսողը ինք կ'ըլլար միայն, ու մշտահոլով նիւթը՝ իր որբութիւնը, քիւրտերուն մօտ ըրած հովուութիւնը, Որբահաւաքին բացուած բախտը, յետոյ՝ մեր յեղափոխութիւնը, յեղափոխականները, ահաբեկիչ քաջները մանաւանդ ու Հայաստանի անհանգչելի կարօտը: Ի լուր այդ պատմութիւններուն, զարմանալի կը թուէր ինձի իմ բախտս: Կարծես դատապարտուած էի նոյն ճակատագիրը ապրած մարդոց շրջանակին մէջ իյնալու, Հայրս, Զեյային Հայրը, Պարոն Մուշեղեանը: Պարոն Մուշեղեանը ամբողջ դրադարան մը ունէր այդ նիւթերուն նուիրուած, ճիշդ Զեյայի հօրը պէս, եւ անոր պէս յաճախ կը պատմէր մէկուն բովանդակութիւնը եւ յաջորդ օրը գիրքը շալկած կու դար: Ինձմէ կը խուսափէր իր հոգեկան մթնոլորտին մէջ զիս պահելու պատճառը: Մանչ գաւակ չունենալուն համա՞ր էր արդեօք խանդակաթ վերաբերումը ինձի հանդէպ, թէ իմ Հայր չունենալուս: Ի՛նչ գիտնամ: Նախախնամութիւնը մնայուն մտատանջութեան կնիք մը զարկած էր կարծէք ճակտիս: Ի՛նչ գիտնամ:

*
* * *

Շարաթ օր, յետմիջօրէին, էքսէլսէօր պանդոկը իջեա-
նած ֆրանսացիներու խումբէն յետնեալ գումարները դանձե-
լէն վերադարձիս, Պարոն Մուշեղեան նամակ մը երկարեց ին-
ծի: Փարիզեան վերջին օրերուս մտերիմէս էր, Սիմոնֆէն, որ
սովորական լուրեր ու կարգ մը սրամտութիւններ Հաղորդելէ
ետք, վերջին տողերուն մէջ կը յայտնէր, որ իրեն Հասած ոչ-
Հաճելի լուրեր պիտի Հաղորդէ ինծի ի մօտոյ, վերջին ստու-
գումներէն ետք:

Սրամիտ, շէնչող, այլազան տեղեկութիւններուն առթած
Հաճելի գզայնութիւնը սատեցաւ արիւնիս մէջ ու անորոշութե-
նէն բխած ներքին չարչարանք մը սկսաւ սրտիս: Ի՞նչ կը նշա-
նակէ ոչ-Հաճելի անակնկալ:

Ամբողջ երեք օր տանջուեցայ այս մտասեւեռման մէջ ու
երրորդ գիշերը երազիս մէջ տեսայ Ջելան, որ բզկտուած Հա-
գուստով, Հերարձակ ու բոպիկ՝ աւերակի մը մէջէն կ'անցնէր՝
իմ ընթացքիս Հակառակ ուղղութեամբ:

Աշխատեցայ գէճքը տեսնել:

Ձկրցայ:

Պոռացի անունը:

Ետ չղարձաւ:

Երրորդ անգամ զառանցած ատենս՝ անունին վերջին ար-
ձագանգները արթուն լսեցի:

Սրբեցի քրտինքս:

Լեցուցի գաւաթ մը թունդ գինի:

Վառեցի սիկարէթ մը եւ սկսայ երեւակայութեանս մէջ
պտտող շարագուշակ երազին մեկնաբանութեամբ շարունակել
չարչարանքս: Այդ օրէն սկսեալ ոչ իսկ պահ մը կրցայ բացա-
կայիլ վաճառատունէն: Յուցափեղկին արանքէն կ'երեւէր նա-
մակատունը, որուն ճամբուն յառած կը մնար ակնարկս պա-
րապոյ բոլոր վարկեաններուս, մինչեւ որ չարչարանքիս տաս-
ներորդ օրը նամակարաշխը ներկայացաւ ու դրաւ առջեւս
ապահովագրեալ գիրը: Բացի՝ տակնուվրայ Հոգիով, նայեցայ
ձեռագիրին, միաժամանակ՝ ներփակ թերթի մը կտրօնին ու
ինծի թուեցաւ, որ աշխարհը գլխուս փուլ եկաւ: «Ֆրանս
Սուար» թերթէն անջատուած կտրօնին վրայ կ'երեւէր Ջելան,
աթոռի մը վրայ, անբացատրելի տխրութեամբ մը Համակուած,
ու նկարին վերեւ՝ «Ջելայի սիրամարգորդներէն մէկը երէկ գի-
շեր սպանեց միւսը»: Վարը՝ «Ջելան բանտին մէջ»: Աւելի մանր
գիրով՝ «Հարցաքննութիւնները կը շարունակուին»:

Ձեռքս տարի կուրծքիս, որ չպայթի:

Աչքերուս մթադնեցան:

«Ջելան բանտի մէջ»:

Ինկայ աթոռի մը վրայ ու ինծի այնպէս թուեցաւ, թէ սիրտս քարացաւ նոյն վայրկեանին:

- Ի՞նչ պատահեցաւ քեզի, Պարոյր,- Հարցուց Պարոն Մուշեղեան կարեկից ձայնով մը,- դէմքիդ վրայ գոյն չէ մնացած:

- Գլխու պտոյտ ունեցայ: Հիմա կ'անցնի:

«Կ'անցնի» Հեզնեցի ինքզինքս: «Կ'անցնի»...

- Իրիկունները կ'երեւի ուշ կը քնանաս ու անունդիդ Հոգ չես տանիր: Ուշադրութիւն ըրէ ինքզինքիդ:

Այդ չէր: Այդպէս պիտի ըլլար անպայման, ըսի մտքէս ու, նամակը գրական մխրճելով՝ դիմաւորեցի վաճառատան Հաւատարիմ յաճախորդութիւնէն Մատամ Պաքին:

- Ի՞նչ է, անՀանգի՞ւտ ես,- Հարցուց տիկինը մտահոգ:

- Ոչ: Այսինքն,- ըսի՝ փորձելով պահել պաղարինս:

Երկու կողերուն վրայ արծաթազօծ օղակներ փայլեցնող գօտի մը պատուիրած էր ան, որուն պէտք ունէր նոյն օրը: Անցուց մէջքին: Դարձաւ Հայէլին առջեւ: Կարծիքս Հարցուց: Այս անգամ չկրցայ բուխ սրտով գովել իմ մարմինին վայելչութիւնը ու ապրանք ընտրելու բացառիկ ճաշակը: Միայն գլուխս շարժեցի: Իր կարգին՝ առողջութեանս Հոգ տանելու յորդորներ կարդալով արագ մը մեկնեցաւ:

Ներքին վերիվայրումներու անդրադարձներ յաճախ կռահուած է դէմքիս ու աչքերուս մէջ, բայց բնաւ Հիւանդ չեմ եղած եւ ինծի առողջութեան մաղթանքներ ընելու պէտքը ոչ ոք զգացած է ցարդ: Պարոն Մուշեղեանին ու Մատամ Պաքին պէս ուրիշներ եւս բնականոն չգտան զիս ու նոյնպիսի մաղթանքներ ըրին: Իսկ օրը երկարեցաւ ու երկարեցաւ:

Իրիկուան դէմ, երբ վաճառատան դուռները դոցեցինք ու փողոց իջայ, զգացի շուտով, որ քայլերս կը դժուարանան առաջ երթայ, կայտառութիւնս տեղի տուած էր աճուելի դանդաղութեան մը ու թոքերս կը տառապէին օդի պակասէն: Գրեթէ սպառած էի, երբ Հասայ ծերունի բժիշկ յոյն Քարլոսին մօտը:

- Կը Հաճիս, տոքթոր, անզգայութեան դեղ մը յանձնարարել ինծի,- ըսի չնչակտուր:

- Ի՞նչ

- Անզգայութեան դեղ մը, սանկ աշխարհը մոռնալու Համար:

- Սիրահարուած ես,- Հարցուց բժիշկը ժպտելէն:

- Անանկ բան մը,- ըսի՝ քեկուած ձայնով:

- Նման Հիւանդութիւններու Համար դեղ չէ ստեղծուած դեռ, բայց գործածէ Նանսիա թիւ 10, օրական երկու անգամ, ճաշէն եւ ընթրիքէն ետք: Զիդերու Հանդարտութեան Համար փնտռուած դեղը այդ է Հիմա: Թերեւս կ'օգնէ: Նանսիա թիւ 10:

*
* *

«Զեկան բանտի մէջ»:

Հոն կ'երեւակայէի զինք, բայց պատկերը իսկոյն կը ջնջուէր եւ ուրիշ ժապաւէն մը կը դառնար ուղեղիս մէջ: Եւ ժապաւէնին մէջ ինքն էր միշտ, ամէն ակնթարթի, Զեկան, աւելի քան առաջ, գործի ընթացքին, մայթերուն վրայ, սիկարէթի ծուխին մէջ, գինիի գաւաթին խորը, կուլ չգացող դեղահատին հետ, մշուշներով շղարչուած, լուսնին մօտ, ժողովարաններու էջերուն, ամէնուր, ծովու ալիքներուն մէջ, ծովերէն անդին, լուսազարդ փողոցներուն վրայ, իսկ ես՝ ոչ մէկ տեղ ամուր կը զգայի ինքզինքս, փոթորիկէ բռնուած շուղի մը պէս էի, մարմնով ու Հոգիով տարուբեր, մէկ անկիւնէն միւսը:

Մութը կոխելէն առաջ՝ Հանգիստի պէտքը քայլերս ուղղեց դէպի Մատամ Պիանքային օթեւանը:

Հարման ինծի համար ընտրած էր մուտքի դրան մօտ քացուող սենեակը: Առանց ձայն-ժպտուն հանելու սահեցայ ներս ու սեղանին լուսամբիովը վառելէ ետք ինքզինքս նետեցի մահճակալին վրայ:

Հիւրասրահի խորքին զգալի էր եռուզեռ մը եւ ձայնապընակ մը խտալական մեղեդի մը կը ծփացնէր խոհանոցէն ծաւալող բոլորներուն վրայ: Լուր ունէի, որ չարաթ մը առաջ պարպուած երեք սենեակներուն համար, տանտիրուհիս՝ մատամը պիտի ընդունէր նոր երգչուհիներ ու պարուհիներ Բտալիայէն ու Սպանիայէն: Հիներէն մնացած էր միայն դուարթախօս ու զուարթարար Սիւզին, որուն երբեմն կը պատահէր, որ գլխով բարեւ կու տայի, իսկ նորերուն հետ ծանօթանալու առիթ չէր եղած տակաւին: Առտու եւ գործի գացած ժամերուս իրենք քնացած կ'ըլլային, իսկ ուշ ժամերուն վերադարձած ատենս՝ իրենք իրենց գործին վրայ:

Ըստ բժիշկին պատուէրին, քանի մը կտոր պիսքուիթ նետեցի բերանս եւ անոնց ետեւէն առնուած նանսիան կոկորդէս հազիւ վար իջած էր, երբ դրան զարկին հետ լսեցի անունս.

– Միւսէօյ Պարոյր...

Մատամ Պիանքան էր, որ առանց սպասելու իմ Հրաւէրիս, բացաւ դուռը ու յայտնեց իր զարմանքը՝ պզտիկ ժամերէն առաջ եկած ըլլալուս համար:

Անբարբառ՝ նայեցայ աչքերուն:

– Անպայման Հոտ մը առած ես, – ըսաւ չար Հով մը աչքերուն:

– Ի՛նչ Հոտ, ի՛նչ բան, – ըսի՝ զսպուած ջղայնութեամբ:

Պարզուեցաւ, որ նոր եկողներուն մէջ սիրուն աղջիկ մը կայ, երգչուհի, անունը՝ Քարլա, եւ Քարլային տարեդարձն է հիմա:

Կախեցի գլուխս:

- Ի՞նչ կայ,- Հետաքրքրուեցաւ Մատամ Պիանքա մտա-
Հոգ,- Բա՛ն մը պատահած է:

- Նանսիա, մատա՛մ:

- Ի՞նչ:

- Նանսիա:

- Նանսիա՞ն ով:

Մատանանչեցի տուփը:

Ապշուրեցին մը ուրուացաւ մատամին դէմքին եւ ես իր դո-
րովազուիմ Հետաքրքրութեան բաւարարութիւն տալու Համար
ստիպուեցայ ըսել իրեն, որ անորոշ տրամտութիւն մը չոքած է
վրաս եւ անոր փարատման Համար յանձնարարուած է այդ
տեղը: Ազնիւ Հոգի էր Մատամ Պիանքան, իր օթեւանը մուտք
գործած օրէս գտնուողները անպակաս ըրաւ վրաս, միշտ լե-
ցուն պահելով պզտիկ սառնարանը ու սեղանը բեռնաւոր պա-
հեց խմիչքով, սիկարէթի տուփերով ու պտուղներով, ամէն
ժամ պատուիրելով, որ չմոռնամ իր ջերմ բարեւները փո-
խանցել անմոռանալի Հարմանին:

- Անորոշ տրամտութիւն եղեր,- երկարեց ձայնը մատամը,-
ես չուտով կը գտնեմ ատոր դարմանը: Բայէ՛...

- Մատամ՛...

Ընդդիմութիւնս գուր անցաւ: Մատամը ձեռքէս բռնած՝
անջատեց զիս մահճակալէս:

- Գոնէ պզտիկ նուէր մը առնէ՛ինք, մատա՛մ:

- Նուէրը դուն ինքդ կ'ըլլաս: Տղամարդ չկայ մէջերնիս:

Մատամ Պիանքան ուղղակի առաջնորդեց զիս նորեկ
երգչուհիին սենեակը, ուր տարբեր խմիչքներով ու պտուղնե-
րով սարքուած էր ճոխ սեղան մը, մէջտեղը՝ կարկանդակ,
չուրջը՝ Միւզիէն զատ երկու սպանուհիներ ու խալուհի մը,
սպանուհիներէն մէկը ալա կարտոն յարգարուած էր, միւսները՝
Հերարձակ, ամէնքը ժպտուն, զուարթ տրամադրութեամբ մը
Համակուած:

Միւզիին անապարանքով խոհանոց մտաւ, վերադարձին
երկարեց երեսները ինծի ու աղմկարար ուրախութեամբ մը
սպաններէնով կրկնեց Մատամ Պիանքայի կատարած ծանո-
թացման ծիսակատարութիւնը, առանձնապէս զովքը Հիւսելով
ամէնէն մանկամարդը Հանդիսացող երգչուհի Բարլային, որ
ճիգ կ'ընէր իր մասին եղած գովասանական չափազանցու-
թիւնները մեղմող բառեր արտասանել՝ կէս-խալերէնով եւ
կէս-կոտորտուած ֆրանսերէնով: Այն տպաւորութիւնը առի իր
բառերէն, որ եթէ երգչուհի չներկայացնէին զինք, ես պիտի
մտածէի, որ երգելու Համար ծնած է, այնքան տաք էր իր
ձայնը ու փափուկ, որ սովորական Հնչիւններն անգամ երգի
կախարդական թրթռացումներով կը Հոսէին նուրբ շրթներէն:

Բոլորուեցանք սեղանին շուրջը:

Միւզիէն ետք, տիրական դէմքը Մատամ Պիանքան էր նո-
րէն, որ ճիգ չէր խնայեր պահը պայթուցիկ դարձնելու Համար:

երգ մը առաջարկեցին Քարլային:
Անմիջապէս սկսաւ:
Մափահարութիւնն ու աղմուկը պայթեցուցին սենեակը:
Պայծառադէմ, էակ էր Քարլան ու երեսներուն վրայ կը վառէր կարծես անտեսանելի կրակ մը: Նայած, ժպտացած թէ խօսած ատեն, բոլոր շարժումներուն հետ տարօրէն ուշադրաւ հմայք մը կը ցաթէր իրմէ եւ կը թուէր, թէ ինք անծանօթ չէ իր թովչական զօրութեան:
Երկրորդ երգին աւարտին, երբ դարձեալ բաժակ պարպը-ւեցաւ իր պատուին, վիրաւոր ձայնով մը յիշեցուց, որ ես քիչ մը բացակայ կը թուիմ իրենց մթնոլորտէն եւ թախիժ մը կը պտտի աչքերուս մէջ:
- Պարոն Պարոյրը այսօր իր ամանին մէջ չէ,- յիշեցուց Մատամ Պիանքան:
- Իրապէս, ի՞նչ ունիս,- Հետաքրքրուեցաւ Սիւզի:
- Զեյա,- փախաւ բերնէս:
- Զեյա՞: Կարծեմ Զեյա չէր, Նանսիա էր,- մէջ մտաւ Մատամ Պիանքան:
- Ճիշդ է, սխալեւ եմ, Նանսիա էր, բայց կարեւոր այդ չէ, կարեւորը ես չեմ, զիս մոռցէք, թող Քարլան նոր երգ մը երգէ:
- Քեզի՞ Համար,- ձայնեց Սիւզի:
- Զայնը Համով էր, չէ՞,- յիշեցուց Մատամ Պիանքան:
- Ո՛չ միայն ձայնը, այլեւ իր ամբողջութիւնը այդպէս կը թուի, Համո՛վ:
- Կրացիա, կրացիա,- բացազանչեց Քարլա՝ ձեռքը երկա-րելով ինծի:
- Մենք՝ խտլացիներս,- ըսաւ Մատամ Պիանքան,- նման պարագաներու կը ջանանք ժառանգական պատճառները ըստուգել, այո, Քարլան յղացած ատեն մայրը անպայման ունկընդրած է Իտալիոյ քաղցր երաժշտութիւններէն մէկը ու զինք աշխարհ բերելէ առաջ սեւեռած է աչքերը զեղեցիկ ար-ձանի մը:
Մափահարութիւն:
Քարլայի «Ամորէ-ամորէ» բառերով սկսող նոր երգը առինքնող էր աւելի, բայց իմ մէջ որեւէ բարեշրջութիւն չառաջացուց: Զկրցայ նոյնիսկ ձեւանալ, որուն որոշ չափով մը տիրացած էի վաճառատան մէջ պաշտօն ստանձնելէս ետք:
- Քարլա,- ըսի յանկարծ բաժակս բարձրացնելով,- կը մաղթեմ, որ միշտ այսպէս մնաս ու կեանքիդ մէջ երբեք վիշտ չճանչնաս, երբե՛ք:
Քարլան օղային Համբոյրով մը շնորհակալութիւն յայտնեց ինծի ու ոտքի ելայ՝ այս անգամ լիակատար երջանկութիւն մաղթելով ամէնուն:
- Ո՞ր,- Հարցուց Սիւզի իրարանցումով:
- Սենեակս պիտի անցնիմ:
- Մինա՞կդ:

Աղջիկները խնդացին:

Մատամ Պիանքան բարձրաձայն զնահատեց Սիւզիին ակնարկը եւ աչքով ըրաւ ինձի:

Շտապեցի ներս:

Անձկութիւնս աւելի ծանրացաւ երակներուս մէջ: Սիրտս կարծես կ'ուզէր անջատուիլ ինձմէ ու կը սպառնար պայթիլ, պայթեցնել մարմինս: Երբեմն սուտի մը պէտքը կը զգայի, պատրանքով մը կ'ուզէի պատել այդ պատկերաւոր իրականութիւնը, բայց ի զուր, բան մը կը հրդեհէր զիս յանկարծ, կրակ կար կարծէք ամէն տեղ, նստած տեղս, նայած տեղս, սեւ, լափիլզող կրակ մը, նամակը, Ձեւային նկարը, այն հրաբորբ, խոտվարար աղջիկը, որ «Պղտոր ջուրեր»ուն Ձեւան կը կրկնէր նորէն, ողբերգական գիրքին արինաթափախ էջը:

Ուշ ատեն, երբ աղջիկներուն ձայները բոլորովին մարեցան ու մարմինիս մէջ նանսխային ներգործած թմրութիւնը զրեթէ զգետնած էր գիս, կամաց մը բացուեցաւ սենեակիս դուռը ու ստուերի մը մօտեցումը կռահեցի: Վառեցի կիսալոյս լուսամտիկը: Քարլան էր, ձիւնափրփուր ու թափանցիկ գիւերազգեստի մը մէջ, ու ժպիտի մը շողուն հրապուրին տակ կը վառէին երեսները:

- Կ'անհանգստացնե՞մ ձեզ,- հարցուց դողդոջուն ձայնով:

- Հրամէ՛, - ըսի՝ շունչս բռնած:

- Բոլոր սենեակները այցելեցի, բայց մէկը արթուն չգտայ, մինչ իմ վրաս յիշատակներ խուժեցին ու խանգարեցին քունս: Յիշեցի ծննդավայրս, Հարազատներս, Հոն տօնած տարեդարձներս:

«Մննդավճիւրս, Հարազատներս, տարեդարձներս» Հղովուեցան մտքիս, բայց չկրցայ իր մորթին մէջ մտնել:

- Ես Հոս սրտակից մը չունիմ: Կ'ուզէի աւելի մօտէն ճանչնալ ձեզ:

- Հիմա ետ դարձիր, Քարլա, Հիմա չէ, ուրիշ առիթով...

*
* *

«Ձեւան բանտի մէջ»:

Ողջ գիշերը այս բառերը կրկնուեցան ուղեղիս մէջ, աստիճանաբար խորացնելով կսկիծս: Ինչպէ՞ս պատահեցաւ այդ դէպքը, ո՞ւր, ի՞նչ պայմաններու մէջ, Ձեւան յանցանքի ի՞նչ բաժին ունի անոր մէջ, ի՞նչ կը սպասէ իրեն Հիմա, իր պատճառով գործադրուած ոճիւրը հետք պիտի ձգէ՞ Հոգիին: Կ'ուզէի իմանալ բոլոր մանրամասնութիւնները ու նոյն ատեն մեղքի բաժին մը կը վերագրէի ես ինձի: Մեր վերջին ու քաղցրօրէն յախուռն գրկախառնումին շաղախներով ամրացած կապերէն ետք, ինք՝ Ձեւան, եւ իր ազնիւ ծնողները դիւրին պիտի չձգէին

բաժնուկը իրենցմէ, արդէն կը զգայի, որ տիրութիւն կ'ուզէին ընել ինծի, եւ ես երախտապարտ չմնալու յիմար մտածումով մը, առանց մնաք բարովի հեռացած էի Փարիզէն, գլխահակ մէկու մը տեղ՝ ինքն իր վրայ յաղթանակ տարած մարդու մը հպարտութեամբ վերադառնալու յոյս մը փայփայելով: Եթէ առանց լուր տալու այդպէս անակնկալօրէն չբաժնուէի իրենցմէ եւ որեւէ ձեռով չարունակէի կապերս պահել, նման դէպքեր կը պատահէին միթէ, Զելան կ'ընդունէ՞ր մէկուն բարեկամութիւնը եւ թոյլ կու տա՞ր, որ երկրորդի մը մէջ ոճրագործ մը արթնցնելու չափ ճակատագրական պայմաններ ստեղծուին իր շուրջ: Այս բոլորին ետին կայ վրէժխնդրութեան մը տարերքը, որուն ճնշումէն չէի կրնար ազատագրել ինքզինքս: Ինկած էի շրջապատոյսի մը մէջ ու չէի գիտեր, թէ Հոսանքը ուր կը տանի զիս կամ կը մխրճէ իր բացած ո՛ր անդունդին երախտ:

Կը պատահի նաեւ, որ կարճ պահերու մոռնամ իմ բաժին մեղքս Զելայի ներքին փլուզման մէջ ու անոր ամբողջ ծանրութիւնը բարդեմ իր ուսերուն: Ճիշդ է, բնական մարդու արարք չէր բաժանում իմ ոճս, բայց ինք ինչո՞ւ այդքան արագ մոռցաւ իր մօտիկ անցեալը, լուռ յանձնառութիւնները, շոյալ անձնատըւութիւնները ու հետեւեցաւ իր մոլորեցուցիչ դեւերուն:

Այս պղտոր ալեկոծումին մէջ երբեմն կը փորձեմ խաղաղեցնել անմխիթար Հոգիս, փնտռել յոյսի փոքրիկ նշոյլ մը, կը մոռնամ Զելայի բանտարկութիւնը, տխրատեսիլ կերպրանքը, անմեղութիւնը, մեղաւորութիւնը, այսօրուան վիշտը, վաղուան խղճախայթը, ամէնքը, ամէն ինչ ու կը զգամ քինախնդրութեան մը խմորումը նաեւ իմ Հոգիիս, վրէժի մը ձեւակերպումը երակներուս մէջ՝ ինծի դէմ, Զելային դէմ, մեր բախտը տնօրինող անծանօթին դէմ, նաեւ վախ մը կը սողոսկի սրտիս, տարբեր մէկը կը թուիմ ես ինծի, ինքն իրմէ պարպուած էութիւն մը, սանձաբեկ, անպատասխանատու, ինքզինքէն դուրս գալու հրամայականի մը անձնատուր:

*
* *

Կեանքը նոյն կշռոյթով կ'ընթանար, միայն ես նոյնը չեմ, հարցականներու ու թախիծներու բեռան մը տակ կը քած՝ դարձած եմ երթալիք տեղը չգիտցող, եղած տեղը մնալու անտրամադիր, Հոգեբու Հարուածներուն տակ՝ Հոգեզուրկ մէկը: Գործի մտնելէ ետք, աշխարհը վարդազոյն դարձած էր ինծի, ուրախութեան յորդաղեղ աղբիւրներ կը կարկաչէին Հոգիիս, մօտէն թէ Հեռուէն հրճուանք մը կը ծաւալէր արեանս մէջ, սրտակիցներ կային, կրնայի բացուիլ ամէնուն, օրօրուիլ մէկուն յուշերէն արձակուած Հովերով, միւսին ճառագայթող ներկայութեան: Կարճ ժամանակի մէջ ինչ հակադիր դասաւորումներուն դէմ-յանդիման դրաւ զիս բախտը:

- Պարոյր,- ձայնեց Պարոն Մուշեղեան:
Դարձայ իր կողմը:
Նշան ըրաւ, որ մօտենամ իրեն:
- Ատենէ մը վեր լաւ չեմ տեսներ քեզ: Ցաւ մը ունիս:
- Մասնաւոր ոչինչ,- ըսի:
- Այդպէս չ'երեւիր սակայն. աչքերդ, ձայնդ, շարժումներդ,
նոյնը չեն: Տե՛ղ մը կը ցաւի քեզի:
Փորձեցի Հերքել իր տպաւորութիւնը, բայց ինք պնդեց իր
կասկածին վրայ:

Այո, Հիւանդ էի, եւ ինչպէ՛ս...
Որպէսզի նոյն Հարցումները չըլլան ինծի, սկսած էի յա-
ճախել այն վայրերը, ուր երբեմն կ'ընկերանայի Հարմանին,
շատերէն աննկատ ճաշարաններ, սրճարաններ, Հաճոյավայ-
րեր: Հիմա, այլեւս կարծես վարժութիւն դարձած էր անապա-
րել նոյն գոց ու բաց վայրերը, ամէն գիշեր, մինչեւ պզտիկ ժա-
մերը, ծուխի, բոյրի, ճենճերումներու բարդ մթնոլորտի մը մէջ:
Նոյն պատճառներով արդեօք Հարման կը նախնորէր գիշերը
անցընել այս անկիւնները, թէ՛ այդ վայրերուն ձգողութիւնը
արդիւնք էր արեան նախասիրութեան: Հարցումը կ'ընէի՝
առանց պատասխան մը կարենալ ճարելու: Յստակ էր միայն
ա՛յն, որ ցերեկի ելեւէջներուն վրայ ունեցած իր իշխանութեան
պէս՝ ան նաեւ գիշերային կեանքին լիակատար տէրը կը Հա-
մարէր ինքզինք:

Միայն վերջերս անդրադարձայ, որ վաճառատան մէջ իր
ոճերը նոյնութեամբ կրկնելու իրականութեան պէս, այս վայ-
րերուն մէջ եւս դարձած եմ իր կրկնօրինակը, խօսելու, կատա-
կելու, առանց դիմացինս ճանչնալու՝ անոր կեանքին մէջ
մտնելու, զրուցելու, մանրադէպեր պատմելու բոլոր եղանակ-
ներուն մէջ:

Իրար խաչաձեւող այս ենթադրութիւններուն, Հարցում-
ներուն ու առեղծուածներու Հարուածներուն տակ, իրիկունը
վաճառատան դուռը գոցելէ ետք, քայլերս դարձեալ ուղղուե-
ցան դէպի Մթաբքօ: Փողոցը գրեթէ պարպուած էր ու ինքնա-
շարժները կ'անցնէին արագասոյր: Դէպի Նորմանտի պանդոկը
սահող մայթին՝ խարտիչաճեր աղջիկ մը ժպտեցաւ ինծի:

Քալեցի:
Մտայ ճաշարան Ռոպէր:
Այդ պահուն Հոն կը Հաւաքուէին Միջերկրականի միւս
ափերէն եկող գիշերային պարիկները ու գուարթ աղմուկով կը
լեցնէին մթնոլորտը: Ցաճախակի այցելութիւններու շնորհիւ,
արդէն բարեկամութիւն մը Հաստատուած էր Ռոպէրի Հետ, որ
բարեկամաբար կը դիմաւորէր զիս միշտ:

Բոլոր սեղանները դրաւուած էին: Ռոպէր նշան ըրաւ, որ
մօտենամ իրեն ու աչքի խաղով մը տեղ բացաւ ինծի դիմացի-
նին Հետ անգլերէն խօսող սեւահեր աղջկան մը կողքին:
Պզտիկ աղջիկ մըն էր դիմացինը ու տարօրէն գեղեցիկ: Իր բա-

ուերը գեղեցկութեան չափ թուվիչ էին, մինչդեռ կողքիս նստողը յարձակողական ոճ մը կը կիրարկէր ու վայրագ շեշտ մը կար ձայնին մէջ: Նշանաւոր Հանոյավայրերէն Քիթ-Քաթի արթիստներէն էին: Կը վիճէին: Դեռատին գլխու զօրաւոր ցաւ մը ունէր եւ կը յամառէր ընթացք չտալ բժիշկի մը երթալու միւսին թելադրանքին: Ի վերջոյ Համաձայնեցան: Ռոպէր յանձն առաւ մօտակայքը գտնուող բարեկամ բժիշկի մը տանիչ Հիւանդը:

- Կը յուսամ, որ ճամբան անհանգիստ չես ըներ օրիորդը,-
ըսաւ կողքիս նստածը:

- Ապահով եղիր:

- Հակառակ պարագային,- մէջ մտայ ես:

- Այսի՞նք,- դարձաւ ինծի:

- Եթէ ճամբուն վրայ ցաւը յանկարծ չքանայ՝ նորէ՞ն ան-
Հանգիստ պիտի չունէ այդ հրաշքը...

- Ատիկա ես չեմ կրնար ճշդել,- ըսաւ քովինս խնդալէն:

Ռոպէր գլուխը շարժելէն Հետեւեցաւ Հիւանդին: Միւսին
դէմքին շարունակուեցաւ իրենց խօսակցութեան խառնուած
պահուստ ստեղծուած գոհունակութիւնը:

- Փրանսացի՞ էք,- Հարցուցի:

- Այո:

- Բայց շատ լաւ անգլերէն կը խօսիր:

- Օ,- ըսաւ,- ես Հինգ լեզու կը խօսիմ:

- Ինչ բացառիկ ընդունակութիւն,- ըսի՝ գլուխ շարժելէն:

- Այցելած բոլոր երկիրներուս լեզուները:

- Արաբերէ՞ն ալ:

- Օ, ո՛չ, այդ մէկը՝ ո՛չ,- ըսաւ,- կարծեցիր որ ես Փիքա-
սո՞ն եմ:

Խնդուքս չկրցայ զսպել: Փիքասոյի նկարչական արտա-
կարգ լեզուին ու արաբերէնի աարօրինակութիւններուն միջեւ
Համեմատութիւններ դնելու մտքի իր ձեւը Հանելի թուեցաւ
ինծի ու աւելի չահագորգութեամբ սկսայ դիտել զինք:

Բարձրահասակ ու թարմ աղջիկ մըն էր: Արտաքնապէս
անխնամ: Մազերը թափած էին ուսերէն ու տարածուած կուր-
քին բացատներուն վրայ, ուրկէ կը յորդէին ծիծերուն Համար-
եա՝ բոլոր մասերը՝ սպիտակ ու ճոխ: Ինքնամոռացման այդ
պահուն տարօրինակ զգայնութիւն մը սկսաւ շրջիլ արեանս
մէջ, երբ խտալացի իր բարեկամին նմանցուց զիս:

- Օրիորդը Հանելի՞ թուեցաւ ձեզի,- Հարցուց սեզանա-
կիցներէն երիտասարդ մը:

- Շատ,- ըսի,- բայց աւելի Հանելի պիտի ըլլար, եթէ
աւելորդ բան մը չնկատէի վրան:

- Ի՞նչ,- Հարցուց ինք՝ աչքերը լայն բացած:

- Տաքատդ: Ես աղջիկներուն վրայ տաքատ չեմ սիրեր:

- Օ,- ըսաւ,- քեզի Հանելի ըլլալու Համար կարելի է Հանել
տաքատը, պայմանաւ, որ աւելի Հեռուները չերթաս:

Ակնարկութիւնը զուարթ քրքիջներով դիտաւորեցին սե-
ղանակիցները, որոնք արդէն ոտքի ելած՝ իրեն կը սպասէին:
«Շուտով կը հասնիմ ձեր ետեւէն», ըսաւ ու աւելի մօտենալով
ինծի՝ սկսաւ սրբապետել աչքերս:

Ուստի զարկի ուսերուն: Ափին մէջ առաւ ձեռքս:

Առաջարկեցի զաւաթ մը գինի՝ առնել միասին: Ձմերձեց:

Հետաքրքրուեցաւ կեանքովս: Մի ոմն, ըսի:

Գործովս: Տուի Հասցէս:

Սէրերովս: Հերքեցի:

Բառերէս դատելով՝ վայրենի մը ուզեց տեսնել մէջս:

Դէմքիս գիծերը նկարագրեց ու տղեղ գտաւ զիս:

Ես ապշութեամբ կը հետեւէի իր Հաստատումներուն, ինք
չարունակ կը խնդար:

Երբ բաժակները պարպուեցան՝ մանրիմ ձայնով մը Հար-
ցուց.

- Կ'ընկերանա՞ս ինծի:

- Մինչեւ ո՞ւր, - Հարցուցի փութկոտ:

- Մինչեւ Քիթ-Քաթ:

- Մ, - ըսի, - շատ մօտ է չ'արժեր: Քանի մը քայլ է միայն:

Ձ'արժեր:

- Մինչեւ ո՞ւր Հապա, - Հարցուց լայն ժպիտով մը:

- Հեռո՞ւն, Հեռո՞ւն, շատ Հեռուն, մինչեւ դժոխք:

- Դժո՞խք:

- Ուր մարդիկ անկէզ մօրենիներու պէս կը վառին, քայց
չեն Հատնիր:

Խնդաց: Աւելի սեղմեց ձեռքս: Քանի մը քայլ անձայն
տռաջացանք:

- Անունս չ'Հարցուցի՞ր, - ըսաւ՝ քայլերը դանդաղեցնելով:

- Հարցնեմ կամ ոչ՝ միեւնոյնն է:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ պիտի մոռնամ: Ես կը մոռնամ բոլոր անուն-
ները:

- Յիշողութիւնդ ապերախտ է, թէ անունները անարժան
եղած են:

- Ընդհանրապէս:

- Ըսեմ սակայն, կը կոչուիմ Ֆապիան:

- Կը մոռնամ:

- Մուտ ես, չար ես, վայրենի ես, - ըսաւ ետեւ ետեւի ու
աւելի յաճախ սկսաւ մարմինը զարնել մարմինիս: Վերջին
Հպումին առնէն արդէն Հասած էինք Քիթ-Քաթի սեմին: Պաշ-
տօնի վրայ եկող երկու ոստիկաններ պաշտօնապէս կը դիտէին
մեզ:

- Պիտի չուզէի՞ր պահ մը ներս մտնել, - Հարցուց թերա-
հաւատ:

- Ոչ:

- Ինչո՞ւ այդպէս կտրուկ:

- Այդքան աղջիկներ մէկ անգամէն դիտելու վարժութիւն չունիմ,- ըսի խնդալով,- գիշերը չեմ կրնար քնանալ յետոյ:

- Յետո՞յ:

- Ձիդերուս տէրը չեմ:

- Յետո՞յ:

- Յետոյ չեմ գիտեր ինչ եմ: Ծնորհակալութիւն ու գիշեր բարի:

Ինչ Հաճելի էր Քիթ-Քաթի ու Սէն Ժորժ պանդոկին մինչեւ ինկած ճամբան: Ծովը կը շառաչէր ու ալիքները կը բարձրանային մինչեւ մայթը եզերող ցանկապատերը: Նաւ մը կը մօտենար քարափին ու չորս-հինգ նաւակներ անոր առջեւ կը պարէին: Ալիքներէն եկող Հովը չէր նեղեր դիւ ու Փրանսու-Հիին Հպումներէն առաջացած ջերմութիւնը դեռ կը յամառէր մարմինս զգայուն մասերուն: Սրամտութիւններ ընելու եւ սուր խօսքերուն առջեւ անտարբեր չմնալու իր ճաշակը նորէն Հարց դարձնաւ մտքիս: Մինչեւ ուչ գիշեր իր յիշատակը պտտցուցի Հետս ու առտու, երբ վաճառատուն դացի, զգացի, որ աչքերս նուազ աղօտ կը տեսնեն իրերը:

Օրուան մուտքը արհամարհելի չէր, բայց Պարոն Մուշեղեան նորէն ոգեւորութիւն ցոյց չտուաւ: Գանձուած գումարներէն եւ Հաճոյք կ'առնէի, ինք, սակայն, կարծէք ոչինչ կը զգար: Երեկոներուն կանուխ կը մեկնէր, երբեմն նոյնիսկ առանց պակսող ապրանքներուն ցուցակը աչքէ անցընելու:

Հեռաձայնը Հնչեց: Պարոն Մուշեղեան առաւ ընկալուչը եւ մէկ-երկու կտրուկ Հարց-պատասխաններէ ետք, նշան ըրաւ, որ պէտք է դարձեալ մեկնի եւ մեկնեցաւ: Հեռաձայնելէ ետք անժանօթ մարդերու այցելութիւնները ընդունելու կամ անմիջապէս ձգել-երթալու պարագաները սովորական դարձած էին ատենէ մը ի վեր եւ նոյն պատճառներով մթնոլորտին մէջ տիրող խորհրդաւորութիւնը սկսած էր նեղացուցիչ թուիլ ինձի ու կեղեքել խաղաղութեանս վերջին պահատները:

Ինքզինքս նետեցի փողոցի եռուղեոյն նայող պատուհանին մօտ գետեղուած թիկնաթոռին ու սպասեցի երկրորդականի առաջին դասարաններու ընկերներէս Վաղարշին, որ առտու Հեռաձայնային կապով մը գիշերը միասին գաւաթ մը առնելու անակնկալ բաղձանք մը յայտնած էր: Չեմ գիտեր ե՞րբ վերադարձած էր Ափրիկէէն եւ ուրկէ իմացած էր, որ Փարիզ մնալու Հնարաւորութենէն զրկուած՝ վերադարձած եմ ու պաշտօն ստացած կնոջական նորոյթներով Համբաւուած Լաքի վաճառատան մէջ:

Ձուշացաւ:

Մեմին ոտք դրած պահուն՝ դժուարացայ ճանչնալ զինք:

Փաթթուեցանք իրարու:

- Ափրիկէն սեւամորթ դարձուցեր է քեզ,- ըսի զուարթ:

- Իսկ Փարիզը կը թուի, թէ գոյն չէ ձգած վրադ,- ըսաւ նոյն զուարթութեամբ:

Սկսանք պրպտել վերջին տարիներու մեր կենսագրականները:

Իրարմէ բաժնուելէ ետք, ես Հօրս կամքին Հետեւելով շարունակած էի ուսումս, մինչ ինք մտած էր արկածախնդիր իր ընտանոթեան բացած ճամբաները: Ատեն մը աշխատած էր կօշկակարի մը ձեռքին տակ, ապա՝ Րոշէի մէկ սրճարանին մէջ սպասեակի երկրորդական պաշտօն մը ստանձնած, կարճ ժամանակ մը անց՝ Սէն Ժորժ պանդոկի պիւֆէին մէկ ճիւղը վարած եւ նոյն մթնոլորտին մէջ տարբեր ազգերու ներկայացուցիչներուն Հետ ծանօթութիւններ Հաստատած ըլլալու բերումով՝ մեկնած էր Ափրիկէ, նորանկախ Նիկերիոյ մէջ ճամբաներ բացող ու կամուրջներ կապող զուիցերիական ընկերութեան մը մօտ իրրել Թարգման մեծ պաշտօնի մը տիրացած: Վաղարշ արդէն տէրն էր կեանքին, մինչ իմ կեանքս կը շարունակէր անորոշութեան մէջ տուայտիլ:

- Օ լա՛-լա՛, օ լա՛-լա՛,- լսեցի ետեւէս:

Ռուպէրի մօտ ճանչցած աղջիկս էր, Ֆապիանը, որ իրեն տուած Հասցէս ձեռքը մօտեցաւ՝ երկու բազուկները բացած:

Նառնուեցանք իրարու:

- Այս ինչ աղուոր վաճառատուն,- ըսաւ,- չարքէն մնացած Թուխ մուշտակին վրայ սահեցուց ասիւրը, ապա առաւ զիչերային ընդունելութիւններու յատուկ սաթէնէ պզտիկ պալուսակ մը ու շարունակեց Հիսաքանչ բացազանշութիւնները:

- Ինչ գեղեցիկ է, ինչ Հիանալի, մանաւանդ այս մէկը, ամէնը, ամէն բան:

- Հարկաւ,- ըսի՝ յանկարծօրէն մտաբերելով Հարմանի մէկ Հանոյախօսութիւնը,- Հարկաւ, երբ գեղեցիկ աչքերով կը դիտուին:

Աւելի սեղմուեցաւ ինձի եւ աջ ուսը զարկաւ ուսիս:

- Ո՞վ է,- Հարցուց Վաղարշ:

- Յաճախորդ մը:

- Յաճախորդի շատ չի նմանիր ասիկա: Ես գացի:

- Ո՞ւր:

- Իմ ներկայութիւնս լսելորդ է այս առուտուրին մէջ: Ժամը իննին ու տասին միջեւ կը սպասեմ քեզի Սթարբոյի սրճարանը:

ՖրանսուՀին ընտրեց քրոջոտիլ գօտի մը ու գինը Հարցուց:

- Գինը կարելոր չէ,- ըսի անտարբեր,- բայց այդ ընտրութեամբ դժուարութեան կը մատնես զիս:

- Ինչո՞ւ:

- Գօտի քակելը ժամանակ կ'առնէ,- ըսի լուրջ:

Սկսաւ լիահագագ խնդալ՝ ոտքը գետին զարնելով: Յետոյ Հարցուց.

- Ժամանակ ունի՞ս տեղ մը երթալու:

- Ո՞ւր կը փախաքիս երթալ:

- Հեռուն, հեռուն,- ըսաւ՝ Թարթիչները սեղմելով:
 - Շա՞տ հեռուն:
 - Մինչեւ դժոխք:
 - Լաւ,- ըսի՝ իրարանցումով,- Հեղ մը փորձեմ՝ տեսնելու
 Համար, թէ կրնա՞մ դժոխքին բանալին ունենալ:
 - Դժոխքին բանալի՞ն:
 - Ինչո՞ւ զարմացար:
 - Որքան գիտենք, դրախտին դուռը միայն բանալի ունի,
 մինչ դժոխքին դուռները բաց են բոլորին առջեւ:
 - Հոս տարբեր է,- ըսի,- Հոս Արեւելք է, Հոս դժոխք եր-
 Թալու ցանկութիւն ունեցողները շատ կան, բայց դժոխք շատ
 չկայ: Եղածներն ալ բանալի ունին: Փորձեմ:
 Արդէն մտքիս պատկերացած էր Մատամ Պիանքային
 մրցակից Հրեայ Մատամ Լիլիթը, որ իր օթեւանին մէջ ընդու-
 նած յաճախորդները յաճախ կը բերէր մեզի եւ, ծախուած ապ-
 րանքներէն իր շահագրգիռ առած՝ կը մենէր զոհունակ: Մա-
 տամ Լիլիթ յաճախ կ'առաջարկէր, որ սուրճ մը առնեմ մօտը,
 իր օթեւանին մէջ: Սր մը եղայ Հետը: Իրապէս սիրուն էին իր
 սենեակները, կիսով Հայելիապատ, բուրումնաւէտ, աւելի օդա-
 սուն, մէկը՝ ծովահայեաց, զոր կ'ուզէր ինծի յատկացնել, եթէ
 փոխադրուէի իր մօտ: Տեղափոխուելու լուրջ պատճառներ չու-
 նէի, եւ ինք ըմբռնելով Հանդերձ առարկութիւններս, ներկայա-
 ցող բոլոր առիթներուն կը պնդէր նոյնը, թէ իր մօտ աւելի
 ազատ կ'ըլլայի: Այլապէս ալ, կ'ըսէր, իր դուռները միշտ բաց
 են թէ՛ իմ եւ թէ՛ ինծի ընկերացողներուն առջեւ:
 Կապուեցայ Հետը:
 - Գրկարաց կը սպասեմ,- ըսաւ:
 Քառորդ ժամէն Հասանք մօտը ու մտանք այն սենեակը,
 որ կը խոստանար ինծի տրամադրել:
 - Այս ինչ գեղեցիկ դժոխք,- բացառանչեց Ֆապիան՝ աչ-
 քերը չորս կողմ պտտցնելէն:
 - Սպասէ քիչ մը,- ըսի լուրջ,- կրակը չտեսած պէտք
 չունիս այդքան շուտ ըլլալու:
 Բարձրացած զուարթ աղմուկին յաջորդեց Հեռաձայնին
 հունչը: Մատամ Լիլիթ կը փափաքէր իմանալ, որ որեւէ բանի
 պէտք ունի՞ր: Ոչ, ըսի, չնորհակալ եմ՝ աւելցուցի, ու երբ ըն-
 կալուչը տեղաւորելով ետ դարձայ, բոլորովին ուրիշ կերպա-
 րանքի մը տակ զտայ Ֆապիանը... ուրիշ...

(հատուած)

ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

Քաղին

**ՍԱՎԻԿ
ՉԻՆՈՅԵԱՆԻ
ԵՐԿՈՒ
ԱՄԵԱԿՆԵՐԸ
ԵՒ
ՕՐԱՏՈՐԻԱՆ**



Այս տարի ծննդեան 60 ու մահուան 25ամեակն է Հայրենի գրականութեան վերջին եղերարարատներէն բանաստեղծ Սլավիկ Չիլոյեանի, որ առնուազն երկու սերունդի մտաւորականներուն եւ նոր յղացքներու հեռամուտ ընթերցող ընտրանիի մը հոգիին փայփայուած անուններէն մէկը եղաւ, եօթնասունական թուականներուն հրապարակ իջած Հենրիկ Էդոյեանի եւ իր ընկերներուն շարքին:

Հայաստանի մէջ յայտնուած բանաստեղծական նոր փորձերը ուշադրութեան յանձնելու մտքով՝ 70ական թուականներուն «Բազին»ի մէջ բացուեցաւ բաժին մը, ուր նաեւ Սլավիկ Չիլոյեանի ստեղծումներէն նմոյշներ տրուեցան, իսկ երկրորդ անգամ գրուեցաւ իր մասին քանի մը տող, իր եղերական մահուան առիթով:

Հերիաթ ստեղծած եւ արժէքներու հիմամբ համարումներ չաւած, միաժամանակ իշխանութիւններուն ու իշխանութեանց ճորտերուն անհանգստութիւն պատճառած Չիլոյեան, իրեն հանդէպ աննախանձ ու միշտ սիրազեղ հասակակիցներուն վկայութեամբ, խառնուածքով ապրող հոգի մը կը կրէր, բանաստեղծ հոգի մը, ճանչնալու, բիրեղացնելու, ըլլալու բուն տենդէ մը բռնկուն, որ եթէ իր էութեան մէկ պզտիկ մասով այս աշխարհէն էր, մեծ մասով «այլուր» կը շնչէր, ինչպէս պիտի ըսէր արտակարգներուն դեռ չգերազանցուած բացա-

ուութիւնը՝ Արթիւր Ռեմպօ։ Այդ եղաւ իր աշխարհը, վերին հրեշտակներուն ու ներքին դեւերուն բնական վայրը, ուր իր ժամանակին մեծ մասը լեցուեցաւ տարբեր զգայնութիւններ ու մտածումներ վերծանելու քեղուն արկածախնդրութեամբ։

Ինչպէս կը պատմեն կենսագիրները, Սլավիկ Ձիլոյեան զիրք չունեցաւ ողջուցը, հրատարակչութիւններու կամակաւորները չձգեցին, որ ունենայ, ունեցաւ 17 տարի ետք, չնորհիւ իր ընկերներուն, քննադատ Ալեքսանդր Թոփչեանի, բանաստեղծներ Դաւիթ Յովհաննէսի, Հենրիկ Եղոյեանի, Հրաչեայ Թամրազեանի նախաձեռնութեամբ, ծանօթագրութիւններով, նախաբանով ու վերջաբանով, «Մենք մարդ ենք եզել» խորագիրին տակ, բանաստեղծութիւններ, արձակ էջեր ու թարգմանութիւններ, միջին ծաւալով 402 էջ։

Սպասուած հատորը, ուրեմն, լոյս տեսաւ, երբ կարմիր համակարգը փուլ եկաւ ու վերջ գտաւ արժանաւորներուն հանդէպ անոր պաշտօնեաներուն խլրդային թէ բարձրաձայն հալածանքը։

Նոյն ատեն ու ազատութեան պայմաններուն մէջ միայն կարելի յուշեր գրուեցան Սլավիկ Ձիլոյեանի մասին, մէկտեղւեցան անոր տպագրուած ու անտիպ գործերը ու վերլուծական յօդուածներ երեւցան մամուլին մէջ։

Հազուադէպ է թերեւս այն համընդհանուր համարումը, որ ծաւալեցաւ Սլավիկ Ձիլոյեանի անուան ու գրականութեան շուրջ, յատկապէս իր տարեկիցներուն կողմէ, եւ այդ բոլիս վերաբերումը ոչ թէ բանաստեղծին մահուան առիթով ու ավստսանքի ընթացիկ միջնորդութիւն մէջ, այլ ընդհանրապէս, անգամ գրական առաջին փորձերուն օրօք, իր ուրոյն կենցաղին ազդեցութեան տակ, ստեղծումներուն ընծայած թարմութեան հմայքներով։

Կարգապահ, սովորական ճամբաներէ ընթացող ու սովորոյթի ուժով գիրք ու գոյութիւն պահող պաշտօնեաները ահաբեկող սանձաբեկ խառնուածքի տէր՝ Ձիլոյեան առօրեայ յարաբերութիւններու ընթացքին դրսեւորած խառնուածքային տարօրինակութիւններու կարգին, անօթութեան ճիրաններուն մէջ ստեղծեց ակամայ գայթակղութիւն մը մամուլ աշխարհին մէջ, երբ «Սովետական Հայաստան» պաշտօնաթերթին մէջ հրատարակութեան տուաւ «Վլադիմիր Իլյիչ Լենին» օրատորիան։

Թերթը հազիւ լոյս տեսած, կուսակցական ու պետական վերնախաւին մէջ ծայր տուաւ անօրինակ խուճապ մը, հրապարակազիր Ղարիբ Հայրապետեանի վկայութեամբ՝

«Ասպարէզ մտան զանազան մարդիկ, մէկը մէկից հրէշաւոր մեկնարանութիւններով։ Ուզում էին խելօք երեւալ, «խելօքութեան» մրցում էր սկսուել։ Գործի դրուեցին պրոպոկացիայի, շանտաժի, Մոսկուայով ահաբեկելու ծանօթ ու անծանօթ եղանակներ։ Վարչահրամայական համակարգի շնոր-

քով թունաւորուած եւ այդ համակարգի հնարաւոր պատիժներէց սարսափած մեր նայիրեան «ղեկավարները» շտապ բիւրօ հրաւիրելով, խմբագրական աշխատանքից միանգամից հեռացրին խմբագրին, տեղակալին, պատասխանատու քարտուղարին, բաժնի վարիչին» (*«Աւանդարտ»*, 24 Սեպտեմբեր 1989):

Այդ նոյն իրարանցումին անդրադարձաւ նաեւ «Սովետական Հայաստան» թերթի խմբագրի պաշտօնէն հեռացուած Պաշիկ Յովակիմեան, տալով նաեւ անունները իր դժբախտ բախտակիցներուն: Ընթերցողը քիչ անդին կը կարդայ այդ մասին սեւագրուած թէ՛ բաժնի վարիչ Ղարիբ Հայրապետեանի եւ թէ՛ խմբագիր Պաշիկ Յովակիմեանի նոթերը:

Այս հեռուներէն դժուար է հասկնալ, թէ գայթակղալի ինչ տարր կայ Ձիւլյեանի օրատորիային մէջ, ինչ վատ բան ըսուած է Լենինի մասին, որ օրուան լենինականները այդ ժայռայեղութեան հասցուցած են իրենց ապրած տակնուվրայութիւնը:

Մնաց որ, օրատորիան մինչեւ անգամ Լենինի մասին չէ, Լենինի բռնի աստուածացումէն դարեր առաջ ի Մարիամայ Կուսէն կատարելապէս ծնած եւ իբրեւ Աստուած տարբեր ազգերու ու միլիոններու կողմէ պաշտուած Յիսուս-Քրիստոսի մասին է, որ բանաստեղծին ապրած լիակատար չքաւորութեան առաջին եւ ազատութեան լիակատար բացակայութեան երկրորդ պայմաններուն մէջ հարկադրաբար դարձած է «Վլադիմիր Իլիչ Լենին»:

Ահաւասիկ «Փակ դռների» բաց պատմութեան ամփոփումը, լենինեան ապարատին կողմէ շնորհադրկուած խմբագրին գրչով:

«Իմ այն Հարցին, թէ ինչ առիթով է գրել օրատորիան, նա պատասխանեց. նիւթական ծանր վիճակում եմ, դրպանա դատարկ, կիսաքաղց եմ ապրում: Ձեռն տպագրում: Սրատորիան գրել եմ Քրիստոսի մասին, նրա ծննդից առաջ աշխարհում տիրող ահաւոր անօրինակութիւնների, այլասերութեան, գայլային բարքերի, ստոր գործարքների մասին: Ուզում եմ ցոյց տալ, որ միայն Քրիստոսի ծնունդով եւ յայտնութեամբ կարող է մարդկութիւնն ազատուել մեղքերից ու կործանումից, երկրի վրայ հաստատել արդարութիւն, սէր, միաբանութիւն»: Ապա ժպտալով աւելացրեց. «Գիտէի, որ չէք տպագրի, ուստի Քրիստոսի անունը փոխեցի Լենինով»: Ահա եւ բոլորը» (*«Գաբուն»*, 1991, թիւ 3, էջ 29):

Կրկնենք մեր վարմանքը. Քրիստոսի քարոզած աստուածային սկզբունքները այնքան արագ ու այնքան շտապօրէն Լենինին ընծայած բանաստեղծութեան մէջ ինչ խորթ, վարկաբեկիչ ու անընդունելի բան գտած էին արդեօք մարդիկ, որ իրենց վրդովումը հասցուցին մինչեւ Մոսկուա: Քնդիրը կը մնայ առեղծուածային իր ոլորտին մէջ, եթէ պահ մը մոռանաք այն վարքագիծը, որ ի դէպս եւ յանդէպս կը յայանուի Հաւա-

տարմութեան աւելորդ փաստեր կուտակելու Հետամուտ դրածոներուն մօտ...

«Վլադիմիր Իլյիչ Լենին»ի օրատորիայի պատմութիւն Հոս չի վերջանար:

Անիկա իր յղացման, դրաման ու խորագրային իր առաջին պատկերով եւս բախտ չունեցաւ ամբողջ մարմնով ներկայանալու ընթերցողին:

Սլավիկ Ձիլոյեանի գրական ընկերներուն կողմէ լոյս ընծայուած վերոյիշեալ Հատորի (136-148) էջերուն, «Յիսուս Քրիստոս» խորագիրին տակ, անիկա, օրատորիան, ներկայացւած է սա ծանօթագրութեամբ.

«Տպագրում ենք պաշտօնական Հատուածներ օրատորիայից, յոյս յայտնելով, որ մի օր կը գտնուի ամբողջական եւ անխաթար տեքստը» (Մ.Կ.):

Մեղի կը թուի, թէ Հատորին խմբագիրները օրատորիային միայն ապագրուած Հատուածներուն ծանօթ չեն, տպագրուածէն աւելին ծանօթ է իրենց, իրենց ծանօթ է նոյնիսկ պակասած մասերուն տեղերը, դորս զգացուցած են կախման կէտերու «ծխածածկոյթին» տակ:

Անյայտ աղբիւրէ մը մեր տրամադրութեան տակ դրուած է «Վլադիմիր Իլյիչ Լենին» օրատորիայէն մեքենագիր օրինակ մը, որ ամբողջութեամբ կը ներկայացուի յաջորդող էջերուն եւ ուր պայծառօրէն կ'երեւին կախման կէտերը փոխարինած մասերը, ընդգծուած գիրերու լոյսին ներքեւ:

Ըսենք անմիջապէս, որ մեղի Համար դժուար եղաւ ըմբռնել այն պարագան, որ 1992ին լոյս տեսած Հատորի մը խմբագիրները յապաւումներով տպագրութեան կը յանձնեն բանաստեղծութիւն մը, երբ Լենինի անունով ստեղծուած բունութեան մականին տակ անգամ անոնք յանդգնութեան բազում փաստեր տուած են գրականութեան կալուածին մէջ:

Հայ գրականութեան կապուած իրադարձութիւններուն մասին սպառիչ տեղեկութիւններ ունենալու կարօտով ապրող մարդիկ անմկութեամբ կը սպասեն, որ Սլավիկ Ձիլոյեանի ծննդեան 60 եւ մահուան 25ամեակին առիթով օրատորիային, ինչպէս նաեւ անոր միւս ժառանգութեանց ու կենսագրութեան վրայ ամբողջական լոյս մը նետուի:

«Բագին»ի ներկայ թիւով ընթերցողին կը ներկայացնենք օրատորիայի Հետ կապուած մէկ-երկու վկայութիւն եւ եղերաբախտ բանաստեղծին մահուան աղընչուած սրտառուչ քանի մը պատկեր, մեր մօտ գտնուող Ալեքսանդր Թովչեանի, Հենրիկ Էդոյեանի եւ Եուրի Քաչատրեանի Ձիլոյեանին նուիրած գրական վերլուծումները վերապահելով ուրիշ առիթներու:

Մ. Չիլոյեան

ՎԱՐԴԻՄԻՐ ԻԼՅԻՉ ԼԵՆԻՆ

(Օրավորիա 10 մասով)

*Ասում են, թէ հազար տարին մէկ անգամ
Մի փրկիչ է աշխարհ գալիս, մի պարգամ...*

Խաբսա

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Այնտեղ, Արեւմուտքում,
Ուր ուղեղներն էին հալում
Զգացմանքի տառապանքներին խաբուած,
Այստեղ մարդն էր դեռ ննջում
Պաղ քրտինքից մեղստած:
Ու այդպէս էր...
Մինչ դու ելար ու յառնեցիր՝
Բարբառելով.
«Ոչ թէ գիշեր, այլ լո՛յս, լո՛յս:
Լոյսերի մէջ պիտի պառկել
Ոչ թէ երկնի մանիւմներում,
Այլ ելնց այստեղ՝
Այս ծանր ու մեծ գնդի վրայ»:
Այն ժամանակ տաշուած ու խեղճ այս աշխարհի
Ուղեղները փոքր, թէ մեծ
Փսիսում էին անկիւններում պաղ մթութեան՝
Վլադիմիր
Իսիչ
Լենին...
Եւ որպէսզի փսիսոցը դառնայ մեծ ձայն
Դու կարդացիր խրախոյսը քո ԱՌԱՋԻՆ,
Որը պայքեց ու թափ առած Եւրոպայի անկիւններից
Տարածուեց լայն տափաստանով Ռուսիայի.
«Մթութեան հետ լո՛յս,
Լոյսի մէջ՝ յո՛յս,
Յոյսի մէջ՝ վառ մի վայրկեան:
Գիտցէք, մարդիկ, մտնջ թքել են

Կոյս գիշերուայ աչքի մէջ,
 Որ պատկած էր մեղմաբար
 Աղջամուղջի լոյսի հետ
 Մուգ երկնային վերմակում.
 Ու ցնորած հմայքից
 Այդ դիտական հեշտանքի՝
 Պիտ սթափուել, բայց զգայշ,
 Յանկարծ վայրկեանը չանցնի»:
 Եւ հասկացան տեսարժն արի,
 Որ սեռային կամ սիրային այս աշխարհում
 Պարսպում էր սին բաժակ:
 Դժոխային մարմիններում ցնորած
 Ինչի՞ էր պէտք անգամ լոյսը երկրային,
 Երբ դեռ չկար մտրազային,
 Երկնային այն տենչը վէս,
 Որ խառնում աղբ ու մրի
 Բայց վերանում, խոյանում է հոգեպէս:
 Ու այդ հոգին
 Ծպտում խոր՝ մի բռն մարդկանց սրտերում...
 Միրել ծեղ պէս էակներին
 Օ, քա լիցի...
 Դա կը տանի, մեզ կը հասնի
 Դանթէական անլռելի դժոխքին:
 Ու միջդեռ հին զանգն էր հնչում
 Ողեղներում դիւանար,
 Դա կարդացիր խրախոյսը քո ԵՐԿՐՈՐԴ.
 «Մղած զանգերի կէսը
 Երկրինն է մսակեր.
 Միս կէսը՝ ժամանակն ու տարածութիւնն են լափել:
 Իսկ մենք երկնին ու երկրին այս շեալ
 Ծալրում ենք երկրորդ «ես»,
 Որն հոտ չունի դրախտի լոյս վարդի պէս:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Հոգեթաթախ զմայլանքով արբեցած
 Դեռ նիրհում էին գաղափարները գորշ.
 Ըմբռնում էին սառ շուրթերով
 Մարգարէական դառնութիւնները համայն.

digitised by A.R.A.R.@

Երբ պատռուեց երկինքն այս լուրթ,
 Կարկառուեց քո հանձարեղ ձեռքը ջղածիգ
 Եւ քո մատերից ամէն
 Շիրիմների կոյտի վրայ
 Գրոհեցին լուսիններ,
 Համբարուեցին յամր ու խորունկ
 Ֆոսֆորային տառնութեամբ:
 Իսկ քո միտքը այդ ժամանակ
 Բնութեան տղըն էր երգում,
 Եւ բախտեցին քո միտքը լայն ու բնութիւն:
 Մինչ այդ եղած ուղեղները
 Զիջումներով արբեցած
 Խորախորհուրդ բնութեան՝
 Բարբաջել էին.
 Թէ՛ պայծառ են, իրենք կա՛ն:
 Այդտեղ ահա
 Կեանք տուեցին Գէօթի մեծ Ֆաուստին,
 Որ մաղձ թափուի երկրի վրայ իրական:
 Չէին հասկացել,
 Որ թշուառ էր կնքել Գէօթին Ֆաուստին:
 Իսկ բնութեան հետ բախտելիս
 Քո մէջ այնժամ ծնուեց խորհուրդ
 Ու կարդացիր խրախոյսը քո ԵՐԲՈՐԴ.
 «Հարաբերեալ այս կեանքում
 Մէրը Մարդ է, Մարդն՝ Աստուած:
 Մոտ է, սակայն մահուան ծնունդ
 Չկայ երբեք կրքերի այս քառասուն:
 Եւ որպէսզի միշտ արարուենք՝
 Այս քառսի բոժոժանքը պիտի լուծենք:
 Մահը փաստ է, կեանքը՝ մահ,
 Մանկանացուն կեանք է տեսել ականթարթ,
 Ոմանք պղծել, ապականել.
 Անա օրէնք, որն իր խամրած աչքերով
 Ըշմարտութեան սրունքներն է շոյում:
 Իսկ մենք ունենք գեղեցկութիւն ներդաշնակ,
 Որին կը գրկենք ու կը համբարենք սիրով լի,
 Ինչպէս Գէօթին Մեդիչիի Վենետիկին համբարեց»:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ապաշնորն հեքիաթներ էին թափառում
 Չնաշխարհիկ ու հազուագիտ
 Նրկրի վրայ այս առկախ.
 Բաբելոնեան երկնաքերի նման միշտ...
Տասնինն դարի աշտարակն էր խորտակում
Քարի փեղ՝ ջուր, ջրի փեղ՝ քար
Միմեանց փալաւ պարճառով:
Այս փեսներով, առաջնորդ մեր,
 Մի ընդհանուր լեզու դառար
 Համայն մարդկանց բերաններում,
 Դարձար համայն խողովակ,
 Ու հասկացան մարդիկ միմեանց
 Եւ հեքիաթի նման այն հին,
 Ուր դարձել էին կախարդանքով բոլորը՝ քար,
 Հոգեդարձի ամէնքն եկան
 Ու շարունելով իրար կողքի՝
 Ծարուէ շարան բազուկներ պինդ՝
 Բռնեցին ծեր երկրագնդի
 Թեք առանցքից դուրս քաշեցին,
 Բարձրացրին հողի վրայ
 Կանգնեցրին ու հաստատուեց
 Մշտարակը մեր այս դարի,
 Որ դարձաւ մեծ մի անփեմայ,
 Որ քո խօսքը մեզ՝ բարձրից
 Առանց միջնորդ, ուղիղ հասնի:
Քսան դարի աշտարակի վերին ծայրից
Դու կարդացիր մեզ քո խրախույսը ՉՈՐՐՈՐԴ.
«Յիշէ՛ք, անմեղ ինձ նմաններ,
 Երեկոները անհարթ
 Հազար շապիկ անեցող այն մարդուկները,
 Ընկած անմիտ ու աննեթեթ
 Կրճքներս ի վար
 Մեր երազներն էին քամում:
 Պարպում էին մեզ կրքի նման:
 Բայց հէնց այս նոր գլխից դարի,
 Պիտի տեսնէք, որ բոլորն էլ
 Կը կադկանձեն էգ գայլի պէս,

Նրբ կը սովեն

Եւ ցան անտես

Կը հետեւի մաքի պէս»:

Կարդացիր եւ վառվում էիր դու անմարմին

Մեր սիմֆոնիկ ու վերացուած սրբերում:

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

Դառնաղձոյն հեղուկներն էին հիանում

Նրբ կեանքն անսխառ

Մարդկանց ոգին վայրենացած քամու պէս

Իր ետքից էր քարշ փայլիս

Այն ժամանակ

Նախադեռն անկիւններում ծուարած

Մարմիններ կայս ու փկլոր

Հռնում էին արարատաթոր դիմակներով

Կեղծատրուած երազներ էին լսւիում

Եւ քայլում էր շարքն այս ծոյլ

Սրտերների շարքն այս փխուր

Այս անարարեր երկրով:

Գեղեցկութիւն՝ քայլում էիր բոյլ

Խարխալում էիր հոգիներում անթեւ

Սառն էր դէմքդ

Ինչպէս դիակն անօգնական,

Որ փայրի մէջ ամփոփուած

Դիակների ուտերով

Պեկտական վերջին ժպիտը դէմքին

Անհոգութեամբ էր խեղդել,

Որ չունէր գին,

Որ թաւալում,

Որ ծաւալում

Ու մեռնում էր ինքն իր մէջ

Օրօրում էր թափօրն հարբած

Եւ հէնց է այդ

Նրբ ուզեցին գեղեցկութեանն

Հողին յանձնել,

Դու կարդացիր, սակայն ոչ թէ դամբանական,

Այլ խրախոյսը քո ՀԻՆՊԵՐՈՐԴ.

«Տիեզերքներ դեռ կը խամրեն

Կը մոխրանան յանդիման թոցի մէջ

Կը դղրդան անհուններում

Մեծ անյայտի սրեղծագործ մարքի պէս,
 Էլ չենք գրնի մենք մէկ մէկու
 Քեղեցկութիւն թէ կորցնենք
 Նայէք, այնպեղ
 Հորիզոնի անձեռահաս հերքերում
 Դեղնակարմիր արցունքներ են փարսպում
 Փոթորկալից ուրախութեան
 Աններդաշնակ թափի մէջ:
 Հողմացրիս թառանգանքով
 Անարեկում ճայացքներ են կիզում.
 Գերբնական իմաստալից զօրութեամբ
 Յօշոտում են հին անօթներն հողածին,
 Վերջին միջն է համրանում
 Տազնապահար անյայտութեան երախներում անկշտում,
 Մաշում զարերի խորքից
 Վեհատեսիլ անմահութիւնն է ժպտում»:
 Այս խօսքերից, առաջնորդ մեր,
 Կրկին ելաւ զեղեցկութիւնն իր դազաղից
 Եւ շարքը մեր
 Վերածնունդ հոգիներով,
 Նոր յարութիւն ստացաւ:

ՄԱՄՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ու մինչ երկրային փռշին
 Արձանների էր ձաւում,
 Յաւերժանում կռնատանդական զօրութեամբ`
 Հոգին տառապանքն էր երգում
 Մանիսներում սրբացած.
 Եւ մարդն անգօր
 Պինդ փարում էր անհեթեթեանը թունոտ,
 Մութն իջնում էր, մրափում,
 Սնունդ տալով կասկածանքներին անփար,
 Իսկ սանդուղքով սաղափէ
 Երազներում յոգնատանջ`
 Մազլցում էին ու մեռնում
 Այս աշխարհի իմաստունները համակ:
 Պաղ քարերն էին լոյս սփռում
 Ու ծաղրում էին աստղերին,
 Թանձր մշտուն էր իջնում,

Գրկում նրանց մեղմագին:
 Առաւօտեան հոգու թախիծն էր փարում,
 Միաձայնում ու հարում
 Ջերմութեանը տափակէզ
 Յօղն արտասառք էր քամում
 Անյայտ մտքից յոգնատանջ,
 Լուսինն այնժամ մեկանիւղիկ
 Անլուայ սիրտն էր բացում,
 Որ տեսել էր արեւափրք,
 Որ տեսել էր առեւանգում անմեղի,
 Որ տեսել էր բարին խեղճ՝
 Ծունկի եկած դաժանութեան ոտքի տակ:
 Հին մի երգ էր մրափում
 Ապականալտ աչքերի մէջ.
 Քամին անեղ՝ զսպում
 Մի մոլեռանդ քրիստոնեայ էր դարձել,
 Որ համոզում, բայց մեռնում էր կրքի մէջ:
 Հեռուից հեռու հին մեղեդին
 Մերթ պոռթկում էր լաւայի պէս,
 Մերթ մերում էր քամու հետ,
 Ինչպէս գոյգը տարասեռ:
 Այն ժամանակ լուսնի կաթով ողորում
 Առաջնորդ մեր, իջար ներքեւ
 Եւ կարդացիր խրախոյսը քո ՎԵՃԵՐՈՐԴ.
 «Այստեղ էլ մենք պիտ չխօսենք
 Ոչ հին լեզուով՝ որ թշնամունն է, գիտէք,
 Ոչ երկնային՝ պոետների լսգառով ազնիւ.
 Այստեղ արդէն բնական մեր լեզուն է պէտք
 Հոգեկան վեճ ապրումների պոռթկումով,
 Որ կը շանթի, որ կը շամփրի
 Ճշմարտութեան վէրքերով»:

ՄԱՍՆ ՎԵՅԵՐՈՐԴ

Մառնապոլտոր հողի վրայ
 Մարդկային դէմքեր էին վառում,
 Խաչածեւում անյայտ մտքով, անտեղի,
 Կեանքը միտք էր ծնում բիրտ,
 Իսկ միտքը բիրտ՝ ասք մեքին

digitised by A.R.A.R.@

Խոնարհութիւն՝

Ծրկուստեքուած մարդու մէջ:

Իրարամերժ երկրներում մարդկային

Անմիջապէս սրբութիւններ էին շրջում,

Լաւ շշնջում... գնում... ննջում...

Եւ բիր մարդկանց հոգիները ձգնառք

Անդունդներ էին վիժում,

Փրփրում էր մարդկային խիղճը անբիծ,

Որ իր ձեռքով

Փառքի մէջ էր մահ տեսել:

Անձնական ջան

Հասարակարգ էիր ճիւմնել

Հանուն քեզ,

Որ կարող էր մեղանշել

Հարստանաւորում ու խեղճացած մարդու դէմ,

Այս ամէնը զիպէին մարդիկ

Բայց լճի ալէս

Հասկացածն էր մնում փնդում

Եւ բացեցիր շլեւագները

Առաջնորդ մեր, կանգնած մարքի

Երբ կարդացիր խրախոյսը քո ԵՕԹԵՐՈՐԴ.

«Հէնց որ լոյսի հետ մենք ձուլուենք,

Մենք կը թամբենք երգերը մեր,

Կը սլանանք մութն այստեղից լափլփած,

Կ'անցնենք հեռու երկրից երկիր,

Անգամ արիշ մոլորակներ

Ու կը տանենք եւ ցոյց կը տանք

Հոգիներին մռաշտաւած,

Որ ստեղծուած ու առեղծուած այս աշխարհի

Մէկ վեցում

Արդէն լոյսն է լոկ իշխում»:

ՄԱՍՆ ԵՕԹԵՐՈՐԴ

Ու կարծում էին այն

Կմախքային իրանները ձկուն,

Որ կարող էին սրտեր մարել ու գերել

Ճամբոցով անհոգ:

Իսկ լսելու մի ձայն էր պէտք աներկբայ,

digitised by A.R.A.R.@

Որ ինչպէս օդ պիտի լցուէր
 Այս փչկած մեծ գնդի մէջ:
 Ու մինչեւ այդ
 Դեռ խամբում էին
 Ողեղները բանական.
 Մարդ - կենդանի
 Կենդանի - մարդ
 Այս էր միտքը աշխարհի,
 Դեռ այսպէս էր պտոյտ գալիս
 Մշտանալով երկիրը մեր.
 Երբ մենք սովոր արդէն ձայնիդ
Առաջնորդ մեր, լսեցինք խոր
Խորախոյսը քո ՈՒԹԵՐՈՐԴ.
 «Աայց դեռ սպասենք,
 Ի՞նչ է այս.
 Ինչո՞վ կարող ենք վստահել մէկմէկու,
 Երբ դեռ չունենք
 Երանատենէ ձգտումները
 Արդարադատ ձեռքերի:
 Դրա համար որպէս նեցուկ
 Միշտ անդարձ մեր ուղաց
 Պինդ կը փարտենք ու կը տանենք անմնացորդ
 Գաղափարները մեր նոր»:
 Երբ տեղ հասան մտքերը քա՝
 Նայեց ետ մէկ երթը մեր,
 Տեսաւ ձամբան իր եկած,
 Ուր նստել էր կիրքն անմիտ,
 Որին դարձել էինք գերի:
 Բայց հայեացքը մեր վերստին,
 Մեծ լուսարձակի նման՝
 Իր եին ձամբից սփռուելով
 Եկաւ ընկաւ իր նոր ձամբան.
Թնդած երթը
Ինքերնացիունալ երգն ռազմի:
Այնժամ որպէս մեծ Բեթովեն,
 Առանց խօսքի
 Քո ձեռքերով, առաջնորդ մեր,
 Դու կարդացիր խորախոյսը քո ԻՆՆԵՐՈՐԴ.
 «Ինձ նմաններ,

Եղէք եղբայր ու հասասար
 Եւ որպէսզի այդ կատարուի,
 Չթողնէք, որ այստեղեւ
 Ձեր պատկերը աղաաղաւի»:

ՄԱՍՆ ՈՒՔԵՐՈՐԴ

Էլ ասելու բան չկար մեզ
 Երբ որ կարմիր Հոկտեմբերի երեկոյեան
 Լուկ լսում էր մեծ դղրոց
 Եւ երեկոն դեռ չփոխուած կարգին մթի
 Մեր դէմքերը փեղը դրինք
 Ռուսական առածն այն ճին,
 «Տեղն է գնում դէպի գլուխ,
 Ոչ բէ գլուխը՝ դէպի փեղ»
 Լրիւ շրջուեց:
 Եւ երբ մութն իր ժառը բաշեց,
 Տեղը դրեց լոյսն իր ոտքը,
 Դու կանգնեցիր եւ նոր բացուող
 Արշալոյսի հէնց մէջտեղից
 Կարդացիր քո խրախոյսը ՏԱՄՆԾՐԱՐԴ.
 «Մենք էլ գիտենք
 Մրգել ինչպէս մարդն առօրեայ.
 Ուրախ, անհոգ գոարձանալ,
 Արցունք թափել շիրմի վրայ մեր հարազատ...
 Այդ մենք գիտէինք,
 Բայց թէ գիտէի՞ն մարդուկներն այն
 Ինչ չգիտէին,
 Ինչ հեռու էր
 Իրենց խղձակ գաղափարից
 Կաղապարներից ճուլածոյ.
 Գիտէին.
 Բայց թէ գիտէի՞ն,
 Որ հմայող, շլացնող լոյսերը վառ
 Մարմնի համար ջերմանալու կրակ չէին լուկ,
 Եւ մենք իրենց կոյր աշխարհից
 Վաղուց արդէն հրաժարուել
 Եւ դիտական ճնշիւններով,
 Մայրամուտի կրակաշուրթ արեւներով՝
 Տանջալոգնած ու յոգնաբեկ մարդկութեանը
 Հանգրտան ենք ապավինել»:

digitised by A.R.A.R.@

ՄԱՍՆ ԻՆՆԵՐՈՐԴ

24-ը՝ այս թիւ է կարծես
 Մի հասարակ ու երկանիշ
 Եղել է այն
 Մինչեւ մեր նոր թուարկութիւն
 Եւ դրանից յետոյ նաեւ
 Եւ դրուել են այդ 24-ի
 Առջեւից շատ թուեր ուրիշ
 Եւ եռանիշ եւ քառանիշ
 Դարձել յետոյ:
 Բայց 24-ն այդ ճէնց որ դրուեց
 19-ից ետ, կարծես մթնեց
 Դէմքը մարդու
 Եւ պարմութեան մարքում խաչուեց
 Ու պարմութեան դէմքին դաջուեց
 1924 թիւ, ձմեռ, Յունուար:
 Առաջնորդ մեր, խօսքը այսպեղ երբում է,
 Դրա համար պոնս հիմա ես կը փոխեմ.
 Ճերմակ ձիւնին փաթիլ-փաթիլ հոգեհանգիստ
 Կանգնած սրբիդ՝ յաւերժութեամբ՝ հոգեհանգիստ
 Քո ետ դառած, իր մէջ նայող
 Խոր հայեացքին հոգեհանգիստ,
 Մեր չորացած արցունքներին հոգեհանգիստ:
 Հոգեհանգիստ, մեր առաջնորդ, քո բաց շիրմին:
 Բոլոր նրանց շիրիմներին, ովքեր ընկան:
 Նեկպար թերող կեանքի չարքաջ մեղուներին
 Եւ ամպամած ու ամպ դարձած ճերմակ հոգուդ
 Հով երկնքում հոգեհանգիստ:

ՄԱՍՆ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Առաքելութիւնը քո աստղականջ
 Լոյս էր սփռում աննուններից,
 Ու օղեղդ գերբնական, անխոնջական
 Հրաժարուեց աշխարհներից,
 Եւ մեղքուեց ու հրկիզուեց
 Ապրումներով երանական:
 Վերացումով փռշիացած,
 Որպէս մասունք շաղ տուած
 Անունը քո նետեց համայն շրթներին,

Քանզի մինչ այդ
 Յնորում էինք, հառաչում
 Ու անթառամ իմաստութեան
 Նշխարքներն էինք մենք տենչում.
 Եկանք քեզ հետ
 Էլ չէինք կարող
 Մնալ կանգնած սիրոյ առաջ տմարդի,
 Ջի սիրտ անէինք,
 Որ կարող էր տրոփել
 Լոկ հարազատ գրկի մէջ:
 Քո զօրութեամբ յագեցում
 Մխրնում ենք
 Երեքթեան ու թունաւոր նետի պէս
 Անբարեացկամ ու թշնամի սրտի մէջ,
 Ոմանց համար
 Անբովանդակ է երգը մեր,
 Քանզի դեռ չեն տալիս եկել,
 Քանզի մեր սիրտն ամէն վայրկեան
 Անմահութեան կապանքներն է յօշոտում:
 Հողմազալար երկնքում
 Ծաղկները ամպերի
 Չեն դիմանում
 Դատաստանին աստղերի,
 Սրբում ենք պատեան քաջած սրի պէս.
 Անեղաշունչ ուժգնութեամբ
 Գալարում ենք
 Լազուրներում,
 Լազուրներում
 Մեր յաղթական երկունքի:
 Ու մերուն էնք
 Ու հալուն էնք
 Աստուածային լոյսի մէջ
 Դարեր ծեծում ու յոգնարեկ
 Մենք քայլում ենք անսասան.
Քո Լենինեան ալիքների վրայով
 Դէպ երկիրը աստղաբոյլ,
 Դէպ աննունը առեղծում,
 Դէպ քո հոգին անտեսիլ...

ՄԱՍՎԻԿ ԶԻՆՅԱՆ

ՕՐԵՐԻ ՓՐՓՈՒՐԸ

Աշխատում էի ինքնամոռաց նուիրումով իմ հայրիկի: Հետո աշխատող լրագրողները, երեւի, կը վկայեն այդ: Կար մի բանաստեղծ, տաղանդաւոր, աւագ եւ վաղամեռիկ՝ Սլավիկ Ձիւրյեան: Ունէր բանաստեղծական թարմ, մի փոքր էքսցենտրիկ, բայց հետաքրքիր մտածողութիւն: Անկեղծօրէն սիրում էի նրան: Հետագայում նրան երգեր ձօնեցին:

Վ. Ի. Լինենի ծննդեան 100ամեակի օրերն էին: Սլավիկը մի բանաստեղծութիւն բերեց՝ նուիրում խորհրդային պետութեան Հիմնադրին: Տպագրուեց. եւ...անասելի փոթորիկ բարձրացաւ:

...«Փառք Աստծոյ», - թեթեւացած շունչ քաշեցին: Այդ վայ «ղեկավարները», չգիտես ինչու, դողում էին Մոկուարի առջեւ իրենց «Հանրային բալետով» (ինչպէս կ'ասէր Յ. Պարոնեանը): Հեռացրին, որոշումը կայծակնային արագութեամբ ուղարկեցին Մոսկուա: Հանգստացան քաղաքականապէս «գերկոփուած» մեր մեծամեծները: Ձէ՞ որ քաղցր բան է աթոռներին մնալը:

Եւ այս ամբողջ կատակերգա-ողբերգական իրողութեան մէջ, Կենտկոմի բիւրոյի անդամներից եւ ոչ մէկի մտքով չանցաւ՝ ախր, ի՞նչ ենք անում, կոմունիստ-ժողովրդային աշխատանքում մնալ-չլինելու հարց ենք լուծում, մի պահ զազար տանք, մտածենք: Իսկ այստեղ գլխապատառ որոշեցին ու դուրս չալրտեցին բոլորիս աշխատանքից:

Սլավիկ Ձիւրյեանի բանաստեղծութեան մէջ եւ քաղաքական սխալ ասպեկտ չէի տեսնում, բանաստեղծն անկեղծ մղումով երգել է նոր ժամանակների հանճարաւառ փրկչին՝ մեախային:

Այնտեղ այսպիսի տողեր կան.

... Մինչ դու եղար ու յառնեցիր՝ Այլ Հէնց այստեղ՝
Բարբառելով. Այս ծանր ու մեծ գնդի վրայ»...
«Ոչ թէ գիշեր, այլ լոյս, լոյս: ...Ու կարդացիր խրախույսը քո երրորդ.
Լոյսերի մէջ պիտի պառկել, «Յարաբերեալ այս կեանքում
Ոչ թէ երկնի մահիճներում, Սէրը Մարդ է, Մարդն՝ Աստուած...»

Մնացած հաստատուններն էլ այս ոգով էին գրուած: Եւ ի՞նչ, եթէ բանաստեղծը երկաթեայ շղարշի յետեւից տեսնում էր այն, ինչ մենք չէինք տեսնում, ասում էր այն, ինչ մենք այսօր ենք ասում միայն...

Մի քանի տարի առաջ այդ բանաստեղծութիւնը նորից ու նորից կարդացի: Յիշատի պէտք էր ապրել այն ժամանակները, որպէսզի հասկանայ, թէ ինչ աւերածութիւններ կարող էին կատարուել մարդկանց մտածելակերպերում, ինչպէս կարող էին հարցնել. «Ինչ նկատի ունես...», «որ ասում է այս, ի՞նչ երևում է ակնարկել...», եւայլն, եւայլն: («Աւանդարդ», 24 Մեպտեմբեր 1989):

ՂԱՐԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

ԹԷ ԻՆՉ ԿԱՏԱՐՈՒԵՑ ՅԵՏՈՅ...

«Յորեղեանական Հերթափոխը» թեմակոխել էր վճռական փուլ, Հասել բարձրակետին: Այդ օրերին (1970թ. Յունուարի 8ին) «Սովետական Հայաստան» թերթում հրապարակուեց մի Հատուած բանաստեղծ Սլավիկ Ջիդյենսի՝ Լենինին նուիրուած օրատորիայից:

Վաղ առաւօտեան, նոր-նոր էր սկսուել խմբադրութեան աւօրեան, երբ ասեա խաղաղ երկնքում ամպրոպ պայթեց: Մի խումբ մոլի լենինեաններ քնաթիռախա վազել էին ՀԿԿ Կենտկոմ, թէ Հայ-Հարայ տեսէք՝ տպագրուել է մեծ առաջնորդին, մեր կարգերը վարկաբեկող Հակայեղափոխական բանաստեղծութիւն: Առանց ժամանակ վատնելու գործի անցաւ ապարատը, կազմուեց Կենտկոմի քարտուղարութեան նախագիծ, որում Ս. Ջիդյենսի քերթուածը բնութագրում էր գեղարուեստօրէն խոտելի, անհեթեթ ատեղծագործութիւն, նրա տպագրութիւնը՝ սխալ: Նախատեսում էր «ի ցոյց դնել» խմբագրին եւ պատասխանատուութեան ենթարկել մի շարք աշխատակիցներին: Հարցի քննարկման ընթացքում, սակայն, ամէն բան դիմադրող շրջուեց: Իր կրակոտ եղութում ՀԽՍՀ Գերագոյն խորհրդի նախագահութեան նախագահ Նազուշ Յարութիւնեանը բանաստեղծութեան տպագրութիւնը որակեց յանցագործութիւն եւ պաշտօնեց առաւելագոյն պատիժ՝ մեղաւորներին ազատել աշխատանքից եւ ցրել խմբադրութեան զեկավարութեանը:

– Եթէ այսօր նրանք պատկուիլ են տպել Լենինի դէմ, վաղն էլ մեր դէմ կը տպեն, – ահա նրա եզրայանգումը:

Նախագահին ձայնակցեց վարչապետ Բաղայ Մուրադեանը, եւ այդ երկու եղութներն էլ որոշեցին մեր բախտը: Կենտկոմի քարտուղարները գերադասեցին հրաժարուել իրենց իսկ կազմած որոշման նախագծից: Հնչեց անբեկանելի դատաւճիռը՝ աշխատանքից ազատել տողերիս Հեղինակին՝ խմբագիր Ռաջիկ Յովակիմեանին, խմբագրի տեղակալ Բակուր Անանիկեանին, պատասխանատու քարտուղար Գէորգի Գաբրիէլեանին եւ բաժնի վարիչ Ղարիբ Հայրապետեանին: Մի խումբ աշխատակիցների յայտարարուեց նկատողութիւն: Բոլորիս Համար պարզ էր, որ նման որոշումը Հանրապետութեան տէրերին ապահովագրում էր վերեւներում Հնարաւոր անհաճոյ խօսակցութիւններից: Անցել է քսան տարի... Շատ բան է փոխուել կեանքում, մարդկանց Հայեացքներում ու պատկերացումներում: Լրատուական միջոցներն այժմ այնպիսի նիւթեր են տպագրում մեր պատմութեան անցեալի ու ներկայի, հէնց Լենինի թոյլ տուած սխալների մասին, որ առաջ մտքովդ էլ չէր անցնի: Անհոս, որ Սլավիկ Ջիդյենսը չապուեց մինչեւ մեր օրերը: Վաղամեովի տալանդաւոր բանաստեղծը շատ ասելիք ունէր: Նաեւ՝ մարդկային ազնիւ նկարագիր: Նա ճնշում էր, որ իր պատճառով տուժել են ուրիշները («Գարուն», 1991, թիւ 3):

ԽԱՉԻԿ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

*
* *
*

... Հիմա դու հեռացել ես, մենք իրար չենք տեսնում.

Դու լոյսի մէջ, ես մութի,
եւ մենք իրար չենք տեսնում...

.....
Դու լոյսի մէջ, ես լոյսի,
եւ մենք իրար չենք տեսնում...
Եւ գնում ենք միշտ այդպէս,
Գլխի, գլխի, գլխիկոր...

Ձգիտէի, բնաւ չգիտէի, որ վաղամեովիկ Սլավիկ Ձիդյեան բա-
նաստեղծի տողերը մի օր Թարգման սլոտի վրան իմ զգացածին:

Յիշում եմ նրա Թաղումը. նա այս աշխարհում ոչ ոք
չունէր, ընկեցի՜կ էր, ո՞րը, չգիտեմ: Դա՛գաղը դրկուած էր
բացօթեայ սրճարանի սեղանին, կախարիչը լենել էին ակա-
ցիայի բնին: Ընկերները ձեռքով տարան նրա դա՛գաղը, ամբողջ
ճանապարհին ծաղիկներ էին սփռում: Դրանք նրա վերջին
ծաղկեհեռքերն էին: Աչուն էր, քամահարուող ծառերը իրենց
դալուկ տերեւներով Հրաժեշտի տխուր խօսքեր էին չչնջում,
ո՛չ լացող մայր կար նրա յետեւից, ո՛չ զաւակ: Նրան տանում
էին Զահեղները, սպառնքիքի մէջ սակաւ էին տարեցները:

Բանաստեղծի մահը ողբում էր մի աղջիկ, որ նրան սիրել
էր, ողբում էր մէկ ուրիշը, որին նա էր սիրել: Ողբում էինք
մենք՝ բոլոր յուզարկւաւորներս:

Այդպէս տարանք, Հողին պահ տունցինք բանաստեղծի
դին, չհասկանալով, չիմանալով նրա կեանքի ու մահուան
խորհուրդը, առանց չափել կարենալու նրա սիրոյ, կարօտի ու
տխրութեան սահմանները:

Քահանան, որին տղաները Հրաւիրեցին, կողքին կանգ-
նածից կամաց Հարցրեց Հանգուցեալի անուն-ազգանունը եւ,
խաչակնքելով Թարմ գերեզմանաթումբը ասաց.

– Սլավիկ, ի գերդաստան է Ձիդյեան...

Կա՛ր այդ Ձիդյեան գերդաստանը, չկա՞ր, ոչ ոք չգիտէր:
Յայտնի էր մի բան, որ նա անտէրունչ մի պոետ էր, որի
տունը, Թերեւս, «Առաջաստ» սրճարանն էր: Թարմ գերեզմա-
նաթմբի մօտ դրուած էր Սլավիկի դիմանկարը: Նա ասեա
ծիծաղում էր կատարուածի վրայ:

... Ես նորից ծով եմ եկել քո Հեռքերով: Լողափին պառ-
կած եմ: Դու՝ չչնջում ես ականջիս. «Շրջուի՛ր, այրւում ես,
ասում ես՝ ծով մտի՛ր, ասում ես՝ Հեռու չգնաս, Հեռու...»: Լո-
ղում եմ, ծովը սրբում է միայնակ «նավաբեկեալիս» աչքերը,
այսպէս լաւ է, թող ոչ ոք չտեսնի եւ մենք էլ:

Դու լոյսի մէջ, ես լոյսի,

եւ մենք իրար չենք տեսնում...

(«Գարուն» 1993, քիւ 11-12)

ԱՆԺԻԿ ՅԱՆՈՐԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՅՈՒՂԱՐԿԱԲՈՐՈՒԹԻՒՆԸ

29 Նոյեմբեր, 1975 թ.

Լինում է եւ այսպէս, բացարձակ որը, չունի ոչ մի արիւնակից, որդեգրող մայրը մահացել է: Ու Հիմա վերադարձել է բանտից (Հարքած ժամանակ կոռւելու Համար էր դատուել) եւ նոյնիսկ տուն չունի:

Բանաստեղծի մահը: Նրա որբութիւնն անսպառ թախծի աղբիւր է դարձել: Թողորը գիտեն, որ վաղը Սլավիկ Զիլոյեանի թաղումն է, բայց չգիտեն՝ որտեղի՞ց պէտք է տանեն:

Ժամը 2ին գնացին անատումիկ: Ընկերները դուրս բերեցին Հանգուցեայի դին: «Ո՛ւր ենք տանելու»... մէկն ասաց՝ «Լճի վրայի սրճարանը»: Սարսափեցի. ինչպէ՞ս թէ: Տարան բացօթեայ սրճարան. Խաչակեան փողոցի վրայ, «Գարուն»ի խմբագրութեան դիմաց: Այդ սրճարանն էլ դարձաւ նրա ողբերգական մահուան պատճառը:

Դազադը դուրս բերեցին մեքենայից, կափարիչն էլ հետը: Եթէ չեմ սխալւում՝ նկարիչ Արտաշէս Յունանեանն էր, կափարիչը ձեռքին մողորուած կանգնեց: Պատ չկայ, որ յենի: Նկատեցի, որ մօտենում է տերեւաթափ ծառին. եւ ինչ տխուր, ինչ տարօրինակ, ինչ անսովոր պատկեր՝ սեւ թաւիչով պատած կափարիչը յենեց ծառին: Հակառակ կողմից երեւում էր անմըշակ տախտակը: Այս է, ուրեմն, անցողիկութիւնը, այս է ունայնութիւնը: Շատերը հեկեկալով լայիս էին, անհայր, անմայր, ոչ եղբայր, ոչ քոյր, մի յենարան չկայ, նոյնիսկ մի պատ, որին յենեն...

Միշտ երիտասարդներով լիքն էր այդ սրճարանը. գոյնղգոյն «Հիպիսների» պայծառ կերպարանքներ, բանաստեղծներ, նկարիչներ, ջահել, գեղեցիկ աղջիկներ ու տղաներ:

Այսօր, սակայն, բացօթեայ սրճարանն աւելի մարդաչատ է, լցուած է ոտի վրայ սզաւորներով: Զիլոյի ընկերներն են, նրան Հասկացող, նրան գնահատող մարդիկ: Նաեւ՝ Հագուադէպ Հանգիստ ու սթափ օրերին Սլավիկ Զիլոյեանի գրած հրաշալի բանաստեղծութիւնների եւ թարգմանութիւնների ընթերցողները: Անմոռաց են Փրանսերէնից նրա թարգմանութիւնները Ժակ Բրեյլից, տպագրուած «Գարուն»ում:

Բանաստեղծները մի-մի մեխակ դրեցին դազադին: Այնուհետեւ, ինչպէս ծրարկատարութիւնն է պահանջում, երեք անգամ պտտեցին սրճարանի դիմաց:

Թափօրը անցաւ Խաչակեան փողոցով. «Գարուն» ամսագրի խմբագրութիւնից մինչեւ Համալսարան, սրանք են նրա «տեղերը», այստեղ է անցել նրա կեանքը: Համալսարանի մօտ բանաստեղծին իրենց ուսերի վրայ տանող ընկերները ան-

Ջատուեցին Ջրաազանի շուրջը: Դարձեալ անսովոր, տխուր, տարօրինակ մի պատկեր: Ջրաազանում ջուր չկայ, ուռիները կիսով չափ տերեւաթափ են եւ խոնարհուած բարակ շիւերը քսւում են հանգուցեայի դէմքին:

Այդ ամբողջ ժամանակ նուազախումբը նուազում է, եւ տխուր արարողութիւնն աւարտում է վերջին, երրորդ պտոյտով: Համալսարանի ճրգ յարկում, ընթերցասրահի պատուհանների մօտ խոնուել են ուսանողները: Խորքից մէկը գոռում է. «Տարէք դրան այստեղից»: Չգիտեմ, զուցէ թուա՞ց ինձ:

Ու տանում են... («Գարուն», 1992, թիւ 3):

ՄԱՐԳՕ ՂՈՒԿԱՄԵԱՆ

ՈՐՔԱՆ ՄԵԾ Է ԵՐԱԶՐ, ԱՅՆՔԱՆ ԾԱՆՐ ԵՆ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ

Տաղանդը ծնւում է իր խաչը երբեք ուրիշի ուսին չդնելու վճռով՝ միշտ հաւատարիմ իր երգի ու բախտի դաշնութեանը:

Ծաւօք, այսպիսիները դատապարտուած են աւելի հեշտ մեռնելու, քան ապրելու: Նաեւ՝ անհատականութիւնները ո՛չ հեշտ մեռնելուց են սարսափում, ո՛չ դժուար ապրելուց: Ինչպէս կարող էր յարմարուել, գիներ, տեղի տալ իր անստեղծ Սլավիկ Չիլոյեանը, որի ողջ կեանքը տառապանք է մարդու եւ մարդկայինի համար: Թւում է՝ նա էլ շատերի պէս կարող էր յարմարուել, գիջել, տեղի տալ, շատերի պէս ապրէր կանոնաւոր, զուցէ եւ երջանիկ կեանքով: Բայց չէր կարող: Նա արքունի կամ անքարոյ օրէնքների սպասաւորը չէր, այլ ապականւած ժամանակի եւ եղծուած մարդու դէմ հոգեւոր մարտի նետուած խռովարարը: Բանաստեղծի ազնուագոյն տեսակ է, որը միշտ էլ ընդդիմութեան մէջ է եւ իր արդար կոխմն է մղում արատաւոր բարքերի, օրէնքների դէմ: Այստեղից էլ նրա միակ՝ «Մենք մարդ ենք եղել» ժողովածուի հիմնական մոտիւներից մէկը՝ բարձր մարդու ու անեղծ մարդկայնութեան ծարաւը, որ իմաստային լայն տարածք է բացում նրա պոեզիայում:

Բանաստեղծի անունը, դժբախտաբար, մինչեւ մի քանի տարի տարի առաջ ծանօթ էր միայն գրական միջավայրում: Նրան աւելի շատ գիտէին իբրեւ կոմունիստական վարչակարգում ապրած «այլախոհ», որը «համարձակում» էր չենթարկւել ժամանակի շղթաներին: Բնականաբար, չպիտի հանդուրժուէր Սլավիկ Չիլոյեանը: Եւ հիմա, շուրջ երկու տասնամեակ յետոյ, Հայ ընթերցողը կարող է առբնչուել Չիլոյեանի բա-

նաստեղծութեանը, կարելի է ասել՝ նրա ողջ վաստակին: Ահա այդ վաստակի ներքին, իմաստային շերտերից մէկում բանաստեղծը ստեղծում էր իր երգի ուրոյն տեսութիւնը. «Պոետ էին նրանք. ամէն գիրկ ընկնող պոռնկուհու պէս, ընկնում էին, ելնում շրթներին ժպիտ..., իսկ մենակ պահին լացում էին խեղճ, լացում էին լուռ, Մազթաղինացու աչքերով տիուր...»: Այսպէս մեծ շրջագծում՝ կենսական քարոզ փրուզումներից մինչեւ մեռութեան անդուռ պահերը, Հասարակական «քառուխ» մինչեւ առանձնութեան ջինջ ակունքները, - այս չափումներում են ծաւալում Ձիւղեանի կերպարն ու երգը: Եւ, Հակառակ իր ապրած տմարդի ժամանակի, նա առանձնացնում է մարդու այն տեսակը, որն ազատ է ամենայն բռնութիւնից:

Ընդհանրապէս Ձիւղեանի պոեզիայում արեւը, ճառագայթը, ծաղիկը, երգը, լոյսը, Հազուադէպ պատահող գեղեցիկ օրը, Հեքիաթը, միֆական որոշ կերպարները, դաշտի շուշանը, զուլալ ջուրը մետաֆորային ուժեղ ցանց են ստեղծում նրա բանաստեղծական տիրոյթում: Հէնց այդ միջավայրում է բնակւում մարդու վէրը նշուած տեսակը: Բառերի Համայն այս Համայնքը իմաստային այլազոյութեամբ զրահաւորում են բանաստեղծին, պաշտպանում ապականուած ժամանակակից, Հնարաւոր եղծումներից փրկում նրան: Բայց այդ զրահով նա փրկում է նաեւ ուրիշներին, «30 տարի մարդ փրկեցի, այսինքն՝ ինձ, ինձ փրկելն էլ քիչ բան չէ»: Ձիւղեանի տողերում մի բաց տարածութիւն կայ՝ մարդու ու նրա տենչանքների դաշտը, ուր ապրում է ազատ, կամ իրեն լրիւ ազատ հռչակած անհատը, բանաստեղծի ոգին է, կեանքի մաքուր ակունքները որոնող մարդը, որը բազում ապականութիւնների միջով առաջ է տանում եւ իր երազը. «Ես անքան կ'ուզէի մարդկութեան այս լրջութեան քողը Հանել Հագից, լուանալ երկար...»: Ինքն իր մէջ ազատ մարդն ասեաւ ամաչում է արատաւոր մարդու գոյութիւնից.

Թէ մէկն Հրաշքով
այլ մոլորակից
մի օր իջնէր ցած
Ու Հարցնէր մեզ.

.....
կ'ասենք մենք մարդ ենք եղել,
ինչ արած,
այդպէս ենք ծնուել:
Իսկ դո՞ւք:

«Ինչ արածը» Հուսահատ պատասխան է, բայց եւ երկդիմի է, նրանում ե՛ւ բարձր մարդու կամք կայ, ե՛ւ Հակամարդու ժխտում: Այստեղից էլ՝ պատակտուած Հոգեմիճակը, որքան մեծ է մարդու երազը, այնքան ծանր են արցունքները. («Երկիր», 10 Դեկտեմբեր 1992):

ՌՈՒԶԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՄԱՐԴ ՄԸ՝ ԱՆՈՒՆԸ ՁԱԽՈՐԴ

Մլավիկ Չիլոյեանի յիշատակին

Մարդ մը
անունը Ձախորդ
որ յայտնուեցաւ պարսութիւններու աշխարհէն
որուն վրայ յոյս-յոյս յոյսեր կապեցին
ինկաւ ձախորդութեանց Հիմալայայէն
եւ այս աշխարհէն փախտաւ Կոստա
կեանքի շողշողուն ապարանքին
ծառաններու նեղ դռնէն

Ձինք Կոստա Բարդի կին մը՝
պատշգամէն թռուցիկ երազներ երկարող
որ ժանգոտած թիթեղի պէս դափարկ
իր ծոյլ գանկին մէջ միշտ կը փայփայէր
յղանալ առաջին օտարական անցորդէն
Կոստա առաջին արկածախնդիրը
եւ ծնաւ արքայադէմ մանչ մը՝
վագրի պէս գեղեցիկ եւ ուժեղ
եւ իր օրերը լիացան
ապագայի ճիւղերով

Յետոյ
մէկ հայեացքով յղացած այս կինը
իր ապարանքի պատշգամէն իջաւ վար
եւ վագրակերպ երեխան Կոստա օտարականին
որուն անունն էր պարզապէս Ձախորդ
որուն վրայ հազար յոյսեր կապեցին
եւ որ այս աշխարհէն շոգիացաւ
կեանքի շողշողուն ապարանքին
ծառաններու նեղ դռնէն

Ծնրադրեց Ձախորդին առջեւ
եւ Կոստաներու իր ճիւղ սպասումը գեղգեղեց երջանիկ

- ո՛վ իմ օրերում աղ ու համեմ հրաշք Ձախտող
 որ եղար կախարդական հայրը իմ ամուլ երազներում
 եւ կեանքիս փակուղիին մէջ կորստած Կիրակիս
 վերածնցիր հրաշքներու ցօն Մաղկազարդի
 կախէ զիս ուղտի պարանոցէդ՝ օսմանեան ոսկիի պէս
 եւ ձախտորութիւններուդ մթին ձորերն ի վար
 թող զնզնզամ անտարբեր
 նոր-նոր օրեր փարփակէ՛զ

Մարդ մը
 որուն անունն էր Ձախտող
 որուն վրայ յոյս-յոյս յոյսեր կապեցին
 որ վար ինկաւ ձախտորութեանց Հիմալայայէն
 եւ փախտուստ ցուաւ ծառաներու նեղ-նեղ դռնէն
 իր վրայ կին մը ինկաւ՝ երազներու պարզգամէն
 եւ զինք պահեց օսմանեան ոսկիի պէս
 մինչեւ որ ոսկին եղաւ լուսինի չափ
 լուսինը յոյսերու մանեակ եղաւ
 եւ մանուկը սնանեցաւ
 լուսնակաթով
 ու երազով

Ձախտողը լուսինին վրայ իր սէրը կախեց
 ամուլ կիներն ու աղջիկ-մայրերը իրենց սէրերը կախեցին
 բայց անծանօթ մոլորակներէ դարձեալ քամիներ փչեցին
 եւ մանեակ-լուսինը ցրտի տակ ինկաւ վար՝
 պարտանքներ աղացող իրրեւ երկանաքար
 ճեղքէց նողաշերտերն աղբարութեան
 եւ ձախտորութեան ոսկեղարը ծնաւ

Պէյրուք, 13 Մարտ 1992

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



ԻՎայական Հարժուժ

ԱՄԲՈՂՋԻՆ

ՀԱՄԱՐ

ՏԵՂ ԿԱՅ...

Գործով ու ուսումնառությամբ
շարունակելու զոյգ պատճառներով
առժամապէս Ֆրանքֆորթ
հաստատուած մեր աշխատա-
կիցը, բանաստեղծ ու արձակա-
գիր Սեւակ Յովհաննիսեան, հե-
տագայ էջերուն տրուած խոր-
հրդածական ընդարձակ գրու-
թեան ընկերացուցած է նամակ
մը, ուր ուրուագծուած են գրու-
թեան ծննդոցն ու լայն առումով
անոր նպատակը:

Իր շահեկան բնոյթին ու նաեւ
շօշափուած գաղափարներուն
հետ հաղորդակցութիւնը աւելի
արագ ընծայելու համար, որոշ-
ւեցաւ տալ անոր զլխաւոր մա-
սերը՝ գերմանացի խմբագիրին
ճիշդ հակառակը պարզող քովի
խորագիրին տակ:

Այս անգամ չափածոյ կամ արձակ դրութեան չէ, որ սոյնով
յանձնուած եմ ձեր դատին, այլ մի յօդուած, որ ես մի առիթով
գրել եմ գերմանալեզու ընթերցողի համար եւ ապա Թարգմա-
նել հայերէն:

Պիտի ասեմ, որ այս յօդուածը պարունակում է ինձ
համար նուիրական մտքեր, զգացմունքներ, եղբակացութիւն-
ներ, որոնք իմ կարծիքով, կարելի էր են նաեւ ցանկացած Հայի
համար, ուստի, ներող կը լինէք, եթէ ես այս անգամ խախտեմ
«Բագին»ի պայմանը եւ այն միաժամանակ յղեմ «Գարուն»ին՝
հայրենի ընթերցողին նոյնը դրանց հաղորդակից դարձնելու
համար:

Ասեմ, որ յօդուածն ուղարկել եմ գերմանական եւ արա-
տըրիական եօթն իմաստասիրական հանդէսների, սայկայն,
անկեղծ ասած, յոյս չունեմ, թէ կը ապագրուի, քանզի այդ յօդ-

ւածում խախտուած է եւրոպայի լաւ, խելօք, ընդունակ, համեստ, եւրոպասէր, հաւատակից աշակերտը լինելու եւ մեղ իրքեւ ալդախին ներկայացնելու մեր աւանդական պահուածքն ու մօտեցումը, որ ինձ համար ազգային ամօթ ու խայտառակութիւն է եւ վիրաւորում է Հային իմ մէջ՝ այնքան խոր ու համատարած, որ երբեմն ցանկութիւն եմ ունենում ուղղակի ճշալ, որ եթէ Հայ աստուածը ընդամէնը յանգում է այդ քծնողական Հակումին ու նետուածութեանը դէպի Տիրոջ ոտքերը, ապա ես չեմ ուզում լինել այդպիսի ժողովրդի ներկայացուցիչ եւ նոյն յաջողութեամբ կարող էի լինել յոյն կամ քոսնիացի եւ կամ այլ ինչ... Եթէ կարճ կապեմ, իմ ասելիքն այս է՝ Հայ լինել նշանակում է լինել Հայ՝ ամէն ինչից անկախ... Եւ թէ այդ արանքում ինչպիսի՜ պարտադրուած ու կեղծապատիր սրբութիւններ ու ճշմարտութիւններ կը ճգմունեն՝ ինձ համար, անկեղծ ասած, միեւնոյն է... Եւ աւելին. նոյնիսկ Արիականութեան տեսութիւնն էլ ինձ համար կարեւոր է այնքանով, որքանով որ կարող է մաս կազմել իմ Հայ լինելու ազգային Ինքնութեանը եւ ո՛չ աւելին. քանզի իմ աչքի առջեւ է քրիստոնեայ լինելու մեր ազգի տիտուր փորձառութիւնը։ Նշանակում է՝ ցանկացած աշխարհաքաղաքացիական սկզբունք՝ Քրիստոնէութիւն թէ Արիականութիւն, ինձ համար մերժելի է, քանզի չի արտայայտում եւ չի կարող արտայայտել իմ Ազգային Ինքնութիւնն ամբողջութեամբ։ Այս է խնդիրը... Յիշենք եւ Հաւատոյ Հանգանակի պէս ամէն օր կրկնենք Մեծն Նարեկացու՝ Մեծազոյն Հայի, սրբազան պատգամը. «Ես եմ Համայնն եւ յիս ամենեցուն...» Սա է, իմ խորին Համոզմամբ, Հայ լինելու միակ ճշմարիտ, ասել է թէ՛ ամբողջական ելակէտը։

Իմ այս մօտեցման ճշմարտութիւնը փաստում է նաեւ նրանով, որ յօդուածին ծանօթանալուց յետոյ զերմանացի խմբագիրը յանկարծ կայծակնօրէն զգուշացաւ եւ անխնայ մկրատեց յօդուածը, եւ եթէ մինչ այդ նա Հայերի նկատմամբ լաւ տրամադրուած մի մեծահոգի եւրոպացի էր, ապա կարդալուց յետոյ նրա մէջ միանգամից խօսեց թաքնուած Հրեան... Եւ ինձ համար այլեւս ամէն ինչ պարզ էր։ Նա արտաբերեց մի նախադասութիւն, որ կարող է նկատուել իբրեւ մի խորհրդակիր նշանաբան՝ Հայերի նկատմամբ այս Աշխարհի վերաբերմունքը Հասկանալու համար։ Նա ասաց. «Ամբողջի համար տեղ չկայ...»։ Այսքանը։

Իհնչ, աւարտում եմ նամակս։ Յուսով եմ, Ձեզ չձանձրացրի։ Ողջոյններ «Բագին»ի Հայերին։ Կանխաւ մեծապէս շնորհակալ եմ։

ՄԵԻԱԿ ՅՈՎՀԱՆ ՆԻՄԵԱՆ

Ա. Յովհաննիսեան

**ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԳԱՅՈՒՄԸ.
ՄԻ ԲՆԱԶԱՆՅՈՒԹԵԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐ⁽¹⁾**

ւած բազմաթիւ օրինակներով, սակայն առաւել կարեւոր է կիզակէտի բերելով՝ բիւրեղացնել այդ պատմութեան «տրամաբանութիւնը»՝ ցոյց տալու Համար, թէ ո՞րն է Հայերի իւրա-յատկութիւնը:

Երբ ծանօթանում ես Հայերի պատմութեանը, աչքի է զարնում այն, որ Հայերն սկզբից մինչեւ այսօր գտնւում են պատմական միեւնոյն իրադրութեան մէջ. նրանք ստիպուած են միշտ եւ անդադար պայքարել իրենց ազգային գոյատեւման Համար: Նրանք մշտապէս ապրում են անդնդի եզրին՝ վերջնա-կան եւ անվերադարձ կործանման եւ Պատմութեան անիմա-նալիութեան թանձր խաւարում անհետ կորչելու սպառնալիքի ներքոյ: Նրանք իրենց երկար, դժուար, առաւել յաճախ՝ տա-րաբախտ պատմութեան ընթացքում կարողացել են, սակայն, դիմադրաւել բոլոր փոթորիկներին ու ալեբախութիւններին եւ ստիպուած են եղել ցմբուր ըմպել այս Աշխարհի բոլոր դաժան փորձութիւններն ու տառապանքները: Ինչպէս իրենց առհա-ւական Արեւի Աստուած Արան, նրանք Հազար անգամ մահա-ցել, սակայն միշտ էլ յարութիւն են առել:

Սա արդեօք Հրա՞ջք է: Կամ՝ այստեղ թաքնուած է մի անքննելի դադտնի՞ք: Կամ՝ Պատմութիւնն այս պարագային

եւ ակադ. Պարիս Հերոմու գիտական շրջադարձային հետազո-տութիւններով (տե՛ս նաեւ ակադ. Յովս. Օրբելու «Հայկական հերոսական էպոսը» աշխատութիւնը, Երեւան, 1956թ.): Անչափ հետաքրքիր է այն հանգամանքը, որ Ազգավէպի որոշ տարբերակ-ներում Սասնայ, այսինքն՝ Արեւածիմների տան հիմնադրումը կատարւում է Առիծ Միերի կողմից, ինչն ակնարկում է մարդկա-յին նախընթաց Պատմութեան Ոսկու (Առիծ-Ոսկի) Դարաշրջանը (Առիծ Միեր-Առիծ - 10000 տարի մ.թ.ա.), որին յաջորդում է մերկայ մարդկութեան Պատմութեան ծնունդը Մայր Ծովի - Նարից (Մարդու՝ իբրեւ տիեզերական միութեայակի, ջրային - ջրածիմ բնոյթ. աւելի քան 70% թուր): Հարկ է նշել, որ մեմֆ՝ Հայերս, միակ կենդանի վկաներն ենք այդ Պատմութեան Սկզբնաւորման, Բանգի մօտաւորապէս նշանատարիք հնագոյն Բաղաճախութիւն-ները վաղուց արդէն կործանուել են կամ փոխարինուել նորերով, ինչպէս՝ Մայաների (8498 տարի մ.թ.ա.), Դրաւիդների մախա-հնդկական (8000 տարի մ.թ.ա.), Նախաբքիստական (8000-5000 տարի մ.թ.ա.), Նախապարսկական (6000-4000 տարի մ.թ.ա.), Ծումերական (4000 տարի մ.թ.ա.) Բաղաճախութիւնները (տե՛ս նաեւ Arthur Schult, "Die Weisheit der Veden und Upanishaden im Lichte des West-Ost-Problems", Turm-Verlag, Bietigheim/ Württemberg, 1986): Պատահական չէ, որ Աշխարհի ոչ մի գրաւոր կամ բանաւոր յուշարձանում Տիեզերաշրջանների յաջորդափոխու-թիւնն այնպէս վառ արտայայտուած չէ, ինչպէս մեր «Սասնայ տուն» ազգավէպում:

բացատրություն է անում: Վերջապես, ինչով է պայմանավորված այդ անընկճելի «յամատությունն» ու տոկունությունը մի փոքրիկ ժողովրդի, որն, ըստ ամենայնի, չպետք է այլևս գոյություն ունենար:

Դրանում, իհարկե, թաքնուած է մի գաղտնիք, ինչպես այս Աշխարհի բոլոր իրերում:

Կարճ ու պարզ ասած, դա պայմանավորված է Հայերի ապրիորի դիրքորոշմամբ առ երկրային իշխանությունը, որը նրանց ազգային Ինքնությունը հիմնովին մերժում է: Սակայն սա ոչ թէ գիտակցուած տեսակէտ է, ազգային կամ կրօնական գաղափարաբանություն, այլ՝ առարկայական իրողություն, որ բխում է նրանց ամբողջ պատմությունից եւ թոււմ է, թէ ծնաբանօրէն (գենետիկօրէն) ներդրուած է նրանց ազգային Ինքնութեան մէջ: Նրանք Հասկանում են Մղումն առ Կեանք ո՛չ իբրեւ Կամք առ իշխանություն, ինչպէս որ, ընդհանրութեան մէջ դիտած, միւս ժողովուրդներն են իրենց գործունէութեան ու պահուածքի մէջ դա լոնկայն ընդունում՝ իբրեւ ինքնին Հասկանալի մի բան, այլ իբրեւ Ազատություն առ Ստեղծագործում՝ առ Մարդկութեան դոյաբանական միակ հիմնարար սկզբունքը: Գոյութեան միւս բոլոր թերերը (կողմերը) նրանք դիտում են իբրեւ միջոց Ազատութեան այդ ինքնին Ջգացումի իրականացման Համար: Ստեղծագործել՝ Հայերի Համար նշանակում է առաջ բերել բացառապէս Հոգեւոր արժէքներ իբրեւ այդպիսին եւ ո՛չ իբրեւ մի ազգի կամ պետութեան աշխարհիկ մեծութեան կամ Հզօրութեան ցուցիչ կամ նշան, այլ՝ ժողովուրդների վրայ տիրապետություն Հաստատելու «իրաւունք» ձեռք բերելու Համար (ինչպէս որ գրուած է որոշ կրօնական գրքերում եւ կամ ինչպէս ծանօթ փիլիսոփայ Հեգելի տեսական փորձերը³⁾, որ միտուած էին բնագանցօրէն հիմնաւորելու քրիստոնեայ եւրոպացիների Հոգեւոր-մշակութային գերակայությունը՝ որպէս... Հնդկների վրայ նրանց գերիշխանութեան Հաստատման նախադրեալ - Հնդկների վրայ, ասել է թէ՛ Վէդաների ժողովրդի, որ ստեղծել է յիշատի տիեզերական չափերի Համամոլորակային մշակոյթ, ընդ որում՝ մի ոլիւծին շատ աւելի խոր խնաստասիրական ու կրօնական Համակարգեր...):

Ստեղծագործ Ոգու ահա այս անշահախնդրութեամբ էլ բացատրում է Հայ մշակոյթի բնութագրական գլխաւոր յատկանիշը՝ արտայայտչամիջոցների ծայրայեղ խնայողությունը. այն, ինչ պետք է արտայայտուի, ունի Հոգեւոր բնութիւն, դրա Համար էլ ստեղծագործութեան մէջ նիւթականը Հարկ է Հասցնել Հնարաւոր նուազագոյնի: Հայկական Աստծոյ տները Աստծոյ տներ են եւ ոչ ուղմական ամրոցների կամ

3.- Տե՛ս G. W. Hegel: *Vorlesungen über die Philosophie der Weltgeschichte*; *Sämtliche Werke*, Glockner, Stuttgart, 1928, Band II, S. 196.

չքեղազարդ դղեակների վերաձևումները, ինչպես չափազանց յաճախ կարելի է հանդիպել այլուրեք:

Այս մաքուր յարաբերություններն առ Հոգեւորն էլ Հէնց կազմում է Ազատութեան Հայկական Զգացումի ինքնէութիւնը, որը վնասող մասնակցութիւն է ունեցել նրանց ազգային նկարագրի կերտման մէջ: Այդ «Աստուածային Հուրը» մշտապէս արծարծ պահելու մէջ Հայերը տեսնում են իրենց գոյութենական առաջադրանքը: Դրանով է պայմանաւորուած նրանց վերաբերմունքն այլ ժողովուրդների նկատմամբ: Նրանք, Հաւանաբար, միակ ժողովուրդն են, որ «նուաճողական տենդախտ» չի դրսեւորել: Նրանք երբեք չեն ձգտել որեւէ կերպ գերիշխանութեան հասնել այլ ժողովուրդների հանդէպ՝ ո՛չ Թշնամիների եւ ոչ էլ Բարեկամների, ո՛չ Հարեւան եւ ոչ էլ Հեռաւոր երկրների. չեն ձգտել նրանց թալանել, նուաստացնել, մարդկանց արմատախիլ անել իրենց հայրենի երկրից եւ կամ օտար մշակութային ժառանգութիւնը սեփականել կամ քնաջնջել: Միակ բացառութիւնը մ.թ.ա. 1ին դարն է, երբ Հայաստանը Տիգրան Մեծի օրօք կէս Հարիւրամեակ շարունակ դերտէրութիւն էր Հռոմի եւ Պարսկաստանի միջեւ: Սակայն գրեթէ բոլոր երկրները, ուր արչաւում էր Հայերի «Արքայից արքան», նրան դիտում էին որպէս ազատարար Հոռմէական ու պարսկական լծից: Սա մի բացառութիւն է, որ, ինչպէս ասում են, «Հաստատում է օրէնքը»:

Հազարամեակներ շարունակ Հայերը ձգտել են իրենց առհաւական հայրենիքում՝ Հայկական Լեռնաշխարհում, խաղաղ ապրել ու ստեղծագործել: Սակայն պատմական անբարենդապաստ Հանգամանքները մինչեւ օրս խոչընդոտել են դրա իրականացմանը. քաղաքակիրթ ու անքաղաքակիրթ Հզօր օտարները՝ չումերները, աքքադացիները, ասորիները, պարսիկները, յոյները, Հոռմէացիները, քիւզանդացիները, արաբները, սելջուկները, մոնղոլները, թուրքերը, ռուսները եւ ուրիշներ փորձել են բոլոր միջոցներով արմատից խլել եւ կորստեան մատնել Հայերի Ազատութեան Զգացումը. նրանք տեւականօրէն յարձակուել են Հայաստանի վրայ, կողոպտել ու ամայացրել, սպանել ու յափշտակել, ընակչութեանը քշել գերութեան ու ստրկութեան, Հարիւրամեակներ շարունակ վերացրել Հայ պետականութիւնը եւ ձգտել Հայերին ենթարկել ձուլման: Այս ջանքերի բարձրակէտը եղաւ դարասկզբի՝ 1915թ. Հայերի Յեղասպանութիւնը թուրք կառավարութեան կողմից, երբ օտարների «նուաճողական տենդախտը» Հասաւ Հրէշաւոր չափերի, եւ եւրոպական քրիստոնեայ մեծ տէրութիւնները սուրբ եղբայրաբար դրեցին դահլիճի ափի մէջ: Ո՛չ, նրանք չաղաղակեցին. «Սպանի՛ր դրանց...», - այլ միայն դիւանագիտօրէն զլխով արեցին, եւ դահլիճը Հասկացաւ, որ ինքն իրաւունք ունի սպանելու... եւ 1,6-2 միլիոն կանայք, ծերեր ու երեխաներ, արուեստագէտներ ու բժիշկներ, մտաւորականներ ու հո-

գեոտրականներ դարձան այդ տեղախառնի գոհը: Դա մարդկութեան պատմության մէջ Երկրային խաւար Իշխանութեան մինչ այդ գործած մեծագոյն դաւադրութիւնն էր ստեղծագործ Ոգու եւ Ազատութեան Զգացումի դէմ, սակայն, աւանդ, ո՛չ միակը, քանզի դրան յաջորդելու էին այդօրինակ այլ փորձեր: Եւ այդ անդնդային վէրքը մինչեւ օրս մնում է բաց եւ արիւնում է թերեւս եւ այս Աշխարհի քաղաքակիրթ Հզօրների կողմից արհամարհանքով անտեսուած է ու մոռացուած: Սակայն Մարդկային Իշխանութեան խղճուկ տրամաբանութիւնն այս անգամ եւս վրիպեց. չնայած անդառնալի կորուստներին, Հայերը վերայառնեցին Մահից ու Կործանումից եւ չդաւաճանեցին այս Աշխարհում իրենց ունեցած միակ Սրբութեանը՝ Ազատութեան Զգացումին՝ որպէս Հայ լինելու իրենց ազգային Ինքնութեան անպայման նախադրեալի:

Այն փաստը, որ Հայերը կարողացել են դիմանալ բոլոր փորձութիւններին, դաւադրութիւններին, ոչնչացման փորձերին, մատնանշում է մի բնագոյնական ճշմարտութիւն. այն, որ մարդու մէջ կա՛յ յիշատի անուշանալի մի բան. որ այդ ներքին Ազատութեան «Աստուածային Հուրը» Հնարաւոր չէ մարել ո՛չ Կենդանամարդու բնազդական ստոր ուժերի խաւար ժայթքումներով եւ ոչ էլ Լուսաւորեալ Մարդու քաղաքակիրթութեան կեղծ, երեւութական Հրավառութեամբ: Եւ ապա, քանի դեռ գոյութիւն ունի Երկրային – Մարդկային Իշխանութիւնը, ասել է թէ՛ Իշխելու Կամքը, Մղումը՝ ինչպէս խաղաղ, այնպէս էլ պատերազմական, ինչպէս վայրենաբարոյ, այնպէս էլ քաղաքակիրթ միջոցներով մէկ ուրիշին տիրանալու, նուաժանեցնելու, կողոպտելու, չեն կարող Աշխարհում գոյութիւն ունենալ ո՛չ իսկական Խաղաղութիւն եւ ոչ էլ ճշմարիտ Ազատութիւն: Եւ բնագոյնագործն դիտած, իրերի ներկայ դրութիւնն առաւել բարեւալ չէ, քան 6000 տարի առաջ, եւ ցաւով պէտք է Հաստատել, որ չնայած բոլոր կրօնական յայտնութիւններին ու բարոյական ուսմունքներին, գիտական նուաճումներին ու ճարտարութեստային առաջադիմութեանը, Մարդկային Մարդը թերեւս չի կայացել:

Այսու՝ Հայերի առաջադրանքը մնում է տեւականօրէն նոյնը, ինչպէս ի սկզբանէ. բոլոր ուժերով պաշտպանել Ստեղծագործումի Ազատութեան իրենց իրաւունքը, մինչեւ որ կը գայ այն օրը, երբ «խաղի կանոնները» Հիմնովին կը փոխուեն, եւ Կենդանամարդը կը վերածուի Մարդկային Մարդու: Մարդկային կեանքը չէր կարող պատահականօրէն առաջանալ՝ առանց նպատակի եւ նպատակադրման: Նա, ով խօսում է պատահականութեան մասին, ընդամենը ցոյց է տալիս Տիեզերակարգի աստուածային օրէնքների մէջ թափանցելու իր անկարողութիւնը:

Մեր ժամանակի Լուսաւորեալ Մարդուն, որն իրեն երեւակայում է որպէս «Աշխարհի օրէնսդիր», այս մտածումները

կարող են ներկայանալ իբրև քաղաքականապէս ձախողուած մի ժողովրդի ինքնամիխթարանքի «փիլիսոփայութիւն» եւ ընդամենը յարուցել նրա ներողամիտ ժպիտը, քանզի նա տիրապետում է մէկ այլ ճշմարտութեան, որը մօտաւորապէս յանգում է Հետեւեալին. առանց Իշխելու Կամքի, Աշխարհը կը թաղուէր Քաոսի մէջ, եւ չէին լինի ո՛չ արուեստ, ո՛չ մշակոյթ: Համընդհանուր գոյապայքարում որոշները կործանուած են, ուրիշները՝ բարձրանում: Եւ դա բնական է: Ցաղթում է նա, ով ուժեղ է: Իսկ յաղթողին չեն դատում: Ահա եւ ամբողջը:

Պարզ է, որ այս «փիլիսոփայութիւնը» նոր ոչինչ չի առաջարկում: Բայց չէ՞ որ սա «սոսակէտն» է կենդանիների, բոյսերի եւ քարերի: Միայն թէ մի նուրբ տարբերութեամբ. վերջիններս ապրում են ըստ այդ «փիլիսոփայութեան» եւ խաղում են իրենց դերն, իբրեւ կենդանիներ, բոյսեր ու քարեր, բոլորովին ազնուաբար: Իրենց ինքնաիրականացման առումով, որպէս այդպիսին, նրանք Մարդուն գերազանցում են: Մարդն, իբրեւ Մարդ, թերեւս չի հասել իր ինքնաիրականացմանը եւ խարխափում է նախապաշարումների ու կանխակարծութեան խաւարում (ինչպէս, ասենք, ժիժաղելի վէճը՝ միաստուածութիւն, թէ՞ բազմաստուածութիւն, որը, սակայն, պատմութեան ընթացքում միլիոնաւոր մարդկային կեանքեր է արժեցել): Ասել է թէ՛ Մարդը բնական չէ:

Ձնայած այս ամէնին, Տիեզերակարգի ներսում մշտապէս գործում է մէկ այլ «Հակատրամադանութիւն»: Հարց է ծագում. ո՞վ է յաղթողը: Հայերն իրենց պատմութեան ընթացքում տեսել են տիրողների նման Հարիւրաւոր «օրէնսդիր» ժպիտներ: Մի քան Հաստատ է. ժպիտը կայ, սակայն ժպտացողների մեծագոյն մասն արդէն վաղուց անհետացել է Պատմութեան թատերաբեմից: Դրան Հակառակ՝ Հայերը կան եւ դարձեալ գտնուած են դէմ-յանդիման մի ուրիշ ժպտացողի, որն օրօրում է դեռ այն Հին մոլորութիւնը, թէ կարող է Հայերին ստիպել, որ նրանք իրենց Ազատութեան Զգացումը – իրենց Սրբութիւնը – իրենց պատմական Հայրենիքում՝ Արցախում (Լեռնային Ղարաբաղ) վաճառեն այս Աշխարհի Հզօրների քարիւղային շահերի դիմաց: Սակայն Հայերը պինդ կառչած են մնում այդ ներքին «Հակատրամադանութեան» եւ այս ժպիտը եւս կը յաղթահարեն:

Կողքից նայողին կարող է թուալ, թէ Հայերը միշտ լողում են Հոսանքին Հակառակ՝ յանդուգն ու ինքնազուխ: Սակայն իրենց՝ Հայերի Համար, այն ճանապարհը, որով իրենք ընթանում են, կանխորոշուած է ճակատագրով եւ միակ ճանապարհն է, որ տանում է դէպի երկինք, ասել է թէ՛ դէպի իրենց ստեղծագործական ուժերի ամբողջական դրսեւորում եւ այլընտրանք չունի: Հակառակ դէպքում նրանք պէտք է դադարէին Հայ լինելուց եւ տարրալուծուէին ընդհանուր Հոսանքի մէջ: Այս առումով, Հայկական «Մասնա տուն» (նախ.

սան(ա)սուն,- սան-հնդեր, արեւ եւ (ա)սուն կամ (ա)զուն-ծին, ծնեալ, սնեալ, ասել է թէ՛ արեւածին - «Արեւածինների Տուն»՝ ազգավէպում, որի խորախորհուրդ կառուցուածքում, պատկերներում ու խորհրդանշներում ամփոփուած են ո՛չ միայն Հայերի, այլեւ՝ Համայն Մարդկութեան Անցեալը, Ներկան եւ Ապագան, կարելի է դտնել մի բնութագրական պատկեր, ուր խօսուած է մի փոքրիկ, մաքուր, կապոյտ առուի մասին, որը «Տիեզերական լեռան»՝ Արարատի զազաթից խաւար անդունդների, մացառուտների ու ժայռերի միջով անցնելով ու մէկ ա՛յս ափին, մէկ ա՛յն ափին զարկուելով, իջնում է ցած եւ տափարակում միանում մեծ գետին, սակայն զարմանալիօրէն գետի պղտոր ջրերին չի խառնուած, այլ իր յետեւից մի «լուսեղէն հետք» թողնելով, դիմում է դէպի Հեռուն...: Այդ «լուսեղէն հետքը» Հայերի Ստեղծագործ Ոգին է, նրանց Հարուստ Հոգեւոր արժէքները, որ նրանք ստեղծել են Հազարամեակների ընթացքում՝ բանաստեղծութիւն եւ երաժշտութիւն, ճարտարապետութիւն եւ գեղանկարչութիւն, խմաստասիրութիւն եւ խորհրդաբանութիւն, եւայլն: Թէպէտ Հազարաւոր մշակութային արժէքներ օտարների կողմից մշտապէս ոչնչացւել ու կողոպտուել են, սակայն նոյնիսկ ամենադժուարին ու անմարդկային պայմաններում Հայերը չեն դադարել նորանոր ստեղծագործութիւններ արարելուց՝ ո՛չ միայն իրենց, այլեւ՝ ուրիշների Համար եւս. նրանք ստեղծել են, երբ ճնշուած, նուաստացուած եւ մատնուած են եղել ոչնչացման վտանգին. եւ ստեղծել են, երբ նուաճողների գէժ մղուող անվերջանալի պայքարների արանքներում ազատ շունչ քաշելու մի փոքրիկ միջոց են ունեցել: Սակայն երկու դէպքում էլ նրանք եղել են ազատ, ներքուստ ազատ, քանզի միայն ազատ մարդն է ընդունակ ստեղծագործելու: Զարդարանքը կարողացել են սպանել միայն Հայերի մարմինը, այնինչ նրանց Ազատութեան Զգացումը, նրանց Հոգին, մոխիրների տակ միշտ էլ մնացել է կենդանի:

Այս խմաստով բացառութիւն է կազմում Հայաստանի պետական քրիստոնէացումը 301 թ., երբ ո՛չ միայն նախաքրիստոնէական տաճարները, այլեւ՝ Անցեալի բոլոր կրօնական, բանաստեղծական եւ խմաստասիրական Հնագոյն ձեռագրերը նոր կրօնի արքեպիսկոպոսի մէջ ամբողջովին ոչնչացուեցին, սակայն ո՛չ առանց Հեռագնայ միտումի ու օտար աջակցութեան: Սակայն Հայերը կարողացան Գրիստոնէութիւնն արագօրէն Հայացնել եւ մէկ Հարիւրամեակ անց ո՛չ միայն մի նոր Այբէն⁽⁴⁾

4.- Հայոց գրահամակարգում Ա-ի նախնական եւ ձիշտ անունն է Այ եւ ոչ թէ Այբ, որ առաջացել է յաջորդող Բեճի արտասանական ազդեցութեամբ: Այդ է հաստատում Յանս Ա. Էնչիւմի խորհրդարանութիւնը:

ստեղծեցին, այլև Քրիստոսի նշանի ներքոյ առաջ բերեցին դրական – զեղարուեստական, պատմական, կրօնական ու խնամասիրական առաջնակարգ ստեղծագործութիւնների մի ամբողջ բոլոր՝ այդպիսով որոշ չափով մեղմելով այդ անգնահատելի կորուստը: Նրանք Հիմնեցին իրենց ազգային եկեղեցին՝ իր Հայ-քրիստոնէական դաւանանքով. նա կոչւում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի, որի դէմ, սակայն, ժամանակի ընթացքում Հոռմէական եւ Բիւզանդական քոյր-եկեղեցիները, ինչպէս նաեւ սրանց յաջորդածները, բոլոր միջոցներով պայքար ծաւալեցին եւ դժուարին պահերին միշտ նրան թիկունք դարձնելով, լքեցին, նրանք պարզապէս չէին կարողանում ներել Հայերին, որ վերջիններս ինքնուրոյն եկեղեցի եւ դաւանանք ունեն: Ձնայած դրան, Հայ Եկեղեցին կարողացաւ ստանձնել ազգի Հոգեւոր առաջնորդութիւնը եւ Հայ պետականութեան կորստից յետոյ, ընդհուպ մինչեւ վերջին ժամանակներս, քիչ թէ շատ յաջողութեամբ նաեւ պաշտօնապէս ամէնուրեք ներկայացնել Հայութիւնը:

Հայերի վերայարմարուելու ընդունակութիւնը պարզապէս անսպառ է: Ճակատագրից քշուած՝ նրանք սփռուել են Աշխարհով մէկ՝ Հիւսիսային Ամերիկայից մինչեւ Աւստրալիա, Աֆրիկայից մինչեւ Հնդկաստան, Արգենտինայից մինչեւ Եւրոպա, Լիբանանից մինչեւ Հեռաւոր Արեւելք: Սակայն ամէնուր նրանք ո՛չ միայն պահպանում են իրենց ազգային ինքնութիւնը, այլև կեանքի բոլոր բնագաւառներում իրենց նշանակալի վաստակն են բերում Հիւրընկալ ժողովուրդներին, քանզի նրանք դիտեն, որ ինքն իրեն բաշխելով է միայն մարդն ուժ ստանում:

Նրանց բացազատ պահուածքն օտարի նկատմամբ պայմանաւորուած է նրանց ազգային ինքնութեան միջուկի ամրութեամբ, քանզի նրանք Հաւատացած են, որ իրենք ծնուել են Աշխարհի Հետ, եւ քանի դեռ Աշխարհը գոյութիւն ունի, գոյութիւն կ'ունենան նաեւ իրենք: Ո՛չ, սա «մանկական-պարզունակ» ինքնապատկերացման արտայայտութիւն չէ, այլ ծնեալ ինքնազգացում, որը կազմում է Հայ բանաստեղծութեան ու արուեստի ներքին էութիւնը, որ միշտ միտում է դէպի Յաւերժը: Դրանում կարելի է ճանաչել Ազատութեան Հայկական Ձգացումի նաեւ «Հակառակ երեսը»: Հայերը չափազանց ինքնաքննադատ են: Որպէս մարդ՝ նրանք զգում են իրենց անվերջօրէն անկատար: Նրանք իրենց Համարում են ծայրայեղութիւնների Հիւսուածք եւ սիրում են իրենք իրենց ձաղկել: Իրենց թերութիւնների ու դժբախտութիւնների Համար նրանք պատասխանատու չեն նկատում Աշխարհն ու Մարդկութիւնը, այլ միայն իրենք իրենց. ինչո՞ւ են իրենք այսքա՛ն անկատար: Ահա թէ ինչու, իրենց անյաջողութիւնների պատճառով նրանք չեն անիծում ու Հայհոյում ուրիշներին, քանզի, ինչպէս բանաստեղծն է ասում, Հայկական Հոգում կարելի է գտնել ամէն

ինչ, բայց ո՛չ Հայհոյանք: Ձնայած այն անասելի տառապանքներին, որ նրանք ստիպուած են եղել կրել պատմութեան մէջ, Հայերը Հեռու են իրենց իբրեւ ճակատագրի զոհ զգալուց եւ, յատկապէս, իրենց իբրեւ այգալիսին ներկայացնելուց: Եւ բոլորովին էլ պատահական չէ, որ Համաշխարհային դրականութեան ամենաինքնաքննազատ գիրքը՝ Գրիգոր Նարեկացու (10րդ դար) «Ողբերգութեան մատենը», Հազար տարուց ի վեր ամենատարածուած գիրքն է Հայերի մէջ եւ նրանց Համար Հանգիստում է մի տեսակ «ինքնամանաշողութեան աւետարան» եւ ժողովրդի կողմից բառացիօրէն պաշտում եւ օգտագործում է իբրեւ Սրբազան Դարմանագիրք: Դա մի չափազանց բարդ, գաղտնալից, իմաստասիրական եւ կրօնախորհրդարանական ստեղծագործութիւն է (10000 ազատ բանատող), ուր Հեղինակը ազդու եւ յափշտակիչ բանաստեղծական պատկերներով աւելցնում է բազմախորհուրդ փոխաբերութիւններով տիեզերական չափերի ինքնամեղադրանքներ է բարդում եւ աւելի ու աւելի խոր մխրճուող ինքնամանաշողութեան միջոցով Հասնում Աստծոյ Ապրումին, Աստծոյ ժանաշողութեանն ու Աստծոյ Յայտնութեանը եւ, որքան էլ զարմանալի թուայ, ազդարարում է Մարդու Աստուածանալու բնազանցական Հնարաւորութիւնը: Այդ գրքում կարելի չէ գտնել որեւէ բառ Հայերի ու Հայաստանի մասին (բանաստեղծը դիմում է ամբողջ Մարդկութեանը եւ «արտի խորքերից խօսում Աստծոյ Հետ»), սակայն, այդուհանդերձ, այն ներկայացնում է Հայ Հոգու ամենահարազատ ու ամենամբողջական պատկերը՝ իր խաւար անդունդներով եւ անհասանելի բարձունքներով: Հեղինակն իր այս գրքում իրականացնում է Անգիտակցականի եւ Վերգիտակցականի մի տեսակ առողջ Հոգեախտարանական անժամանակեայ քննութիւն եւ ի դէմս Աստծուն «զգալու» անհատական փորձառութեան՝ ուղղափառ, կենդանի ինքնամանաշողութեան մէջ տեսնում դէպի Դարմանում եւ Կատարելութիւն տանող միակ ճշմարիտ ճանապարհը: Այս գրքում եւս Հայերի Ստեղծագործ Ոգու անպայման Ազատութիւնը ճախրում է դէպի Յաւերժը:

Յաւերժին պատկանելու զգացումը Հայերի ազգային Ինքնութեան գլխաւոր յատկանիշն է: Այն Հիմնուած է Ազատութեան նրանց ապրիորի Զգացման վրայ. միայն նա կարող է լինել յաւերժ, ով իրեն ազատ է զգում: Նրանք պարզապէս Ազատութեան զաւակներն են: Ըստ մի գրաւոր աւանդութեան, նրանց նախահայր Աստուածային Հայկը (Հայերի ինքնանւանման յոգնակի ձեւը) անհաւասար պայքարում յաղթում է բարեւոյնեան բռնակալ Բելին (բարեւոյնեան աստուածութիւն շան յայտանշանով. Հմմտ. գերմ. *bellen*- Հաջել բառը. շունն իբրեւ Ջար Ոգու մարմնաւորում. այստեղից էլ՝ Բելիար-ը), ազատագրում է երկիրը եւ իր որդիներին ժառանգում Ազատութեան Ոգին: Ազատութիւն՝ նշանակում է ազատ լինել Երկրա-

յին խաւար Իշխանութիւնից, ասել է թէ՝ Իշխելու Կամքից: Միայն այս ներքին Ազատագրմամբ կարելի է Հոգուց վերացնել Չարի ստուերը: Դրա շնորհիւ կ'իրականանայ Ստեղծագործումն ինքնին եւ ոչ թէ՝ - ուղղակի թէ միջնորդաւորուած - յանուն Իշխանութեան: Այս է բոլոր Բնագանցութիւնների առաջին եւ վերջին խնդիրը, որ կարիք ունի մի կենդանի օրինակի:

Առհասականութիւնը Հայ լինելու միւս յատկանիշն է: Հայերը միշտ էլ իրենց ընկալել են որպէս մի տեսակ Հիմք - ժողովուրդ: Սակայն դրանից նրանք իրենց եզակիութեան կամ ընտրեալութեան վերաբերեալ գաղափարախօսութիւն չեն զարգացրել, քանի որ նրանք գիտեն, որ ամէն տեսակ գաղափարախօսութիւն, առանց բացառութեան, ժազում է Այս կողմից եւ պատկանում է Մարդկային Իշխանութեան բնագաւառին եւ նրա տրամաբանութեանը: Նման գաղափարախօսութիւն կամ Համոզմունք դաւանում կամ ներկայացնում են միայն նրանք, ովքեր իրականում եզակի կամ ընտրեալ չեն կամ էլ ներկայանում են որպէս այդպիսին բոլորովին այլ իմաստով. չէ՞ որ մեր աչքի առջեւ է Հարիւրաւոր «ընտրեալների» միջեւ պառակտուած ու բզկտուած այս Աշխարհը... Ձնայած Հայերին Եւրոպայի գանազան կողմերից (Բալկաններ, Սկանդինաւիա, Նոյնիսկ Հիւսիսային Ռուսաստան, եւայլն) ներգաղթեցնելու եւ կամ նրանց այլ ժողովուրդներից ծագեցնելու գիտութեան եւրասիականորոն փորձերին, Հայերը դրանից իրենց վատ չեն ըզգում, այլ Համբերատար սպասում են, մինչեւ ճանաչում կը գտնի իսկական ճշմարտութիւնը: Նրանք գիտեն, որ ճշմարտութեան ծնունդը (յատկապէս վերածնունդը՝ վերայայտնութեան իմաստով), ինչպէս որ մարդունը, չափազանց դժուարին է, եւ ի տես փնտռողների ինքնատուայտանքների, նրանք սպարդապէս մի քիչ տխրում են: Նրանք գիտեն իրենց մասին, որ իրենք ի սկզբանէ ապրում են իրենց Հայրական Տանը եւ Նոյնիսկ մի քայլ նրա շնորհից չեն Հեռացել: Իրենց միւս եղբայրները արտագաղթել են, իսկ իրենք մնում են Կաթնաղբիւրի ակունքին⁽⁵⁾ նստած եւ Հսկում են Կենաց Սուրբ Ջրի՝

5.— Հայկական պատմողական դիցաբանութեան մէջ Հայերի Նախամայր Մովսէսը (Տիեզերական Նախագոյ Ջրերի Աստուածուհիի՝ Իգական Սկզբումէ), խմելով Աստուածային Կաթնաղբիւրից (Արարչական կամ Սուրբ Հոգի՝ Արական Սկզբումէ), յղիանում է եւ ծնում նրկու հերոս-երկուրեակներ՝ երկու Արեւ-Լեռներ, մէկը՝ մեծ, միւսը՝ փոքր: Սա ակնարկ է առ Արքագան Արարատի Մեծ եւ Փոքր գագաթները, ինչպէս նաեւ պատմականօրէն՝ առ Մեծ եւ Փոքր Հայքերը (Բաղդասարի՝ Փոքր Եզրօր, իմբնական հեռանալով Արեւածիմների Տնից՝ Սասունից՝ Հայաստանից՝ Հայր-Եմիից, ամժառանգ մնալով ու թաղումն օտարութեան մէջ եւ Փոքր Հայքի իմբնութացումը՝ պատմական խմբումն ու անհետացումը Հայոց Ճակատագրի պատմութիւնից):

Ազատութեան Զգացումի, անադարտութիւնը:

Ինչպէս Հաստատում են գիտական նորադոյն ուսումնասիրութիւնները, արիական ցեղերը 7-8 հազար տարի առաջ Հայկական Լեռնաշխարհից ճառագայթածեւ սփռուել են Աշխարհի չորս ծագերում: Եւ զա իսկապէս ճշմարիտ է: Հայկական Լեռնաշխարհը նման է մի «երկրային» Արեւասկաւառակի, որից սկիզբ են առնում չորս գետեր (Եփրատ, Տիգրիս, Արաքս եւ Քուռ, Հմմտ. դրախտի չորս գետերի Հետ), բաղկացած է տասներկու յարաբերաբար ինքնուրոյն շրջաններից, եօթը սրբազան բարձրագագայթներից, շրջապատուած է երեք արտաքին ծովերով, ունի երեք ներքին ծովեր, իսկ կենտրոնում յառնում է «Աստուածային Լեռը»՝ Ազատ Մասիսը, յարաբերական բարձրութեամբ Աշխարհի ամենաբարձր գագայթը՝ Արարատը: Պատահական չէ, որ միայն Հայերն են անմիջաբար ու անփոփոխ ժառանգել չոր անունը (Հայր=Հայ=Հար=ար): Արմէն կամ արման նշանակում է՝ ար-Արարիչ եւ արարել, ինչպէս նաեւ Արեւ, մէն կամ ման-մարդ, որդի, մանուկ (Հմմտ. մարդկութեան վէդայական նախահայր Մանու-ն), ինչպէս նաեւ՝ Առաջինը, Մին կամ միակը: Եւ ապա, Հնդեւրոպական լեզուների մէջ Հայերէնը միակն է, որ բառացիորէն Հեղեղուած է արարմատով հազարաւոր ամէն տեսակ բառերով, Հիմնական Հասկացութիւններով, անուններով ու բնորոշումներով, այնպէս որ, կարող է տպաւորութիւն ստեղծուել, թէ Հայերէնը բաղկացած է բացառապէս ար-ով բառերից: Աւելորդ չէ նաեւ ընդգծել, որ սովորաբար Հայերն իրենց մէջ իրար կոչում են ար կամ արա, կամ արեա՝ Հայ լինելու իմաստով, յաճախ՝ ամէն բանից յետոյ: Մէկ այլ ապացոյց կարող է լինել այն, որ Հայերի Արարիչ Աստուածը կամ Արեւի Աստուածը կոչում է Ար կամ Արա՝ Գեղեցիկը, Հրաշալին եւ Անմահը, ումից սերում են Հայոց արքաները (նախ. ար-գահ, այսինքն՝ Արայի գահ, Հմմտ. նախա-գահ), եւայլն:

Այսպիսով պարզ է, որ Արմէն բնորոշումը Արարչա-մարդ կամ Արեւա-մարդ է նշանակում, կարճ՝ Աստուածա-մարդ (չլիոթե՛լ աստուածային մարդու կամ աստուածային ժողովրդի Հետ, որը, բնազանցօրէն դիտած, մի անհեթեթ Հասկացութիւն է եւ դուռ է բացում իսկական բառիմաստի զաղափարականացման կամ խեղաթիւման Համար): Այն, որ Հայերը Քրիստոնէութիւնը Համեմատաբար արագ եւ անմիջ ընդունեցին (եկել էին նոր ժամանակներ...) եւ թոյլ տուեցին, որ իրենց մկրտեն Արածանիի (Եփրատի Հայկական մասի անունը. նշանակում է՝ աւետիս կամ լուր Արայից) սրբազան ջրերում, բացատրում է նրանով, որ քրիստոնէութիւնն իր Հիմնական գծերով տիպական արեւային աստուածութիւն է (մահ - յարութիւն, 12 առաքեալներ - 12 ամիսներ, 4 աւետարաններ - 4 տարրեր կամ ծագեր, խաչ - արեւանշան, գառ, գինի, մկրտութիւն, Սրբազան Զուր, Սուրբ Հոգի, երրորդութիւն, Համբար-

ձում, ծնունդ ու թաղում քարանձաւում, եւայլն)։ Ասել է թէ՛ Քրիստոսն, այսպէս ասած, արէնականօրէն ծանօթ էր Հայերին ու թէ՛ եւ նրանց մօտ էր եկել օտար տարազով, սակայն Հայերը նրան իսկոյն ճանաչեցին՝ որպէս իրենց առհասարակ Արայի մէկ մարմնաւորումը (Հայկական եկեղեցական եւ ժողովրդական բանաստեղծութեան մէջ Քրիստոսը մեծ մասամբ Հանդէս է դալիս Արեւի կերպարով. Հայ ժողովրդի մէջ տարածուած է այն Հաւատը, թէ Քրիստոսը Հայ է)։ Սրանով է բացատրւում այն, թէ ինչո՞ւ է Հայ եկեղեցին այդքա՛ն նախանձախնդիր իր դասանքի մաքրութեանը եւ յամառօրէն կառչած է մնում Նախնական Քրիստոնէութեան տեսակէտին։ Սակայն այս երեւոյթի բնականացական պատճառն այն ապշեցուցիչ նմանութիւնն է, որ գոյութիւն ունի Մարդ-Աստուծոյ (այսինքն՝ Քրիստոսի) եւ Աստուծոյ-Մարդու (Հայերի) ճակատագրերի միջեւ, որ նրանք պէտք է ապրէին այս Աշխարհում։ Երկուսն էլ ի ծնէ անմեղ են (Աստուծոյ-որդի եւ Աստուծոյ-մարդ՝ ստեղծագործ կամ ազատ մարդ)։ Այդ պատճառով երկուսն էլ պէտք է Աշխարհի ասել է թէ՛ Երկրային Իշխանութեան կողմից Հալածուէին. շնայած դրան, նրանք պէտք է անշեղօրէն Հետեւէին իրենց կոչմանը. ի վերջոյ, նրանք պէտք է չրջապատող մերձաւորներից (աշակերտներ-եղբայրներ) դասուէին, լքուէին ու մատնուէին Երկրային խաւար Իշխանութեան ձեռքը եւ վերջինիս կողմից խաչուէին (Քրիստոսի դատապարտումը մահուան-ցեղասպանութիւն Հայերի դէմ)։ յաւարտս, երկուսն էլ պէտք է երեք օր կամ երեք տարի յետոյ վերայառնէին (Հազարամեայ կորստից յետոյ Հայերը կարողացան 1918թ. բուն Հայաստանում վերականգնել իրենց Անկախութիւնը)։ Սակայն առաւել ապշեցուցիչ է այն, որ այս ամէնի մասին ակնարկում է... Պլատոնը (ինչպէս ասում է Հայ բանաստեղծը՝ ո՞վ իմանայ Ստեղծողի գաղտնիքները անմեկին...)։ Ըստ նրա, Արմէնիոսի էր անունով որդին (=Ար, ինչպէս՝ Էրե-վան - Արա-վան, այսինքն՝ Արայի վայր՝ տեղ, բոյն, բնակատեղի, երկիր - Արեւի երկիր՝ Հայաստանի բնորոշումներից մէկը) միակ մարդն է, որ երբեւէ եղել է Այնկողմում եւ կենդանի յետ է վերադարձել⁶... Ինչպէս կարելի է դիւրութեամբ Համոզուել, այս զուգահեռը ներկայացնում է բնականացական նոյնութիւն։

Հայերի առհասարակ Գերազոյն Աստուածութիւնը կոչւում է՝ է։ Սակայն սա ոչ թէ անուն է կամ բնորոշում, այլ՝ Սրբազան Հնչիւն, որի միջոցով Անանունը մարմնաւորում է ստանում Լեզուի մէջ եւ դառնում Աստուածանուն։ Այն, ինչ ներկայացնում է այս Հնչիւնը, զուտ Հայկական է եւ Հնարաւոր չէ արտայայտել մէկ այլ լեզուով։ Հայերէնում գոյութիւն ունի բնականացական Հասկացութիւնների ու պատկերացումների մի աւարտուն Համակարգ՝ առ է, ինչպէս՝ էանալ- միաւորուել

6.— St'u Platon: Der Staat, Zehntes Buch, 13, Reclam, Stuttgart, 1996.
digitised by A.R.A.R.@

է-ին, էակ-է-ի մասնիկ, նաեւ՝ զոյակ, արարած, էութիւն-ներ-քին իմաստ, բովանդակութիւն, էականութիւն, եւայլն: Որպէս-զի Հնարաւոր լինի փոքր ի շատէ մտաւելի մի պատկերացում կազմել Հայերի այս առհասարակ Գերաստուածութեան մասին, կարելի է Այն նկարագրել մօտաւորապէս Հետեւեալ կերպ. է-ն բոլոր էութիւնների ամենաէական էութիւնն է. Աստուծոյ Աստուածայնութիւնը. Անքնինի Անքննելիութիւնը. Ժամանակի Ազատութիւնը. Անտարածի Տարածութիւնը. Արարչութեան Արարչութիւնը. Արարչի Անստեղծութիւնը. Ոգու Ոգին. Հոգու Հոգին. Մարմնի Մարմինը. Մի-երի մէջ՝ Մի-ն. Եղականի մէջ՝ Եղակին, Կեանքի Կեանքը. Ամենափոքրն՝ Ամենամեծում. Ամենամեծն՝ Ամենափոքրում. Ամբողջի Ամբողջը. ամենայն Գոյ, Գոյութիւն եւ Լինելութիւն Նրա Ինքնայայտութիւններն են, որոնց մէջ Նա մնում է ներթափանց: Նա Անես Ինքնութիւնն է եւ Ինքնութեան Անեսականութիւնը: Ասել է թէ՝ Աստուած եւ Աստուածութիւն՝ Մէկի մէջ: Միով բանիւ՝ Մեծ Կեանքն Ինքը, որը Հնարաւոր չէ յանգեցնել որեւէ որոշակի կամ ընդհանուր Հասկացութեան կամ պատկերացման:

է-ն ներթափանցուած է այն ամէնում, ինչ Հայկական է եւ յարատեւել է Հայերի եւ Հոգու, եւ Արուեստի, եւ Բանաստեղծութեան, եւ Դիցաբանութեան մէջ՝ անցնելով բոլոր պատմական ու կրօնական Հոլովոյթների, այդ թէւմ նաեւ Բրիտանէութեան միջով:

Ասել է, թէ՝ Նա ո՛չ Հեթանոսական⁽⁷⁾ է, ո՛չ յուդա-քրիստոնէական⁽⁸⁾, այլ անխառն Հայկական է եւ ներկայացնում է Հայերի Կրօնասանդո՞ Գիտակցութեան՝ կրօնական Ինքնագաղտմի եւ ազատ-ստեղծագործական Ինքնամանաչորութեան անժամանակեայ Ցայտնութիւնը: Նա Հայերի Համար ամենայն արարչութեան եւ արարածների բնազանցական Հիմքն է, այն Սրբազան Ակունքը, որից բխում է նրանց Ազգային Ինքնութիւնը: Նա Սրբազան Իմացութիւն է, որ եմբակայ չէ տարայօղման, ամենայն Գիտակցութեան, ամենայն գիտակցուած եւ չգիտակցուած Գոյի սկիզբը, ընթացքը, բարձրակէտն ու աւարտը՝ միաժամանակ: Նա Հայկական Այբեկի եօթերորդ գիրն է եւ Հայոց լեզուի կարեւորագոյն Հանգոյցը, որի շնորհիւ կայանում է որեւէ իմաստ: Նրան կարելի է ճանաչել Հայկական խորունկ աչքերի Հեռաւոր փայլի մէջ...

7.- Այստեղ Յկատի է առնուում Յուդա-Բրիտանէութեան կողմից «հեթանոս» բառին տրուած անվերապահօրէն բացասական նշանակութիւնը՝ ընդունուած եւ ընդհանրակամ գործածութեամբ:

8.- Ինչպէս ցոյց է տալիս Բիրիայի տարայնգու Բարգմանութիւնների պարզ համեմատութիւնն իսկ, գրէի հայերէն կանոնական թարգմանութեան պարագային որոշ առումով գործ ունենալ իմաստային միտումնաւոր մեկգափոխման հետ, երբ բոլոր այն տեղերում (եղից 3.14, Յայտնութիւն 1.4, 1.8, 4.8, 11.17, 16.5, եւայլն), ուր յայտ-

Այն Սրբազան Գիրքը, որի մէջ այս Հայկական Գերաստ-
ածութիւնը ներկայացած է իր նախնական անաղարտու-
թեամբ, բարեբախտաբար պապիրուսից չէ, ոչ էլ մազաղաթից
կամ թղթից, որ ենթակայ լինէր ոչնչացման վտանգի: Նա եօթ-
հինգ Հազար տարուց ի վեր փորագրուած է Հայաստանի լեռ-
ների ժայռերի արեւախանձ ձախտներին՝ խորհրդանիշերի,
նշանների ու պատկերների տեսքով, այնքան բարձր, որ ո՛չ մի
նուաճողի կամ քանդիչի ձեռք չի կարող Հասնել Նրան: Այդ
խորհրդանիշերը, նշանները, պատկերները ենթադրում են մի
այնպիսի Համապարփակ եւ բարձրագոյն իմացութիւն, որ ան-
մատչելի է մնում ժամանակակից Գիտութեանը եւ ընդնշմար-
ում է նրան միայն գիտական ուրուագծային ենթադրութիւն-
ների ու կոաշումների ձեւով: Այսպէս, այդ Գրքում կարելի է
գտնել՝ Տիեզերքի Գոյութի միանութեան սկզբունքը. նրա ձախ
եւ աջ շրջապատյունները. Ստեղծագործ Ոգու երրորդութիւնը եւ
Արարչութեան Լրման չորրորդութիւնը: Նիւթական եօթնակի
երեւակումը. Տիեզերքի ձախ պտուտի Հետեւանքով Հակամար-
դու ի յայտ գալն ու նրա չքացումն աջ պտուտի վերջին

նըւում է մեր է Աստուած՝ իրրեւ Նահուէ – Նիուփա – էլոհիմի իմաս-
տարանկան վերադիր-յարասութիւն, առկայ է պարզապէս «կայ»,
«գոյութիւն ունի», «լինում է», այսինքն՝ «կենդանի լինելու»
իմաստ՝ իր անցեալ, ներկայ եւ ապագան ձեւերով: Պարզ է, որ կա-
տարուած է բնագանցական Եղծութիւն, Բանգի է-ի անսահմանօրէն
ոգնդէն եւ անճնկելիօրէն համապարփակ էութիւնը, որ միայն ան-
ժամանակեայ եւ ամբողջական Ներ-կայ է, այդ վերագրման միջոցով
ծառայեցում է ժամանակային հոլովոյթի մէջ մէկ այլ Աստուա-
ծութեան առ-կայութեան գոյտ լեզուա-ձկարագրական մասնատը
արտայայտութիւններին: Այսինքն՝ հայոց լեզուի «է» հանգոյցի
լեզուա-իմաստարանական նշանակութիւնը «շփոթելու» է՝ է Աստը-
ծոյ հետ, ինչն ապացուցում է վերոնշեալ տեղերի թարգմանական
տարրերը մենքով ման եւ հայերէն որոշ հրատարակութիւն-
ներում (տե՛ս նոր Կտակարան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1992թ.
եւ Աստուածշունչ, Աստուածաշնչային Միացեալ Ընկերութիւն,
Բէյրութ, 1981թ.): Որ այդ նենգափոխումը միտումնաւոր է՝ հաս-
տատում է նաեւ նրանով, որ բոլոր այն դէպքերում, երբ հնարա-
ւոր չէ, որ «է» հանգոյցը «ստանձնի» նաեւ է-իմ յայտնելու «պար-
տականութիւնը» (Յայտն. 4.8, 11.17, 16.5), ուղղակի յայտնում է
է-ն, որը, բնականաբար, բացակայում է Բիբլիայի այլալեզու
թարգմանութիւններում, ինչպէս է, օրինակ, գերմաներէն միաս-
նական թարգմանութեան պարագային (տե՛ս Die Bibel, Einheitsü-
bersetzung, Alles and Neues Testament, Herder, 1999): Քանզի
աստուածարանական յատուկ կրթութիւն պատճ չէ՝ հասկանալու հա-
մար, որ մասը (այն, ինչ «կայ», «գոյութիւն ունի» ժամանակի
մէջ) կարող է սոսկ կրաւորաբար արտայայտել ամբողջը (այն, ինչ

սպարոյրում. Ամբողջի ինքնամոկումը Մէկի կամ Միակի փոքրագոյն Կէտում եւ նրա վերայայտնութիւնը այդ նոյն Կէտից, եւայլն: Եւ այս բոլորի վերեւում կանգնած է Նա ինքը՝ է-ն՝ կատարեալ յրջածիրում՝ վեհ, անեղծ, անքննելի...

Հայկական բնագանցութեան մէջ է-ն բազմաթիւ կրօնապատմական կերպափոխութիւններ է ապրել: Նրա սկզբնական եւ կարեւորագոյն մարմնաւորումը Հայերի Արարիչ Աստուած Արան է, որ մարմնացել է Արեգակի տեսքով: Պատմողական դիցաբանութեան մէջ է-ն անձնաւորուած կերպով Հանդէս է գալիս Հերոսների Զորս Սերունդների (այսինքն՝ Դարաշրջանների) կերպարներում, որոնցում իր արտայայտութիւնն է դառել նրա «երկրային ճակատագիրը»⁹: Այդ փոխակերպում-

ծամանակից դուրս է), բայց ոչ մի դէպքում չի կարող է փոխարինել կամ յանգեցուել մրան: Իսկ եթէ դա, այնուամենայնիւ, տեղի ունի, ուրեմն՝ աներկրայօրէն գործ ունենալով ինքնատուրքեան, ասել է թէ՛ կեղծիքի հետ: Այս տեղից էլ այն գոյտ լեզուա-իմաստային եւ բերականական ծամածռութիւնները, որ առկայ են այդ թարգմանութիւնների մէջ («...նա, որ է, որ էր եւ որ գալու է», Յայտն. 1,8 եւ կամ» «... դու, որ է-մ ես եւ ես որ գալու եմ», Յայտն. 4,8, եւ կամ «...Ես եմ ՈՐ՝ էն», Ելից, 3,14, եւայլն): Ի դէպ, Աւետարանի յիշեալ հրատարակութեան մէջ Յայտնութեան 9րդ գլխի 11րդ համարում մոյնպէս հանդիպում ենք միւս մի թարգմանական «նորմալութեան», երբ առանց որեւէ յղում անելու կամ ծանօթագրելու, բուն խօսքաշարում փոփոխութիւն է մտցւում, «...եւ մերս ամուրը երբայնցերէն Աղբաղում էր, որ հայերէն լեզուով կոչուում է՝ Կորուստ»: – Ընդգծ. իմն է՝ Ս.Յ.): Պարզ է, որ յունարէն բնագրում մոյն տեղում կը գտնենք մոյնի յունարէն բնագիրը քացատրութիւնը (տես՝ Բիրիլայի վերոնշեալ հայերէն հրատարակութեան համապատասխան հատուածը): Այս բոլոր եղծումներէ մպատակը աւելի բան պարզ է՝ Հայի «սրտին», «մտքին», «հոգուն», ըստ կարելոյն «մօտեցնել», «հարազատ դարձնել» օտար մի Ոգու երկնած «նշմարտութիւնները»...: Այստեղ տեղին է անել մի հաստատում. այն ժողովուրդը, որ չունի սեփական Աստուածային խոհ, սկզբունքօրէն չի կարող լինել կամ կոչուել լիարժէք. ուստի եւ այդպիսին դառնալու համար նա, փոխանակ ստեղծելու կամ վերածարծելու սեփականը, զանազան պատկանութեան թիրիմացարար մեղմութեամբ է օտար խոհ, ահա թէ ինչու, նման մի ժողովուրդ ի վիճակի չէ լիարժէքօրէն վերարտադրելու Աստուածային խոհը եւ անհրաժեշտարար դատապարտուած է կոյրի նման անվերջ դեզերելու այլոց նրկնած Բնագրի եւ իր աշակերտական թարգմանութեան անխուսափելի անհամապատասխանութեան լատիղներում:

9. – «Սասնայ տուն» ազգավայրի տիեզերաբանական եւ տրամախոհական թոուցիկ իսկ բնութիւնը ցոյց է տալիս, որ մեր Ազգավայրի կառուցութեան ճեւաւորումը՝ խորհրդարանական առկայացած

ների անմեկնելի կանխորոշումները դրսևորուած է Արեւածինների Տան չորրորդ եւ վերջին ներկայացուցիչ Փոքր Մհերի կամ Մհեր Երկրորդի⁽¹⁰⁾ եղբրական ճակատագրում: Աշխարհի մեղսալից անարդարութիւնից յաղթահարուած՝ նա, իր Հրեղէն Ձիով եւ Կայծակէ Թրով Հանդերձ, փակուած է Տիեզերական Ժայռում, քանզի «ծերացած Հողը» այլեւս չի կարողանում նրան պահել: Իր Հօր՝ Դաւթի, անէծքի Հետեւանքով նա պէտք է անժառանգ մնայ եւ Թափառականի տառապալից կեանք ապրի Աշխարհում: Դրա պատճառն այն է, որ նա իր Հօրը՝ Դաւթին, փնտռելիս, Հանդիպում է նրան, սակայն նրան չի ճանաչում եւ կուռւմ է նրա դէմ: Սա մի շատ խորունկ ակնարկ է Հայերի ինքնօտարացման վերաբերեալ, որ առաջ եկաւ Քրիստոնէութեան ընդունման Հետեւանքով, որն, իբրեւ վերագիր, իր Հետ Հայաստան բերեց նաեւ մի օտար թէ՛ական Գրքային Աստուծոյ՝ Եւհուէ կամ Եհովա անունով: Այն Հանգամանքն է՛լ անլի պարզ ու Համոզիչ է դառնում, երբ մտառում

գծերով, աւարտուել է Խոյի դարաշրջանից դէպի Ձկան (Ձկնների) դարաշրջան անցման ժամանակ, երբ Յուդա-Քրիստոնէութեան տարածման հետեւանքով Մեծերը՝ Հայոց Խոյը, ստիպուած եղաւ փակուել Բարանձաւում: Այդպիսով Հայ Ազգավէպը գրկուեց շարունակութիւնից եւ չունեցաւ իր Ձուկը, Բանգի «հալիւքցած» Հայ Ժողովուրդը, երես թե՛նով իր է Աստուծոց, սկսեց պաշտել Օտարի Ոգին: Սրանով է բացատրուել այն, թէ ինչո՛ւ 2000 տարւայ մէջ այդպէս էլ չի գտնուել մէկ հատիկ Հայ, որ գրի առած լինէր մեր Ազգավէպը, որի հանգամանքը արարական տիրապետութեան շրջանի պատմութեամբ բացատրելու տարածուած տեսակետը մոյմական է ծառի խտելու անտառը չտեսնելու գիտա-առօրեական հաւկտրութեան, որը երբեմն հասնում է ծաղրանկարային չափերի, երբ «պատմական մօտեցում» ցուցաբերելու մարմաբբ բերում է նրան, որ Ազգավէպի դիպաշարային հէմքը («Սամասար եւ Բաղդասար») փնտռուել է... Աստուծանի պատմութեան մէջ, ինչն ակամայ մղում է այն «գիտական եզրակացութեանը», թէ Հայերը սերում են... ասորիներից (տե՛ս «Սասնայ ծռեր», հատոր Դ, էջ 7, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչ., Նրեւան, 1999թ.):

10.— Մեծը անունը առհաւականօրէն կարելի է մեկնել իբրեւ Մահար (Մեհր, Միհր, Միքր ձեւերն անլի ուշածին են), այսինքն՝ Մահ+Ար, որ մշակակում է Մեծն ու Հօր Արա Աստուած. հմմտ. սանսկրիտ *mah*՝ մեծ, հօր, գերմ. *mächtig*, մախմ. *mah-tig*՝ հօր, անգլ. *mighty*՝ հօր, ռուս. *mor-yun*՝ հօր, յուն. *megas*՝ մեծ, հայ. ա-մեհ-ի, մեծ. Հայ. մահ բառն իմաստային հակադարձմամբ մոյմպէս հաստատում է այս, մամանաւանդ երբ հաշուի ենք առնում, որ խօսքը տուեալ դէպքում վերաբերում է Արի կամ Արա-յի մահուանը՝ Ժայռում փակուելուն, որ մոյմաւշանակ է սպասելուն, որին անպայման յարորդում է Ժայռից դուրս գալը, այսինքն՝

ենք, որ Դաւիթ անունը (չփոխել՝ Հրէական նմանահունչ ան-
ւան Հետ) մօտաւորապէս նշանակում է «Աստուածային Հա-
ւատ» կամ «Առհասական Հաւատ առ Աստուած» (Դաւիթ=
դի - Աստուած, աւ Սկիզբ, Հաւ, Նախասկիզբ, Ի(ա)թ/ատ -
Սրբազան Հուր: Կամ՝ դի + (Հ)աւատ): Երբ Աշխարհը աւերուի
ու նորից շինուի, Փոքր Մ'նը կամ Մ'նը Երկրորդը դուրս կը
գայ իր բանախց, որպէսզի Աշխարհի վրայ Հաստաափ արեւա-
յին, այսինքն՝ Արարչական Արդարութիւն: Դրանով վերջ է
գտնում ներկայիս Յուդա-Քրիստոնէական Դարաշրջանը¹¹, եւ

յարութիւնն իրրեւ իմաստային վերա-դարձ, երբ մահը վեր-յառ-
նում է իրրեւ կեանք (հմմտ. Արեգակի բնւոնների յաջորդական
հակադարձումը): Կարելի է ենթադրել, որ մահն սկզբնապէս հան-
դէս է եկել իրրեւ Ար Աստծոյ մեծութեան եւ հօրութեան ցուցիչ,
ապա քստ, Տարբերակման օրէնքի, ժամանակի ընթացքում ա-
ռանձնացել իրրեւ Մահի Հայոց երկնային Աստուածը եւ Ընդերքի
Հայոց Ապանդարամն (քառ.՝ Մահարար Մայր, այլ կերպ՝ Մահուան
Դիցուհի) երկրային Աստուածուհու հետ կազմել զիջական զոյգ:
Աւերորդ չէ մահը մշտ, որ մահ քառը մեծ իմաստով (եթէ մշտնիսկ
վերանանք բուն մեծ քառի մահ-ից ծագելու հանգամանքից) ուղիղ
առընթեքեամբ զգալի է մեր Առար լերան՝ Արարատի մեծ գագա-
թի՝ Մասիս անուն մէջ, որը կարելի է մեկնել իրրեւ Մահ+Սիս,
այսինքն՝ Մեծ Սիս (հմմտ. Սիս եւ Մասիս կամ Փռք եւ Մեծ
Արարատներ):

- 11.— Տիեզերաբանական ինչպէս գիտական, այնպէս էլ վերգիտական
ուսումնասիրութիւնները վաղուց արդէն հաստատել են, որ Բրիս-
տանէական երկրորդ հազարամեակի վերջը մօտաւորապէս հա-
մըկնում է Ձկան տիեզերաշրջանի աւարտին (հաշուադական տար-
րերութիւններն այս դէպքում էական չեն), որի կրօնական գիտակ-
ցութեան զերիշխող ձեւը Յուդա-Քրիստոնէութիւնն է, որը, բնա-
կանաբար, այդ դարաշրջանի հետ միասին անվերադարձ անցնում
է «պատմութեան գիրկը»: Ահա թէ ինչու, Քրիստոսի -ինչպէս որ
նա միակօրէն մերկայացած է յուդա-քրիստոնէական կրօնական
աւանդաբանման- երկրորդ գալուստը (որին ակնապիշ սպասում են
դեռ մրա համբարձման ժամանակներից - Յովհաննու Յայտնու-
թեան ստեղծումն իրրեւ այդ գալուստեան աստուածաբանական փո-
խարժէէ) քացառում է: Հայոց համար այդ անցումը կը տեւի միմ-
չեւ մերկայիս թուականութեան 21րդ դարի վերջը (տե՛ս՝ Հայկ-
նար.Ար.է, Հայոց Նախայայտնութիւնը, ԿԸ, ԿԹ), երբ Հայոց Ինք-
նագիտակցութիւնը վերջնականապէս կը ձերբագատուի յիշեալ
օտար կրօնի 1800ամեայ տիրապետութիւնից եւ կը բոլորուի իր
առհասական Հագեւոր Կենտրոնի՝ Սրբազան Արարատի շուրջ՝ ամ-
բողջացնելով Հայ Ազգային կրօնաստեղծ Գիտակցութեան տիեզե-
րական Վերադարձը:

Արեգակը դուրս է գալիս Տիեզերքի Ստուերոտ կողմից եւ վերադառնում իր չրջապատյալ երկնքին: Ե՛ւ աւելի պարզ՝ այդ ելակէտն այն «աներեւոյթ առանցքն» է, որի շուրջ է դառնում Տիեզերքը, եւ այդ ընթացքում երեւակում է Մեծ Կեանքն Ինքը: Դա է-ն է: Այս կերպ պարզ է, որ Փոքր ՄՀերի կամ ՄՀեր երկրորդի Վերայայտնութիւնը ներկայացնում է Փոքր կամ երկրորդ Արարչագործութիւնը կամ Տիեզերակարգի Վերականգնումը:

Թւում է, թէ եկել է Արեւային Դարաշրջանի վերադարձի ժամանակը, կամ, առնուազն, սկսուել է: Ներկայիս Հայաստանում, որը սկզբնական Հայաստանի 1/12րդ մասն է կազմում, ձակասագործի Անիւ-Ժամացոյցի սլաքը, որն ի դէմս Հայերի Յեղասպանութեան, Հասաւ իր անկման ամենաստորին կէտին, սկսում է պտտուել հակառակ ուղղութեամբ, այսինքն՝ դէպի աջ: Դրա ստոյգ նախանշանն է ներքին ինքնարացայայտումի այն յորձանքը, որ այժմ մշակութային-գիտական ու զաղափարական հոսանքների ձեռով նկատւում է Հայաստանում: Դրանց մէջ ամենանշանակալիցը էութիւն Ազգային Իմաստութեան Տաճարն է: Փորձ է արւում մաքրել Հայկական Ոգութեան ճանաչական հիմքը եւ հեռացնել պատմականօրէն դոյացած օտար ազդեցութիւնների փոշու կարծրացած շերտը: Ամէն ինչ յուշում է մի մօտալուտ Հոգեւոր Վերածննդի մասին:

Ինչպէս որ արեւածագից անմիջապէս առաջ խաւարն ամենաթանձրն է լինում, այդպէս էլ Հայաստանն, ընդհանրութեան մէջ դիտած, ներկայումս ընկել է աշխարհաքաղաքական, տնտեսական, ընկերային ու հոգեբանական անելի «սեւ խոռոչի» մէջ: Միակ բանը, որ ի զօրու է Հայ ժողովրդին դուրս բերելու այդ «սեւ խոռոչից», Հոգեւոր Հիմքերի Նորացումն է: Դա ենթադրում է ազգային-առհաւական հիմքի վրայ Հոգեւոր նոր կրօնական-քննական Ինքնա-Գիտակցութեան ձեւաւորում, որ այլընտրանք չունի: Այլ կերպ՝ Հայերն անհրաժեշտաբար կը լքեն Բրիստօնէութիւնը, սակայն դա տեղի կ'ունենայ ո՛չ այն եղանակներով ու միջոցներով, որոնցով 301թ. Քրիստոնէութիւնը պաշտօնապէս մուտք գործեց Հայաստան - Հրո՛ւ ու սրո՛ւ - եւ ոչ էլ այնպէս, ինչպէս որ ներկայումս կատարւում է Եւրոպայում՝ քառասյնօրէն ու հակասականօրէն՝ աղանդաւորական հեղեղումների տեսքով՝ սակայն դիմաւորապէս աստուածաժխտական ու նիւթապաշտական ձեւերով, այլ բոլորովին բնականօրէն: Եւ այդ Ազգային Նորացման շարժման զուգիս պէտք է կանգնի ոչ այլ ոք, քան ինքը՝ Հայ Եկեղեցին՝ ելնելով իր այն հին եւ միակ ճշմարիտ գործունէական սկզբունքից, թէ կրօնն է ժողովրդի համար եւ ո՛չ հակառակը: Քանզի ընդհանուր ու կոպիտ ասած, Բրիստօնէութիւնն՝ իբրեւ Հելլենականութեան աշխարհաքաղաքացիական Ոգու եւ Յուդայականութեան խստօրէն ազգայնական Մարմնի խառնամուսնութիւնից ծնուած երեխայ, չի կարող յաւերժօրէն դոյա-

տեւել, այլ մի որոշ ու կանխորոշ ժամանակ գոյութիւն ունենալուց յետոյ պէտք է իր տեղը գիշի մէկ այլ Դարաշրջանի: Որովհետեւ, ըստ բոլոր նշանների, Քրիստոնէութիւնն, իբրեւ կրօնական Ձգացումի եւ Մտածումի որոշակի եղանակ, իրեն սպառել է եւ պէտք է յաղթահարուի: Այս փոփոխութեան «երկնային տրամաբանութիւնը», ինչպէս նման այլ գէպքերում, մնում է անմեկնելի: Այն, ինչ տարակոյս չի յարուցում, ներքին պահանջի ամէն տեսակէտից Հասունացած զգացումն է առ այդ փոփոխութիւնը: Զգում ես, որ մի Շրջան փակոււմ է, եւ բարձրանում է ինչ-որ ամբողջականօրէն առհաւական մի բան...

Սա էլ Հէնց այն է, ինչ տեղի ունի արդի Հայ Ոգեղութեամբ ման մէջ, որը ձգտում է վերագաղնալ իր նախնական Ակունքին: Դա ենթադրում է այդ Ակունքի ըստ Հնարաւորին լիակատար ճտնաշողութիւն, ինչը սոսկ ժամանակի Հարց է: Կարելորն այն է, որ Հայերի Գերագոյն Աստուած՝ է-ն, դարձեալ է՝: Նպատակը յայտնի է՝ էացում: Դա այն երկար ճանապարհն է, որ տանում է Հոգու ինքնավերամիաւորմանը է-ի մէջ: Սակայն զա մի ճանապարհ է, որ պէտք է անցնել առանց որեւէ բռնադատման, այսինքն՝ ինքնակամօրէն:

Միայն այսպէս կարող է Մարդն ինքնիրականանալ իբրեւ Հոգեւոր-ստեղծագործական, այսինքն՝ ազատ արարած եւ վերածուել էակի, որի Հոգին ու Մարմինը, Հաւատն ու Գիտութիւնը ոչ թէ Երկրային Իշխանութեան նպատակների համար անմտաբար միմեանց դէմ եղբայրասպան արիւնալի կռիւներ կը մղեն, ինչպէս դա տեղի ունի Յուդա-Քրիստոնէութեան պարագային, այլ՝ իւրաքանչիւրն իր գոյածեւի մէջ կ'ինքնաիրականանայ վերջնականատակի յարաբերութեամբ եւ ներգաշնօրէն կը կառավարուի ըստ է-ի: Դրա շնորհիւ միաժամանակ կ'ինքնալուծարուի խաւար Մարդկային Իշխանութիւնը, եւ բարձրացող Արեգակի զուարթ ճաճանչներից կը չքանան ամէն տեսակի բնազանցական կեղծիքների տխրած ստուերները, որ երկու Հազար տարուց ի վեր մթաղնում են Մարդու ինքնաճանաչողութեան տեսադաշտը, եւ ձեռքում կը կատարուի դէպի Յաւերժական Ոստիկանութիւնը՝ ինչպէս Երկնքում, այնպէս էլ Երկրի վրայ:

ՄԵԻԱԿ ՅՈՎՀԱՆ ՆԻՍԵԱՆ

«Արարատ»-ի եւ այժմու «Նայիրի» շաբաթաթերթի շրջանակներէն Պէպօ Սիմոնեան իբրեւ բանաստեղծ, հրապարակագիր ու կրթական մշակ ծանօթ է Սփիւռքի թէ՛ Հայաստանի մտաւորական ու գրական շրջանակներուն: «Նոր գիրքեր», «Լոյս տեսան» եւ «Մշակութային լուրեր» անուն մեր սիւնակներուն մէջ մեր մօտաւոր թէ՛ հեռաւոր ընթերցողները եւս քանի մը անգամ հանդիպած են անոր անունին ու վաստակին արձագանգներուն, բայց առաջին անգամն է, որ այս էջերուն կ'երեւի իր ստորագրութիւնը, այն ալ՝ բաւական խնդրայարոյց հարցի մը կապակցութեամբ:

Սիրելի է մեզի յուսալ, որ բանաստեղծական ու մտաւորական հաստորներու տէր Պէպօ Սիմոնեանի ստեղծագործական թէ՛ վերլուծական գրութիւնները պարբերաբար կը հիւրընկալուին «Բագին»-ի էջերուն:



Պ. Սիմոնեան

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ ԵՒ ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

(«Մարդ մը, որ Արարատ Զունի իր հոգւոյն խորը»
գիրքին լուսին տակ)

Սփիւռքահայ գրականութեան երկու շողչողուն անուններէն թելադրուողը գրական շնչառած անհատականութիւններու Հրապոյրն էր: Երկուքն ալ տաղանդաւոր, երկուքն ալ սիրուած եւ փնտռուած գրագէտներ էին լոյսի քաղաքէն ու իրենց արձակ ստեղծագործութիւնները սփռուած էին ամբողջ Սփիւռքի տարածքին: Նոյն սերունդէն գրողներ էին: Վաղգէն Շուշանեան (1902-1941), Շահան Շահնուր (1903-1974):

digitised by A.R.A.R.@

Հասարակաց գետին մըն ալ, որ կար՝ Փարիզի «Մենք»-ն էր, որուն շուրջ Համախմբուած էին Ֆրանսահայ գրողները՝ գրական Հասարական գաւառներով մը, Հակառակ իրենց ազգային-քաղաքական նախասիրութիւններուն եւ պատկանելիութիւններուն:

Անժանօթ չէ, որ Շահան Շահնուր, Հակառակ իր անկուսակցական ըլլալու Հանգամանքին, ազգային-քաղաքական Հայեացքներով մօտիկութիւն մը կը պահէր Ռ.Ա.Գ.ի ուղղութեան Հետ, անոր մասնւին աշխատակցութեամբ, իսկ Վազգէն Շուշանեան յարած էր Հ.Գ.Դ.ի գաղափարաբանութեան՝ գերազանցապէս ազգայնական խտանուածքով եւ ընկերակցական Հակումներով: Իրարու բախումներն անհակ ընդդէմէն եւ ընդդէմընդդէմէն կու գային ազգային եւ ընկերային ըմբռնողութեան անսակէշտով: Թէեւ, երկուքն ալ ըմբռնա նկարագրներ՝ պարունակներու չորհրդածրէն գուրու գալու Հակամիտութեամբ... Իրարու Հակադրող ուրիշ չարժանութիւն մըն ալ, որ կարելի չէ պանց առնել թերեւս, ասողանդակութիւն ըլլալու է: Երեւոյթ մը, որ մեր մէջ գոյութիւն ունեցած է Հին օրերէն սկսեալ: Աննախնդրաց չէ այս պարագային ալ:

Մեր յօդուածը չի միտիր երկու օժտեալ այս գրողներուն գրականութեան վերլուծումին,՝ երկուքին գրականութիւնն ալ մինչեւ օրս կ'ընթերցուի յափշտակութեամբ՝ իբրեւ ուխտաբաժնի արձակի ամէնէն պայծառ ու կենսունակ էջերը,՝ այլ 1998ին Հասարակ կողքին տակ մասած Վազգէն Շուշանեանի «Արար մը, որ Արարատ չունի իր Հոգւոյն խորը» Շահան Շահնուրի գէտ ստորագրած պարտաւազիրը Հիմբ ու մեկնակէտ ունենալով, փորձել Հակադրութեան եւ զբաղին տան տուող եզրերու սրտնամին:

Գիրք մը, որ ամբողջ պարսաւադրով եւ կրքոտ գատումներով գրուած է, Շահան Շահնուր ատիկի չունեցաւ կարգալու, քանի որ Հակառակ Վազգէն Շուշանեանի փափաքին օր ասաջ Հրատարակուած տեսնելու դայն, լոյսին եկաւ միայն վերջերս՝ գրող-գրականագէտ Պօղոս Մնացեանի խմբագրութեամբ, գրուած թուականէն (1939) 69 ասորինք ետք: Կ'անգիտանանք պահ մը, որ եթէ Շահան Շահնուրի ողջութեան լոյս տեսնէր այս գիրքը, կարգալէ ետք, ինչպիսի՝ Հակադրող պատասխան մը պիտի գրէր ան: Հաւանաբար նոյնքան կրքոտ եւ յախուռն: Անկարելի էր, որ անտեսէր: Լռէր:

Մտածողներ եղան Հարկաւ, որ արդեօ՞ք այդքան սիրուած եւ արժեւորուած գրագէտի մը գէտ այս գիրքին Հրատարակութիւնը արդարանայի էր: Հրատարակիչները ատաջին Հերթին,՝ որքան ալ յետ մահու,՝ գոհացում տուած եղան Վազգէն Շուշանեանի քաղձանքին. «Այս վերջին աշխատանքը պիտի ծանամ ունէ ձեռով Հրատարակել» (Վ.Շ.): Մեր կարծիքով, անկախաբար այն իրողութենէն, որ գրուած գիրք մը պէտք չէ գրկել լոյսին գալու իր իրաւունքէն, «Արար մը, որ Արարատ չունի իր

Հոգւոյն խորը»ին Հրատարակութիւնը, Հակառակ իբր գիրք բովանդակած գրական-բարոյական բմբռնումներուն դէմ գործած մեղանջումներուն, Հայհոյանք բուրոյ վիրաւորանքներուն, ճանաչողական լուսաստիւտումներ կը կատարէ Շահան Շահնուրի անձին եւ նկարագրին վրայ, որ ցարդ տեղի ունեցած չէ:

Ընդհանրապէս Շահան Շահնուր խոհալականացուած է եւ լուսարձակի տակ չեն առնուած անոր ուրացումները մեր սրբութիւններուն եւ նուիրագործուած արժէքներուն նկատմամբ: Ոչ որ համարձակած է կարծէք Վազգէն Շուշանեանի յախտունութեամբ,- չբաժնելով իր ծայրայեղութիւնները,- դատել, կշռել գրագէտի մը ազգային եւ գրական սայթաքումները: Վազգէն Շուշանեանի գրականութեան մօտէն ծանօթ եղողները իրենց տպաւորութիւնները կազմած ըլլալով Հանդերձ անոր Հոգեկան եւ գրական դիմագծութեան, ինչպէս նաեւ առոյգ եւ առնական ոճի յատկանիշներուն մասին, «Մարգ մը, որ Արարատ չունի իր Հոգւոյն խորը» գիրքը իր Հեղեղային պոռթկումներու պտտքումով կ'ամբողջացնէ իր անձին մասին կազմուած տպաւորութիւնը, որ ինքզինքէն յորդող գրագէտը կը յատկանշէ:

Ինչ մեղքերով Շահան Շահնուրի գրական-մտաւորական դիմագիծը կ'աղարտի Հայ միտքին առջեւ, որուն դէմ անխնայ եւ զայրագին գրողի անցած է Վազգէն Շուշանեան: Մեղքեր, սայթաքումներ, որոնց առջեւէն գրեթէ լուռ տնցած է Հայ գրականագիտական միտքը՝ զայն աւելի շատ վերագրելով շահնուրեան ինքնատիպ մտածողութեան եւ ծայրայեղօրէն արտակարգ դատողութեան: Շահնուրի գրականութեան Հանդէպ սիրոյ մօտեցումներէն մեկնող արժեւորումներն ու գնահատումները չեն ծանրացած անոր գրական գայթակղութիւններուն վրայ: Սիրագեղ այս վերաբերումները մղած են Շահան Շահնուրը յոխորտութեան, ինքնագոհութեան եւ անարդարանալի ամբարտաւանութեան՝ Հայկական սրբութիւններու, Հայ արժէքներու եւ ընդհանրապէս մեր իմացական ժառանգութեան Հանդէպ: Ձեռով մը գրական սնույթով մը, որ կը տառապէր Հաւատքի պակասէն՝ իր սեփական ժողովուրդի առհաւական գորութեան եւ քաղաքակրթական արժէքի մասին: Ձունէր Մովսէս Խորենացիով պատգամուած «Փոքր ածու»ի գիտակցական ազգայնականութիւնը, որ կը Հասնի սեւակեան պատկանելիութեան բարձր գիտակցութեան, ըստ որում՝ մենք մեզ ուրիշներէն գերադաս չենք Համարեր, ոչ ալ՝ ստորադաս: Շահան Շահնուր իր Հոգեբանական կազմաւորումով ազգային ստորադասութեան բարդոյթը Հիւանդագին ջերմաստիճանի վրայ պահած է ցաւալիօրէն: Իր գրական կեանքի առաջին մէկ օրէն սկսեալ: Անոր՝ ինք եւ ուրիշներ տուած են եւրոպական գեղագիտական բարձր ճաշակով եւ խոր զարգացումով օժտուած ըլլալու առանձնաշնորհեալ Հեղինակութեան իրաւունքը...

Մենք՝ իր տարողությունները եւ իր ժամանակակիցներէն քիչ մտաւորականներ չենք ունեցած Փարիզ, կամ՝ այլուր...: Զհաշուած նաեւ Վազգէն Շուշանեանը:

Շահան Շահնուրի առաջին մեծ գրական զայնակողութիւնը կը սկսի Սփիւռքի առաջին վէպը Հանդիսացող եւ իր մասին շատ խօսիլ տուած «Նահանջը առանց երգի»ով, որուն էջերէն ամէնէն մեծ սրբապղծութիւնը կատարուած է Գրիգոր Նարեկացիի սրբութեան եւ մեծութեան դէմ: Ան անպատասխանատու եւ անհակակշիռ յանդգնութեամբ ժպտած է իր Հերոսին բերնով՝ բանադրական ոճով թունաւոր - ուրացման եւ արժեզրկման խօսք ուղղելու Գրիգոր Նարեկացիին եւ անոր սրբազան մատենանին դէմ: Ընդվզեցուցիչ ցնցում առաջացնելու շահնուրեան այս ոճը, որ Հետագային շարունակուեցաւ անոր այլ դատողական գրութիւններուն մէջ, դժբախտաբար վարակեց ուրիշներ եւս, արհամարհանքի եւ ուրացման դիրքին եղանակով ուշագրաւ դառնալու սնապարծութեամբ:

Շահան Շահնուրի մեղանշումներուն մէջ ամէնէն սնոտիապաշտականը - ազգային զայնակողութեան տեսակէտով՝ «Աւագ Ուրբաթ»ի մէջ, Ապրիլ 11-24-ի մեր նահատակ գրագէտներուն ուղղուած անորակելի անարգանքն է, որ ո՛չ միայն Վազգէն Շուշանեանը, այլեւ՝ ո՛ղջ Հայ մտաւորականութիւնն ու Հայութիւնը իր էութենէն փշաքաղող էր. «Եւ դո՛ւն, երէկի սերունդ, ջարդուած սերունդ, կ'ուրանամ քե՛զ ալ: Բացի ձեր մէջը գտնուող մէկ քանի կոյս արուեստագէտներէ, դուք չէիք կրնար չջարդուիլ, ո՛վ Ապրիլ 11եաններ: Դուք պէ՛տք է որ ջարդուէիք, քանի որ ամէն բան ըրիք ատոր Համար: Կարելի է եւ պէտք է ձեզ դժալ, բայց չեմ կրնար սիրել ձեզ: Գիտեմ թէ ձեզմէ շատեր եւ շատեր (գրեթէ բոլորը) բարի նպատակներով տոգորուած էիք, բարի կամեցողութիւն ունէիք երբեմն եւ կը սիրէիք Հայը: Բայց անիկա բան մը չ'արդարացներ: Այն որ ազգի մը ճակատագրին Հետ կը խաղայ, այն որ ժողովուրդի մը պատասխանատուութիւնը վրան կ'առնէ, ան կրնայ անբարոյական ըլլալ, կրնայ սրիկայ ըլլալ, կրնայ վատ ըլլալ, բայց պէտք է որ միտք ունենայ եւ յաջողի: Վայրենի անասուններն ալ լաւ զգացումներով են տոգորուած երբ որ ուրիշ կենդանիներ կը բզկտեն: Եւ դուք մեզ բզկտեցիք»:

Շահան Շահնուրի մօրեղբայրը (մօրաբը)՝ Թէոդիկ, որ Հերոսակն էր «Յուշարձան (11) Քսանչորսի», անկարելի էր, որ ներէր անոր նախատիւնքը այն նահատակներուն նկատմամբ, որոնց եղբարախտութիւնը սգալով՝ ոգեղէն եւ գրեղէն յուշարձան կանգնեցուցած էր մեր միտքի եղեռնադրժութեան ոգեկոչման: Շահան Շահնուր կարդացած ըլլալու էր զայն եւ անտեսած անոր վաւերական եւ վաւերագրական վկայութիւնները:

Մեր արժէքներն ու մեծութիւնները նսեմացնող եւ ստորագնահատող անուանարկումներ ալ ունի Շահան Շահնուր

իր «Վաւերաթուղթը» անուն գրութեան մէջ, որ Փարիզի «Ապագայ»ին մէջ Հրատարակուելէ ետք, Վահան Թէքէեան զայն արտատպած է Գահիրէի «Արեւ»ին մէջ, 1938ի Հոկտեմբերի թիւերով: Վահան Թէքէեան կը խոստովանի Շահան Շահնուրի «Վաւերաթուղթը»ի արտատպումի աւարտին, «Արեւ»ի 24-25 Հոկտեմբեր 1938 Համարի էջերուն ստորագրած խորհրդածական յօդուածներուն մէջ, թէ՛ արտատպման տուն տուող պատճառը եղած է Գահիրէի «Յուսաբեր»ը, որ «Թեթեւ ու նախատախից տողեր» թոյլ տուած է Շահան Շահնուրի քննադատութիւններուն դէմ: «Վաւերաթուղթը», զրքոյկի կողքին տակ՝ լոյսին բերուեցաւ Պէյրութ, 1984ին, իբր Հրատարակութիւն Թէքէեան Մշակութային Միութեան Շահնուրեան Գրադարանի - 2, Վ.Ղ.ի ստորագրած մուտքով:

«Վաւերաթուղթը»ին մէջ եւս Շահան Շահնուր իր գրական չափանիշներուն զոհ դարձուցած է նուիրագործուած եւ ընդունուած գրական արժէքներ եւ ազգային ըմբռնումներ՝ միշտ ուրիշներէն տարբեր ըլլալու եւ դատելու ինքնուրոյնութեան յաւակնոտ մարմաջով: Ազգային ոգիով եւ ազգայնական բովանդակութեամբ յագեցած Հայ գրականութեան էջերը եւ զանոնք ստորագրած գրողները ստորագնահատելով, անոնց վերագրած է մեղքը ամաթէօրիզմի սահմանափակութեան եւ քարոզչական ձգտումներով գրականութեան մը ստեղծման: Եւրոպական առումով գրականութեան ամբողջապէս նուիրուած գրադէտներ չենք ունեցած շահնուրեան դատավճիռով: Այս մօտեցումով գրադէտներ չեն մեր ամէնէն ընտիր գրադէտները՝ Բնտրա, Գրիգոր Զօհրապ եւ Երուանդ Օտեան: Անոնք կը տառապին նաեւ գրականութեան Համար վաւերաթուղթի օգտագործման անհրաժեշտ բարիքին պակասէն:

Գրական այս գրոհէն զերծ մնացած չեն ազգային վիպասան Բաֆֆին եւ ազգային ազատագրական պայքարի երգիչ Աւետիս Ահարոնեանը: Շահնուրեան Հարուածներով երկուքն ալ փուլ եկած են իրենց գրական պատուանդաններէն: «Անոնք կը կոչուին Ռաֆֆի, Ահարոնեան, Սմբատ Բիւրատ, եւ ունին տաղանդներ՝ շատ վիճելի: Անոնց նպատակն էր Հայկական ազատագրումը, եւ ոչ թէ գրականութիւնը, եւ ոչ ալ արուեստը: Անոնք կը փնտռէին օգտապաշտ գրականութիւնը, փրօփականտի գրականութիւնը: (...) Իր Հարիւրամեակին առթիւ Ռաֆֆին աստուածացնողները կը սխալին: Այդ անհամբոյր եւ յղձնեցուցիչ Ռաֆֆին սխալ գործեց: Իրմով Հայ գիրը ստացաւ ուղղութիւն մը, որ մանաւանդ դատապարտելի է» («Վաւերաթուղթը», էջ 16-18):

Բաֆֆին արուեստի որոշ մարզերու մէջ խոցելի կրնայ եղած ըլլալ, բայց անկարելի է ուրանալ անոր ոգեշնչումները սերունդներու ազգային գիտակցութեան կազմաւորման Համար: Բաֆֆին կարծիքը՝ «Մի լաւ գիրք կարող է փրկել մի ամբողջ ազգ», լաւագոյն կերպով կը պատշաճի իր վէպերէն

անոնց, որոնք խորապէս ներշնչած են ազգին փրկութեան նուիրումները:

Ներսէն Թէ դուրսէն ղեկավարուած ըլլալու իրողութիւններով Օսմանեան բռնատիրութեան դէմ ժայթքած Հայ Յեղափոխութիւնը իր Հերոսապատումի սխրալի էջերը արձանագրած է, որոնց նկատմամբ շահնուրեան պահպանողականութիւնը ո՛չ միայն իր ժխտականութեամբ Հանդէս եկաւ, այլեւ չվերապահեց իր դատապարտումի եւ ընդվզումի խօսքը ազատագրական պայքարի երգիչներուն նկատմամբ: Անոնք կոչուին Դանիէլ Վարուժան կամ Միամանթօ, Ռուբէն Զար-դարեան կամ Աւետիս Ահարոնեան: Ամենեւին քննութեան չի դիմանար նաեւ Յակոբ Օշականի մասին կատարած դատումները, Թէ՛ «Վան արուեստակեալ գրեկներակեր, ինչպիսին է օրինակ Օշականի դժբախտ կերպը, որոնք անվրէպօրէն կ'անհետացնեն, իրենց թանձր կեղեւին տակ, ինքնատիպ եւ բարախուն կեանքը, եւ իրենց քրտնաթոր ճիգերուն մէջ կը յանգին սա տեսակ տարազներու: Օշական կեղծ հօճա մըն է» («Վաներաթուղթը», էջ 30):

Օշական բարդ ու խրթին ոճի Հեղինակ կրնայ Համարուիլ, բայց ոչ երբեք «արուեստակեալ»: Ընդհակառակն, Օշականի մէջ ամէն ինչ իր բնական տարերքով բխած է: Հապա՞ «կեղծ հօճան»։ պարզապէս շահնուրեան քմալքոտ որակումներու շարքին կարելի է դասել՝ Հիւանդագին բարդոյթի մը իբրեւ արտայայտութիւն:

Հայ Յեղափոխութեան Հանդէպ բացասական կեցութեան իր այս արմատականութիւնն է, որ մղեց զինք ջերմ եւ Համակրայիր վերաբերումի, զոր ցոյց տուաւ Գուրգէն Մահարիի «Այրուող Այգեստաններ» վէպին Հրատարակութեան առիթով, երեսան: Յատուկ նամակով ողջունեց զայն՝ իր Համամտութիւնը յայտնելով անոր Հայ յեղափոխութիւնը ձաղկող բովանդակութեան եւ յեղափոխականները Հեզնող չարախինդ միտումներուն նկատմամբ:

Շահնուրի ազգային, քաղաքական կեցութեանը եւ գրական ըմբռնումները, Հակառակ արտայայտածելի եւ շեշտի տարբերութեան, ժամանակի ընթացքին փոփոխութիւն չեն կրած մինչեւ իր կեանքին վերջը, փաստ՝ իր նամակը, ուղղուած՝ Գուրգէն Մահարիին, որ իր «Այրուող Այգեստաններ»-ը նուիրած էր Շահնուրին, եւ ան ալ իր կարգին «Աւքսեմակուրկի պահապանը» գրութիւնը ձօնած էր իր բարեկամին, Հեռեւեալ մակագրութեամբ. «Իմ բարեկամ Գուրգէն Մահարիի յիշատակին»:

Հակառակ մեր փնտառութիւն կարելի չեղաւ ձեռք ձգել Շահան Շահնուրի «Այրուող Այգեստաններ» վէպին առիթով Գուրգէն Մահարիին ուղղուած նամակը: Կը գոհանանք վերջերս Հրատարակութեան տրուած էլի Զ. Նազարեանի «Հայ գիրի ճանապարհին» գիրքէն՝ «Նահանջի շեփորահարը՝ Շահ-

նուր Շահնուր» գրութենէն Հատուածի մը մէջըրումով, ուր կը Հաստատուի Շահան Շահնուրի Համախոհութիւնը Գուրգէն Մահարիին հետ:

Ան կը գրէր Գուրգէն Մահարիին.

«Երջանկութիւնս մեծ եղաւ, երբ Հաստատեցի, թէ դուն կը մտածես ճիշդ այն, ինչ որ ես կը մտածեմ մեր «յեղափոխականներու» գործին մասին: Էնիի արարք կը նկատուի մերկացում ճշմարտութեան, որ Հիմէն կը խախտէ մեր կոյր շօվինիզմը, որ տոկոսն է սահմանին ա՛յս կողմ թէ ա՛յն»:

Շահան Շահնուր իր տեսական-քննադատական յօդուածներուն մէջ պարզած տեսակէտներով եւ գեղարուեստական էջերուն մէջ արձանագրած ուրացումներով ուժեղ Հակազդեցութիւններու տեղի տուած գրագէտն է: Անոնք իր անհատականութեան հիւանդ ու զարտուղի երեսները ցոլացնելով Հանդերձ, չեն ստուերագծեր իր գրողի արժանիքներն ու մեծ տաղանդը՝ իբր վիպագիր եւ պատմութագիր: Հակառակ անոր, որ Վազգէն Շուշանեան «Մարդ մը, որ Արարատ չունի իր Հոգւոյն խորը» գիրքին մէջ իր գրոհին թիրախ դարձուցած է նաեւ Շահան Շահնուրի վաւերական գրողի արժանիքները: Այդ դատումներուն մէջ Վազգէն Շուշանեան առարկայական ու արդար չէ, այս եզրերուն գրական խմատով: Քոցելի կը մնայ այդ դատումը: Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վէպը եւ ընդհանրապէս անոր գեղարուեստական գրականութիւնը Վազգէն Շուշանեանի քննադատի պրիմակէն այսպէս դիտուած է. «Ահա՛ թէ ինչու քու գիրքդ՝ Նահանջը առանց երգի, թերթօն մըն է միայն, քանի մը Հէք տղոց կեանքէն,- փարիզեան թեթեւ վէպ մը, այդ վէպերուն ամբողջ պայմանագրականութեամբը: Արկածը, որ կը պատահի ճիշդ ժամուն: Փարիզեան փուճ աղջիկները, որ իրենց գօտին կը քակեն՝ ճիշդ այդ պահուն, երբ ընթերցողը կը սպասէր ատոր: Պզտիկ յուսահատութիւնները, որ թացիկ Հաշտութիւնները կը պատրաստեն,- այս բոլորը ֆրանսական թեթեւ վէպին մնայուն թրիւքներն են, մնայուն խաղերն ու մնայուն կարասիները: Ո՛չ մէկ Հօր զգացում կը ըխի քու գրքէդ, այլ դիւրին գոհակութիւն մը, որ պոլսական է եւ որ հետզհետէ կը զարգանայ յաջորդ գործերուդ մէջ: Այս է քու գիրքդ ու այս է ճշմարտութիւնը քու գիրքիդ շուրջ»։ («Մարդ մը, որ Արարատ չունի իր Հոգւոյն խորը», էջ 166-167)։

Անկասկած, որ Վազգէն Շուշանեանի «Մարդ մը, որ Արարատ չունի իր Հոգւոյն խորը» գիրքը գրուած է Շահան Շահնուրի «Վաւերացութիւն»ին ընթերցումէն ետք եւ իր խառնուածքին Համապատասխան պոռթկումով անխնայ եւ բիրտ անկեղծութեամբ ձագկած է շահնուրեան ինքնաբաւութեան եւ ինքնահաւանութեան արատները, որոնք աղարտած են ազգային նուիրականութեան բարոյականութիւնը: Անհանդուրժելի գտած է յիսորտութիւնը, որ ազգային արժէքներու

ուրացման յենակէտին կոթնած է: Հայ ժողովուրդի պատմամշակութային արժէքներու ժառանգութեան պաշտպանութեան դիրքերէն մեկնող Վազգէն Շուշանեանի անտանձնաշումներն ու խորաթափանց դատումները, իրենց իրաւութիւնը հաստատող փաստարկումներն ու արդարացումները ունենալով Հանդերձ՝ սահմանազանց հունով եւ սանձարձակ ոճով զարգացած են, այս անգամ ինքն ալ իր Հերթին գրական բարոյականութեան եւ անոր արժեքափերուն դէմ մեղանշած ըլլալու յանցապարտութեամբ: Ճիշդ գիտել կու տայ Պօղոս Մնացեան յառաջարանին մէջ զետեղուած իր բացատրագիրին մէջ. «Պարտ է մեզ կրկնել, որ անպատշաճ որակումներով Հանդէս գալու եղանակները բնաւ Հաշտ չեն գրական մեր բարոյականին հետ»:

Անպատշաճ որակումներու եւ ծանրակշիռ բնութագրումներու անհարկի եւ առատ գործածութիւնը գիրքին խոցելիութիւնը կը կազմէ: Վազգէն Շուշանեան եւրոպայի սրտին բազմած եւ եւրոպական մշակոյթով սնած փայլուն խնացականութեան տէր մտաւորական եւ գրագէտ՝ կարիքը պէտք չէ զգար նման վիրաւորիչ եւ սպաննիչ բառամթերք գործածելու իր գրչակիցին դէմ, որ համբաւ շահած եւ սիրուած գրագէտ մըն է: Իր հաստատումներն ու ընդգծումները այնքան իրաւացի եւ համոզիչ տուեալներով պաշտպանուած են, որ որակումներու դիւրին կերպին դիմելու չէր բոլորովին: Վազգէն Շուշանեանին ծանօթ ըլլալու էր Յակոբ Պարոնեանի առածի կարգ անցած խօսքը. «Հայհոյանքը փաստի սով է»: Վազգէն Շուշանեան փաստի սովէն չէր տառապեր: Գրագէտի արժանաւորութիւնը թոյլ տալու չէր (որքան ալ ընդվզեցուցիչ ցատումով լեցուած ըլլար իր յորդազեղ հոգին) անտեսելու բարոյական ընդունւած արժեքափերը: Տեսակէտներու դէմ Հակադիր այլ տեսակէտներով Հանդէս գալը մտաւորական պարկեշտութեան մակարդակէն իջնելու եւ դիջելու չէ: Հրապարակագրական ասպարէզին մէջ յաճախ անհակակշիռ կիրքն է, որ իր պղտոր յորձանքով կը քչէ ու կ'աղարտէ այլապէս մաքուր ակունքներէ մղուած ու ճշմարտութեան ամուրներուն ձգտող մտածումներու եւ գաղափարներու Հեղեղը: Վազգէն Շուշանեանի «Մարդ մը, որ Արարատ չունի իր հոգւոյն խորը» հեղեղային թափով կ'ընթանայ՝ կիրքն ու մաղձը խառնած իր յորձանապտոյտ հոսանքին մէջ: Կիրքէն ու մաղձէն, թունաւոր խօսքէն ու անպատշաճ արտայայտութիւններէն զերծ եթէ պահէր իր Հեզասահ լեզուին եւ Հաղորդական ոճին թաւալքը, անվարանօրէն իր քննադատական գիրքին կշիռը կը բարձրանար, բովանդակութիւնը կ'ազնուանար եւ իր իսկ դիմանկարած մտաւորականի տիպարը կը պայծառանար: Մտաւորականը լաւագոյն գիծերով եւ յատկանիշներով բնութագրող Վազգէն Շուշանեանի «Ի՞նչ է մտաւորականը» խորհրդածական գրութիւնը կը մեկնի իր անձէն, մտաւորականը մարմնաւորող իր

տիպարէն. «Քաղաքացիական քաջութիւն, ինքնավստահութիւն, հաստատակամութիւն, անշահախնդրութիւն, արհամարհանք դէպի դիւրին ու ածան հաճոյքները ու գրեթէ միշտ ձերբազատում՝ դրամին ահարկու իշխանութենէն, - ահա՛ նկարագրի կարգ մը գիծեր, որ մտաւորականին կ'ընծայեն բացառիկ կարկառ մը: Որ նկարագիր ունի, որ ընդունակ է իր անձնական պզտիկ շահերը վտանգի տակ դնել՝ պաշտպանելու համար իր զաղափարները, որ կրողն է որոշ անհատականութեան մը»: (*Յեղափոխութեան լոյսէ գօտին*, էջ 120, 123 եւ 124):

Վազգէն Շուշանեանի Հրապարակագրական ողջ գրականութիւնը մտաւորականին համար ճշդած սկզբունքային այս գծին հաւատարիմ մնալով «բացառիկ կարկառ» մը ընծայած է Հայ Մտքին: Այդ կարկառին ցոլացումը կը կազմէ նաեւ Շահան Շահնուրին մեծամոլութենէ տառապած անձին, քմայքներով առաջնորդող նկարագիրին եւ Հիւանդ եսին վրայ սփռող քաղաքացիական եւ մտաւորական արիւնքեամբ տոգորուն գիրքը:

Արարատն ու Արարատով շնչող Հայութեան Հոգին ու ոգեկանութիւնը իր էութեան բոլոր բջիջներուն հետ շաղախած ազգայնական գրագէտի շունչով եւ տրոփով Վազգէն Շուշանեան, - անկախաբար իր անպատշաճ որակումներէն, - մի առ մի եւ ծայր առ ծայր բացայայտած է Շահան Շահնուրի Հոգեկարը, որ ազգային բարոյցի ստուերներով մթադնած էր: Կարգ մը մէջբերումներ կու տան վկայութիւնը Վազգէն Շուշանեանի կատարած, փորձառած պեղումներուն.

«Ու վերստին կ'ըսեմ, - իրապէս ինչ կը պակսի այս տղուն, արեան ձայնը իր ազգին» (էջ 56):

«Որ մը հարկ է, որ մէկը պեղէ այս տղուն ամբողջ դրականութիւնն ու հրապարակագրութիւնը՝ հաստատելու համար, թէ ո՛չ մէկ Հայ գործիչ, ո՛չ մէկ Հայ բանաստեղծ արժանի եղած են ո՛չ թէ իր հիացման կամ գորովին՝ այլ գէթ իր համակրանքին: Ո՛չ մէկ ազգային արժէք բախտ ունեցած է այս պարոնին հաճելի թուելու: Գալով իր ժամանակակիցներուն՝ կը բաւէ հետը կէս ժամ խօսիլ՝ զգալու համար այն անվերծանելի արհամարհանքը, որ կը կը տածէ դէպի բոլոր անոնք, որ գրիչ կը շարժեն: Կ'ըսեմ դէպի բոլոր անոնք, որ գրիչ կը շարժեն. մէջը ըլլալով իրեն համամիտ Հայ գրողները: Ինչպէս ժողովուրդը կ'ըսէ - Այս պարոնը մարդու չի հաւնիր: Ու կը սիրէ միայն ինքզինքը»: (էջ 46):

«Ահա՛ թէ ինչու նաեւ, Շահնուր, որ հրաւէր է դասալքութեան, որ մեծ արուեստագէտ մը չէ՝ ողջ Հայոց աշխարհը ծածկելու համար իր արհամարհանքին տակ, պիտի չկրնայ

նաեւ երբեւիցէ մեծ մը կամ գէթ ազնիւ ու պարտաճանաչ քաղաքացի մը ըլլալ»։ (էջ 109)։

«Շահան Շահնուր մէկն է, որ երբեք մեր հայրենիքը չէ երգած, ո՛չ թշուառ, անտէր, ոչ ալ ազատ ու անկախ»։ (էջ 139)։

Այս տեսակէտներուն դատողական ընդհանրացումներով եւ ազգային տաք ապրումներու զգացական զեղումներով դառն եղբայրանդամի հասած է՝ Արարատով խորհրդանշուած ազգային ոգիի բացակայութիւնը հաստատելով Շահան Շահնուրի տեսաշխարհին եւ գրականութեան մէջ։ Գուցէ չափազանցութիւն մը նկատուի գնահատումի այս կերպին մէջ, բայց մէկ բան իրողութիւն կը մնայ, որ Շահան Շահնուր ո՛չ իր սերունդին եւ ոչ ալ Վազգէն Շուշանեանի ազգային խոռվայոյզ տազնապաները ապրած է, որքան ալ վիպագրած ըլլայ Սփիւռքի հայութեան նահանջի ողբերգութիւնը։

Վազգէն Շուշանեան ազգային երանգաւորում եւ չեղտաւորում տալով հանդերձ իր մտածողութեան, չի հաւատար, թէ գրականութեան մէջ հայկական չափանիշ մը կայ, որ կը տարբերի գրականութեան ընդհանրական ըմբռնողութենէն։ «Արդարեւ, բառեր կան, որոնց հանդէպ անվերժանելի ատելութիւն ունի Շահնուր։ Այդ դժբախտ բառերէն մէկը չափանիշն է, մանաւանդ երբ տգէտ գրչակներ անոր կը կցեն հայկական ածականը։ Վասնզի ինչ կը նշանակէ հայկական չափանիշով բացատրութիւնը։ Արուեստը մէկ չափ ու մէկ կշիռ ունի։ Ինչ որ մեծ է՝ մեծ է ամէն կլիմայի տակ, ինչ որ գեղեցիկ է՝ գեղեցիկ է ամէն ազգի մէջ»։ (էջ 132)։

Հայ գրողին հայեցիութիւնը յուզած է մեր գրականապիտական միտքը։ Հայ գրողին հայեցիութիւնը հայկական բնաշխարհին եւ հայ կեանքին պատկերացումներով պայմանաւորող տեսակէտին՝ «Գրագէտ մը հարազատ է այնքան, որքան աւելի շատ ու արդար տարրեր վերբերէ ցեղային զգայնութեան աւազանէն» (Յակոբ Օշական), որ Սփիւռքի մէջ Հոգ շահեցաւ, կը հակադրուի միւսը, ծայրայեղութեան յանգող եղբերով, ըստ որում՝ Սփիւռքի թէ Հայաստանի մէջ մըշակուած գրականութիւն մը գեղարուեստական արժանիքներով օժտուած՝ կրնայ «ապահայեցի» կամ «հակահայեցի» ըլլալ։

Շահան Շահնուր, ի հարկին, հակահայեցիին կողմնակիցներէն է. Վազգէն Շուշանեան գեղարուեստական արժանիքներուն ամուր կառչած՝ հայեցիին պաշտպանը։ Բայց Վազգէն Շուշանեանին բուն հակադրութիւնը գրականութեան հայեցիութենէն անկախաբար աւելի արմատական հիմքեր ունէր։ Շահան Շահնուրի ուրացումներուն աղբիւրն անոր ժխտական կեցուածքներն էին՝ ազգային ինքնաժխտում՝ Հայ ժողովուրդի ստեղծագործ կարողականութեան եւ կարելիութիւններուն

նկատմամբ, որոնք դարձած են ամբողջ Հատորին առանցքը: Նարեկացիէն սկսելով, եւ անցնելով մեր մշակութային այլ քնազաւառներու փառքերուն եւ նուաճումներուն, կը կատարէ անոնց վերաբերումը, Հասնելու Համար մինչեւ Ռուբէն Զարդարեան, որ Շահնուրի անիրաւ ուրացման թիրախներէն եղած է: Կեղծ ու անվաւեր խառապահանջութեան մը քմայքոտ ցուցանիշը կը Համարէ Հայ արուեստին մէջ ոչ մէկ դրական իրադրժում, ոչ մէկ ինքնատիպ գեղեցկութիւն գտնելու շահ-նուրեան ժխտական մօտեցումն ու սոփեստութիւնը: Վազգէն Շուշանեանի քննական եւ քննադատական այս կարգի սուր ու խայթիչ ակնարկներն ու յղումները գոհունակութեամբ կ'ընկալուին ընթերցողէն:

Ինչպէս արեւմտահայ այլ գրագէտներ եւ բանաստեղծներ, Վազգէն Շուշանեան եւս ազգային ազատագրական պայքարով եւ Հայ յեղափոխութեան սխրագործութիւններով խանդավառ կեցուածք ունեցած է՝ ի Հակադրութիւն շահնուրեան պահպանողականութեան եւ արհամարհանքին: Անդուսպ զայրոյթով Հակադրած է Շահան Շահնուրի ստորադնահատումին՝ հիւսելով փառքը ազգային ազատագրական պայքարի վսեմաշունչ ոգիին եւ անոր յանձնառու երգիչներուն. «Որեւէ քիչ-չատ Հայերէն կարդալ գիտցող մարդ՝ կէս-գիշերէն մինչեւ արշալոյս մանրադիտակով բառերուն լուս կերպարանքը որոնելու պէտք չունի, ըմբռնելու Համար, թէ նախադասութիւններուդ ետին ծուարող յետին միտքը, միշտ միեւնոյն է,- ստորագնահատել, արժէքազուրկ ընել ու ապա վարկաբեկել ո՛չ միայն յեղափոխական գործն ու այդ գործին գինուորները, այլեւ այդ գործը Հնարաւոր դարձնող մարդուն ներքին կլիման, Հայուն ազատատենչ ձգտումները ու դժուար չէ իբր թէ գրական վերլուծութեան նուիրած յօդուածներուդ ներքին մեքենականութիւնը քանդել, ցոյց տալու Համար սուտ իմաստունի իրական պատկերը: Առնենք, օրինակ, Ռուբէն Զարդարեանի Գամփոին շուրջ շարահիւսած գրութիւնդ ու վերլուծենք դասական եղանակը դիրքին անարգութեան» (էջ 93):

«Մարդ մը, որ Արարատ չունի իր Հոգւոյն խորը» գիրքին մէկ ծայրէն միւս ծայրը Վազգէն Շուշանեան փռած է ինքզինք իր Հոգիէն եւ միտքէն սփռուած զաղափարներու աշխարհով: Գաղափարներ, որոնք կը տարազեն իր ազգային, ընկերային, դրական եւ ընդհանրապէս մշակութային ուրոյն Համոզումները, որոնց ուժղնակի Հարուածներուն տակ քանդուած է շահնուրեան միթը:

Վերապահութեամբ լեզուական անպատշաճ արտայայտութիւններուն, որոնք իր տարներայնութեան եւ յախուռնութեան անզուսպ դրսեւորումները կը կազմեն, գիրքը կը պահէ իր շահեկանութիւնը Հայ գրականագիտական միտքին եւ սփիւռքահայ գրականութեան պատմութեան Համար:

Պէյրուք, 31 Դեկտեմբեր, 1999

ՊԷՊՕ ՄԻՄՈՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

4. Մարգարեան

ԿԻՐՔՆ ՈՒ ՄԵՌԱՅԻՆԸ ՕՇԱԿԱՆԻ ԹԱՏԵՐԱՄԱՂԵՐՈՒՆ ՄԷՋ

Մէրն ու սեռը Հակաբեռային ըմբռնողութեամբ առկայ են Օշականի Թատերախաղերուն մէջ: Այս բեռնացման բաժանման տարածութիւնը երբեմն կը մօտենայ եւ սէր-սեռ Հասկացողութիւնները իրերամերժ կացութիւններ կը ստեղծեն: Թէեւ իր տիպարներէն մէկուն բերնով կ'ըսէ. «Բայց սէրը անկողինէն դուրս է», սակայն սէրը կամ անոր փնտռութիւնը շատ անգամ անկողինէն մէջ է, որ կը փորձուին գտնել իրենց տիպարները:

Նման կացութիւններ են՝ «Նոր-սլուակ»ին մէջ, իր ամուսինէն սէր չտեսած Տիկ. Մարգարեանի պարագան, որ տունէն դուրս կ'որոնէ այդ «սէր»ը եւ անոր ընկերացող «սեռ»ը: Զուգահեռական նոյն պատկերն է իր աղջկան, Անժէլի պարագան: Մէր չտեսած իր նշանածէն, սիրոյ փնտռութիւն մէջ կը սահի դէպի սեռային աշխարհը:

«Կնքահայրը» խաղին շարժառիթը սեռային տենչն է: Մարդն է, որ իր սեռային պահանջները գոհացնելու համար, չակերտեալ ամուսնութիւն կը կարգադրէ: Սեռայինի մղիչ ուժ ըլլալը բացայայտօրէն կը ներկայանայ «(Աքլորամարտը)» եւ «Երկնքի ճամբով» Թատերախաղերուն մէջ, իսկ «Ստեփաննոս Սիւնեցի»ին մէջ, Սիւնեաց Տիկին Ալամն է, որ իր կիրքը չի Թաքցներ իր սիրած մարդերուն նկատմամբ, նոյնիսկ եթէ անոնք Հողեւորականներ են:

Պէտք է անմիջապէս ըսել, որ սեռայինը Օշականի ակնարկուած Թատերախաղերուն մէջ կը ներկայանայ վարադոյրին ետեւէն՝ անտեսանելի լոյսին նման: Ներկայութիւն է, բայց ներկայ չէ: Կը գգացնէ, կ'ազդէ, բայց բոժ չ'եղեր, Հանդիսատեսը չի՝ տեսներ: Զկան մերկութիւններ կամ սեռային բացայայտ արարքներ: Բացարձակապէս գոհեցնողութիւն չկայ: Նկարագրութիւնն անգամ չկայ: Կայ սակայն դէպքին պահանջին եղած ակնարկը: Օշականի մօտ նաեւ կողմնորոշում ալ չկայ՝ սեռային յարաբերութեան լաւ կամ վատ ըլլալուն մասին: Կը ներկայացնէ սեռային պահանջը իրրեւ կեանքի իրողութիւն մը, որ մարդոց վարուելակերպը կը ձեւաւորէ: Լրիւ կը բաժնենք իր Հետեւեալ արտայայտութիւնը⁴⁸ (էջ 63). «Օշականի Թատ-

48.— Տե՛ս քիւ 1 ծանօթագրութիւնը:

րունը չէ փառաբանած պղծութիւնը: Չէ Հերոսացուցած անասնութիւնը: Չէ լուսապսակած ոճիրը»:

Վարուելակերպի մասին երբ կը խօսինք, կը մտնենք Հոգեբանական բարդ աշխարհին մէջ: Օշական ծանօթ եղած ըլլալու էր իր ժամանակակից Հոգեբանական տեսութիւններուն: Ամբողջ Եւրոպայի Ֆրէճօյտ կը Հոլովէր այդ օրերուն: Ֆրոյտի յատկապէս «սեռային ցանկութիւններու զսպումը» եւ անոր՝ մարդկային վարուելակերպին վրայ գործած ազդեցութիւնը նոր տեսութիւն էր, որ գրական աշխարհին մէջ թեւաւոր տողերու կը վերածուէր: Ֆրէճօյտ, իրեն ժամանակակից Թատերական կարգ մը գրութիւններ մեկնաբանած էր արդէն իր տեսութիւններուն լոյսին տակ: Այսպէս, 1900 թուականին Հրատարակած յօդուածով մը կը վերլուծէր Օտտօփօի եւ Համլէթի «սեռային բարդութիւնները»⁴⁹: Հոգեբանական այս թաքնուած «բարդութիւններ» Օշականի մօտ, ինչպէս վերը ըսինք, քանի մը Թատերախաղերու մէջ միայն կը Հանդիպինք, երբ «ճնշուած ցանկութիւններ»ը իբրեւ շարժառիթներ՝ Հետագայ ազդեցութիւններ կ'ունենան: Մ. Իշխան⁵⁰ Հետեւեալ մէջբերումը կ'ընէ, ուր Օշական յստակ բանաձեւումով կ'ըսէ. «Մի՛ մոռնաք, որ ինծի Համար կեանքին ալիքը էապէս կազմուած է արիւնէ եւ կիրքէ: Արունստը սեռականութիւնն է»: Օշականի ակնարկը՝ ւած ընկերային Հինգ Թատերախաղերէն զատ, մնացեալ Թատերախաղերուն մէջ սեռային մասին ակնարկ չկայ: Անոնց մղիչ ուժերը այլ տեղեր՝ մարդկային քնաւորութեան եւ ըմբռնողութեան մէջ պէտք է փնտռել, ինչպէս, օրինակ, նախանձի, ատելութեան, ազաՀուլութեան, Հայրենասիրութեան եւ նուիրումի աշխարհներուն մէջ:

ԹՈՒՐԻՔԻՆ ՏԻՊԱՐԸ ՕՇԱԿԱՆԻ ԹԱՏԵՐԱԽԱՂԵՐՈՒՆ ՄԷՋ

Օշականի մշակած Թատերախաղերուն մէջ, միայն երեք թուրք տիպարներու կը Հանդիպինք: Մէկը՝ «(Աքլորամարտը)»-ի եւ երկուքը՝ «Երկնքի ճամբով» Թատերախաղերուն մէջ:

«(Աքլորամարտը)»-ի թուրք տիպարը պետական պաշտօնեայ մըն է, որ իր ազդեցիկ դիրքը կը շահագործէ եւ կը կեղեքէ Հայը՝ իր անձնական շահուն Համար: Կ'առնէ Հայուն դրամը, ինչքը, պատիւը, արժանապատուութիւնը, իբրեւ թէ Փիղիքական փրկութիւն չնորՀելու Համար: Այս տիպարին ընդմէջէն, Օշական կը ներկայացնէ ընդՀանրական թուրքը, իր իսկ բառերով՝ «Հազարամեակ մը կարծրացած թուրքը»: Հայե-

49. -- Տե՛ս թիւ 33 ծանօթագրութիւնը:

50. -- Տե՛ս թիւ 3 ծանօթագրութիւնը:

րուն նկատմամբ այս թուրք տիպարին համոզումները կը դրսև-
տրուին սա կաղապարուած նախադասութիւններով. «Դո՛ւք էք
մեր Հայրենիքին կործանումը բերողները: Դո՛ւք մեր Հայր կ'ու-
տէք, մեր ջուրը կը խմէք ու մեր ծոցին մէջ դաւաճանութիւն
կ'ընէք: Դո՛ւք էք որ մեր բանակին կոնակը կտրելու կ'ելլաք,
խալամները կը ջարդէք Մոսկովիին հետ միացած: Մէկ Հատ
պիտի չմնայ ձեզմէ»: Աւելի յետոյ եղրակացնելով՝ «Անանկ մը
մաքրենք պիտի որ ձեր սերմին մէջն ալ մտնէ վախը»:

«Երկնքի ճամբով»ին մէջ կը հանդիպինք երկու տարբեր
թուրք անձնատրութիւններու: Երկուքն ալ Եւրոպա ուսանած
անհասներ, որոնք թրքական բանակին մէջ են: Մէկը պէյն է,
ընդհանուր հրամանատարը, որ Հայուհի Հարձ մը ունի: Հար-
ձին շնորհած է իր ապարանքին առաւելութիւնները՝ ապահո-
վութիւն, հանգստութիւն, զարդեղէններ, ոսկի: Այն բոլորը, որ
կեանքի չօշափելիէն կու գայ: Այս բոլոր շնորհումները սակայն
կը ցնդին, երբ Հարձը, պալատին մէջ, Հոմանուհիի իր նախա-
պատուութիւնը պահպանելու համար, առանց պէյին գիտու-
թեան եւ արտօնութեան, կը գործածէ անոր պաշտօնական
կնիքը՝ զինուորական պաշտօնեայի մը պարզ ու անկարելոր
հրահանգ մը տալով: Թուրքը իր անկողինը բաժնող Հարձին
այս քայլը կը «վարձատրէ»՝ զայն յանձնելով հրոսապետի մը,
ըսելով՝ «Անտառ Հասնելուդ կը մերկացնես ու կը յանձնես ըն-
կերներուդ, միւսներուն աչքին առջեւ»:

Երկրորդ տիպարը, Հարիւրապետ մըն է, որ ամուսնացած
է գերմանուհիի մը հետ: Այս թուրքը աւելի բարեացակամ է:
Հասկցած է Հայերուն կրօնքին կառչիլը եւ ձգտումները: Այն
մարդն է, որ չունի մահուան եւ արեան հոտին ցանկութիւնը:
Տեսակ մը աւելի «մարդ» է նախ, քան թուրք: Ազգատեսաց չէ:
Բայց իր երկրին, Հայրենիքին եւ զինուորութեան նախապատ-
ւութիւն տուող, խորապէս եւ անկեղծօրէն հաւատարիմ թուրք
մըն է:

Այս երեք տիպարներէն զատ ուրիշ թուրքի չենք հանդի-
պիր: Սակայն կը հանդիպինք Հայերու, որոնց քծնանքը, մատ-
նութիւնները եւ կեղեքումները աւելի պժգալի են, քան որեւէ
թուրքի արարքը:

ՕՇԱԿԱՆԻ ՏԻՊԱՐՆԵՐՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

ՀամալիսարՀային Թատերագրական գրականութեան մէջ
ծանօթ երեւոյթ է, որ Թատերագիրներ կան, որոնք իրենց տի-
պարներուն անունները «խորհուրդով» մը ընտրած են: Այս
ցանկին կը պատկանին Թէնըսի Ուիլքերս, Արթըր Միլլըր, Իու-
ճին Օնիլ, Էլմըր Բայս, ԹՀորընթըն Ուայլաքը, Էտուըրտ Ալպի
եւ դեռ ուրիշներ: Այս գրողներուն մօտ անունը տիպարին հո-

զերանական պատմության մը Հագցնելու նման արարք մըն է: Անուններուն խորհրդանշումը երբեմն պարզ, երբեմն ալ բարդ կը թուին ըլլալ, բայց յստակ է, որ Թատերագիրները փոխարե-րական նպատակ մը կը Հետապնդեն:

Օրինակ, Ալպի, «Ո՞վ կը վախնայ Վերձինիա Ուլֆէն»-ի ցնորքի մէջ, ապրող Հերոսին ու Հերոսուհիին ձորձ եւ Մարթա անունները կու տայ: Զուգահեռը պէտք է տեսնել Ամերիկայի Միացեալ Նահանգներու առաջին նախագահ ձորձ Ուաշինկ-թընի եւ տիկնոջ Մարթայի Հետ:

Ուիլերմզ եւ Միլլըր բառախաղ կը խաղան:

Ուիլերմզ, «Յախճապակիէ արձանիկները»-ի Հերոսուհին Լորա Ուինկֆիլտ կը կոչէ: Առաջին ակնարկով, պարզ անուն մը կը թուի ըլլալ եւ որեւէ Թելադրանք չունի: Բայց երբ անջա-տենք բառերուն մէջէն Հնչական միացումը, կը ստանանք՝ Օրա եւ Ուինկ: Օրա (եթերամոյն) եւ ունիկ (Թեւ) եթերային Հասկացողութիւն մը, որ տիպարի էութիւնն իսկ է:

Միլլըր, «Վաճառորդի մը մահը» խաղին Հերոսը կոչած է Լոման: Բաժնենք վանկերը՝ Լօ (Հնչականօրէն՝ ցած), ման (մարդ), որ Թարգմանի՝ վարի խաւ: Ուրիշ նման օրինակներ չատ կան: Գրողներ ալ եղած են, որ տառապած են իրենց տիպարներուն «յարմար» անուն մը տալէ: Ըսողներ կան նաեւ, որ տիպարը իր անունով կը կենդանանայ:

Օչականի տիպարներէն ոմանք, նման փոխարերական կազմաւորումներէ անցած են: Ինքը՝ Թատերագիրը, իր նախա-սիրութիւնը տիպարի մը նկատմամբ բացայայտօրէն կը յայտ-նէ ընադիրներուն մէջ: Շատ անգամ անունին ընտրութենէն իսկ կը Հասկանանք, թէ Թատերագիրը ինչպիսի տրամադրու-թիւն ունի տիպարի մը նկատմամբ: Իր նախասիրութիւնը եւ ատելութիւնը չի ծածկեր եւ ատկէ ալ կը բխի տիպարին ինչպիսի մէկը ըլլալու պարագան: Օչականի Թատերախաղե-րուն մէջ կը Հանդիպինք այսպիսի շատ մը երեւոյթներու:

Առնենք «Նոր-պսակը»: Հօրը տիպարը՝ Պր. Մարգարեան, մօրը՝ Տիկ. Մարգարեան: Այս երկուքը առաջին անուն չունին: Ամուսին ու կին են: Այլ խօսքով՝ ոեւէ՛ր ամուսին ու կին, զոյգ մը, որ ընկերութեան մէջ կ'ապրի, եւ որուն նմանները կրնան շատ ըլլալ...: Այս մօտեցումը կը միտի ընդհանրացնել Թատերախաղի միտքը Հանրութեան մէջ: Ամուսնուն քոյրը՝ Օր. Մարգարեան կը յիշուի: Թատերագիրը չի բաւարարուիր այս անունով միայն, տիպարին կու տայ երկրորդ անուն մը՝ Փիլթոֆ: Ի՞նչ ըսել է «Փիլթոֆ»: Զեմ գիտեր: Բայց տիպարին՝ «կոտազան» բնատրութենէն կարելի է ենթադրել, որ ան վա-նող բան մը ունի, այնպէս՝ ինչպէս կատուն Փիլթոֆ կը Հե-ռացնենք մեզմէ, եւ ուրեմն Փիլթոֆ: Շատ պարզ են միւս երկու տիպարներու անուններուն ընտրութիւնները: Մարգար-եաններուն աղջկան անունը Անժէլ է: Լատինական ծագումով անուն է, որ Հրեշտակ կը նշանակէ: Եւ արդէն կը տեսնենք

խաղին մէջ անոր հրեշտակային կերպարանքը: Իսկ սպասուհին, այդ բարի գեղացիին անունը Մարիամ է: «Մարիամ», բարի եւ օգնող... զուգահեռը շատ պարզ է:

«Մինչեւ ո՞ւր»ին մէջ Հերոսին անունը Միկա Արան է: Այսօր պարզ է այլեւս, որ այս տիպարը նոյնինքն Կոստան Զարեանն է: Բայց դառնանք անունին: Առաջին ակնարկով կը կարծենք տեսնել Հայու մը անունը՝ Արա: Բայց մեր գիտցած Հայկական անունը Արա է եւ ոչ թէ՝ Արան: «Միկա Արան»ը արդէն ածականի մը գործածութիւնը կը նշէ: Ինչպէս որ պիտի ըսէինք՝ Մուռ Գէւոն եւ կամ Սուլ Յակոն, եւայլն: Ուրեմն՝ «Միկա Արան» նկարագրային որակական ածականով կազմուած անուն մըն է: Բայց ի՞նչ է միկա: «Միկա»ն թերեւս "Mica"-ն է, այն Հանքային քարը, որ պսպղուն է, բայց դիւրաբեկ, ճիշդ տիպարը՝ Միկա Արան, որ փայլուն Հանճար մը կը յաւակնի ըլլալ, սակայն Հոգեպէս եւ Փիղիքապէս կը փչրուի դէպքերու ծանրութեան ներքեւ, ճիշդ "Mica" քարին նման:

«Աքլորամարտը»ին մէջ կը Հանդիպինք եղիսէ Զարման անունով տիպարի մը, որ ազգային պաշտօնեայ է եւ գրող: Տիպարին կենդանի նմանողութիւնը Կոստան Զարեանի կը տեսնենք տիպարին խօսքերուն ընդմէջէն, երբ թատերախաղին մէջ կ'ըսէ, «Ես էի որ Հիմնադրական տապալեցի ախտավարակ, Հիւանդոտ, գլորչուտ, եւ Հիւծախտաւոր բանաստեղծութիւնը Մ. Մատուրենցի»: Մ. Մատուրենցը, Միսաք Մեծատուրեանն է, աւելի ծանօթ՝ Միսաք Մեծարենց անունով: Ցատակ է, որ Զարմանը, Կոստան Զարեանն է, որ յայտնօրէն բացասական կարծիք ունեցած է Մեծարենցի բանաստեղծութեան մասին եւ հրապարակաւ ալ արտայայտուած: Օրական, Զարեանի փոխարէն՝ Զարման անունը տուած է տիպարին: Թերեւս՝ «զարմանալի»ի Հեղինակն իմաստով: «Մինչեւ ու՞ր»ին մէջ, աւելի յստակօրէն, Զարեան/Միկա Արանի բերնով կ'ըսէ. «Ինչպէս կ'ըսէ ձեր սիրեցեալ քերթող մատմագէլ Միսաք Մեծարենցը» (էջ 19):

«Աքլորամարտը»ին մէջ կը Հանդիպինք Բալանճեան անունով տիպարի մը: Բալան՝ «փալան» նոյնահնչիւն բառին արեւմտահայերէն գործածութիւնն է: Իշու կամ ձիուն կոտորիքը: Ուրեմն՝ նաեւ տիպարին ինչ ըլլալը: Կը Հանդիպինք Սակաւ եւ Գրիգոր Անվոյթ անունով տիպարներու: Պարզ տրամաբանութեամբ մը կը Հասկցուի, թէ ինչպիսի անհատականութիւններ են այս տիպարները:

«Կնքահայրը»ի Հերոսին անունը Ուալֆա է: Արարելէն խալիֆա մակդիրը առաջին իսլամ թաղաւորներուն Համար կը գործածուէր: Թրքերէնի մէջ վերածուած է՝ պետ, վարպետ, գործատէր, այսինքն՝ նիւթական ուժ պարտադրող անձնաւորութիւն, ինչպէս որ տիպարն է այս թատերախաղին մէջ: Այս տիպարին տուած է՝ Փէքմէզեան մականունը, որ ո՛չ միայն քաղցր չէ, այլեւ՝ Համակ դառնութիւն է:

Հետաքրքրական երեւոյթ մըն ալ կը պարզուի յատուկ անուններու իր ընտրութեանց մէջ: Օշական իր համակրելի կին տիպարներուն աղուոր անուններ կու տայ: Այսպէս՝ Անժէլ, Անահիտ, Արմինէ:

Անուններ ալ կան, որոնք տարբեր թատերախաղերու մէջ կը կրկնէ, օրինակ՝ Սուրբիկ եւ Սուքիաս անունները: Սուրբիկին՝ հակասութիւն տիպարին կը հանդիպինք «Կնքահայրը»ին (միջնորդ կին մը), ապա «Աքլորամարտը»ին (տան մը մայրը, որ թուրք ոստիկանին կը յանձնուի): «Փառք Աստուծոյ» թատերախաղին մէջ, կը տեսնենք սրբութեամբ օրհնուած, տասնվեց տարեկան հայ որբուհի մը, որուն իրաւացիօրէն Սուրբիկ անունը կը վայելէ եւ Հետաքրքրական «զուգահիսու» թեամբ» թատերախաղին մէջ տիպարին մը բառերով ըսել կու տայ. «Սուրբիկը սուրբի պէս աղջիկ է»: Երկու Սուքիասներէն առաջինը անբաղձալի, ստո՛ր, թաղին մատնիչ ծովախեղան է «Աքլորամարտը»ին մէջ, իսկ երկրորդը՝ պատրիարքարանի անգոյն ու տափակ պաշտօնեան՝ «Նոր-պսակը»ին մէջ:

Քնարախաղերուն մէջ զործածուած անունները աւելի թափանցիկ են. «Ոսկի ուռնակ»ին մէջ Ս. Գրիգոր Լուսաւորիչը սուրբ անունով կ'երեւայ: «Այն օրերուն»ին մէջ Ս. Մեսրոպ Մաշտոց՝ վարդապետ անունով: Նորէն այս թափանցիկութեան մէջ խորհուրդ մը կայ, որ կը յայտնաբերէ թատերադրին յարգանքը իր տիպարներուն նկատմամբ:

ՎԵՐՋԱԲԱՆ

Կը վերջացնեմ այս ուսումնասիրութիւնը հետեւեալ հաստատումներով.՝

Առաջին. Օշականի թատերախաղերը, թատերագական բովանդակութեան (Dramatic content) տեսանկիւնէն, յատկօրէն կը բաժնուին՝

Ա.՝ Տրամաներու շրջան (1920-1938) եւ

Բ.՝ Քնարախաղերու շրջան (1938-1947):

Երկրորդ շրջանի՝ քնարախաղերու վրայ կենդրոնանալը հասկնալի է, որովհետեւ այդ թուականներուն ան Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանի հայոց լեզուի ու գրականութեան ուսուցիչ էր:

Երկրորդ. Օշականի իրապաշտ նիւթերը այսօր ալ թարմութեամբ կը յատկանշուին: Ընկերային տաղանայներուն հոյս-վոյթին հարազատ են: Եթէ լաւ բեմադրուին «Նոր-պսակը», «Կնքահայրը», զոյգ «Աքլորամարտը»ները, «Փառք Աստուծոյ» եւ «Մինչեւ ու՞ր» թատերախաղերը, պիտի զգացուի բեմէն դէպի հանդիսատես սահող յուզականութիւնը: Ազգային թեմաներով իր թատերախաղերը, հայ իրականութեան մէջ պիտի մնան թելադրական եւ ոգեւորիչ երկեր:

Երրորդ- Այն վարկածը, որ Օչականի թատերախաղերը չեն ներկայացուիր՝ իր լեզուական «բարդություն» կամ երկար տեւողութեան համար, ըստ իս, անիմաստ վարկած մըն է։ Օչականի թատերադրական լեզուն ընդհանրապէս պարզ է։ Իր քերականական կառուցները, բանիմաց ղեկավարի մը եւ իրենց գործը գիտցող դերասաններու կողմէ, կարելի է օգտագործել խաղարկութեան նպաստելու համար։ Պէտք է սակայն ընդունիլ, որ մկրատելու քաջութիւնը պէտք է ունենայ բեմադրիչը, ո՛չ թէ՛ որովհետեւ թատերագութիւնները երկար են, այլ այդ մկրատումները անհրաժեշտ են շատ յաճախ թատերախաղին ուժգնութիւնը պահելու համար։ Այս պարագան թող սխալ չհասկցուի։ Թատերական մարզին մէջ ընդհանրացած սովորութիւն են «քննադրի բժիշկներ»ու (script doctors) ձեռքով կատարուած մկրատումները։ Հաղուադէպ է գտնել թատերախաղ մը, նոյնիսկ Շեքսպիրեան, որ նման հատումներէ չէ անցած։ Պէրնար Շօ ցաւով կը գրէ այս մասին⁽⁵¹⁾։ Օչական ինքը ըրած է նոյնը ի՛ր ձեռքով իր գործերուն նկատմամբ, երբ փակագիծի մէջ առած է՝ «Նոր-պսակը»ի այսպէս կոչուած «չներկայացուող» տողերը եւ կամ՝ Երուսաղէմի մէջ, «Մինչեւ ու՞ր»ի ներկայացման առիթով անձամբ կատարած իր բազմաթիւ հատումները։

Հետաքրքրական երեւոյթը այն է, որ Օչական իր առաջին թատերախաղերը, որ գրած էր Բեմին համար եւ հեղանքով կը նայէր չարժանկարի շնորհած միջոցներուն, բախտի չըջադարձութեամբ մը, «Սրն օրերուն» եւ «Ստեփաննոս Սիւնեցի», ինչպէս նաեւ կարգ մը քնարախաղերուն մէջ, բնութիւնը վերարտադրելու բացարձակ իրապաշտութեան իր տենդին մէջ, այնպիսի բա՛րդ տեսարաններ կը նկարագրէ խիստ մանրամասնօրէն եւ յոյսերու խաղերու արտակարգ պահանջներ կը դնէ (երկրաչարժ, փոթորիկ, բուերու թոփջք... եւայլն), որոնք կա՛մ բացառիկ արդիագոյն բեմի մը վրայ պէտք է ըլլան եւ կամ չարժանկարով։ Օչական կ'ըսէ. «Այս խորհուրդներուն օգուտով ներկայացումը պայմանաւոր է թատերական, երաժշտական, պարադրական ու բեմադրական ամէնէն նոր միջոցներուն գործածութեամբ»։

Նոյնիսկ իր ընկերային թատերախաղերը, որոնք բարդ հոգեվիճակներու արտացոլանք են եւ բեմադրական թեքնիք պահանջներէ զերծ են, իսկական չարժանկարի նիւթեր կրնան ըլլալ։ Շարժանկարը, տարբեր ծաւալ (dimension) մը ունի, զոր բեմը չունի եւ որոնք Օչականի թատերախաղերուն մեծապէս կրնան նպաստել։

Չորրորդ- Հայ թատերգական գրականութեան Օչական կը բերէ շեշտակիօրէն գօրաւոր Հայ կնոջ տիպարը։ Զօրաւոր կին տիպարները յայտնի էին Իպսէնի (Նորան եւ Հէտա Կապ-

51.— Տե՛ս թիւ 34 ծանօթագրութիւնը։

լըր), Սթրինտպըրկի (Ճիւլին) երկերուն մէջ: Հա՛յ կնոջ տիրական տիպարին կը հանդիպինք Հայկական վէպերուն մէջ, ուր Տիւսար եւ Նսայեան արդէն արծարծելու էին նիւթը: Թատրերգական գրականութեան մէջ սակայն առաջին անգամ Օշականի մօտ է, որ կը հանդիպինք այն Հայ կնոջ, որ քաջութիւնը եւ համարձակութիւնը ունի ընկերութեան մէջ կարեւոր կարծիքներ արտայայտելու, տունէն Հեռանալու որոշում առնելու, սիրահար ունենալու, ամուսնուն հակաճառելու, ամուսնին իր ընտանիքէն բաժնելու, սիրած մարդը փրկելու համար՝ զոհուելու, իր նիւթականը ապահովող մարդուն դիմադարձելու եւ հաւատքին կառչած մնալով իր ուրացող ամուսինը պախարակելու: Այս կնոջ տիպարը Օշական բեմ կը հանէ, գիտնալով Հանդերձ, որ այդպիսի կին մը Հայ Հասարակութեան մէջ, ընդհանրապէս չատուած եւ չմերժուած անձնաւորութիւն մըն է: Այսքան զօրաւոր իդական տիպարներ չկային մեր Թատրերգական գրականութեան մէջ:

Հինգերորդ- Օշական, իր Թատրերգական գրականութեան ակնարկելով՝ քանի մը տարբեր առիթներով կ'ըսէ, «Օշականի խաղերը գրուած են զոյգ առաջադրանքներով. անոնք պէտք է կարդացուին, բայց անոնք պէտք է ներկայացուին»: («Նոր-պսակ»ի նախաբան): Ուրիշ տեղ մը⁽⁵²⁾, (էջ 69) «Յետոյ ձեզի կ'առաջարկեմ, որ անոնց ընթերցումը ընէք վէպերու վայել Հոգեխառնութեամբ մը»:

Կարդացուելու-ներկայացուելու զուգորդուած նշումը խոտոր կը համեմատի Թատրախաղերու նկատմամբ այն ընդհանրացած եւ ընդունուած տեսակէտին, որ Թատրախաղ մը կեանքի կը կոչուի Հանդիսատեսին ներկայութեամբ՝ բեմադրութեամբ, ընթերցասանութեամբ եւ կամ ձայնասփիւռի ընթերցումով: Օշականի վերեւ նշուած Հաստատումները, ի՞նչ մշակած Թատրերգական գրականութեան մասին է, որ կը խօսի: Ժանր մը, արդեօք Թատրավէ՞պ, վիպաԹատրո՞ն, վիպախա՞ռն Թատրախաղ, Թատրավէ՞պ պէտք է կոչել: Այս մտածումէն կը հրաժարիմ, երբ նկատի կ'առնեմ, որ իր «խաղերը» բոլորն ալ Թատրերգականութիւն կը բովանդակեն, թէ՛ կատրցով, թէ՛ երկխօսութեամբ: Ուրեմն բոլորն ալ Թատրախաղի՛ն են, որոնց մէջ վիպային ձգտումները Հիւսուած ձեւով լայնօրէն կը ներկայանան:

Վեցերորդ- Թատրագրական այս ոճը դպրոց պիտի դառնա՞յ:

Թատրագրական պատմութեան մէջ դպրոցներ ստեղծեցին ա՛յն Թատրագիրները, որոնք՝ Գործողութեան Միութեան Օրէնքին ամպշովանիին ներքեւ, երբեակ ինքնուրո՞յն սիւները՝ Թատրագրական ոճ, գրական ոճ եւ նիւթ բերին Թատրախաղերուն: Այդ խումբին կը պատկանին Շեքսպիր, Իպսէն,

52.-- Տե՛ս թիւ 1 ծանօթագրութիւնը:

Փիրանտելլո, Պրեյսթ, Պեքեթ: Եղան դրողներ, որոնք թէեւ ճարտար մօտեցումներով բեռնաւորուած էին, սակայն սխնե-
րէն մէկուն կամ միւսին, կամ Գործողութեան Միութեան
Օրէնքին անտեսումով, ժամանակաւոր դրոշմ թողուցին թա-
տերազրական բնազաւառին մէջ: Օչականի թատերախաղերը
որոնք, ինչպէս ինք կը բանաձեռէ՝ «գրական կառոյցներ են,
ընդմէջ տրամային եւ վիպական տիպոկին, երկուքին ալ հա-
ղորդ», ի բնէ, «Գործողութեան Միութիւն» օրէնքը տկարաց-
նելուն կողքին, կառուցային սահմանումներու մէջ ալ կ'իյնան
եւ տեսակ մը բախտախաղի շրջագիծին մէջ կը պարփակուին:
Նման մօտեցումներ, թատերազրական դպրոց դառնալու յա-
ջողութիւն չեն արձանագրած Համալսարհային թատերազրու-
թեան պատմութեան մէջ: Օչական գիտակցօրէն ընտրած է
այս ուղին եւ այդպէսով իր թատերազրական ոճը յանձնած է
ճակատագրի խիստ դատաստանին եւ որուն արդիւնքը միայն
ժամանակը պիտի որոշէ:

Եօթներորդ- Օչականի նման Հսկայ տաղանդի մը մասին
արտայայտուած ատեն, փիտոսանք մը կը զգանք, երբ կը վեր-
լուծենք իր թատերական գործունէութիւնը: Ափսոսանք՝ որ
ան բեմին փորձառութիւնը չունեցաւ: Բոլոր մեծ թատերագիր-
ները, բոլորն ալ, բեմին վրայ թրծուեցան, իբրեւ դերասան,
ղեկավար, եւայլն: Դժբախտաբար Օչական այդ առիթը չունե-
ցաւ: Առիթը չունեցաւ իսկապէս բեմին վրայ եւ բեմին ետեւը
աշխատելու, տեսնելու եւ ծանօթանալու բեմէն, բեմադրութե-
նէն, դերակատարութենէն բխած սահմանային շնորհներուն,
չափերուն, սահմանափակումներուն, առաւելութիւններուն եւ
տկարութիւններուն: Աւելին. առիթը չունեցաւ դերակատար-
ներու եւ բեմադրիչներու հետ գործելու: Վստահաբար բեմին
եւ թատերական արուեստին ծանօթութիւնը, գործնական
Հմտութիւնը (craft) եւ փորձառութիւնը իր թատերազրական
գրականութեան մեծապէս պիտի նպաստէր:

Ութներորդ- Օչական, իր ինքնաքննադատական գրու-
թեան մէջ, խօսելով իր թատերախաղերուն մասին, քանի մը
առիթներով կը կրկնէ «նոր խաղ» եւ «նորութիւն» բառերը:
Օրինակ, կ'ըսէ⁽⁵³⁾ (էջ 23). «Օչական 1921-ին յանձնառու եղաւ
նոր խաղը բերել այդ խումբին (Հայ Տրամաթիք)»: Նոյն գրու-
թեան մէջ, ուրիշ տեղ մը (էջ 68) կ'ըսէ. «Օչական կ'երաշխա-
ւորէ, գէթ գրողի իր խղճմտանքին, թափանցումին բարիքնե-
րովը, այդ խաղերուն նորութիւնը հրապարակի մը մէջ, ուր
մեր գտածը չենք թարմացներ»:

Օչականի «նոր խաղ» եւ «նորութիւն» բառերու գործա-
ծութիւնները իրապաշտ մօտեցման եւ առաջնութեան դաւա-
նանքներ են: Այս երկու արտայայտութիւնները, առհասարակ,
միայն պատմական արժէք ունին եւ արուեստի հետ չեն առն-

53.— Տե՛ս թիւ 1 ծանօթագրութիւնը:

չրվիր: Ինչպէս դիտել տուինք՝ իրապաշտ շարժման առաջին գործը էմիլ Զօլայի «Թէրէզ Բաքին» վէպին թատերականացումը (1873) ըլլալով Հանդերձ, Իպսէնի «Ուրուականներ» թատերախաղը (1881) իրապաշտ շարժումը Հաստատողը կը սեպուի: Նոյնն է պարագան բնապաշտ շարժման, ուր արուեստի արժեւորումը կ'երթայ Սթրինսպրէկին: Օրինակներ չեն պակսիր արուեստի այլ բնագաւառներուն մէջ: Առաւել՝ Հայ թատերգական գրականութեան մէջ, իրապաշտ թատերախաղեր կային Օշականէն առաջ, ինչպէս, օրինակ, Շիրվանզադէի, Սունդուկեանի, Պարոնեանի եւ դեռ ուրիշներու երկերը:

Եթէ «նորութիւն»ը, նիւթին ինքնատպութեան իմաստով պիտի ընդունինք, այն ատեն, «Սասունցի Դաւիթ» եւ «Երբ մեռնիլ զիտներ» թատերախաղերէն զատ, մնացեալ պատմականները եւ ընկերային թատերախաղերը բոլորն ալ ինքնատիպ նիւթեր են, որոնք, այո՛, նորութիւն էին եւ արժարժուած չէին իրմէ առաջ:

«ԻՍԿՈՒԹԵԱՆ» ԵԶՐԱՓԱԿՈՒՄԸ

Օշական իր թատերգական գրականութեան ակնարկներով ըսած է. «Անոնք, որ օր մը պիտի ունենան պատեհութիւնը, սանկ նուագադոյնը յիսուն տարի վերջ, նժարի գնելու Օշականի թատրոնները, վստահ եմ, որ պիտի տպաւորուին Հոն խտացուած իսկութենէն, այն սրբազան Հոսանքէն, որով կ'ապրին արուեստին, ինչպէս կեանքին մեծ սիգիւրը»:

Իր առաջին թատերախաղէն՝ «Նոր-պսակը»էն (1921) եօթնասուն ութ տարիներ եւ վերջինէն՝ «Օրն օրերուն»էն (1947) յիսունըկու տարիներ անցած են: Այս աշխատասիրութեամբ փորձեցինք անաչառ դատումով, ընդհանուր սահմաններու մէջ, անդրադառնալ Օշականի ցարդ Հրատարակուած տասնհինգ թատերախաղերուն, անոնց ընդմէջէն Հասկնալ, լուսարանել իր թատերգական գրականութեան Հիմնական արժանիքները: Հաստատումներ եւ մատնանշումներ ըրինք, թէ՛ զեր առաջադրեցինք: Կը յուսանք, որ այս ուսումնասիրութիւնը ընթացքի մը ծնունդը կու տայ եւ վարդապետական աստիճանի Հետազօտողներ աւելի ընդլայնուած ու խոր ուսումնասիրութիւններով կ'անդրադառնան իր թատերգական գրականութեան: Որովհետեւ արժանի գրողի մը արժանի գրականութեան մասին է խօսքը:

Նստացնելով իր «խտացուած իսկութիւնը», եզրափակենք Օշական, Հայ թատերգական գրականութեան՝ իրապաշտօ-

րէն՝ իմացականը գերող մարդկային փորձառութեան մտահոգութիւնները բերաւ: Յորդորապաշտօրէն հայութիւն եւ հայրենիք բառերուն յաւիտենական գոյութիւնը դրուատեց ու պատգամեց, Ոգեպաշտօրէն Հայ Առաքելական եկեղեցւոյ քրիստոնէական կրօնքի վեհութիւնը գովերգեց եւ իր գրականութիւնը մշակեց Գոյապաշտ իմաստասիրութեան հիմքերով:

Առանց դոյզն վարանումի կարելի է հաստատել, որ Օշական անվիճելի ներկայութիւն մըն է Հայ թատերգական գրականութեան մէջ:

(Շար. 3 եւ վերջ)

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Շնորհակալութեան խօսք-

Մարկ Նշանեանին, Պօղոս Սնասեանին, Գուրգէն Գասապեանին, Արամ Արքունին, Վազգէն Ղուկասեանին եւ յարկապէս Վահէ Օշականին, որոնք բարեացակամօրէն Օշականի քաղերախաղերու գիրքերը, պատճէնները եւ քննադրերը տրամադրեցին այս աշխատասիրութեան համար:

Հ.Մ.

ՎԵՐԱԴԱՐՁԸ



Վերադառնան պիտի դեռ
 Հազար սրտեր տարագիր,
 Ջարիուրելի հեռուններ
 Տարուած հողմով յարաբիրտ:
 Իբրեւ սրտեր կենդանի,
 Իբրեւ ածիւն կամ մասունք
 Սրտեր քանի՛, դեռ քանի՛
 Հողն են իրենց անրջում...

Կոմիտասի ածիւնին ներգաղթած ամիսներուն, Ջարենց, «Կոմիտասի յիշատակին» խորագրեալ իր երկարաշունչ բանաստեղծութեան մէջ վերի ութնեակին պէս քանի մը ութնեակ հիւսեց, մեծավաստակ դէմքերուն վերադարձը անխուսափելի համարող համոզումի մը ամրակուռ հէնքով: Այն «մահախուճապ» շրջանին, երբ արդէն ճամբայ Հանուած Կոմիտասի ածիւնը մերժելու կեցուածք մը կը դրսեւորուէր արնածարաւ ճիւղներուն կողմէ ու նախաձեռնողները ահաբեկումի մը սարսուռը կ'ապրէին, Ջարենցի քնարերգած վերադարձի երգը, մահուան նախաճաշակը ապրած, այլ մահէն վեր սաւառնաթելու ճախրող Հոգիի մը պայծառատեսութեան վկան կը հանդիսանայ:

«Միջագետքից Օրենքուրդ, Հելլեսպոնտից մինչեւ Վան» ցրուած վաստակաւորներէն բանաստեղծը կը յիշէ քանի բանաստեղծի անուն միայն, — Թումանեան, Տէրեան, Դուրեան ու Մեծարենց, բայց յայտնապէս միայն գրական դէմքերը չունի իր մտքին մէջ, «Հազար սրտեր տարագիր»ին մէջ Հեռունները Հողին դարձած գրական դէմքերը հազարի չեն հասնիր, հազարին մէջ նկատի առնուած են նաեւ ուրիշ արուեստագէտներ, գաղափարախօսներ, յեղափոխականներ, հերոսներ, որոնք պիտի գան եւ «ղառնան աղբիւր եռանդի»:

«Ինչպէս», պիտի դարձանային ու զայրանային այն օրերու մոլորութիւններով սպառազէն Մուղղուսիները, եթէ Հնարաւորութիւն ունենային կարդալու Ջարենցի «Կոմիտասի յիշատակին» բանաստեղծութիւնը, ինչպէս, Մարքսը եւ իր Թալմուտը մոռցած, Էնգելսն ու Լենինը շրջանցած ու Ստալինի

փրկչական ներկայութեան սովետահայ բանաստեղ մը կը յանդիմանի խանդի աղբիւր համարել մեռելները, այն ալ ազգային մարգելու մէջ հռչակուած մեռելներուն աճիւնները:

Մարդկային ամէն երազ իրագործուած յայտարարող արիւնոտ համակարգի մը մթնոլորտին մէջ մեռելներու աճիւնին ու մասունքներուն զօրութեանց այդքան հաւատք ընծայող համոզումը, պատմութեան յանձնարարական վճիռներուն ծանօթ լուսապայծառ մարդու մը անբեկանելի համոզում է, որ հազուադէպ երեւոյթ չէր Ջարենցի փիլիսոփայական տոմարներուն մէջ:

Ջարմանալի է, իրապէս, մտածել, որ իր կեանքին ու աճիւնին ապահովութիւնը արդէն վտանգի տակ զգացող Ջարենց կեանքին կը նայէր այդ լաւատեսութեամբ, որ վերածննդաւ բաբախող կեանքի, շարք մը դրական ու ազգային մեծութիւններու օրհնաբեր վերադարձներով:

Գրական դէմքերը՝ իրենց կարգին:

Միայն վերջերս վերադարձան «Հայրենի հողը բուրեան» Սօսէ Մայրիկ, Դրօ, եւ վերջինը, Անդրանիկ:

Անդրանիկի պարագային, Ջարենցի «Կոմիտասի յիշատակին» բանաստեղծութեան մէջ քնարերգուած վերադարձի յոյսը սկսաւ Արարատեան աշխարհին մէջ փայփայուիլ շուրջ երեսուն տարի ետք, Նորուշեւեան ձիւնհալին, յատկապէս մտայնութեան անկիւնադարձ մը թելադրող բանաստեղծութեան մը հիմամբ, ստորագրուած Նայիրի Ջարեանի կողմէ, որ «յիմարարար, յիմարարար, յիմարարար» իր խմբագրած նախկին յիմարութիւնը նոր հիւստիւածքի մը մէջ փոխադրելով, հարց կու տար, թէ՛

Ինչո՞ւ չի քանդակուած մեր երգերում,
Մեր լուսաւոր հրապարակներում
Հայոց այս տարաբախտ Գարիբալդին:

Այս եւ նման այլ արտայայտութիւններու ի լուր, յայնկոյսներուն հետ համայնափար վարդապետութեան նորադարձները իրենք եւս սկսան հաւատալ ու ճշիւ հաւատացնել, որ հասունցած է Անդրանիկի աճիւնին վերադարձը՝ շնորհիւ ազգային արժէքներու վրայ գուրգուրացող «կարմրաշառաւիղ» դեկավարներուն:

Ու բանաստեղծներուն կարգին, բանաստեղծներուն միամըտութիւնը խորամանկօրէն շահագործող մեկնաբաններուն հետ՝ կարմիր սակապետութեան հաւատացող սակաւաթիւները սպասեցին, որ հրաշքը պատահի...

Պատահեցաւ այդ հրաշքը, երբ «Հրաշագործ» կարծուածները, փլուզման ենթարկուած իրենց համակարգին պէս՝ փուճ դուրս եկան ու կարմիր մշուշներով պատած հորիզոնները սկսան աստիճանաբար պայծառանալ:

Անդրանիկին ածիւնները փոխադրուեցան Հայաստան, ինչպէս փափաքած էր ինք ու կը փափաքէր ողջ ազգը, ու փոխադրուեցան կրօնական ու պետական շուքով, աղօթական մրմունջներով ու հրանօթներու որոտներով, ծաղկեփունջերով ու փունջ-փունջ ուղեբձներով: Ոսօք՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ, խօսք՝ Հայաստանի Հանրապետութեան նախագահին կողմէ, խօսք՝ Հայաստանի գրողներու նախագահին կողմէ, ու խօսքեր՝ զանազան բջիջներու ու ներկայացուցիչներու կողմէ, ամէնքն ալ սրտառուչ, երախտազիտական սրտազեղ ապրումներով...

Անդրանիկի ածիւնը Հայրենի Հողին յանձնող արարողական պատկերին մէջ քաջակայ դէմքեր կային Հարկաւ ու խուած գնահատականները բնաւ լրիւ չէին: Սպասելի էր, որ այս առիթով Համայնավար մօտեցումներէն տարբեր արժեքափեր կիրարկուէին, պատմականօրէն ճիշդ եւ արդար, առանց որոնց Անդրանիկի գործունէութիւնը չի կրնար ամբողջական ըլլալ եւ ոչ ալ իր կերպարը կրնայ լրիւ գիծերով տեսանելի ըլլալ:

Ի վերջոյ ո՞ր միջավայրին մէջ գործած է Անդրանիկ:

Ո՞ր ենթահողին մէջ ձեւաւորուած է Հերոսական իր տարերքը:

Որո՞նց կողքին:

Ո՞ր գինանշանին ներքեւ:

Ո՞ր կազմակերպութեան Հայթայթած միջոցներով ան սաւառնեցաւ լեռ ու ձոր:

Որո՞ւն հրահանգով ու Հովանաւորութեան տակ դուրս եկաւ Երկրէն:

Որո՞նք Հիւրընկալեցին ղինք Թրքահայաստանի սահմաններէն դուրս:

Ի՞նչ պայմաններու տակ Հարթուեցաւ վերադարձի իր ճամբան:

Ո՞վ գունդ դրաւ իր հրամանատարութեան տակ:

Այս հարցումներէն զոնէ՝ ոմանք ուղղելու ստիպումը պէտք է խնայուէր մեզի այս անգամ: Երեւի դարձեալ պէտք է կրկնենք ու ընդգծելով ընդգծենք, որ՝

- Դաշնակցութեան շարքերը մուտք գործելէ առաջ աննշան դէմք մըն էր Անդրանիկ ու Դաշնակցութենէն Հեռանալէ ետք նշանաւոր որեւէ գործ չկապուեցաւ իր անունին:

Առանց Հայուի առնելու այս սուեւալները, ո՛չ պատմութիւնը արդար կշիռի մը մէջ կը դրուի եւ ոչ ալ վերացական ոլորտներու մէջ գիտուած Հերոսները մնայուն Հմայքով մը կրնան ահագնանալ Հոգիներուն խորանին:

Անդրանիկի ածիւնին փոխադրութեան առիթով, այս նշմարին առընթեր, սիրելի է մեզի թարմացնել իր մասին եղած գրականութեան յատկանշական քանի մը նմուշ:

ԱՆԴՐԱՆԻԿ

Ինքն էր որ երազիս մարմարեայ եզերքներուն վրայ,
այս գիշեր,
Ապառաժի մը նման անյաղթելիորէն ուրբի,
Իր ըմբոստացողի հրեղէն գլուխն աստղերուն մէջ մխրճելէն,
Ու իր ձեռքը արելութեան սուրերովը գինսած,
Հողին փրկութեանը սիրովը հրաշացած եղբօր մը նման,
Որ եղբօր մը օտարացումէն իր հոգին կ'արխունի,
Խօսեցաւ ինծի Ան, եւ իր բառերը իրարու ետեւէ, եւ
կարգ առ կարգ,
Խիստ էին եւ քաղցր եւ ճշմարիտ եւ քինայոյզ եւ
առնական...

«Եւ անաւասիկ ես եմ, ո՛վ մեղկութեան ու անշարժութեան
զաւակ,
Որ աղմկայոյզօրէն՝ այս իրիկուն ճեռուններէն կու գամ,
Քու երազուն եւ անարարքեր ու անգործօն ու եսական ու
տկար,
Երկրասարդի մարմինը ու էութիւնը ու հոգիդ,
Բազուկիս հարուածովը ու սուրերուս շառաչին հետ,
Կռիւներու հարկադրիչ ժամերուն համար, վերջնականապէս
ցնցելու...
Ունկնդրէ՛ իմ ձայնիս որ այս վճռականութեան օրերուն
Մեր ցեղին, մեր վրէժին ու մեր արիւնին աղաղակն է՝
անարկու,
Ու խառնուէ՛, ընկերացի՛ր, եղբայրացի՛ր, տա՛ մեր հզօրաքայլ
սմբռնին հետ՝
Եթէ դեռ քու հոգիիդ մէջ ազատութեան տեւէ կայծ փառ մնաց,
Եթէ դեռ քու բազուկներդ քաջութիւնը ունին բշտամիներ
հարուածելու,
Եթէ սիրտդ գէթ անգամ մը խոցոտուեցաւ մեր մայր հողին
մահացումէն,
Եթէ ցեղիդ տառապանքէն ու անմեղներու կոտորածին
մզաւանջէն,
Քու ներսիդիդ արելութեան ու բարկութեան անդամները
բարձրացան...
Եթէ դուն դեռ կեանքիդ մէջը պիտի կրնաս նպատակի մը
փաթթուիլ,
Եթէ դեռ քու աչուրներդ այդ անօգուտ արցունքներէն
չկուրացան...

Եթէ դուն քու աղօթքներդ Արեւութեան գոտումնէրու փոխեցիր,
 Եթէ ցեղիդ շագմական ու արեգակէ արիւնին
 Երակներուդ ու գլխիդ մէջ բորբոքուիլը դեռ կը զգաս,
 Եթէ դեռ Արամին, Տիգրանին, Արտաշէսին եւ Վարդանին,
 Յաղթանակող զօրութենէն քու մէջդ շունչ մը մնաց,
 Եթէ Մերձբներու, Փարեաններու, Պեղոներու եւ Ժիրայրի
 Դիցազնական քայլերէն քու երագողի նայուածքներուդ
 առջեւ,
 Անձնութեան, վրէժի եւ ազատութեան ճանապարհ մը
 բացուեցաւ,
 Ուրքի՛ կեցիր այն արեն, եղբայրացի՛ր խումբերուս ու
 մորկուէ՛ անունը ճեպ,
 Որովհետեւ, գիւրցիք որ այս զոհաբերումի, ընդվզումի եւ
 յոյսի օրերուն,
 Մեր ամէն մէկուն համար անկողնի մէջ հոգի տալը
 վաւերօրէն է վաւերօրէններուն»...

Յանկարծ խումբերը ճեւացան արեւածագին կրակներուն
 մէջէն,
 Ու իրենց կամաւորի գիւրակից ու վճռական քայլերուն
 ճնշիւնը երկաթեայ,
 Մարմարակոյտեր փշրող անճամար կռաններու ճնշիւնը
 ունէր...
 Մինչդեռ թշնամիներէն անջատուած գլուխներ ջաներու
 կը բոցափառէին՝
 Իրենց ուսերուն վրայ բարձրացուցած սուրերուն
 կտրարներէն...
 Ու րեսայ որ փաթ արիւն մը կը քամուէր խաչափողերէն,
 կաթիլ առ կաթիլ, դէպի վար,
 Անունը ամէն մէկուն լայն ու զօրաւոր ու մերկ ծոծրակները
 թրջելէն...
 Եւ ես այն արեն՝ նախանձութեամբ ու տարփանքով հռչակ
 վրայ ծնրաղիք՝
 Իրենց հերոսի քայլերուն հեքքը երկիւղածօրէն
 համբարեցի...

1903, Փարիզ

ՍԻԱՄԱՆԹՕ

Ա. Ահարոնեան**ԱՆԴՐԱՆԻԿ****ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԴՐԱՆԻԿ**

Շատերին դուցէ թուայ, թէ այս նիւթը փափուկ է ու կանխօրեայ:

Անդրանիկ երէկ մեռաւ:

Անխոհեմութիւն է թարմ գերեզմանի առջեւ խնդիրներ յուզել, որոնք գուցէ կապուած են անձնականի, կրքոտ ու բուռն եսերի հետ:

Ըստ իս, սակայն, Անդրանիկի եւ իր կուսակցութեան մէջ ծագած անհասկացողութիւնը բնաւ այն բնոյթը չունի, որի մասին անկեղծօրէն խօսելը կը նսեմացնէր մէկ կամ միւս կողմի վարկն ու արժանիքը. շտապեմ ասել, որ ծագած թիւրիմացութեան մէջ Դաշնակցութիւնը նոյնիսկ կողմ չի հանդիսացել. եւ թոյլ է տուել, որ Անդրանիկ վարուի, ինչպէս հաճելի է իրեն: Եւ երբ նա որոշել է քաշուել կուսակցութիւնից, Դաշնակցութիւնը նայել է իր յեղափոխական օջախից հեռացող հերոսին այնպէս, ինչպէս կը նայէր գորովագութ հայրը հայրենի յարկից դժկամակօրէն հեռացող իր զաւակին:

Հեռացող որդին չի դարդարում իրեն ծնող ու մեծացնող հօր զաւակը լինել, թէկուզ խռոված, եւ Անդրանիկ դուրս գալով կուսակցութիւնից երբեք չղաղարեց Դաշնակցական լինելուց: Հետաքրքիր մի պարադոքս է այս, որի բացատրութիւնը փնտռելու է ո՛չ թէ Դաշնակցութեան, այլ՝ Անդրանիկի բացառիկ ու անօրինակ խառնուածքի մէջ, որ գուցէ ամէնից քիչ՝ իրեն, Անդրանիկին էր ծանօթ:

Խնդիրն այն է, որ սկզբից ի վեր Անդրանիկ առանձնապատուկ Դաշնակցական է: Երկրում, Մասունի լեռներուն թառած՝ նա անընդհատ կռիւների մէջ է եւ կուսակցական կարգապահութիւնը նրա համար հէնց այդ անձնուրաց ու կատաղի ոգորումներն են՝ յանուն Հայրենիքի ազատութեան: Նա գիտէ, որ իր կուսակցութիւնը միակն է, որ իր պէս համոզուած ու հաստատով պայքարում է թիւրք բռնապետութեան դէմ եւ այդ պատճառով ինքը Դաշնակցական է. նա գիտէ նաեւ, որ կուսակցութեան պարտքն է ռազմամթերք ու նիւթական աջակցութիւն Հայթայթել իրեն եւ իր պարտքն է կռուել անխնայ անձնուրութեամբ իր ժողովրդի փրկութեան համար:

Այսպիսով նա Դաշնակցական է, որովհետեւ յեղափոխական է եւ այդ կուսակցութեան ծրագիրն ունի նպատակ. դրանից դուրս ուրիշ պարտք չի զգում, եւ չի կարող զգալ. կուսակցութիւնը նրան հրահանգ տալու հնարաւորութիւնից իսկ զրկուած է. զժուար է այնքան հեռուից դեկավարել նրա մարտական շարժումները: Մեծագոյն կուսակցութիւնը Սասունի լեռներն ու ձորերն են, որոնք թելադրում էին մարտիկին իր անելիքը եւ լաւագոյն հրահանգը կեանքի, իրականութեան առաջ բերած անողոր պահանջը կոռի, կամ դադարի:

Եւ Անդրանիկ Դաշնակցական էր, եւ կուսակցական՝ իր ձեռով, քանի Սասնոյ լեռներումն էր. այդ կարգի Դաշնակցութիւնը միանգամայն համապատասխան է իր տիրական ու յախուռն խառնուածքին, որ աւելի եւս սրուած ու շեշտուած է նահապետական բարք ու վարքով հարուստ միջավայրում, որ Սասունն է:

Ժողովուրդն այնտեղ ուղմիկ, արի եւ բմբոստ, մշտապէս առաջնորդի, զլխաւորի պէտք ունի. առաջնորդ, որ բռունցք ունենայ եւ երկաթէ կամք. Անդրանիկ սասունցու համար երկնքէն իջած նախախնամական վարիչ է. եւ նրա վրայ նայում են ոչ որպէս հայրուկի, այլ՝ իրենց տիրոջ, իրենց իշխանի:

Այստեղից Անդրանիկ փաշա, որ այնքան խորթ էր հնչում մեր ականջներին, եւ որ սակայն այնքան բնական ու հաճոյալուր էր թիրքահայ եւ մասնաւորապէս Սասունի ժողովրդին:

Ու ես հասկանում եմ, որ Անդրանիկ շատ յաճախ բորբոքւած վայրկեանին ասում էր, օրինակ, այսպիսի բաներ.

«Ես իմ ժողովուրդը չեմ ձգեր շներաց, գէլերաց. ես իմ ժողովուրդը կ'առնեմ-կ'երթամ»...

Սասունի փաշան էր նա, իշխանը, եւ ժողովուրդը, իր ժողովուրդն էր, իր հպատակները՝ կոռի, թէ խաղաղութեան ժամանակ:

Եւ ահա մի օր այս փաշան, մեր հպարտ լեռների այս իշխանը, որ ո՛չ միայն Դաշնակցական է, հապա եւ այդ կուսակցութեան վարիչ եւ զօրութեան արգասիքն ու պատկերը, ստիպուած եղաւ թողնել Սասունը եւ անցնել նախ՝ Կովկաս, յետոյ՝ արտասահման:

Յոգնած ու ֆիզիքապէս ի սպառ քայքայուած, նա պէտք ունէր հանգստեան եւ բժշկական խնամքի: Կար եւ կուսակցութեան կեդրոնի լուրջ մտահոգութիւնը նրա կեանքի ապահովութեան համար. Սերոբ Փաշայի, Գէորգ Ջաւուշի, Վահանի մահից յետոյ՝ վախ կար, որ Անդրանիկ թիրք իշխանութեան ձեռքն անցնի: Պէտք էր ժամ առաջ դուրս հանել նրան երկրից եւ սպասել հետագայ անցքերին:

Անդրանիկ ծնունդով հասաւ Բաքու. թէ՛ Կովկասում եւ թէ՛ արտասահմանում՝ Ժընեւ, ամէն տեղ նա գտաւ ընկերների ամենաքնքուշ, ամենասրտագին ընդունելութիւն: Սասնաւորապէս աւագ ընկերները գուրգուրում էին իր վրայ. Բաքու

ապրում էր ծածուկ, Նիկոլ-Դուսանի խնամքի տակ. նրա մօտ էլ տեսայ Անդրանիկին առաջին անգամ՝ 1904 թվին: Նոյն ուշագիր ու եղբայրական վերաբերմունքը նաև արտասահմանում, երբ հասավ ժրնեռ: «Դրօշակ»ի խմբագրությունն պարտեզում առաւօտից երեկոյ լաւում էր Անդրանիկի սրտաբաց, հնչուն ծիծաղը. միշտ նրան շրջապատած էին ընկերները մեծ ու փոքր, խօսեցնում, լսում էին, պատկառոտ սիրով ամէն մէկը պատրաստ նրա յետին քմահաճոյքը կատարելու:

Եւ այդ ժամանակ Անդրանիկ կուսակցական էր, եւս առաւել, որ հանդստեան շրջան էր ապրում, պաշտամունքի քնքուշ մթնոլորտում: Ոչինչ ունէր ակտիւ, որ պատճառ դառնար անհամաձայնութեանց կամ վէճերի: Պարիզ անցաւ, մեր ֆրանսացի բարեկամների հետ տեսուեց, հիացմունք յարուցանելով ամէն տեղ իր բաց սիրտ շարժումներով ու զրոյցով. Քիյար, Պրեսանսէ, Ժորէս հետազայում յաճախ էին այս զարմանալի մարտիկի գովքն անում:

Անդրանիկ կախարդել էր ամէնքին:

Ժրնեռից անցաւ Բուլղարիա, ապա՝ 1907 թվին մասնակցեց Մուրատի հետ Դաշնակցութեան Դրդ (Վիեննայի) համաժողովին: Եւ ինչ որ շատ բնորոշ է, բնաւ չբողոքեց, երբ Դաշնակցութիւնը հաստատեց իր արդէն իսկ որդեգրած ընկերվարական նախագիծը: Դաշնակցութիւնից դուրս գալու գուցէ լաւագոյն առիթն էր այս պարագան Անդրանիկի համար, բայց բնաւ նրա փոյթը չէր. նա գոհ էր, որ կուսակցութիւնը հաստատապէս յարած է մնում թիւրքաց Հայաստանի ազատագրութեան գաղափարին. մնացածը նրա համար անարժէք էր:

Եւ Անդրանիկ մնաց 1907 թվի համադումարից յետոյ եւս եռանդուն ու հաւատարիմ Դաշնակցական:

Այնուհետեւ նա նորէն անցաւ Բուլղարիա, ուր աշխատեց փոքրիկ տնտեսութիւն հաստատել, ինչպէս հոռմայեցի Յինցի-նատիւս, մինչեւ վրայ հասաւ նախ Բալկանեան, ապա համաեւրոպական պատերազմը:

Սկսւում էր Անդրանիկի կեանքի մի նոր ռազմական ու աշխօտի շրջանը:

Բալկանեան պատերազմին նրա կատարած փայլուն դերը բուլղարական բանակում քաջածանօթ է: Եւ այստեղ նա գործեց իբրեւ Դաշնակցական:

Հասաւ 1914 թուականը. Անդրանիկ անցաւ Կովկաս՝ համազգային քանկութեան ընդառաջ երթալով: Հայութեան բախտորոշ օրերն էին սկսւում ծագող մեծ պատերազմի հետ: Սասունի արծուի առջեւ սաւառներու անծայրածիր հորիզոններ էին բացւում:

Եւ ահա նախ կամաւորական խմբի պետ է Անդրանիկ, ապա՝ մի ամբողջ դիւլիլիոնի: Միւս կողմից՝ Դաշնակցութեան դերն ու ազդեցութիւնն ահագին է եւ Ազգային Բիւրոյի մէջ, որ ղեկավարում է կամաւորական զնդերը, եւ հետազային

Ազգ. Պորհրդի մէջ, որ 1917 վերջերից վարում էր Հայկական նորակազմ բանակը Թիւրքական արշաւի դէմ:

Այստեղ առաջին անգամ Անդրանիկ իրապէս պիտի Հաշուի առնէր իր կուսակցութեան կեդրոնի կամքը եւս առաւել, որ իրեն վիճակուած դերերը միշտ պատասխանատուններից էին: Անդրանիկին շատ մօտիկից ճանաչելով՝ ես բնաւ չզարմացայ, երբ նա դժուարանում էր իր կամքը ճկել կուսակցական կարգապահութեան տակ, մանաւանդ, երբ զօրավար դարձաւ: Սասնոյ լեռնականների իշխանը, Անդրանիկ փայան էր, որ այլեւս ուրիշ կամք չէր ճանաչում, բացի իր սեփականը:

Դժուարացաւ ճկուել, քանի որ իր կեանքում նա երբեք որեւէ կարգապահութեան ենթարկուած չէր: Եղած զօրեղ անհատականի եւ նոյնքան Հզօր կամքի տէր, իր ռազմական Հազարազիտ տաղանդին գիտակից, ժողովրդի անսահման սիրուն ու Հաւատին յենուած, Անդրանիկ չէր կարողանում Հանդուրժել որեւէ Հեռաւոր Հակակշիռ իր շարժումների ու ծրագրերի վրայ: Եւս առաւել նա ըմբոստ էր Ազգային Բիւրոյի, ապա՝ Ազգ. Պորհրդի դէմ, քանի որ այնտեղ նստած էին, ինչպէս ինքն էր որակում, «ղանազան վարժապետներ, եւ ոչ կարող զինուորականներ»: Անդրանիկ առհասարակ քնքշութիւն չունէր դէպի մտաւորականութիւնը, ու չէր կարողանում Հանդուրժել, որ Հայդուկային կոխներ չարած, Սասնոյ լեռները չչափչփած մարդկանցից պիտի կախումն ունենայ իր գնդի ո՛չ միայն պարենաւորումն ու զինուորումը, Հապա եւ նրա շարժումը:

Ձէ՛ որ Սասունում այդպէս չէր, նա միահեծան զինուորական ու քաղաքական պետ էր այնտեղ. նրա մտածումներից միշտ վրիպեցին այդ օրերի ահազին քաղաքական դժուարութիւնները, երբեք չըմբռնեց իր թրի ուժից դուրս ուրիշ որեւէ գործօն:

Դեր կատարեց այդտեղ ե՛ւ անգլիական զինուորական միսիոնի շեֆ գնդապետ Պայկ, որ ճգնում էր Անդրանիկին կովկասահայութիւնից անկախ, եզակի դեր տալ եւ ձեռքի տակից պատրաստում էր կովկասահայ Ազգ. Պորհրդի կողքին արեւմտահայ Ազգ. Պորհուրդ, որին եւ շտապեց յատկացնել իր ամբողջ նիւթական աջակցութիւնը: Դեր կատարեցին նաեւ Անդրանիկին շրջապատող որոշ անձինք, որոնք նրա ժողովրդականութիւնը վաճան դարձրած՝ ճգնում էին արեւմտահայ ուրոյն դատի անունով երեւան գալ: Այսպիսի Հիւանդոտ մթնոլորտում, սակայն, Անդրանիկ տեսաւ իր բացարձակ անկախութեան Հեռանկարը, որպէս Թիւրքահայերի շեֆ եւ առաջնորդ մեծ ջանք թափեց Ազգ. Պորհուրդը, որպէսզի Անդրանիկ գէթ ընդհանուր Հրամանատար զօր. Նազարբէգեանին Հնազանդութիւն: Ձեւ կարող ասել, թէ լիապէս յաջողեց:

Եւ Անդրանիկ մնաց ու գործեց գրեթէ միշտ ինքնազուխ:

Ես, որ այդ շրջանին շատ պատասխանատու դեր եմ ունեցել Ազգային Պորհրդի մէջ, շատ մօտիկից դիտել եմ Անդ-

բանիկի դժկամակ շարժումները, կարող եմ վստահորեն ասել, որ երբեք չեմ հասկացել, թէ ինչ սկզբունքային հարցեր են զատել Անդրանիկին իր կուսակցական վարիչներից:

Այդ շրջանում յաճախ եմ տեսել Անդրանիկին խոսվկան վիճակում, գրեթե մեղամաղձոտ ու ջղայնոտ, խօսել եմ հետը, հարց ու փորձ արել, լսել եմ իր տրտունջները՝ եղբոր քնքշութեամբ, լսել եմ իր անմար ցասումը «վարժապետների դէմ» ու մինչեւ վերջը չեմ կարողացել որեւէ լուրջ պատճառ գտնել իր ցրտութեան՝ ընդդէմ Դաշնակցութեան եւ նրա ղեկավարների:

Աւելին կ'ասեմ, լսելով իր կծու արտայայտութիւնները, իր յայտուն յարձակումները այս կամ այն անձի հասցէին, միշտ էլ մնացել եմ այն համոզման, որ Անդրանիկ անգիտակցաբար ինքն իրեն է քննադատում: Նա չէր ըմբռնում, որ իր մաղձն ու դառնութիւնը նրա համար չէ, որ իրօք նրան նեղում են կամ խանգարում – եւ նրան ոչ ոք չէր նեղում ու խանգարում, այլ լոկ նրա համար, որ կար մի կուսակցութիւն, մի մարմին, մի Ազգ. Խորհուրդ, որ ի հարկին կարող էր նրա այս կամ այն քայլը հակակշիռի տակ առնել. նա իրեն տեսականապէս ազատ, ինքնազուիս չէր զգում, եւ այս մտածումը նրան պահում էր մշտական ջղայնութեան մէջ:

Որեւէ հակակշիռի, որեւէ պատասխանատուութեան զգացումը նրան խորթ էր եւ բախում էր նրա բուն, տիրական խառնուածքին:

Կուսակցութեան չէր կարող տոկալ Անդրանիկ, թէեւ ոտքից դուրս Դաշնակցական էր: Աւելին կ'ասեմ. նա կուսակցութիւն բնաւ չէր էլ հասկանում, աւելի եւս պետականութիւն, որի մասին շատ թիւր ըմբռնումն ունէր:

Պարտիզանական կռիւների աննման ու ինքնակամ մարտիկը 1917-19 եղբրական օրերի քաղաքական անցուղարձների մէջ պարզապէս չմնլ էր եւ ի սպառ խեղդում էր մթնոլորտի թանձրութիւնից:

Եւ թողեց Դաշնակցութիւնը, կարծելով, թէ այսպիսով իր դրութիւնը կը պարզուի ու կը հեշանայ: Ընդհակառակը, իր կացութիւնն աւելի խճճուեցաւ, բարդացաւ: Եւ իր շրջապատը ի սպառ վատթարացաւ: Պարզուեց միայն մի բան, որ Անդրանիկները, երբ մանաւանդ նրանք փաշա են ու զօրավար, կուսակցական շրջանակի մէջ չեն կարող պարտկուել:

Լսած եմ, որ գրեթէ նոյնն է եղած եւ Պարսկաստանի մեր նշանաւոր Եփրեմ Խանը: Նոյն խառնուածքն ունէր եւ Խրիմ-եան Հայրիկ:

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՒ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Այս երկու ականաւոր Հայ գործիչները –Անդրանիկ եւ Ռիմեան– Հակառակ իրենց միանգամայն տարբեր ասպարէզներին, ասպիւնացիչ նմանութիւն ունին:

Նախ իրենց ճակատագիրները:

Երկուսն էլ Հայ ժողովուրդի ծոցից ծնուած, նրա անհուն սիրով վառուած, եւ նրա պաշտամունքի առարկայ. մէկը Վասպուրականի արծիւ է, եւ միւսը՝ Սասունի. երկուսի էլ գովքը երգում է Համայն Հայոց աշխարհում անթիւ երգերով: Եւ իրենց գրեթէ միօրինակ ընդվզումը թիւրք բռնապետութեան դէմ, յեղափոխական խառնուածքը, մահի արհամարհանքը, անսահման արիւթիւնն ու անձնուրացութիւնը նրանց դարձրել են Հայ ժողովրդի կուռք: Իրենք էլ միշտ ժողովրդի մէջ են, ժողովրդի հետ եւ ապրում են միմիայն նրա Համար:

Եւ ահա այս փայլուն ու չքեղ փառքով բեռնաւորուած՝ իրենց կեանքի վերջին՝ մէկը դառնում է Ամենայն Հայոց Կաթողիկոս, եւ միւսը՝ Հայ նորակազմ բանակի զօրավար: Երկուսն էլ Հայ ժողովրդի կեանքի ամենաալեծով, ամենաեղբարական շրջանում:

Ու կարելի է ասել սրտի ցաւով, որ մէկի կաթողիկոսութիւնը եւ միւսի զօրավարութիւնը ո՛չ միայն ոչինչ աւելացրեց իրենց երէկի փառքին, Հապա եւ երկսով էլ իրենց այդ բարձրաստիճան օրերին կանգուն ու ժողովրդական մնացին Հին օրերի իրենց կերտած պատուանդանով: Վասպուրականի արծիւն էր Հովանաւորում Ռիմեան կաթողիկոսին եւ Սասնոյ արծուի յաղթ թեւերի տակ էր շարժում զօրավար Անդրանիկ:

Այսքանը նկատենք իբր զուգադիպութիւն, մի տեսակ բախտի խաղ. կայ սակայն Հոգեբանական եւ խառնուածքի նմանութիւն, որ այս գինուորականին եւ միւս Հոգեւորականին դարձնում է ասես երկուորեակ: Եւ մէկը միւսից սքանչելի խօսակից է, աննման պատմող՝ Հարուստ, գունազեղ երեւակայութեամբ: Երկսով էլ սիրում են խոնարհ ժողովուրդը, շինական վաստակաւորը կրքոտ սէր, գրեթէ պաշտամունք ունի Մուշ-Սասունի Համար:

Ինչ որ կուսակցութիւնը Անդրանիկի Համար է, նոյնն է եկեղեցական դասը Ռիմեանի Համար: Երկսով էլ մի տեսակ կոկետութիւն են դնում իրենց պայքարի մէջ այն դասի դէմ, որին պատկանում են իրենց Համոզումներով, իրենց զաղափարական կառուցուածքով:

Ռիմեան մշտապէս պայքար ունի եկեղեցականների դէմ, հեղնում ու արհամարհում է ամէնքին անխտիր. կծու ծաղր ունի մասնաւորապէս անուն Հանած բարձրաստիճան Հոգեւորականների դէմ, ինքը լինելով Համոզուած ու Հաւատաւոր եկեղեցական եւ Հաւատարիմ պաշտօնեայ Հայաստանեայց եկեղեցոյ: Մի զարմանալի ու ծպտուն Հակաաստիճեամբ, որ

այս մեծ մարդուն էր յատուկ, Նորմեան ուրիշ մէջ հեղնում էր այն, ինչ ինքն էր անում: Էջմիածնի եպիսկոպոսները աօնական օրերին, երբ ստիպուած էին կաթողիկոսին շնորհաւորանքի երթալ, սարսափով էին բարձրանում վեհարանի աստիճանները. գիտէին, որ իւրաքանչիւրի արտաքինը կամ ներքինը կաթողիկոսի սրամտութեան կամ կծու հեղնութեան նիւթ պիտի դառնայ:

Նորմեան մի տեսակ տենդ ունէր սրախօսելու ու հեղնելու այն, ինչ հեռաւոր ձեւով կարող էր իր շարժումներին կաշկանդիչ նկատել. ճիշդ ինչպէս Անդրանիկ, անարգում էր իր այն ընկերներին, որոնցից ենթադրում էր, թէ որեւէ կախումն կարող էր ունենալ: Երկսով էլ մի տեսակ անփառասէր փառասէրներ էին՝ առանց գիտակցելու: Եւ անարժաթ արծաթասէրներ՝ քանի որ դրամը արհամարհելով հանդերձ՝ մշտապէս պէտք ունէին դրամի, պարզապէս սրան-նրան ու կարիքաւոր զիմողներին, կարիքաւորներին առջեւ դատարկաձեռն չմնալու համար:

Այսպէս էր Նորմեան, այսպէս էր եւ Անդրանիկ: Հեղնել եւ ծաղրել ամէնքին եւ ամէն ինչ: Երկսով էլ ըմբոստ ամէն մի հակակշռի դէմ, ինքնազուխ, ուժեղ անհատականութիւններ, եւ անպայման հնազանդութիւն պահանջող ուրիշներից: Եւ երկսով էլ մի դժբախտ զուգադիպութեամբ գրեթէ միշտ չրջապատուած ամենաձախող, ամենավտանգաւոր խորհրդականներով:

Անդրանիկ իր զօրավարութեան շրջանին շատ վրիպումներից պիտի գերծ մնար, եթէ նրա կասկածելի շրջապատը չստեղծէր նրա մեծ անուան շուրջը հիւանդոտ հատուածական միջնորդութիւն:

Բարեբախտաբար եւ Նորմեանի, եւ Անդրանիկի համար իրենց անցեալի բարոյական հարստութիւնն այնքան մեծ էր, որ դիմացաւ մէկի զօրավարութեան եւ միւսի կաթողիկոսութեան ցաւալի վրիպումներին:

Եւ Նորմեան եկեղեցականութիւն եւ վեղար հեղնելով մնաց ո՛չ միայն մեծ Հայրենասէր, այլեւ՝ մեծ եկեղեցական:

Անդրանիկ կուսակցութիւն եւ կառավարական ընկերներ նախատեսելով ու անարգելով մնաց միշտ Դաշնակցական:

Եւ մեռաւ Դաշնակցական: («Հայրենիք», 1927 Պեկտեմբեր):

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Ա. Երկաթ

ԱՆԴՐԱՆԻԿ

«ՍՈՒՐԲ ԱՆՈՒՆԴ ՊԻՏԻ ՅԻՇՈՒԻ ԴԱՐԷ ԴԱՐ»

Ո՛չ մէկ անգամ ժամանակը լռութիւն պիտի ըլլայ քեզի
համար.

Ո՛չ մէկ ծաղիկ պիտի թառամի այն պտակին մէջ,
Ջոր քու ցեղդ հիսած է լուսսենդ ճակտիդ շուրջ:

Ո՛չ մէկ բառ պիտի ջնջուի այն երգէն,
Որուն արձագանգը յափտեան կը հնչէ
Հայրենի լեռներուն վրայ:

Դուն կրակն ես՝ որ հորիզոնէ հորզոն
Մեծաթաւոյ հրդենի մը պէս կը ծաւալի:
Դուն կոթողն ես՝ որուն դէմ կը շառաչեն ամբօտքը
մեծադղորդ՝

Առանց երբեք քու պարօտանդանդ շարժելու,
Ո՛վ հերոս, ո՛վ սրբազան խենթութեամբ գրանատը
մարտիկ...

Ես, անժաման ուխտաւորը շիրմիդ,
Անա՛ ծնրադիր եմ խորճողագգած երկիւղածութեամբ:
Իմ կեանքիս վերջալոյսը կը մոխրանայ.
Բայց յաւերժութեանդ արշալոյսին եմ ծարաւի.
Եւ շրթներս՝ որ երբեք չեղան երդմնադրում,
Բացարձակ համբոյրը կը դռշմեն քարին,
Որուն փակ աճիւնդ է ամփոփուած,
Ո՛վ հայրենակարօր ննջեցեալ...

Ես ձեռնունայն եմ ահա՛,
Բայց հոգիս առջուն է պաշտօնի զմայլանքով:
Դուն զիս կ'ընդունիս թեաքաց հայրութեամբ,
Եւ քու խօսքերդ պարգաւներ են հրեղէն,
Որոնց հերեւելով՝ պիտի գիտնան մահը նուաճել
Մերունդները ուխտագնաց...

Դուն առասպելական հերոսի գրանն ունէիր
Թշնամիին հարուածներում դէմ.
Եւ սպիտակ երիվարդ լուսաթել
Երկնքի դաշտերուն մէջ կը սնանէր աստղերու ցորենով...
Յեղին սրբէն բխած
Յատումի զայրալից շառաչով

Դուն մեղեցիկ անեղաձայն.
Արդարը պատասխար գտաւ սուրիդ փայլակին մէջ,
Եւ արցունքը որդին ու այրիին
Հոգիիդ թեւերուն վրայ ծանրացաւ...

Երգը չի խաբէր.
Երգը վճիպ արցունքն է սրտին.
Երգը արիւնն է խնկարոյր վարդերուն,
Հայրենի ակութեան կրակն է հրաբորբոք.
Երգը երդումն է անդրժեյի,
Եւ համբոյրը յաւիտենական սիրոյ
Երգը ճշմարտութիւնն է սրբազան.
Պատգամն է աստուածներուն հայրենի,
Եւ օրէնքը մարդոց.
Երգը կեանքին յաղթանակն է մահուան դէմ.
Աղամանդեայ մուրճն է անմահութեան խօսքը քանդակող.
Երգը մորիկն է՝ որ կը բարձրանայ մեծաշառաչ
Եւ անունիդ սրբութիւնը կը փառաբանէ
Դարերու ժամանակին մէջ անվախճան...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

Քաղին

«ԵՍ ԱՆՂՐԱՆԻԿԻ ԶԻՆՈՒՈՐՆ ԵՄ»...

*«Նայիր աչքերիս. ես Անդրանիկի զինուորն եմ.
վաթ քան անես, գյուխդ կը կորեմ»:*

Հայաստանի երիտասարդ եւ ամէնէն աւելի օժտուած արձակագիրներէն մէկուն մէկ վիպակէն արտագրած ենք այս պարբերութիւնը: Պարզ արտայայտութիւն մը, որ բնորոշ է սակայն, տրուած ըլլալով, որ կու գայ Արարատեան աշխարհէն:

Կը թուի, թէ Հայաստանի մէջ մարդիկ սկսած են մերթ ընդ մերթ բնականոն պայմաններու մէջ շնչել եւ Հպարտութեան արդար պատճառներով Հարստացնել իրենց լեզուն ու հոգին.

– «Ես Անդրանիկի զինուորն եմ»...

Գիտենք, թէ ինչպէս, տառապագին ինչ սպասումներէ ետք ընդունուեցաւ Հերոսը Հայրենիքի մէջ, Հայրենիքին կողմէ: Ինչ ահաւոր տրամաներու դուռ կը բանար անոր անունին յիշատակութիւնը երէկ եւ ողբերգական ինչ վախճաններու կ'առաջնորդէր ենթական:

Մեր երեւակայութեան ուժ տալով չէ, որ այս բառերը քով քովի կը դնենք: Ի մտի ունինք արձանագրուած փաստերը, որոնց Հիման վրայ, մարդիկ, մե'ր Հայրենիքին մէջ, այդ Հայրենիքին ամէնէն պանծալի անձերուն յարգանք ընծայող ուրիշ պանծալի դէմքերը դատի կը քաշէին, արիւնոտ ու անվերաքննելի վճիռներ արձակելով անոնց դէմ:

Մանօթ էք Հարկաւ Հայ մտաւորականութեան երկրորդ Ապրիլ 24ի նախօրեակին խմբագրուած դատական թղթածը՝ բարներուն: Այսուհանդերձի շահեկանութենէ զուրկ չ'ըլլար աչք մը եւս նետել Հետեւեալ Հատուածին վրայ.

– «Դաշնակ Բախունցը եւ ուրիշներ, Ռանջեանի ցուցումով, աշխատում էին անցկացնել իրենց Հակայեղափոխական դրութիւնները: Նրանք պահանջում էին, որպէսզի կինոն բանւորների եւ զիւղացիների յեղափոխական կռիւն արտայայտող կինոնկարների փոխարէն՝ ցուցադրի դաշնակ աւանտիւրիստների յարձակումն Օտոմանեան բանկի վրայ, առաջարկում էին կինոնկար պատրաստել Հակայեղափոխական դաշնակ-խմբապետ Անդրանիկի մասին»:

Այսպէս էր երէկ ու ահաւոր էր երէկ «Հակայեղափոխական դաշնակ-խմբապետ Անդրանիկի» գործունէութիւնը գնա-

Հատելու կամ անոր անունով երդում ընելու ամէն փորձ: Այդպէս չէ այսօր, բայց համայնապարական է դարձնալ Անդրանիկը արժեւորելու չափանիշը: Այսինքն՝ առողջ չէ, շահախնդրական է, մո'ւթ: Պայմանադրական ուրացումները կրկնելուց ան հոս եւս, պատմական խեղաթիւրումներ եղան եւ անհեթեթութեան վրայ հիմնուած անհեթեթ Հրապարակագրութիւն մը հեղեղեց եւ տակաւին կը շարունակէ հեղեղել Հայաստանի եւ ուղեկից թերթերուն սխնակաները:

Քառասուն տարի շարունակ իրենց ուրացումներուն եւ երեսուն տարի առաջ կատարած Հաստատումներուն արամազծօրէն հակառակ բաներ կ'ըստին հիմա: «Հակայեղափոխական դաշնակ-խմբապետ Անդրանիկ»ը հրաշխք իմն փոխուած է այսօր ու կը ներկայացուի իբրեւ հակադաշնակցական մարդ, Դաշնակցութենէն երես դարձուցած մարդ, Ռուսաստանի ուղղութեան կողմնակից, ռուսասէր, քիչ կը մնայ կոմունիստ...

Մարդ մը իր մթնոլորտէն դուրս բերելէ ետք զայն արժեւորելու նոր չափանիշ մը կայ հիմա, որ դարձնալ մեր Հայրենիքին վրայ ճշող բիրտ ուժին նուէրը եղաւ մեզի: Դէմքի մը դիմագիծը կազմող Հարազատ գիծերը խորտակելէ ետք՝ կ'ուզուի, որ անոր փակցուած դիմակը իբրեւ ճշմարտութիւն ընդունինք: Այսպէս եղաւ նաեւ Անդրանիկի պարզային: Իր անդրանկութենէն անջատելէ ետք միայն մարդիկ սկսան հոլովել իր անունը:

Ասոնք անհասկնալի երեւոյթներ չեն սակայն: Ժամանակակից կեանքի իրողութիւնները խարդախողներ միշտ պիտի գտնուին: Մէկը սնանկութիւն մը դարձանելու Համար, ուրիշ մը՝ փայլ մը ստանալու Համար, երրորդ մը՝ ուրիշ բան, չորրորդ մը՝ ոչինչ ստացած ըլլալու վրէժը լուծելու քինախնդրութեամբ: Պիտի գտնուին: Ճշմարտութիւնը չի կրնար արգիլել այս կարգի ապականութիւններուն գործունէութիւնը: Այսուհանդերձ ըսենք, որ առանց Անդրանիկի Դաշնակցութիւնը կար, եղաւ, կա՛յ, բայց առանց Դաշնակցութեան անկարելի պիտի ըլլար Անդրանիկի մը ծնունդը: Դաշնակցութեան ստեղծած ոգիին, մթնոլորտին, պատրաստած «արի այրերուն» ու Հայթայթած անհուն միջոցներուն շնորհիւ էր, որ Անդրանիկ կրցաւ դրսեւորել իր հերոսական խառնուածքը եւ անդրանկանալ: Հանեցէք Անդրանիկը այս մթնոլորտէն դուրս ու արդէն Անդրանիկ չի մնար: Կը մնայ սոսկական անձ մը: Կը մնան սոսկական անձի մը անշահեկան վերիվայրումները:

- «Ես Անդրանիկի գինուորն եմ»...

Ո՞ր Անդրանիկին, Դաշնակցութենէն երես դարձուցած Անդրանիկին, թէ՛ անոր, որ Դաշնակցութեան փամփուշտները խաշկալ կապած ու ֆետայիներու հետ թեւ թեւի իբրեւ արծիւ կը սաւառնէր լեռ ու դաշտ: Միծաղելի է անշուշտ նման Հարցում մը ընել, որովհետեւ ըսինք արդէն, որ Անդրանիկը Անդրանիկ էր իր գէնքով, սուրով, ֆետայիներով, բանակով, Դաշ-

նակցութեան մարտիկը եղած պահերուն, այդ շրջանին կատարած իր խոյանքներով դարձած էր դէմք, Հպարտութիւն ներշնչող անուն, խորհրդանշան: Այս է: Այնուհետեւ ոչինչ անել-ցուց իր անունին վրայ, որովհետեւ դարձ չունէր, իր միջնորդութիւն մէջ չէր, իբրեւ արծիւ սաւառներու պատճառները չկային:

Ճշմարտութիւնը այս է, Ժաշտալը՝ Հրապարակագրական որոմ:

Ու երբ ճշմարտութենէն վախ չունինք ու պատմութիւնը դիմելու դարձնող ուժի մը կարելիութիւնը Հաստատուած չէ տակաւին, մեզի կը մնայ սպասել ժամանակի արդարութեան: Քառասուն տարի արժեք մեզի, մինչեւ որ Հասկնան, որ Անդրանիկ Հակոբեղապետական աւանտիւրիստ մը չէ ու այդքան երկար սպասելու Հարկ պիտի չըլլայ, կը խորհինք, որպէսզի մարդիկ ջնջեն խաթարիչ վարդապետութենէ մը ժառանգ մնացած իրենց տխմարութեան միւս կէտը ու մարդանան:

Մենք կրնանք մոռնալ այս բոլորը ու վերադառնալ երիտասարդ արձակագրի Հերոսին, կարեւորին.

– «Ես Անդրանիկի զինուորն եմ»...

Էականը դրական Հերոսին այս Հպարտութիւնն է, վիպագրին մէջ ստեղծուած խանդավառութիւնը, ընթերցողը Հարազատ ապրումի մը Հաղորդակից դարձնելու պարագան: Հին կարօտները կը յազննան նման արտայայտութիւններով եւ նոր նկարագիրները կը կերտուին այս կարգի ոճերու մէջ: Կը բաւէ, որ Հայաստանի մէջ կան մարդիկ, որոնք Լենինը եւ Ստալինը մոռցած՝ Անդրանիկի անունով երդում կ'ընեն: Էականը այս է («Բազին», 1967, թիւ 7):

Քաղին

ԱՆԿԱՏԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ՝

«ՕՐԱԳԻՐ»Ը

...Շուշանեանական նոր թափ առած հետաքրքրություններուն դիմաց նախամեծար համարուեցաւ անմիջապէս ուշադրութեան յանձնել կատարուած նշումները, եւ նաեւ այն լատենտութեամբ, որ, ո՛վ գիտէ, թերեւս անոնց լոյսին տակ հնարատոր ըլլայ աւելի մանրակրկիտ ու բծախնդիր աշխատանքով մը դարձեալ լոյս ընծայել «Օրագիր»-ը, Շուշանեանի հոգիին հետ՝ այս անգամ յուրախութիւն նաեւ հովանաւոր Սրբազանին ու զոհաբերող մեկեւասներուն:



2000 թուականը մտնելէ առաջ, «Հայաստանի գրողների «Նոր-Դար» Հրատարակչութիւն»-ը, Շուշիկ Տասնապետեանի խմբագրութեամբ, լոյս ընծայեց Վազգէն Շուշանեանի «Օրագիր» անուն Հատորը, որմէ օրինակներ Հասան նաեւ Սիփուք եւ կարդացուեցան այնպէս՝ ինչպէս կը կարդացուին Շուշանեանի էջերը, - միակտուր խանդավառութեամբ:

«Օրագիր»-ը նոյն ոգեւորութեամբ նիւթ դարձաւ նաեւ մամլոյ մեր շարք մը անդամներուն եւ ընթերցողը նոյն Հետաքրքրութեամբ Հետեւեցաւ նաեւ արձանագրուած տպաւորութիւններուն:

Շուշանեան պաշտամունքի Հասնող՝ Համարում մը կը վայելէ գրասէր մեր Հասարակութեան մօտ եւ մարդիկ անոր անունով մատուցուածը թերի Համարելու որեւէ կասկած չեն սնուցաներ իրենց Հոգիին:

«Որագիր»ի պարագային, ցաւօք, առաջին տպաւորութեան պէս անստուեր շմնացին Հետագային պարզուած պատկերները:

Ոչ ոք, ու ամէնուն պէս նաեւ «Բագին»ը, մտքէ չանցուց բաղդատական ընթերցումի մը ձեռնարկել, այն վստահութեամբ անշուշտ, որ Հայաստանի Հրատարակչութիւններուն կամայականութիւնները յաղթահարուած են եւ ասպարէզին նոր գործօնները պատճառ չունէին կարմիր բարակներուն օրինակով անկատար գործեր ներկայացնելու ընթերցողին:

Մարդիկ վստահաբար այս պարզամիտ տպաւորութիւնը պիտի չներեն մեզի այս անգամ, երբ անդրադառնան, որ «Նոր-Ղար»եան փորձառութիւն մը ասպրած ենք ասկէ առաջ եւ այն ալ Շուշանեանի առիթով դարձեալ, Հետեւաբար պէտք է զգուշութեամբ մօտենայինք «Որագիր»ին:

Ակնարկը կը վերաբերի «Զաւէն Մանկունիի սէրերը» վիպակին, որուն վերահրատարակութեան առիթով կ'ըսուէր, որ «Տպագրում է առաջին անգամ», երբ նոյն գործէն Հոս-Հոն առանձին Հատուածներ երեւնալէ ետք, ամբողջութիւնը լոյս տեսած էր «Նայիրի» չարաթաթերթի էջերուն, յաջորդական 15 թիւերու մէջ, յիսունական թուականներու կիսուն:

Ու ճանչցուած ըլլալու Հանգամանքը «Նոր-Ղար»ի մէջ «Զաւէն Մանկունի» կրած միակ դժբախտութիւնը չէր, աւելի մեծ դժբախտութիւնը Հոն վիստացող վրէպներն էին, որոնք հեղ մը մատնանշուած են:

Անցնինք:

Կը պարզուի, որ «Նոր-Ղար»ի մօտ Վազգէն Շուշանեան բախտաւոր չէ եղած նաեւ «Որագիր»ին առիթով, որուն առկայ միակ աղբիւրը Հանդիսացող «Նայիրի»ին Հետ Համեմատութիւնը առաջացուց ահաւոր պատկեր մը, յաջորդականութեան խախտումներով թէ դուրս մնացած Հատուածներուն ցաւագին փաստերով:

Պիտի Հարցուի անշուշտ, եւ արդարօրէն, որ «Բագին» իր նախորդ Համարի «Լոյս տեսան» սիւնակին մէջ անդրադարձած էր խնդրոյ առարկայ Հատորին եւ որեւէ ակնարկութիւն չկար խախտումներու եւ դուրս մնացած Հատուածներու մասին:

Ճիշդ է, չկար:

Զկար սա պատճառով, որ «Որագիր»ը Հատորի մտնելէ առաջ մեր կողմէ կարդացուած էր քանի մը անգամ. թղթատեցինք նորէն, կարդացինք արագ, ուրախացանք շատ, որ Հայրենի ընթերցողին եւս պատեհութիւն կը տրուի կարդալ շուշանեանական նոր Հատոր մը, եւ այդքան, եւ «Լոյս տեսան»ի վրայ տրուեցան այդ տպաւորութեանց արձագանգները:

Զկար՝ եւ եղաւ Հետեւեալ պայմաններուն մէջ.

«Բագին»ի ներկայ թիւին էջերուն «Մարգ մը, որ Արաբատ չունի իր Հոգւոյն խորը» ծանօթ Հատորին նուիրած իր

գրութեան մէջ, Պէպօ Սիմոնեան անդրադառնալով այն վարկածին, թէ Շուշանեանէն առաջ Շահնուրի մեղքերը նոյն յանդգնութեամբ չեն մերկացուած ու Շահնուր անհաւելի մնացած է միշտ, կը գրէ.

«Ընդհանրապէս Շահան Շահնուր իտէալականացած է եւ լուսարձակի տակ չեն առնուած անոր սրբապիղծ ուրացումները մեր սրբութիւններուն եւ նուիրագործուած արժէքներուն նկատմամբ: Ոչ ոք համարձակած է կարծէք Վազգէն Շուշանեանի յախուռնութեամբ - չքածնելով իր ծայրայեղութիւնները՝ դատել, կշռել դրագէտի մը ազգային եւ գրական սայթաքումները»:

Պէպօ Սիմոնեանի սոյն պնդումին առիթով յիշեցնելու համար, որ օրին դանուած է մէկը, որ ամբողջ Հասակով ծառացած է Շահնուրի թող տուած ուրացումներուն ու պղծութիւններուն դէմ, մեր տրամադրութեան տակ դրուած յօդուածին առիթով դարձեալ քացիներ երեւանեան «Արագիւր»ը, ուր պէտք է ուրուանկարուած ըլլար Շահնուրի սանձարձակութեանց դէմ ծառացողը, Վ. Պաժակ, Հանրայայտի անունով՝ Անդրանիկ Մատուկեան, որուն Հանդիպած էինք օրագիրներուն առաջին հրատարակութեան մէջ, «Նայիրի»ի էջերուն, եւ քառասունէ աւելի տարիներ առաջ:

Առիթով մը ուշադրութեան յանձնած էինք Վ. Պաժակի ծառացումներէն կարգ մը Հատուածներ: Կրկնութիւնը աւելորդ չէ հոս: Վ. Պաժակ ի միջի այլոց կը հարցնէր.

«Ո՞վ է այս մարդը, ուրկէ՞ կու գայ, ո՞ւր կ'երթայ: Կը կոչուի Շահնուր Քերեսթէճեան, գրական անունով՝ Շահան Շահնուր: Տասը տարի առաջ գիրք մը հրատարակեց - «Նահանջը առանց երգի»: Կարդացուելիք գիրք մըն էր: Կարգացին: Հաւնեցան: Քաջալերեցին: Հրատարակեց երկրորդ գիրք մը՝ - «Յարալէզներու դաւաճանութիւնը»: Այս անգամ յաջողութիւնն էր, որ դաւաճանեց իրեն: Վրիպած գործ մըն էր: Ինքնատիպ ըլլալու ճիգը ունեցող պատմութիւններ, տեղ-տեղ գրեհիկ, ամբողջութեանը մէջ զանցառելի: Ատեն մը լոնց: Ըսին թէ Հիւանդ է: Ապաքինում մաղթեցին եւ սպասեցին: Շատ սպասել չտուաւ սակայն: Իր գոյութիւնը զգացուց զգուելի գրութեամբ մը, որուն մէջ կը նախատուէր նահատակ գրագէտ մը՝ Ռուբէն Զարգարեան»:

Վ. Պաժակի նոյն գրութենէն, որ «Իմացական վիժանք» խորագիրը կը կրէ, ահաւասիկ ուրիշ Հատուած մը.

«Սկսաւ Հայհոյել բոլոր այն մեռած գրագէտներուն, որոնք ապրող ժառանգորդ չունին -կարծե՛ց թէ չունին իր ծածրակին Հասողութեան սահմանին մէջ: Եւ ահա՛ Վաւերաթուղթը, ուր իրենց գերեզմաններէն կը Հանուին բոլոր մեռելները, այս դիակապուտին ձեռքով: Ոնայուած չէ նոյնիսկ անոնց՝ որ գերեզման չունեցան: Նոյնիսկ անոնց՝ որ մահ իսկ

չեն կրնար ունենալ եւ անդամալոյծ ու կաթուածահար կ'ապ-
րին կեանքին ու մահուան միջեւ, փառքով չահուած ծերու-
թեան մը տխուր վերջալոյսը: Ձեռն խնայուած: Ու մենք պատ-
ճառ չունինք խնայելու իրեն: Իրեն մանաւանդ, որ ճղճիմ մէկ
կոտորակին արժէքն իսկ չունի սեւցնել փորձած զրազէտնե-
րուն» («Ազդակ», 1938, նոյեմբեր 30):

Իր «Օրագիր»ին մէջ Վազգէն Շուշանեան անդրադարձած
էր Վ. Քաթակի ծառացումներուն եւ մենք, ընթերցողին ցոյց
տալու համար այն իրողութիւնը, որ Շահնուր իր ուրացումնե-
րուն ու պղծութիւններուն մէջ միահեծան ու անհպելի ներկա-
յութիւն մը չէր եղած մեր զրականութեան երկնակամարին
մէջ, դիմեցինք արագ միջոցին, բացինք երեւանեան «Օրա-
գիր»ը, եւ սկսանք փնտռել յիշեալ բաժինը:

Ի դուրս...

Կրկին ու կրկին դարձուցինք երեւանեան «Օրագիր»ին
էջերը:

Միշտ ապարդիւն մնացին մեր փնտռութիւնները:

Այն ատեն դիմեցինք օրագիրներու այս շարքին աղբիւրին՝
«Նալլիրի»ի հաւաքածոներուն եւ արագ բաղդատութենէ մը
ետք զարմանքով նկատեցինք, որ Շ. Շահնուր-Վ. Քաթակ բա-
խումբին անդրադարձող Շուշանեանի տուեալ էջը դուրս մնա-
ցած է երեւանեան «Օրագիր»էն, որ չաքաթաթեցիկէն (ե. տա-
րի, թիւ 7, էջ 9) արտադրուելով պէտք է տեղաւորուած ըլլար
էջ 147էն անմիջապէս առաջ, իբրեւ բնական շարունակութիւնը
146րդ էջին:

Գրական մեր խղճմտանքը կը հրամայէր, որ շարունա-
կենք բաղդատութիւնը, շարունակեցինք ու գտանք, որ երե-
ւանեան «Օրագիր»ը բժախնդիր աշխատանքի մը արդիւնք
հրատարակութիւն մը չէ ու կորսուած է ազուրդ առիթ մը, նոր
թէ վաղուան ընթերցողին շուշանեանական ամբողջական
գործ մը մատուցանելու առումով:

Պահ մը մտածուեցաւ ստացուած բաղդատական արդիւն-
քը վերապահել «Ինչպէս կը հրատարակուին մեր գիրքերը»
անուն ընդարձակ ու անտիպ մնացած նոթագրութեան մը մէջ,
բայց շուշանեանական նոր թափ առած հետաքրքրութիւննե-
րուն դիմաց նախամեծար համարուեցաւ անմիջապէս ուղադ-
րութեան յանձնել կատարուած նշումները, եւ նաեւ այն լաւա-
տեսութեամբ, որ, ո՞վ գիտէ, թերեւս անոնց լոյսին տակ հնա-
րաւոր ըլլայ աւելի մանրակրկիտ ու բժախնդիր աշխատանքով
մը դարձեալ լոյս ընծայել «Օրագիր»ը, Շուշանեանի հոգիին
հետ՝ այս անգամ յուրախութիւն նաեւ հովանաւոր Սրբազանին
ու զոհաբերող մեկենասներուն:

Լուկեայի հասկնալի եղաւ անշուշտ, որ Վ. Քաթակին ու
յարակից խնդիրներուն յատկացուած էջը միայն դուրս մնա-
ցած չէ երեւանեան «Օրագիր»էն, այլ նոյն դժբախտութեան
ենթարկուած է նաեւ յար եւ նման ուրիշ մը, որուն նախորդը

(էջ 6) ներս առնուած է, բայց ինքը (էջ 7) չքացած, որ «Նայիրի»էն (Ե. տարի, թիւ 20) արտագրուելով պէտք է տեղաւորուած ըլլար «Որագիր»ին էջ 233ին վրայ:

Ձիրենք կանխող էջերէն անջատուելով դուրս մնացած մեծադիր այս երկու էջերէն զատ, «Նայիրի»ի երեք տարբեր թիւերու զոյգ էջերը նոյնպէս, եւ միշտ տրամաբանութեան մէջ չտեղաւորուող վերաբերումով մը, դուրս մնացած են, յաջորդաբար՝

1.- «Նայիրի», Դ. տարի, թիւ 41-42, 1956, էջ 8-9:

2.- «Նայիրի», Դ. տարի, թիւ 51-52, 1956, էջ 6-7:

3.- «Նայիրի», Ե. տարի, թիւ 9, 1956, էջ 8-9:

«Նայիրի» իբրեւ առաջին ճաշակ, եւ խմբագրական նոթով մը 1955ի իր ծաւալուն բացատրիկին մէջ օրագիրներէն Հատուածներ լոյս ընծայած էր, ճիշդ այդպէս, «Հատուածներ», եւ ոչ թէ օրագիր-տետրակներէն մէկուն կամ միւսին առաջին էջերը, որոնք, տուեալ «Հատուածները», դարձած են երեւանեան «Որագիր»ին առաջին էջերը: «Որագիր»ը լաւ կ'ընէր անշուշտ, եթէ նախանձախնդրօրէն փնտռէր ու գտնէր առաջին տետրակին առաջին Հատուածը (Դ. տարի, թիւ 41-42), դոր Շուշանեան սկսած է 22 տողնոց յառաջաբանով մը, գրուած՝ «Տասը Հոկտեմբեր Հազար ինն Հարիւր քառասուն»ին, Իսի-Լէ-Մուլինս:

Դուրս մնացած այդ առաջին Հատուածին ու ամբողջին վրայ լոյս նետող յառաջաբանին ի յուշ, զարմանալ միայն կարելի է. թէ ինչպէս շարունակելի գրութեան մը Շար. 2ը կ'առնելի նոր Հրատարակութեան մը մէջ եւ Հրատարակիչները Շար. 1ը դուրս ձգելու չափ անփոյթ կը մնան:

Երեւանեան «Որագիր»ը իրենց առաջին էջերէն անջատուած երկու էջերուն ու երեք ամբողջական Հատուածներ դուրս ձգած ըլլալու մեղքով խոցելի չէ միայն, այլ վիրաւոր է նաեւ Հատուածներուն յաջորդականութեան խախտումներով:

Համառոտագրենք.

Դուրս մնացած երկրորդ ամբողջական Հատուածին (Շար. 6) յաջորդ Հատուածը (Շար. 7), որ նովին ըսելու կը պատկանէր օրագրութիւններու առաջին շարքին եւ պէտք է տեղաւորուած ըլլար երեւանեան «Որագիր»ի էջ 100ի մօտ տեղ մը, ցատկած ու մտած է «Գերմանական արշաւանքի շրջան» անուն շարքին մէջ իբրեւ անոր երկրորդ գլուխը (էջ 204-216), մինչ «Գերմանական արշաւանքի շրջան»ին երկրորդ եւ երրորդ գլուխները բերուած ու տեղաւորուած են օրագիր-տետրակներէն առաջին շարքին՝ յաջորդաբար 18-30 եւ 30-40 էջերուն, երբ, կրկնենք, ըստ առկայ միակ աղբիւրին, անոնք պէտք է երեւէին յաջորդող էջերուն:

Կրնայ ըսուիլ, որ եղածին մէջ դիտում մը չկայ:

Անշուշտ թէ չկայ:

կայ սակայն բան մը՝ աճապարանքը, աղբիւրներուն պակասը զգալէ ետք, անոնց յայտնաբերման համար թոյլ տրուած անփութութիւնը, որ ներելի վերաբերում մը չէ նման ծանրակշիռ ձեռնարկներու ատեն:

Աղբիւրները ստուգելու անփութութիւնը թող օղին մէջ նետուած ակնարկութիւն մը չհամարուի:

Նախորդ նշումներուն մէջ յատակօրէն տեսնուեցաւ այդ մէկը:

Ահա՛ եւ ուրիշ փաստ մը.

Երեւանեան «Օրագիր»-ի էջ 316-ի վերջին տողերէն մէկը, օրինակ, կ'աւարտի.

«Բազմերանգ ու հեղեղանման ձեր վարդերը...

«Վարդերը» կախման կէտով չի վերջանար ծանօթ աղբիւրին մէջ, կը վերջանայ վերջակէտով, որուն կը յաջորդեն «Յիշեցի քառակուսի դէմքով ու թուխ» բառերը ու գրութիւնը այս չորս բառերուն հետքէն կ'անցնի յաջորդ էջ («Նայիրի» Զ. տարի, թիւ 4, 1957, էջ 6-7):

«Հայաստանի Գրողների Միութեան «Նոր-Դար» հրատարակչութեան» պատասխանատուները փոխանակ գրութեան շարունակութիւնը ճարելու, դիմած են դիւրին ձեւին, յապաւած են վերոնշեալ չորս բառերը ու կախման կէտով մը վերջացուցած են գործը, «Օրագիր»էն դուրս ձգելով հետեւեալ պարբերութիւնները.

«...Ձեր պարտիզականը, որ կը բնակէր երկնքին մօտ, պարտէզին վերի պատշգամբ:

Այժմ ամէն ինչ հաւասար է հողին, պարտէզները աւերակ ու ծառերը լքուն: Ի՞նչ եղան մեր հողերը, որոնց հայելիին մէջ կը դողդոջին սարփինայի ու այծտերեւի ճիւղերը: Ու ձեր պարտէզը, ուր հայրդ իր տարիքին յոգնութիւնը կը մոռնար:

Կը վերջացնեմ առանց կարեւոր բան մը բաժնի ըլլալու: Կարեւորը, ահա՛ բառ մը, որ կը զայրացնէ զիս: Որովհետեւ այս դառն կեանքին մէջ՝ կարեւորութիւն կ'ընծայեն չնչին ու երկրորդական դէպքերու՝ որոնցմէ ո՛չ մէկ հետք, ո՛չ մէկ յիշատակ պիտի մնայ ու ընդհակառակն, չկամութեամբ կ'անդրադառնանք է՛ն հիմնական, է՛ն բաբախուն դրուագներուն. կ'ապրինք տենդագին աճապարանքով, առանց կարգի, չոսյլելով՝ մեղապարտ առատաձեռնութեամբ մը, մեր միակ երիտասարդութիւնը, որուն մոխիրին վրայ, վաղը, մեր տրամութիւնն ու ծերութիւնը պիտի զգանք» (Շարունակելի - 4), «Նայիրի» չաբաթաթերթ, Զ. տարի, թիւ 4, 1957, էջ 6-7):

Սիրելի է յուսալ, որ հետագային հաշուի կ'առնուին այս դիտողութիւնները եւ անձնանուններու ու տեղանուններու շուրջ ծանօթութիւններու լրացումով՝ Շուշանեանի «Օրագիր»-ը կարգալու իրական վայելք մը կ'ընծայուի ընթերցողին...

Վ. ՇՈՒՀԱՆԵԱՆ

ՕՐԱԳԻՐ

Ու երբեք ո՛չ ոք դատած եմ իմ պզտիկ շահերուս ատեն-
չութեամբ, ո՛չ ոքի վրայ յարձակած եմ անձնական նկատում-
ներով: Ամէ՛ն անգամ, որ լրագրութիւն ըրած եմ՝ ջանացած եմ
առաջնորդուիլ մեր Հաւաքական շահերէն: Զուտ անձնական
շարժառիթով ո՛չ ոք ատած եմ Հանրային կեանքի մէջ:

Ձկայ յօդուած մը, որ գրած ըլլամ անցելոյն մէջ եւ զոր
Հիմա մերժեմ ստորագրել: Ձկայ անձ մը, որուն վրայ յարձա-
կած ըլլամ առանց Հանրային լուրջ շարժառիթի:

Ու որքան յաճախ յարգած եմ ուրիշները, նոյնիսկ՝ երբ
յարգանքի արժանի չէին այլեւս, - խորապէս զգալով, թէ մեր
կեանքին անբնական պայմաններուն մէջ, Հարկ է ներել դիտ-
նայ, կարենալ աշխատելու Համար:

Այս խորհրդածութիւնները կ'ընեմ նշելու Համար Հոս
միջադէպ մը:

Սուրիոյ «Ազդակ»ին մէջ երբ Վ. Ռաժակ եւ Վազգէն Տէ-
րունեան ստորագրութեամբ յօդուածներ սկսան երեւիլ, - ջղուտ
ու քիչ մը յախուռն լեզուով մը, ծանօթներ կը ջանալին ինծի
վերագրել զանոնք: Անշուշտ շուտով պարզուեցաւ, թէ Հեղի-
նակը Ա. Մառուկեան անունով երիտասարդ մըն էր: Այն ատեն
ճարահատ, նոյն մարդիկը կ'ուզէին ենթադրել, թէ կը թղթակ-
ցիմ այդ երիտասարդին Հետ: Ի՛նչ որ ճիշդ չէր, ճիշդ չէ եղած
բնաւ ու ճիշդ չէ այժմ: Քանի մը տարի յետոյ նոյն երիտասար-
դը, ըստ իս արդար, կորովի, ուժեղ յօդուածներ ստորագրեց Շ.
Նարդունիի անթիւ, անհաշիւ ու անմիտ ճամարտակութիւննե-
րուն դէմ: Այդ յօդուածներուն յղացման մէջ եւս ո՛չ մէկ դեր
ունեցած էի, ո՛չ ուղղակի, ոչ ալ անուղղակի: Անշուշտ այն
ատեն իսկ կը գգայի, թէ Վ. Ռաժակ Նարդունիի վրայ կը յար-
ձակի, առաջնորդուած նաեւ այս վերջնոյն ինձ Հանդէպ ցոյց
տուած վերաբերումէն: Տխուր պատմութիւն մըն է ասիկա, որ
ջանացած եմ զրի առնել այլուր: Օգտուելով այն Հանգաման-
քէն, որ ես այլեւս ի վիճակի չէի իրեն պատասխանելու՝ Շ.
Նարդունի բառացիօրէն աղտեղի ու երկար գրութիւն մը
մրոտած էր «Երկունք»ի մէջ, ուր ի միջի այլոց կ'ըսէր նաեւ,
թէ մենք եթէ ընդունակ ըլլայինք զէնքով պայքարելու իրեն
դէմ, ինք պատրաստ էր, որպէս նախկին սպայ, մենամարտիլ
Հետս: Այժմ կը ցաւիմ, որ երկու լուրջ բարեկամներ, լուրջ եր-
կու ամիս զացին-եկան, որպէսզի այս պարոնը յարգէր իր
խօսքը: Թղթերուս մէջ է այս վերջիններուն կազմած ատենազ-
րութիւնը, ուր Շ. Նարդունի կ'երեւի իր իրական դէմքով:

Աւելի յետոյ Վ. Պաժակ յօդուածներու ուրիշ չարք մը ստորագրեց Շ. Շահնուրի հայատեաց ելոյթներուն դէմ: Ու Շահնուր եւս ուզեց ենթադրել, թէ ես դրդած էի զանոնք: Այդ յօդուածները մասամբ միայն կարդացած եմ: Այլ կարդացածս իսկ կը բաւէ բնելու համար, թէ՛ Վ. Պաժակի շատաչուն մտրակի հարուածները վրէժխնդիր ու արդար էին Շահնուրի սեւ երեսին վրայ: Որքան յաճախ, այդ յօդուածներու երեւումէն առաջ, Շահնուրին ըսած էի նոյն բաները: Որքան յաճախ կրկնած էի, թէ կը սպասէի, որ թերթ մը հիւրընկալէր յօդուածներս, զինքը հրապարակաւ պատժելու համար: Երբեք ծածկանունով լրագրութիւն ըրած չըլլալով՝ իրաւունք չունէի՝ յուսալու, որ մարդիկ բաւական ազնիւ կ'ըլլային կարծելու, թէ պէտք չունէի Վ. Պաժակին դիմելու՝ կարծիքներս պաշտպանելու համար: Արդարեւ, Շ. Շահնուրի մասին ի վերջոյ մտադրած աշխատանքս դրի առի «Սարդ մը, որ Արարատ չունի իր հոգւոյն խորը» խորագրին տակ: Պարսաւագիր մը, որ հրատարակուելու պատրաստ է երեք տարիէ ի վեր:

Հագիւ Վ. Պաժակի յօդուածները լոյս տեսած՝ Շահնուր գրեհիկ ու անստորագիր յօդուածիկ մը մրոտեց «Ապագայ»ի մէջ, ինձ դէմ ուղղուած: Կարդացի ու անցայ, առանց մեծ կարեւորութիւն մը ընծայելու միջադէպին:

Ու միայն վերջերս պարզուեցաւ, թէ ինչո՞ւ մարդիկ կը կարծէին, որ ես էի Վ. Պաժակը դրդողը: Մ. Պարսամեան նամակ մը ցոյց տուաւ ինձ Վ. Պաժակի կողմէ ուղղուած իրեն, ուր երիտասարդ գրագէտը համակրութիւն կը յայտնէր ինձ ու կ'ըսէր, թէ Նարդունիի չէր ներած դէմս փորձած անտեղի ու տմարդի յարձակումը: Այդ նամակը Պարսամեան կարդացած էր Ն. Գ. Բի մէկ նիստին մէջ: Ուրկէ այն հեքիաթը, թէ՛ Վ. Պաժակ Վազգէն Շուշանեանի «մարդն» էր:

Ինչն է որ Հոգիս չի ներել այս պարոններուն: Իրենց բոլոր պզտիկ դաւադրութիւններն ու նսեմ հաշիւները: Գիտէի անշուշտ, որ Շ. Նարդունի, Շ. Շահնուր եւ ուրիշներ իրենց կեանքին մէկ կարեւոր մասը կ'անցընէին թղթակցելով միւս գաղութներու երիտասարդ գրողներուն հետ՝ ո՛չ թէ եղբայրական հաղորդութեան մէջ ըլլալու անոնց հետ, այլ խնամելու համար իրենց համբաւը: Երբեք մտքէս չէ անցած նման արարքներու դիմել: Ձեռն թղթակցած նոյնիսկ Սուրիոյ տղոց հետ, գիտնալով հանդերձ, որ կը համակրին ինձ: Իրենց վերագրումները հետեւաբար անտեղի ըլլալէ զատ, վիրաւորական էին:

Ամէն մարդ ի՞ր փառքն ունի եւ ի՞ր արդարութիւնը, — եթէ անշուշտ որեւէ փառք կայ, որով կարենայինք չքաւորուիլ պզտիկ ժողովրդի մը կեանքին մէջ: Ինչո՞ւ այս պարոնները այդքան կ'աճապարեն խելու համար դասիններ, որ լոկ փշէ պսակներ են:

Ու ինչո՞ւ կը ջանան զիս չափել իրենց կանգունով: Ո՛չ Հոս, ո՛չ այլուր, ո՛չ նամակով եւ ոչ ալ ուրիշ ձեւով երբեւիցէ փորձած եմ զրական Համախոհներ, զինակիցներ կամ փոքրաւորներ որոնել: Այս սխալագործութիւնները կը ձգեմ իրենց:

Ինչ անբանաձեւելի գորովով է, որ չլթներս կ'արտասանեն Հետեւեալ երկու բառերը,- Մեր երկիրը:

Մտածել, որ չուրջ քսան տարիներէ ի վեր, անընդատ, մեր ժողովրդին ընդերքներէն նոր մանուկներ կ'ելլեն: Մտածել, որ այդ մանուկները ամէն օր կը մեծնան մեր լեզուին քաղցր բառերը իրենց չլթներուն վրայ, մեր լեռներուն շուքին տակ: Ինչ փոյթ, թէ անոնք կրնան մեզ լրվանթէն կոչել, եթէ վերջապէս յաջողինք վերադառնալ: Մենք որ վարժուած ենք տառապելու՝ կրնանք գուցէ ընդունիլ այդ յաւելուածական տառապանքը եւս,- Մենք որ ուրիշ փառասիրութիւն չենք ունեցած՝ բացի առաւելագոյն Հայեր ու յեղափոխականներ ըլլալէ: Ինչ փոյթ մեր Հաւանական օտարութիւնը՝ մեր երկրին մէջ իսկ: Միայն թէ այդ մանուկները կարենային չքեղօրէն մեծնալ, չնչելով մեր մեծ լեռներուն գումարթ Հողերը, կարենային մարդկայնօրէն ուռճանալ՝ վեր բարձրանալով, պլլուած կեանքի շալլ փէշերուն:

Ինչ փոյթ մեր Հաւանական ծերութիւնը՝ առանց սիրոյ եւ առանց փառքի: Ինչ փոյթ մեր անօրինակ աղքատութիւնը: Ինչ փոյթ բառերը, որով կրնան դիմաւորել մեզ,- Արտասահմանից եկած մի տարագիր: Միայն թէ տրուէր մեզի, վերջին անգամ մը, մեռնելէ առաջ, տեսնել իրենց գեղուղէշ Հասակները: Միայն թէ տրուէր մեզի գիտնալ, թէ կեանքը պիտի չարունակուի մեր ակօսներուն մէջ, թէ ամէն օր նոր մանուկներ պիտի ելլեն որոտուն երիտասարդութեամբ, թէ ծառերը պիտի պտուղ կապեն ու բամպակի արտերը վառին արեւին բորբ Համբոյրներէն:

Կեանքը պիտի կրնա՞յ արդեօք պարգեւել մեզի այս վերջին ուրախութիւնը: Մայիսի իրիկունով մը կենալ Արով-եանի սալայատակին վրայ, երբ Համալսարանի դռները կը բացուին՝ գուրս նետելու Համար ուսանողներու երամբ: Հո՞գ է միայն մեր փառքը, Հո՞գ է միայն մեր գեղեցկութիւնը:

Մեր երկիրը...

Դժուարաշնչութեան տազնապ, անքնութիւն:

Բարեբախտաբար զեռ կարելի է կարդալ, տազնապի ընթացքին իսկ: Յետոյ կէս-մրափի վիճակ մը:

Յիշատակներ, յիշատակներ: Կարծես թէ Հարիւր տարեկան եղած ըլլայի, կարծես թէ քանի մը կեանքերով ապրած ըլլայի:

Մեր քաղաքին գարունը,- որքա՞ն զօրեղ է իր յաճախանքը զեռ մարմնիս մէջ:

Առաջին ժողովները, որոնց քնքուշ թրթռացումները կը զգայ մարդ իր ասիերուն մէջ: Առաջին բզէզներն ու առաջին զատկամիջատները, առաջին լուիճներն ու առաջին մարախները: Ինչո՞ւ տարիներուն հետ մեր զգայարանքները եղկելիօրէն կը մաշին: Այժմ լոկ յուսահատ ակնարկով մըն է, որ կը դիտենք զարունը:

Վասնդի ի՞նչ կրնայ բերել մեզի այժմ այդ զարունը, որ ուրիշներուն համար այլեւս կը պայթի ցանկապատերուն վրայ:

Պ. Զ. որ ամուսնացած է եւ որ կէս-լուրջ կէս-կատակով կ'ուզէ զիս եւս ամուսնացնել: Կ'ըսեմ կէս-կատակով, որովհետեւ կը խօսի ժպիտը շրթունքին, ինք իսկ չհաւատալով, որ կրնայ համոզել զիս:

Ես եւս կը ժպտիմ, յետոյ կը խնդամ:

Թէեւ գիտեմ, թէ կատակ չէ ըրածը, թէ մէկը ի մտի ունի: Այլ երկուքս ալ կը զուարճանանք: Կը զգայ դուցէ, բնագոյաբար, թէ ծածուկ հաճոյք մը կը պատճառէ ինձ, տասը օրը անգամ մը, նոյն կէս-լրջութեամբ նոյն առաջարկը ընելով:

Այս անգամ սակայն իր կիներ եւս ներկայ է: Ու ան եւս չի հաւատար նման հաւանակութեան մը: Զուարթութեամբ կը կատակէ:

- Իրապէս տարօրինակ պիտի ըլլար կ'ըսէ,- Տիկին Շուշանեան, Տիկին Շուշանեան,- կը կրկնէ:

Ո՛չ, այդ երկու բառերը չեն յարմարիր իրարու:

Յետոյ լրջութեամբ դառնալով ինձ.

- Եթէ,- կ'ըսէ,- գիտնաք, որ երիտասարդ աղջիկ մը անկեղծօրէն կը սիրէ ձեզ...

- Օ,- կը պատասխանեմ անսիրտութեամբ,- երիտասարդ աղջկան մը սէրը վարդերուն պէս է՝ զարնան հետ կ'անցնի...

- Դո՛ւք ալ այդպէս կը մտածէք,- կ'ըսէ ցաւով:

Իսկ ես կը զղջամ այդ անմիտ բառերը արտասանած ըլլալուս համար: Բայց ուրիշ ի՞նչ կրնայի ըսել («Նայիրի», Ե. տարի, թիւ 7, 1966, էջ 9, Շար. 12):

*
* *
*

Տասնըննը Յունիս - Լորերներ (Ֆիլիսթեր)

Իրական, խորունկ, մթին Պրլթոն գիւղի մը մէջ գիշերելէ վերջ, ահաւասիկ հոս, Լորերներէի դպրոցին մէջ: Տղաքը կը ննջեն, իսկ ես մոմի լոյսով կը գրեմ այս տողերը: Ինչ արկածալից օր ու ինչ արկածալից գիշեր:

Հետիոտն մեր ելքը Սէն Պրիէօյէն: Զինուորական բեռնաշարժը, որ մեզ հաւաքեց ճամբուն վրայ: Նորվեկիայէն վերադարձող այդ զուարթ գինուոր տղան, որ Հազիւ Պրեսթի մօտե-

ցած՝ իջեցուց մեզ եւ զուարթ Հանդարտութեամբ մը քանդեց անգլիական այդ դեռ. նոր բեռնաշարժը: Գերմանացիները, որ կրնակալիս կը Հետեւէին, որ ժամ մը յետոյ մեր մեկնումէն կիսավայ կէն արդէն, Հագիւ քառորդ ժամ մեզմէ Հեռու: Յետոյ վերսահին այդ ճամբորդութիւնը մինչեւ Հոս, Հետիտոն բուռն արեւին տակ: Պրըթոն աղջիկները ճամբուն վրայ՝ որ ելակով լեցուն կողովներ կ'առաջարկէին անցնող գինաթող գինուորներուն եւ նաւազներուն: Դպրոցին տնօրէնն ու չորս ուսուցչուհիներ, որ Հաճութեամբ կը տեղաւորեն մեզ: Անոնցմէ մէկը գեղեցիկ, երիտասարդ կին մըն է, ամուսինը գինուոր: Անմիջապէս կը բարեկամանայ մեզի Հետ, ինչպէս միւսները:

– Այս գիշեր անկասկած Հոս են, – կ'ըսէ տնօրէնը, – բայց չեմ կարծեր, որ անհանգիստ ըլլալու պատճառ մը ունենանք... Կինները չեն ուզեր Համոզուիլ սակայն, տղաքը եւս: Յոգնած ալ են, ընթրիքէն յետոյ՝ կռճերու պէս կը ննջեն:

Լուսնկայ, քաղցր գիշեր էր: Մասրենիներու եւ վարդենիներու մէջ կորսուած դրան առջեւ ոտքի՝ երկարօրէն կը խօսակցէինք: Երկար ծանօթութեան մը Հարկ չկայ՝ ինքզինքդ ընտանի զգալու Համար նման մթնոլորտի մը մէջ: Ու թոչունները, որ անդու կը շաղակրատեն:

Ո՛չ, ննջել կարելի չէ: Հոգիս գորովով կը յիշէ Տինանի երիտասարդ աղջիկը, անոր գեղեցկութիւնն ու նուրբ հրապոյրը: Ճաշարանէն դուրս ելլելէ վերջ՝ վստահօրէն գիտէի, թէ կրնայի Համբուրել գինքը: Ու ո՛չ թէ որովհետեւ դիւրին աղջիկ մը կը թուէր, այլ ուրիշ, աւելի խորունկ պատճառաւ մը: Կեանքը նման Հանդիպումներ ունի, երբ երկու էակներ, նոյն յուզիչ վայրկեանները միաժամանակ կ'ապրին: Այդ պահերուն ամէն երջանկութիւն կարելի է:

Այժմ գիտեմ արդէն, թէ աղջիկ մըն էր, որ երբեք ընդունակ չի կրնար ըլլալ յետին գոեհկութեան խակ, աղջիկ մը՝ որուն մօտ ազնուութիւնն ու պարկեշտութիւնը ո՛չ միայն բնատուր, այլեւ գիտակից են: Երկար տարիներ պիտի յիշեմ զայն եւ սրտի անուշ սեղմումով մը, որ գիշերանց աՀա՛ երջանիկ զող մը կը պարգեւէ մարմնիս:

Քսան Յանիս (Լորեններ)

ԱՀա՛ այդ աղուոր առաւօտեան ճաճանչը, որ կիսաբաց դրան շեմէն կը սողոսկի ներս, տախտակամածին վրայ կը խաղայ, ասդին-անդին դրասանգներ կը հիւսէ ու փոշիի Հատիկները կը վերածէ ոսկեայ փշուրներու: Անշարժ կը դիտեմ զայն, այդ ոսկեզանակ շառաւիղը, մինչեւ որ պչրանքով կը մօտենայ ինձ, կը քսուի ծունկերուս, կը գգուէ կզակս:

Ու ողջ ամառը Հետը կը լենայ վրաս, կ'ոռոգէ գիս: ԱՀա՛ խոտի բարակ թելերը, որ ջնրմ արեւէն կը վառին, բարկ ու անուշ բոյրեր արձակելով, երիցուկի պսակները՝ որ անյազօրէն

կը խմեն օրուտն լոյսը, այլ կը պահեն շուշանային սպիտակութիւն մը: Ուրքան կենարար է արեւը:

Տղաքը գացին ծով: Առանձնութիւնս անուշ է: Դուռը կը բախեն:

Երիտասարդ ուսուցչուհին է:

- Կը ներէ՞ք,- կ'ըսէ,- զրքերս ու տեսարակներս հոս են: Գրասեղանս դեռ չեմ պարպա՞ր: Եթէ ձեզ չեմ խանգարեր...

Կ'ըսէ ոտքի ու կը դիտեն գինքը: Բաց գոյն չըջագոյնս մը հազած է, թեթեւ: Միջահասակ է ու բարեձեւ, գիրք մարմնով մը: Հարուստ կուրծքեր ունի եւ ոչինչ կ'ընէ զանոնք ծածկելու համար: Կուսական թարմութիւն մը ունի դէմքը: Աչքերը խոշոր են ու սեւ, մորթը ճերմակ, գանգուր վարսերը խարսեալ: Իր մերկ ու աղուոր քաղուկներէն կարելի է զգալ մարմնին չէն ու դեռ շատ երիտասարդ դեղեցկութիւնը: Բերանը մտնող է ու քիչ մը շատ հեշտաւէր:

- Վկաներու պէտք ունի՞ք՝ Հաստատելու համար, որ ամուսնացած էք:

- Հազիւ տարի մը կ'ընէ,- կ'ըսէ պշրանքով,- ես իսկ երբեմն կը մոռնամ ամուսնացած ըլլալս...

Մազերը կը թօթուէ ու կուրծքերը եւս թեթեւօրէն կը խաղան: Կը մօտենայ գրասեղանին, ես ալ իրեն:

- Տեղական ոչինչ կայ ձեր վրան,- կ'ըսեն:

- Թէեւ հոս ծնած եմ, բայց ամբողջ կեանքս Թունուզ անցուցած: Մտողքս հոն Հաստատուած են: Անգամ մը արձակուրդի եկած էի ազգականներու մօտ ու Թունուզ վերադարձայ նշանուած...

Գրքերն ու տեսարակները կը հանէ դարակներէն, փոշին կ'անէ: Նամակներու խուրձ մը: Բաց էջի մը վրայ.- «Շատ սիրելի Միմիս, սիրականս»: Անպատկառ յանդգնութեամբ մը կը կրկնեն այդ բառերը: Կը շիկնի, ծրարը կը պահէ:

- Եթէ ձեր անունը չըսէք՝ ձեզ Միմի պիտի կանչեմ,- կ'ըսեն:

Անշուշտ վարժուած ըլլալու է տղամարդոց շաղակրատութեանց, քանի որ չի գայթակղիր: Սուտ յանդիմանութեամբ կը նայի աչքերուս:

- Ամբողջ դիւղը անունս գիտէ,- կ'ըսէ,- վաղը կը սորվիք: Երկարօրէն կը շատախօսենք: Ամէն ինչ գիտեմ իր մասին:

Մահացուօրէն կը ձանձրանայ՝ այս Պրըթոն գիւղին մէջ ուր տնօրէնէն զատ, որ տարիքը առած մէկն է, ոչ ոքի հետ կրնայ լուրջ քանի մը քառ փոխանակել: Երիտասարդ, ամուսինը բացակայ կ'ին մը, որ ազատ քայլ մը չի կրնար նետել:

- Բարեբախտաբար երիտասարդ զարմուհի մը ունիմ,- կ'ըսէ,- նոյնպէս ուսուցչուհի: Առայժմ հոս է, երեկոները միասին կը պտտինք...

- Ձէ՞ք ուզե՞ր գիտ ալ որդեգրել,- կ'ըսեն:

– Քանի մը օրէ ի վեր չենք Համարձակիր դուրս ելլել...: Կը տեսնէք, դուք եւս պիտի ձանձրանաք Հոս...

– Ձեռ կարծեր, քանի որ գեղեցիկ դրացուհի մը ունիմ: Անկողնէս ձեր պատուհանը կ'երեւի...: Յետոյ, անշուշտ մէկը պիտի գտնեմ, որ ինձ գրքեր փոխ տայ...

– Հաճոյքով,– կ'ըսէ անմիջապէս,– այսօր իսկ կ'ուզէ՞ք:

– Անմիջապէս...

Այժեանի մը պէս կը սուրայ դուրս ու կը վերադառնայ դէզ մը գրքերով: Անրի տը Ռենիէ, Տիւհամէլ, Մօրուա, Մարկըրիթ Օտու: Մեծ մասամբ կարդացած են: Բազմաթիւ ուրիշներ ունիմ,– կը յարէ մեղմիւ,– սպասեցէ՛ք...

– Ո՛չ,– կ'ըսեմ,– թող տուէք ես ընտրեմ...

– Եթէ տեսնեն, որ տունս կու գար...

– Այդքա՞ն կը վախնաք գիւղացիներէն,– կը հարցնեմ:

– Անշուշտ կը վախնամ,– կ'ըսէ Հապճեպով,– չէք կրնար երեւակայել, թէ ի՞նչ կը նշանակէ Պրըթոն գիւղ մը...

Կը պնդեմ: Կը ժպտի աչքերուս:

– Ես երթամ, Հինգ–տասը վայրկեան յետոյ եկէ՛ք,– կ'ըսէ:

Սիրուն յարկաբաժին մը: Գրադարանին առջեւ կը կենանք երկուքով: Դրսէն ո՛չ ոք կրնայ մեզ դիտել: Ութը–տասը գրքեր կ'ընտրեմ: Ռեթիֆ–տը–լա Պրըթոնէն գիրք մը կայ վերի շատաւիգին մէջ:

– Օ,– կ'ըսեմ,– վայել է միթէ երիտասարդ կնոջ մը նման գիրք մը կարդալ...

– Իմա չէ, ամուսինս է, որ գնած է...

Աթոռի մը վրայ կը փորձէ ելլել՝ գիրքը ինձ տալու համար: Կ'օգտուիմ առիթէն ու կ'օգնեմ իրեն: Ձեռքս թիկունքներուն վրայ է: Ձի բողոքեր: Երբ գիրքը կ'երկարէ ինձ՝ ասիւր կը Համբուրեմ: Հապճեպով կ'իջնէ վար ու ի վերջոյ կ'որոշէ նեղանայ:

– Խելօք չէ՞ք կրնար կենալ,– կ'ըսէ:

Բերնին վրայ կը Համբուրեմ գինքը: Համբոյրս չի փոխարիներ, բայց կը դողայ: Ու գիտ չի հրեր: Կրնա՞յ ըլլալ, որ լիովին Համաձայն ըլլայ:

– Լուրջ չէ՞ք,– կը մըմնջէ մեղմօրէն:

Ներողութիւն կը խնդրեմ, քանի որ ասիկա Հաճոյ է կիներուն ու լրջօրէն քանի մը վայրկեան կը խօսակցիմք: Դէմքը կը պայծառանայ վերստին: Ու ես՝ դուրս կ'ելլեմ խորապէս զգալով, թէ կրնամ սիրել գինքը («Նայիրի», Ե. տարի, թիւ 20, 1957, էջ 7, Շար. 4):

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՆՈՒԱԶՈՒՄ - ՅԱԲԵԼՈՒՄ...

«Բազին»ի աշխատակիցներէն թորոնթոյարնակ Մարգար Շարապխանեան, Մոնրէալի «Հորիզոն»ի գրական յաւելում-ծին մէջ իր կարգին անգրադարձած է Շուշանեանի վերջին հա-տորներէն երկուքին, «Յեղափոխութեան լոյսէ դօտին» եւ «Մարդ մը, որ Արարատ չունի իր Հոգւոյն խորը»:

Առաջինին առիթով արձանագրած իր տպաւորութիւն-ները քննութեան նիւթ չեն հոս, բայց կարելի չէ ձեռնադաշ մնալ երկրորդին մասին յայտնուած եզրակացութեան, թէ՛

«Գիրքը աւարտելէ ետք, սակայն, առաւել մը չես աւելցնէր Շու-շանեանի ունեցած գրական վաստակին վրայ եւ ոչ ալ նուազում մը կը նկատես Շահնուրի անձին ու մշակած գրականութեան հանդէսը»:

«Մարդ մը, որ Արարատ չունի իր Հոգւոյն խորը» անուն շուշանեանական հատորը կրնայ «նուազում» մը չնկատուիլ Շահնուրի անձին ու մշակած գրականութեան հանդէպ, բայց նոյն համարձակութեամբ կարելի չէ ըսել, որ անիկա «առաւել մը չ'աւելցնէր» Շուշանեանի վաստակին վրայ:

Շահնուրի անձին դէմ եղած ոչ-բարեկիրթ արտայայտու-թիւններով եւ «Նահանջ»ին կշիռը թեթեւ գտնելու բաժիննե-րով միայն լեցուած են 173 էջերը, որ Շուշանեանի օգտին որեւէ առաւելութիւն չի նկատուիր «Մարդ մը, որ Արարատ չունի իր Հոգւոյն խորը» հատորին մէջ:

Մենք, ընդհակառակն, քիչ կը մնայ, որ շնորհակալութիւն յայտնենք Նարեկացիի, Զարդարեանի, Վարուժանի, Օշականի եւ այլոց Հոյակերտած վաստակին հանդէպ Շահնուրի թոյլ տուած ապերախտ մօտեցումներուն, որոնց առիթով թէեւ, բայց իր անձէն դուրս արձանագրուած շուշանեանական խոր-հրդածութիւններուն համար: Այլապէս ո՞ւր, ո՞ր գրչին տակ պիտի Հանդիպէր Հայ մարդը Նարեկացիի արժէքին փայլա-տակման, Զարդարեանի խորհրդանշանին պայծառացման, Վարուժանի լոյսին փողփողումներուն, գաղիական աքլորին առինքնող կանչներուն եւ առհասարակ գրական այն ընդհան-րացումներուն, որոնք խորուճեամբ, վարակիչ կիրքով ու լոյ-սերուն շոյլութեամբ անկրկնելի էջեր կը Հանդիսանան: Ըն-թերցողը կրնայ վստահ ըլլալ, որ եթէ Շահնուրի չափանշային անհեթեթութիւններուն ու անձին ուղղուած որակականներով միայն կազմուած ըլլար տուեալ հատորին ծանրութեան կեդ-րոնը, դայն լոյսին Հանելու փորձութեան դժուար թէ ենթար-կուէր մէկը:

Կը թուի, թէ Շարապխանեան շատ կարեւորութիւն ըն-ծայած է կատարուած որակումներուն ու յարձակողական ոճին եւ քիչ կամ բնաւ ուշադրութիւն չէ ընծայած կարեւոր բաժին-ներուն, շուշանեանական ընդհանրացումներուն, որոնք առան-ձին պիտի բաւէին եղբարբախտ գրագէտին անունը անջնջ-լիօրէն դրոշմելու յիշողութիւններու մէջ...

...ԱՌ Ի ՎԱԲԵՐԱՅՈՒՄ

«Հինգ գրողներու յոբելանները պետական մակարդակով» խորագիրին առկա մեր թերթերուն մէջ վերջերս կարդացինք Հայրենիքէն հասած հետեւեալ լուրը.

«Ընթացիկ տարուան ընթացքին պետական մակարդակով պիտի նշուին գրողներ Նայիրի Զարեանի 100, Հրաչեայ Քոչարի եւ Ռաչիկ Դաշտենցի 90, Գաբրիէլ Սունդուկեանի 175 եւ Աւետիք Խաչակեանի ծննդեան 125ամեակները»:

Լոնքեայն կը հասկցուի, որ յոբելանական այս նախաձեռնութիւնը կը պատկանի մշակութային նախարարութեան եւ «Այս նպատակին համար կազմուած են նաեւ կառավարական յանձնախումբեր, որոնք համապատասխան ծրագիրներ կազմելով, զանոնք ներկայացուցած են կառավարութեան, առ ի վաւերացում»:

Ռաչիկ Դաշտենցի, Գաբրիէլ Սունդուկեանի ու Աւետիք Խաչակեանի յոբելանական մեծարանքները՝ շատ բարձր, բայց շարքին մէջ զոնուող առաջին երկու անուններուն՝ Նայիրի Զարեանի եւ Հրաչեայ Քոչարի համար նոյնպիսի ծրագիրներ կազմել եւ առ ի վաւերացում պետութեան ներկայանալու մղումը համարձակութիւն կ'ուզէ պարզապէս:

Հայրենի ժողովուրդը այնքա՞ն անտարբեր է իր նահատակ սուրբերուն հանդէպ, որ անոնց նահատակութեան համար ուղղակի թէ անուղղակի հող պատրաստած մեղապարտներուն նուիրուած հանդիսութեանց ներկայ ըլլայ ու ծափող-ջոյններով դիմաւորէ անոնց մասին արտասանուած յոբելանական ճառերը:

Ռուսերէն գրուած ու թարգմանաբար Դաւիթ Գասպարեանի «Փակ դռների դադունիքը» հատորին մէջ յայտնուած Նայիրի Զարեանի «Ո՞վ եմ ես» խոստովանութեան ծանօթ անձերէ կազմուած յանձնախումբ մը չի կրնար անոր ծննդեան 100ամեակի առիթով բարեացակամ տրամադրութիւններով լեցուիլ եւ ոչ ալ յոբելանական առաջարկներ վաւերացնելու ուժ ունեցողները կրնան ընդառաջել նման ձեռնարկներու: «Ո՞վ եմ ես»էն հատուածներ տրուած են «Բագին»ի 1997 տարեշրջանի թիւերուն մէջ: Անպատեհ չէ կրկին կարդալ անոնցմէ մէկը.

«1936 թ. հակայեղափոխական Նանջեանի ինքնասպանութիւնից անմիջապէս յետոյ ես գրեցի մի քանի յօդուած, որոնցում մերկացրեցի Զարեանի, Բակունցի, Ալազանի, Մահարու, Արմէնի եւ միւս հակայեղափոխականների նացիոնալիզմի, տրոցկիզմի հակաժողովրդականութիւնը. «ատեղծաւորձութիւնների» կեղծութիւնը»:

Այս տողերը եւ ասոնց ոգիով գրուած բազում ուրիշներ ստորագրած մարդո՞ւն յոբելանը կը պատրաստուի տօնել «Մեր Հայրենիք ազատ, անկախ»ը:

Իսկ միւսը, գրադարտութեան կանխահաս վաստակի տէր Հրաչեայ Քոչարը դժոխային քիչ միջոցաւ չստեղծեց աւագ գրողներուն թէ Հասակակիցներուն: Պիտի բաւէր յիշել իր գրող-պարտութիւններէն միայն մէկը, Հասակակից Սաշիկ Դաշտենցի շաղկապ «պատիւը»:

«Նացիոնալիստ տականքների Հոգեւորորդին»:

Գրագէտ մը իր Հաշուոյն ու ինքն իր մէջ կրնայ սրիկայ ըլլալ, գինեմոլ ըլլալ, խաղամոլ, կնամոլ, միասեռական կամ ոչ-յանձնարարելի նման խօթութիւններով խոցուած մարդ, եւ անհատական այդ «բարեմասնութիւնները» որեւէ դեր կրնան չունենալ իր ստեղծած գրական արժէքներուն մէջ: Սակայն այդպէս չեն պարագաները Նայիրի Զարեանի եւ Հրաչեայ Քոչարի, անոնց բացասական գիծերը ուղղակի ուրիշներուն դէմ ուղղուած են, առաւել եւս ժանրակշիւր՝ անոնք պարզ սուրեր չձօնեցին, դիմեցին ա՛նգամ երկսայրի սուրերու՝ «տականքներու Հոգեւորորդին», եւայն: «Տականքները»՝ Հասկնայի է Հարկաւ, Եղիշ Զարենց, Ակսել Բակունց, Վահան Քոթովենց եւ ասոնց Հետ մեկուսացուած, ձայնազրկուած կամ այդ օրերուն արդէն զնդան նետուած՝ դէմքերն էին Քոչարի գրչին տակ, իսկ անոնց Հոգեւորորդին՝ Սաշիկ Դաշտենց, որուն վերագրուած որդեգրութիւնը առնուազն Համազօր էր մահուան միջոցաւ մէջ ենթական մխրճելու դաւաճանութեան:

Իր Հասակակիցները թիրախ դարձնելու Նայիրի Զարեանի մոլեգնութեան մէջ, բացի արեան պղտոր թելադրանքներէն, Հաւանարար դեր ունէր նաեւ մրցակիցի նախանձը, Զարենցի, Բակունցի, Քոթովենցի գրական Հասակներուն Հետ Համեմատած իր Հասակին փոքրութեան վրէժը: Անոնց մեկուսացման կամ ոչնչացման Հետեւանքով գուցէ կը կարծէր, որ ասպարէզը իրեն կը մնայ: Նոյն պատճառով եւ որոշ չափով մը Նայիրի Զարեանի «բախտը բերեց», ստալինեզակի իր տխրահռչակ ելոյթներով բաւական ժամանակ վայելեց ստալինականներուն ծափողջոյնները, բայց դժուար է նոյնիսկ զարեանական մեկնութիւն մը ճարել Հրաչեայ Քոչարի մարտնչող ելոյթներուն, ա՛յն Քոչարի, որ Նայիրի Զարեանէն տասը տարիով պզտիկ էր, 1937ին ընդամենը 27 տարեկան երիտասարդ, որ Հոգիին երիտասարդական խանդավառութիւններ խմորելու փոխարէն, թափ տուած էր սանձաբեկ քութիւններու...

Հայաստանի ժողովուրդին ապրած նոր տառապանքը կը բաւէ իրեն, անհրաժեշտ չէ 37ի ողբերգութեան պատրաստութեան մէջ բաժին ունեցող յանցապարտները Հանդիսադրելով պաշտօնական բռնութիւն պաշտօնապէս կրկին անգամ խոցել անոր Հոգին:

Նոր տունալներու... մութին տակ Նայիրի Զարեանի եւ Հրաչեայ Քոչարի Համար ժամանակը մոռացութեան ժամանակն է եւ ոչ թէ մեծարման:

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

«ՀԱՅ ՈՐԲԵՐԸ ՄԵԾ ԵՂԵՈՆԻ»
(Հեղինակ՝ Լիպարիտ Ազատեան)



«Մեծ Եղեռնէն վերապրող այն որբերուն, որ կրցան Հայ մնալ, Հայ ապրիլ եւ նոր ծիկեր արձակել»: Այս ձօնով կը սկսի 1999ին Լոս Անճելըսի մէջ լոյս տեսած երկրորդ Հատորը Լիպարիտ Ազատեանի «Հայ որբերը Մեծ Եղեռնի» խորագրեալ ծաւալուն հրատարակութեան, որ կը հանդիսանայ օրգանական շարունակութիւնը նոյն խորագրով ու կողքով 1995ին ընթերցողին հրամցրած աշխատութեան Ա. գիրքին (266 էջ):

Մինչ համանուն աշխատութեան Ա. Հատորը իբրեւ առանցք ունէր Համաշխարհային

Ա. պատերազմը եւ տարագրութիւնը, Հայ որբերը Արարատեան հովիտի ու Եփրատի տարածքին, Միջին Արեւելքի, Կիպրոսի ու եւրոպական կարգ մը երկիրներու որբանոց-դպրոցներու երդիքներուն ներքեւ, Հայ որբերու թրջացումը եւ որբահաւաքը, օտար առաքելութիւններն ու իրենց մարդասիրական անմոտանալի գործունէութիւնները ենթախորագիրներուն տակ ամփոփուող նիւթերը, «Հայ որբերը Մեծ Եղեռնի» Հատորին Բ. գիրքը (Լիպարիտ Ազատեանի կենսագրականէն եւ «Հեղինակի կողմէ» ներածականէն ետք) կը բացուի 7 Հոկտեմբեր 1918ին Հայ ժողովուրդին ուղղած Արամ Մանուկեանի պատմական կոչով, որմէ ետք կը կարդանք Հատորի խմբագիր Ստեփան Ալաջաջեանի «Այս ազնիւ ձեռնարկի մասին» խորագրեալ զրուիթիւնը:

1916ի արհաւիրքի օրերուն ծնած, երեք տարեկան մանուկ՝ Միջազեռքի անապատները հետիոտն կտրած, Պաղտա-

տի Հայոց վարժարանին մէջ թրծուած Լիպարիտ Ազատեան, եթէ իր Ա. Հատորը Հարստացուցած էր Հայ որբերու ապրած դժոխքն ու որբահաւաքման աշխատանքը առարկայական թիւերով ներկայացնող տախտակներով ու տոմարներով, Բ. Հատորի նիւթերը կը ձոխացնէ Մեծ Եղեռնէն մազապուրծ փրկուած որբերու, թրջացման, քրտացման կամ արաքացման ցաւը իրենց մորթին վրայ ապրած չափահաս ու անչափահաս Հայորդիներու, ինչպէս նաեւ՝ օտար ականատեսներու կենդանի վկայութիւններով ու պատմական փաստաթուղթերով:

Արեան ու սարսափի, արհաւիրքի ու հալածանքի, զաղթի եւ կոտորածի դժոխքներէն անցած Հայ կարաւաններուն անպատմելի տրամը եւ մահաւանդ անչափահաս Հայ որբուկներուն բռնի ազդափոխութեան ողբերգութիւնը ամենայն բարեխղճութեամբ ներկայացնելու նախանձախնդրութեամբ՝ Հրաշքով փրկուած Հազար Հազարաւոր զոհերէն մէկը Հանդիսացող Լիպարիտ Ազատեան էջ առ էջ կը ներկայացնէ ո՛չ միայն Հայ ժողովուրդի մարտիրոսացումը, այլեւ՝ զրեթէ օտարացած Հայորդիներու դէպի նահատակ ցեղի արմատներ գիտակից վերադարձն ու Համազգային վերածնունդը:

Յեղասպանութեան յղացքին պատմական-օրինական բնութագրումը կատարող ներածականէն ետք, պատմական անուրանալի փաստաթուղթերու եւ անհերքելի ճշմարտութիւններու օժանդակ նպաստով Լ. Ազատեան կանգ կ'առնէ Հայ որբերու իշխմացումն ու թրջացումը Հետապնդող Թուրքիոյ նենգ ծրագիրին վրայ: Ապա տեղ կը տրամադրէ Փրոֆ. Աւետիս Փափազեանի «Թրջացման քաղաքականութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ» անուն ուսումնասիրութեան, որմէ ետք, «Եղեւութիւններ» եւ «Վկայութիւններ» գոյգ խորագիրներուն ներքեւ, Հայկական եւ օտար զանազան աղբիւրներէ կը մէջբերէ թրջացման ողբերգութիւնը պահ մը ապրած Հայորդիներու յուշերն ու վկայութիւնները:

Հաւատափոխութեան դատն երեւոյթին անդրադարձող Երուանդ Օտեանի ծանօթ գրութեան մէջբերումով կը փակուի այս բաժինը, որպէսզի 77րդ էջով սկսի Հատորին երկրորդ գլուխը՝ «Բիւրտերը եւ Հայ որբերը» խորագրեալ: Հոս նաեւ, առարկայական ու բծախնդիր թափանցումներով Հարուստ ակադեմական յարգելի Հրատարակութիւններու եւ Հանրագիտարաններու տունայնորուն վրայ Հիմնուելով՝ «Հայ որբերը Մեծ Եղեռնի» Հատորներուն Հեղինակը Հանգամանօրէն կը ներկայացնէ քիւրտ ժողովուրդը, քրտերէնը, Քիւրտիստանը եւ Հայ-քրտական յարաբերութիւնները: Կը յաջորդէ «Ռմբադրութեան կողմէ» ստորագրեալ «Մեր նկատառումները» գրութիւնը, որ կ'անդրադառնայ միջազգային ու քրտական Հրատարակութիւններէ եւ մամուլէ Հեղինակին քաղած այն Հարուստ նիւթերուն, «որոնք քրտացած Հայու Հիմնական նիւթին առնչուելէ զատ կը դառնան պատմաբնութեան առարկայ»,

որովհետեւ քիւրտերը տակաւին ո՛չ միայն Հեռու են ամբողջական ճշմարտութիւնը եւ պատմական իրողութիւնները ընդունելէ, այլեւ՝ «իրենց ապագայ պետութեան կազմի համար կ'ոտնակոխեն մեր իրաւունքը մեր բնօրրանի նկատմամբ, որ միշտ Հայաստան կոչուած է եւ անոնք, այսօր, զայն կ'ուզեն դարձնել Քիւրտիստան», ինչպէս արդարօրէն կ'ընդգծէ Հատորին խմբագիրը՝ Ստեփան Ալաջաջեան:

Յար եւ նման «Հայ որբերը Մեծ Եղեռնի»ի առաջին երկու գլուխներուն, «Եղելութիւններ» (էջ 102-127) եւ «Վկայութիւններ» (էջ 128-164) իրերայաջորդ բաժիններով Լ. Ազատեան կը ներկայացնէ քրտացման ծրագրին Հեռ առընչուող փաստեր եւ կենդանի վկայութիւններ՝ քաղուած վերոնշեալ տրամին անդրադարձող Հայ եւ օտար շուրջ տասնեակ մը աղբիւրներէ:

«Արաբներն ու Հայ որբերը» խորագրաւ երրորդ գլուխը Հատորին, իր կարգին, կը բաժնուի Հինգ մասի, - «Արաբական աշխարհի վերաբերմունքը», «Քննական անդրադարձ մը», «Եղելութիւններ», «Վկայութիւններ» եւ «Արաբներուն օգնութիւնը Հայ որբերուն»: Ծերիֆ Ալ-Հիւսէյն Պըն Ալիի Հայ որբերուն աէր կանգնելու եւ Մեծ Եղեռնէն ճողոպրած Հայորդիներուն Հեռ իրքեւ Հարազատ վարուելու թաղաւորական պահանջը փոխանցող պատմական հրովարտակով սկսող այս բաժինը նաեւ կը զարգանայ նախկին կշռոյթով: Հետաքրքրական մէջբերումներն ու վկայութիւնները աւելի տեսանելի կը դարձնեն արաբացած Հայ պարմանուհիներուն եւ այլացման վտանգէն ճողոպրած Հայ որբերուն կեանքի դառն զրուագները, ինչպէս նաեւ՝ Հայ որբերուն նկատմամբ Տոքթ. Մուսթաֆա Ձելէպիի, Ապտուլ Ղանի Ճուտէի, Ճեմիլ Քեննէի եւ այլ մարդասէր արաբներու ցուցաբերած ասպնջական վերաբերումները:

«Հայ որբերու վաճառք» խորագրեալ չորրորդ եւ վերջին գլուխը Հատորին (էջ 231-292), Հպանցիկ ակնարկով մը մարդկութեան դէմ գործուած այս յանցանքին իրողութիւնը ընդգրծելէ ետք, Հատորին վերջին էջերը լայն կը բանայ վաճառման ահաւորութիւնը իրենց սեփական մորթին եւ Հոգիին վրայ ապրած Հայուհիներու եւ Հայ պատանիներու վկայութեանց, որոնց կ'արձագանգեն Վաղարշակ Նորենցի, Անդրանիկ Մանուկեանի, Նայիրի Զարեանի, Արամ Հայկազի, Գուրգէն Մահարիի եւ Լեւոն Զաւէն Սիւրմէլեանի այս թեման չօղափած գեղարուեստական էջերը՝ «Հայ որբերը գեղարուեստական գրականութեան մէջ» խորագրին ներքեւ:

«Հայ որբերը Մեծ Եղեռնի» Հատորին Բ. գիրքը կը փակուի «Մատենադրական-ծանօթագրական ցանկ»ին յաջորդած անձնանուններու եւ տեղանուններու ցուցակով:

«ՀԱՅՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՄԻԻՌՈՆԸ»

(Հեղինակ՝ Փառէն Վրդ. Վարդանեան)



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարանէն, 1999ին, արաբերէնով լոյս տեսաւ Փառէն Վրդ. Վարդանեանի ստորագրութիւնը կրող «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ս. Միւռնը» («Ալ-Միւռն ալ-մուզաաթաա իլլիքենիա՛էլ արմանիէ») հատորը:

Արամ Ա. Վեհափառին եւ Քրիստոնէութեան Հայաստանի պետական կրօն հռչակման 1700ամեակին նուիրուած այս հատորը, որ 128 էջերու մէջ կ'ամփոփէ երկու մասեր, կը նպատակադրէ Հայց. Եկեղեցւոյ ծիսական արարողութեանց մասին ճշգրիտ եւ շահեկան տեղեկութիւններ փոխանցել արաբ ընթերցողին՝ պարզելու համար Հայ ժողովուրդի հոգեւոր կեանքին մէջ մեր եկեղեցւոյ ունեցած կարեւոր դերակատարութիւնը եւ յատկապէս անոր ազգային ուրոյն դիմագիծը:

Այս իսկ նպատակով, Արամ Ա. Կաթողիկոսի կարճ, բայց կուռ ներածականով բացուող սոյն հատորին առաջին քառասուն էջերով, Փառէն Հայր Սուրբը արաբ ընթերցողին կը ներկայացնէ Ս. Միւռնի եւ Միւռնօրհնութեան առընչուող լուսարանութիւններ՝ անոր պատրաստութեան ժամանակէն ու զործածութեան եղանակէն մինչեւ նշանակութիւնը եւ Ս. Միւռնի պատմական հոլովոյթէն մինչեւ Միւռնի եւ Միւռնօրհնէքի աւանդական յատուկ իմաստն ու խորհուրդը Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ծիսակատարութեանց եւ Հայ ժողովուրդի հոգեւոր կեանքին մէջ: Եւ որպէսզի իր խօսքը զգենու գիտական ճշգրտութիւն ու յատկութիւն, հատորին Հեղինակը պատմական օժանդակ մանրամասնութիւններուն ու տեղեկութեանց կողքին կը հիւրընկալէ օգտակար լուսանկարներու:



պատճեններ: Պարզ ու հետաքրքրական ոճով զարգացող այս հատորին առաջին մասը կը փակուի «Ներքող Ս. Միւռտնի» անուն փառաբանանքով:

Հատորին 44րդ էջով կը սկսի երկրորդ բաժինը «Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Ս. Միւռտնը» գիրքին, որ զուտ թարգմանական բնոյթ ունի եւ կը հետաքրքրէ թէ՛ արար եւ թէ՛ Հայ ընթերցողը: Աջ էջին վրայ կը կարդանք «Կանոն Սուրբ Միւռտնի օրհնութեան»-ի արաբերէն թարգմանութիւնը, իսկ ձախ էջին վրայ, կողք կողքի, յիշալ գրութեան գրաբար բնագիրն ու աշխարհարար թարգմանութիւնը՝ 1996ին Զարեհ Արքեպս. Ազնաւուրեանի կողմէ իրադրծուած: Ենորհիւ այս գոյգ վերածումներուն, Միւռտնօրհնէջի հոգեպարար խորհուրդը, սրբազան արարողութեան եւ անկէ բխած աղօթքներուն երկնալաց կշռոյթը կը ներգրաւեն Հայ ու արար ընթերցողները եւ ա՛լ աւելի կը մօտեցնեն մեր փրկիչ Յիսուս Քրիստոսի, «որ վասն մեր ամենեցուն մարմնացար, եւ ի լիութենէ քումմէ ծագեցիր յանձինս մեր, եւ Միւռտն կատարեալ անուանեցար, եւ առեր զհեզութիւն վասն մեր»:

Փառէն Վրդ. Վարդանեանի ստորագրութիւնը կրող այս շահեկան հատորը կը փակուի օգտագործուած աղբիւրներու մատենագիտական ցուցակով:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆԻՆԱ ՃԻՏԵՃԵԱՆԻ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄԸ



Հինգշաբթի, 21 Հոկտեմբեր 1999ին, երեկոյեան ժամը 7ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վեհաբանին մէջ, պետական բարձրաստիճան ունեւորու եւ պաշտօնական անձնատրութեանց ներկայութեան Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բարձրագոյն պարգևով՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի շքանշանով մեծարեց հնագէտ ու մշակոյթի գործիչ, լիբանանեան հնագիտութեան վաստակաւոր դէմքերէն Տիկին Նինա Դիտեճեանը։ Մեծարանքի երեկոյին ներկայ էին Լիբանանի հանրապետութեան նախագահին ներկայացուցիչը՝ Ներքին գործոց նախարար Միշէլ Մըր, վարչապետին ներկայացուցիչը՝ զբօսաշրջութեան նախարար Արթիւր Նազարեան, Տիկին Անտրէ Լահուտ, նախկին նախարար-

ներ, երեսփոխաններ, Լիբանանի մօտ տարրեր հանրապետութեանց դեսպաններ, պաշտօնական հիւրեր, օտար դասախօսներ, մշակութային միութեանց ներկայացուցիչներ եւ հայ ու օտար հանդիսականներ։

Չեռնարկի բացման խօսքի ընթացքին, նշուեցաւ մեծարանքին շարժառիթն ու նպատակը, օրուան մեծարեալին նպաստը Լիբանանի հնագիտութեան զարգացման մէջ եւ Ն. Դիտեճեանի քաղաքացիական արժանիքները։ Ապա, անգլերէնով խօսք առաւ նախկին նախարար ու դեսպան, «Ան-Նահար» օրաթերքի խմբագրապետ, անուանի լրագրող Ղասսան Թուլյնի, որ անդրադարձաւ մեծարեալին հնագիտական աշխատութիւններուն, անոր լիբանանահայաստանեայտագիտութիւններուն եւ հաստատեց, որ Ն. Դիտեճեան իր աշխատանքով կը մնայ իտէպ լիբանանցի, անխոց պրպտող, որ իր յեղաշրջիչ փաստերով Լիբանանը բարձրացուց միջազգային մշակութային շրջանակներու մէջ։

Ն. Դիտեճեանի դասընկերուի Լէյլա Պատըրի վկայութենէն ետք, իր խօսքը փոխանցեց նախկին նախարար եւ մտաւորական Միշէլ Էտտէ, որ առաւելաբար ծանրացաւ Պէյրութի քանգարանի շինութեան, հարբստացման, պահպանման եւ բարեկարգման մէջ Նինա Դիտեճեանի դերակատարութեան։ Ան ֆրանսերէնով արտայայտուեցաւ Տիկին Դիտեճեանի մասին, ընդգծելով, որ մեծարեալը անձ-

նուիրութեամբ, գոնողութեամբ եւ գերագոյն ճիգով ծառայած է քանգարանին՝ գիտականացման, իրերու ճշխացման եւ մշակոյթի օճախ դառնալու ուղղութեամբ:

Յաջորդ խօսք առնող եղաւ արուեստարան Սիլվիա Աճճեան, որ բարձր գնահատեց Ն. Դիտլեման գործերուն արժէքը:

Այնուհետեւ, մեծաբանքի եզրափակիչ խօսքը փոխանցեց Արամ Ա. Կաթողիկոս, որ մախշէտեց Լիբանանի քաղաքակրթութեան օրրան ըլլալու հանգամանքը, փիւնիկեան քաղաքակրթութեան ներդրումը միջագային մշակոյթի պատմութեան մէջ եւ վեր առնելով Լիբանանի ապրող ու կենսունակ կեանքը, ղիտել տուաւ, որ Լիբանանը միայն անցեալ չէ, այլեւ ապրող մշակոյթի երկիր, որ կը կամրջէ Արեւելքը Արեւմուտքին, եւ իր գեղեցկութեամբ, հրաշալիքներով, մշակութային աւանդներով ղիտեմ է ոչ միայն մշակոյթի հայ գործիչներն ու պատմաբանները, այլեւ՝ բանաստեղծներն ու գրականութեան մարդիկը:

Ապա, առ ի գնահատանք իր փաստակին ու ծառայութեանց, Արամ Ա. Վեհափառ Ս. Մեսրոպ Մաշտոցի շքանշանով պատուեց արժանատի հայտեին:

«ԳԱՆԱՏԱԿԱՆ ՕՓԵՐԱՅԻ ԱՄԵՆԱՓԱՅԼՈՒՆ ԱՍՏՂԸ» Է. ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ

«Պայրագտարեան գանատական օփերայի ամենափայլուն աստղն է»:



Էլիզապէթ Պայրագտարեան եւ Տէրիտ Տամիանի՝ «Տոն Ճիովանի»-ի ներկայացման ընթացքին

Այս նախադասութեամբ կը սկսի աշխարհաճշակ "Timo" շաբաթաթերթի (գանատական երատարակութիւն) 31 Յունուարի քիւի արուեստի բաժինին մէջ լոյս տեսած Քարլ Մորիի յօդուածը:

25ամեայ Էլիզապէթ Պայրագտարեան ներկայիս Թորոնթոյի մէջ ելոյթ կ'ունենայ "Canadian Opera Company"-ի ներկայացուցած «Տոն Ճիովանի»-ի (Մոցարթի գործերէն) մէջ. Ձեռնիւնայի ղերով:

Անցեալ տարեշրջանի Հոկտեմբերին, Է. Պայրագտարեան Շիքակոյի մէջ ելոյթ ունեցած է. Ուիլերս Պոլքովնի «Կամուրջէն

դիպրուած» օփերային մէջ, իսկ այս տարուան Յունուարին, Նիւ Եորքի Գարնէկի Հոլին մէջ բարձրացած է ամերիկացի նշանաւոր մէցցօ Մարիլին Հօրնի կողքին:

Անդրադառնալէ ետք Պայրազտարեանի գրաւիչ ծայրի արժանիքներուն, "Time"-ի յօդաւորը զայն կը դասէ զանաւան օփերայի պայծառ դերերէն Էմմա Ալպանիի (19րդ դար), Թերեզա Սթաթսի եւ Պէն Հեփնըրի շարքին:

Յօդուածագիր Քարլ Մորի կ'անդրադառնայ նաեւ Է. Պայրազտարեանի կեանքին, թէ ինչպէս Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով 15ամեայ Է. Պայրազտարեան 1989ին բնտանիքին հետ կայք կը հաստատուէ Թորոնթօ, ուր սկըզբնական շրջանին իր մասնակցութիւնը կը բերէ տեղւոյն հայկական եկեղեցւոյ երգչախումբին:

Յառաջիկայ Ապրիլին, Էլիզապէթ Պայրազտարեան Նիւ Եորքի մէջ ելոյթ պիտի ունենայ Քամիլի դերով, Հէրոլտի «**Չամբա**» օփերային մէջ, ապա պիտի շրջագայի Գերմանիա եւ Ֆրանսա, դերեր ստանձնելով Հանտէլի շարք մը օփերաներու ներկայացումներուն մէջ:

ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՖԻԼՄ ՄԱՐՍԵՆԻ ՀԵՏ

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին հրաւերով, Դեկտեմբերի առաջին օրերուն Լիբանան ժամանեց անգլիացի



հայասեր ողեգիր եւ գրող Ֆիլիփ Մարստըն, *"The Crossing Place. A Journey Among The Armenians"* հատորին հայերէն քարզամանութեան հրատարակման առիթով:

Երկուշաբթի, 13 Դեկտեմբերի երեկոյեան, Կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ տեղի ունեցաւ զինեծօն, նուիրուած՝ «**Հանդիպման Վայրը. Ողեւորութիւն հայութեան մէջ**» նորատիպին, հատորի հեղինակին ներկայութեամբ: Չեռնարկին ներկայ էին աւելի քան 200 գրասէրներ՝ հոգեւոր հայրեր, գրողներ, մտատրականներ, արւեստագէտներ, մամուլի ներկայացուցիչներ...

Առաջին հերթին, բացման խօսքը արտասանեց Կաթողիկոսարանի դիւանապետ Խաչիկ Տէտէեան, որ հանդիպման նպատակը եւ հիւր գրագէտը ներկայացնելէ ետք, խօսքը փոխանցեց հատորի քարզմանչուի Լուսիկ Կիլոյեան-Սրապեանի:

«Հանդիպման Վայրը» գործին բովանդակության, հեղինակին հայասիրության եւ հատորին քարոզչական բնույթին անդրադառնալով՝ Լուսիկ Կիւլոյեան՝ Սրապեան նախ կանգ առաւ Հայաստանն ու Հայութիւնը պատմագիտական, մշակութային, քաղաքական, ընկերաբանական, այլ խօսքով՝ քաղաքակրթական դիտանկիւնէ ընկալած եւ քննարկած հատորին որակական արժանիքին վրայ: Ապա ան անելոց, որ 17 երկիրներու հայկական գաղթօճախները այցելած անգլիացի այս ուղեգիրը ամեն բանէ առաջ կը փորձէ պատասխանել երկու հարցումի՝ «*Որո՞նք են հայերը եւ ի՞նչ է հայութիւնը*»:

Այս հաստատումէն ետք, բնորոշ մէջբերումներու օժանդակութեամբ՝ քարզմանչուին հանգամանօրէն ներկայացուց գործին բովանդակութիւնն ու արժէքը:

Եզրակացնելով՝ քարզմանչուին յայտնեց, թէ 8 լեզուներու քարզմանուած եւ 1994ին «Մամլոյնք Մոսմ» գրական մրցանակին արժանացած այս գործը անհրաժեշտ էր, որ լոյս տեսնէր նաեւ հայերէն լեզուով, որովհետեւ Յիլիփ Մարստըն սուր դատողութեան տէր ճշմարիտ հայասէր մըն է, իսկ իր վաւերական գործը արժանի է ամեն գնահատանքի:

Ապա, անգլերէն լեզուով իր գնահատանքի ողջոյնը փոխանցեց Արամ Ա. Կաթողիկոս, որ քարզմանչուին աշխատանքը դրուատելէ ետք, անդրադարձաւ Յ. Մարստընի գործին: Վեհափառ Հայրապետը անգլիացի գրողին գործը ամփոփեց հիմնական չորս կէտերու մէջ, մշելով, թէ Մարստըն սովորական գրող մը

չէ, այլ՝ վերլուծող, հայոց ինքնութիւնը պեղող, հայութեան ցաւն ու ուրախութիւնը բաժնող եւ վերածնունդի հրաշքը վկայակոչող քրիստոնէական յոյսի եւ հաւատքի ուղեգիր մը, որուն գործը պատգամ մըն է՝ ուղղուած միջազգային հանրութեան եւ քաղաքակիրթ մարդկութեան, թէ Հայաստանն ու հայութիւնը միայն անցեալ չեն, այլեւ՝ ապրող ու զգեչնող ներկայ, դատ ու երազ եւ հաւատք ու յոյս:

Հուսկ ապա՝ խօսք առաւ գիրքին հեղինակը, որ յայտնելէ ետք, թէ իր այս գործը մեկնակետ առած է յայտնապէս Արեւմտահայաստանի անբաժնետէ տակէն յայտնաբերուած աճիւնի քեկորի մը եւ Անիի ճարտարապետական կոթողներուն յաջորդած «այս ժողովուրդը ինչո՞ւ տակաւին ողջ է» հարցումէն, անելոց, թէ պատասխանին փնտռութիւնը մղած է գիրք շրջագայելու 17 երկիրներ, — Աղթամարէն մինչեւ Տէր-Չօր եւ Վենետիկէն, Երուսաղէմէն ու Արեւելեան Երոսպայի հայկական գաղութներէն մինչեւ Հայաստանի սահմանամերձ բարձունքները: Ծանապարհորդութիւն մը, որ ոչ միայն հարուստ եղած է անակնկալներով, այլեւ՝ յայտնաբերումներով ու բնորոշ ընդգծումներով: Այս ուղղութեամբ քանի մը հետաքրքրական դրուագներ յիշելէ ետք, ան մշեց, թէ պատասխանը գտած է հայութեան քրիստոնէական հաւատքին, ապրելու վճռականութեան եւ խելացիութեան մէջ:

Յարգանքի այս ձեռնարկը վերջ գտաւ հարց-պատասխաններու բաժինով եւ հեղինակին շնորհակալական խօսքերով՝ հատորին հայերէն լոյս ընծայման եւ կազմակերպուած «անմոռանալի երեկոյին» համար:

**ՅՈՒՅԱՀԱՆԴԷՄ
ՆՈՒՐՈՒԱԾ
Լ. ՇԱՆԹԻ
ԾՆՆԴԵԱՆ
130ԱՄԵԱԿԻՆ**

**ԲՐԻՏԱՆԻԱ
ԿԸ ՊԱՐԳԵԲԱՏՐԷ
ԼԵԻՈՆ
ՉԻԼԵՆԿԻՐԵԱՆԸ**

Երեքշաբթի, 25 Յունուարին, Երևանի Ազգային գրադարանին մէջ բացումը կատարուած է Լեւոն Շանթի ծննդեան 130ամեակին նուիրուած ցուցահանդէսին:

Ցուցասրահին մէջ ներկայացուած են գրողին ընտիր երկերու երատարակութիւնները, վիպակները, իր մասին գրուած յօդուածներ եւ մեմագրութիւններ:

Ցուցահանդէսի բացման արարողութենէն ետք, ելոյթ ունեցած է գրականագէտ Դաւիթ Գասպարեան եւ քատերագէտ Բ. Յովակիմեան: Անոնք իրենց խօսքերուն մէջ ընդգծած են Լ. Շանթի գրական ժառանգութեան անանց նշանակութիւնը:

Իր կարգին, Ազգային գրադարանի տնօրէն Դաւիթ Սարգսեան ըսած է, որ գրական մշակութային կեանքի պատմութեան մէջ Լ. Շանթ քատերագիրը անկրկնելի երևոյթ է եւ առանց Լ. Շանթի ստեղծագործութեանց անկարելի է պատկերացնել հայ գրականութիւնը:

Ելոյթ ունեցած են նաեւ դերասաններ Լորենց Առուշանեան եւ Վարդուի Վարդեպետեան, որոնք գրասէրները հրաւիրած են ներկայ գտնուելու Սումդուկեանի անուան քատերասրահին մէջ ներկայացուող Լեւոն Շանթի գլուխ-գործոցներէն՝ «*Հին ասորւածներ*» քատերախաղի բեմադրութեան:



Չիլենկիրեան քառեակի հիմնադիր՝ ջութակահար Լեւոն Չիլենկիրեան, անցնող տարեվերջին, բրիտանական կառավարութեան կողմէ արժանացած է "Officer of the Order of the British Empire" տիտղոսին: Տիտղոսի տուչութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Պակիսկեան պալատին մէջ:

Կիպրահայ Լ. Չիլենկիրեան ծնած է 28 Մայիս 1948ին, Նիկոսիա: Ծնողները, Կիլիկիոյ անկումէն ետք, Ատանայէն հաստատուած են Կիպրոս:

Երաժշտութեան հանդէպ Լեւոնի սէրը սկսած է իր մօրեղբոր՝ Վահան Պետեանի ներշնչումով, որ, իր կարգին, 1952ին Էլիզապէթ Թագուհիին կողմէ արժանացած է զմահատական մետալի մը՝ քաղութիւն քաղաղըման առթիւ պալատական արարողութեան նուագախումբին բե-

րած իր մասնակցության համար:

Լեւոն Չիլինկիրեան երաժշտական իր ուսումը կը ստանայ Լոնտոնի "Royal College of Music"-ի մէջ:

1969ին կը խլէ BBCի կողմէ կազմակերպուած «Պէքնովէնի մրցանք»-ին առաջնութիւնը:

1971ին կը ելնէ Չիլինկիրեան քառեակը, որ այնուհետեւ տարիներու ընթացքին ելոյթներ կ'ունենայ աշխարհի տարբեր ցամաքամասերու 50է աւելի երկիրներու մէջ, ապահովելով մեծ հռչակ եւ ժողովրդականութիւն:

Չիլինկիրեան քառեակը իր խտասալիկներուն (*սիլի*) վրայ ներկայացուցած է Մոցարթէն, Հայտընէն, Պէքնովէնէն, Արփո Փարթէն, Փրոքոֆիլէն եւ Կոմիտասէն գործեր:

ՎԱԶԳԷՆ ԱՅԳՈՒՆԻԻ ՄԱՀԸ

Շաբաթ, 23 Հոկտեմբեր 1999-ին, Մոնրէալի մէջ մահացած է սփիւրքահայ մտաւորական, քառերագիր, խմբագիր, պատմաբան եւ կրթական ու հասարակական գործիչ Վազգէն Այգունի:

Վազգէն Այգունի (առաջանի անունով՝ Գէորգ Պաղենեան) ծընած է 1913ին, Ատանա: Մեծ Եղեռնի արեւորդէն ճողոպրելով՝ ընտանիքին հետ կը հաստատուի Լիբանան, ուր եւ կը ստանայ իր մախնական, երկրորդական եւ համալսարանական ուսումը՝ վրանաքաղաքի վարժարանին, Յիսուսեան հայրերու Ս. Գրիգոր Լուսաւորիչ վարժարանին եւ ՍՆՈ ժող. ֆրանսական համալսարանին մէջ՝ աւարտելով անոր Արեւելեան Դպրոցեանց եիմնարկը,



ապա՝ Պէյրոսի իրաւաբանութեան համալսարանը:

1968ին, Մոնիէլիէի (Ֆրանսա) իրաւաբանութեան համալսարանին մէջ կը պաշտպանէ ընկերային իրաւագիտութեան իր մագիստրոսութեան աւարտաճառը՝ Թուրքիոյ կողմէ բռնազրաւուած հայապատկան ինչքերու մասին, իսկ 1969ին, նոյն մասնագիտութեան մէջ կ'արժանանայ դոկտորայի վկայականին՝ «Հայկական խնդիրը-պատմական տուեալներ, իրաւական փաստաթուղթեր եւ քաղաքական լուծում» խորագրեալ իր աւարտաճառով:

Հայերէնով ու ֆրանսերէնով քազմաքիւ հատորներ, հարիւրաւոր յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ ստորագրած, մէկ աւելի քերթերու խմբագրութեան մաս կազմած եւ Հայ Դատի անխոնջ պաշտպաններէն մէկը հանդիսացած Դոկտ. Գէորգ Պաղենեան աւելի քան տասնեակ մը վարժարաններու, գոլէճներու, համալսարաններու եւ ուսումնա-

կան այլ հիմնարկներու մէջ, հայերէն եւ ֆրանսերէն լեզուով մօտ կէս դար դաստանդած է հայագիտական, քաղաքակրթական, պատմական եւ գրական նիւթեր:

Կրթական իր գործունէութենէն զատ, Դոկտ. Գէորգ Պաղճեան իր ամբողջ կեանքը նուիրած է Հայկական Յեղասպանութեան փաստարկումին, այդ առընթերեամբ հրատարակելով շարք մը հատորներ, որոնցմէ յիշենք՝ *"Arméniens peuple tragique"*, *"Le problème arménien, du négativisme turc à l'activisme arménien Où est la solution?"* (1985), *"La confiscation, par le gouvernement turc, des biens arméniens dits abandonnés"* (1987), *"Replique à Monsieur l'ambassadeur de Turquie à Ottawa"* (1991):

Վերջերս, հակառակ առողջական իր վատ վիճակին, կ'աշխատէր Հայկական Յեղասպանութեան նուիրում նոր հատորի մը վրայ, վերնագրուած՝ *"La Contentieux Arméno-Turc: De la falsification à la négation"*:

1970ին Մոնրէալ հաստատուելէն ետք, որոշ տարիներ դեկավարած է Քոնքորտիայի եւ Մոնրէալի մէջ Քեպեքի համալսարաններու հայագիտական ուսման քաժինները: Հիմնադիրը եղած է «Արձագանգ հայ աշխարհին» պատկերասփիւռի յայտագրին: 14 տարի նախագահը եղած է *Fédération des groupes ethniques du Québec*: 1953ին, իր կրթական գործունէութիւնը գնահատելով՝ ֆրանսական կառավարութիւնը զինք պատուած է *Palme académique* շքանշանով: 1970ին, ան արժանացած

է Լիբանանի կրթական նախարարութեան հանրային կրթութեան շքանշանին, իսկ 1977ին, գանատական կառավարութեան կողմէ՝ Էլիզապէթ Բ. քաղաքի թագադրութեան 25ամեակի արժաթեայ մետալին: 1978ին ան դամ ընտրուած է *Ordre du Canada*-ի, իսկ 1992ին Գանատայի կառավարութենէն ստացած է գանատական համադարձակցութեան 125ամեակի մետալը:

Վազգէն Այգունիի մահով հայ ժողովուրդը կը կորսնցնէ տասնամեակներ շարունակ հայ մշակոյթին եւ Հայ Դատին ծառայած հաւատաւոր նուիրեալ մը:

ԳԵՈՐԳ ԹԵՄԻՋԵԱՆԻ ԱՆԺԱՄԱՆԱԿ ՄԱՀՈ

Երեքշաբթի, 28 Սեպտեմբեր 1999ին, անողորմ հիւանդութեան դէմ կարճատեւ պայքար մը սղելէ ետք, 55 տարեկան հասակին շիջեցաւ «*Բագին*»-ի աշխատակիրներէն բանաստեղծ Գէորգ Թեմիզեան:

Բանաստեղծ, մտաւորական, հրատարակիչ եւ գրական ու հասարակական գործիչ Գէորգ Թեմիզեան կը ծնի 1944ին, Սուրիոյ Ռասսուլ Այն արանը, ուր եւ կը ստանայ իր նախնական կրթութիւնը:

1965ին, ծննդավայրի Ազգ. նախակրթարանը աւարտելէ ետք, կը փոխադրուի Հալէպ եւ կը յաճախէ Զարէն Եփփէ Ազգ. Շննարան, ուրկէ շրջանաւարտ կ'ըլլայ 1971ին: Համալսարանա-



Ուսանողական գրասենյակներում վրայ բանաստեղծություններ ստորագրած Գեորգ Թեմիզեան կ'աշխատակցի «Ահեկան»-ի, «Սփիտք»-ի ու «Բագին»-ի եւ կը հրատարակէ երեք քերթողագիրքեր՝ «Ծով եւ կղզի», «Շարժում» եւ «Մերենապո»:

Գ. Թեմիզեանի մանուկ սփիտքահայ գրականությունը կը կորսնցնէ ժամանակակից բանաստեղծ մը:

ԱՐԱ ԿԻՒԼԵՐ ԿԸ ՍՏԱՆԱՅ «ԴԱՐՈՒՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉԸ» ՊԱՐԳԵԷԸ

Կան ուսուցիչը կը շարունակէ Հալւայի պետական համալսարանի բժշկությունը բաժանմունքին մէջ: 1971ին՝ իբրեւ վկայեալ բժիշկ հրաժեշտ կու տայ համալսարանին եւ կը ճամբորդէ Միացեալ Նահանգներ, ուրկէ իբրեւ մասնագետ սրտաբան Հալւայ կը վերադառնայ 1977ին:

Շնորհիւ իր մասնագիտական ճշգրիտ ախտաճանաչումներուն՝ կարճ ժամանակի ընթացքին կը դառնայ Սուրբիոյ անուանի բժշկական կենտրոնի մէջ եւ Հալւայի համալսարանի բժշկական բաժանմունքի սրտաբանութեան փնտռած դասախօսը:

Հայ եւ արաբ բարեկամութեան շատագույ՛ բժիշկ-բանաստեղծը սերտ կապեր կը մշակէ Սուրբիոյ մտաւարական, պետական եւ կուսակցական շրջանակներուն հետ: Կը հիմնէ «Բարեկամութիւն» հրատարակչատունը, որ լոյս կ'ընծայէ սուրիացի արաբ գրողներու եւ հայ գրողներու արաբերէնի քարգմանուած հատորներ:

Լուսանկարչական կադրածէն ներս, մեծանուն վարպետներու կարգին կը յիշուի իսթանպուլի լուսանկարիչ Արա Կիւլէրի անունը: Երկար տասնամեակներէ ի վեր Արա Կիւլէր քեդուն գործունէութիւնը ցոյց կու տայ այս մարդէն ներս եւ իր արուեստը կը գնահատուի բոլորին կողմէ: Հռչակաւոր լուսանկարիչը արժանացած է բազմաթիւ մրցանակներու եւ պարգևներու՝ իր գլուխ-գործոցներուն եւ ստեղծագործութիւններուն շնորհիւ: Ի լրումն այս բոլորին, Արա Կիւլէր վերջերս ընտրուած է դարուն լուսանկարիչը:

«Շնորհիւ»-ի հանդէսի «Շոքո Կիւլէր»-ի ընթերցողները Թուրքիոյ մէջ դարուն լուսանկարիչը ընտրած են Արա Կիւլէրը:

ԹԻԻԵԱՓԻ ԹԵՓԵԱՅԻԿԻ ԿԼԵՐՈՆԻՆ մէջ, վերջերս բացուած է Ե. Գոմփէքս Միլիթմետիայի եւ Ինքըրնէքի տօնավաճառը, որուն ընթացքին կազմակերպուած յատուկ հանդիսութեամբ յանձնուած է Արա Կիւլէրի մրցանակը:

Արա Կիլերի լուսանկարչության կեանքի այս պատուարեր հանգրդուանը ողջունելու համար, մամլոյ աշխարհէն եւ զանազան շրջանակներէ բազմաթիւ հեղինակաւոր ու հանրածանօթ դէմքեր փութացած են հաւաքոյթին: ԹԻԻԵԱՓի սրահին մէջ նախ խօսք ատած է «Ճորոկրաֆ» հանդէսի խմբագիր Նատիր Էտէ, որ ընդգծած է, թէ Կիլեր լուսանկարչական ասպարէզ ատաջնորդած է բազմաթիւ երիտասարդներ: Այս բեմ բարձրացած է հռչակաւոր արուեստագէտը, որ արտասանած է իր սրտի խօսքը: Վերջաւորութեան՝ «Ճորոկրաֆ» հանդէսի արտօնատէր Շէրիֆ Անթէլլի յանձնած է Արա Կիլերի յուշանուէրը: Ներկաները ջերմ ծափերով դիմաւորած են Ա. Կիլերի այս պատուարեր նոր յաջողութիւնը:

ՌՈՒԲԷՆ ԱՎԱՐՈՆԵԱՆԻ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄԸ

Ռուսիոյ խորհրդարանի նախագահի պաշտօնակատարին հրամանագիրով՝ խորհրդարանի պարզելներով պարզեւատրուած են Մոսկուայի Պետական Ակադեմիայի ֆիլիսոփայի «Ա. Փ. Պորոտին»-ի անուան քառեակի անդամները: Անոնց կարգին եղած է նաեւ հայազգի ջութակահար Ռուբէն Անարունեան, որ արժանացած է պատուոյ շքանշանի:

Պարգեւատրուած մնացեալ անդամներն են՝ Վալերի Պերլինսկի, Իկոր Նայտին եւ Անտրէյ Ապրամենկով: «Պորոտին»-ի անուան քառեակի անդամները պարգեւատրուած են երաժշտական

արուեստի զարգացման գործին մէջ իրենց ունեցած մեծ վաստակին համար:

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ Է ԱՅՎԱԶՈՎՍԿԻ ՄԷԿ ՀԱՆՐԱՅԱՅՏ ՊԱՍՏԱՌԸ

Վենետիկի քանգարանի «Միքստինենան» սրահին մէջ վերջերս կազմակերպուած է Հայաստանի մշակութային զանօրոն նուիրուած ցուցահանդէս մը, որ ներկայացուած են Բ.Ա. 2000 թուականէն մինչեւ 19րդ դարու վերջը ընդգրկող 104 ստեղծագործութիւններ:

Ներկայացուած արժէքաւոր իրերուն մաս կազմած է նաեւ Յովհաննէս Այվազովսկիի «Միսիսարեան հայրերը սուրբ Ղազարոս կղզիին մէջ» պաստառը: Յուցանմոյշը Հայաստան վերադարձուելէ ետք պարգուեր է, որ պաստառը վնասուած է, վրան եղած է դանակի երկու կտրուածք: Ըստ մասնագէտին, այդ կտրուածքները հետեւանք են վանկայիզմի:

«HSBC ապահովագրութիւն Հայաստան» ընկերութիւնը, ամբողջականօրէն կատարելով իր ապահովագրական պարտականութիւնները, Հայաստանի Հանրապետութեան նախարարութեան եւ Հայաստանի պատմութեան պետական քանգարանին առիթ տուած է անմիջապէս ձեռնարկել պաստառին վերականգնման գործին: Այժմ հանրայտ կտաւը վերանորոգուած է եւ կրկին կը գտնուի Հայաստանի պետական պատկերասրահին մէջ:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՂԿԱԶԱՂ՝ ԱՆԳԼԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ

Ամերիկեան յայտնի հրատարակչատուն մը՝ Wayne State University Press, վերջերս լոյս ընծայած է հայ գրականութեան նուիրում մոր հատոր մը: Սոյն ժողովածուն առաջին հատորն է հայ գրականութեան 2500 տարւան ժառանգութիւնը անգլիախօս հասարակութեան ներկայացնող ծաղկաքաղերու եռա-հատոր շարքի մը, որ կը կրէ The Heritage of Armenian Literature խորագիրը:

Առաջին հատորը, որ լոյս տեսած է Դեկտեմբերի վերջաւորութեան, յատկացում է Անգիր քանահիւստութեան եւ Ոսկեդարու գրականութեան: Անոր էջերուն տրուած են Ոսկեդարու գրականութեան հեղինակներուն կենսագրութիւնները, իրենց գործերը եւ անոնց գրական յատկանիշները:

Այս շարքին Բ. հատորը, որ տպագրութեան պատրաստ է, կը բովանդակէ ճորդ դարէն մինչեւ 18րդ դարերու գրականութիւնը, իր ստորաբաժանումներով՝ Արծաթե դարը, Շարականագիրները, Նահապետ Քոչակի հայրենները, Սասնայ Ծռեր դիցազներգութեան շարքը, ժողովրդական եւ աշուղական գրականութիւնը: Այս ծաւալուն հատորը, որ լոյս պիտի տեսնէ 2000ի աշնան, կ'ընդգրկէ 97 հեղինակներու կենսագրութիւնը եւ գրական ժառանգութիւնը:

Իսկ Գ. հատորը պիտի ընդգրկէ Ջարթօնքի շրջանի, Իրապաշտ շրջանի եւ Գեղապաշտ շրջանի գրողները եւ իրենց գործերը, մինչեւ խորհրդահայ գրականութիւն:

Հայ գրականութեան նուիրում այս համապարփակ շարքը միակն է իր տեսակին մէջ: Հայ բազմադարեան գրականութեան գոհարները անգլիախօս գրասէր հասարակութեան եւ հայ անգլիախօս մոր սերունդին ծանօթացնելու գծով ան մեծ բաց մը պիտի գոցէ:

Այս ձեռնարկին հեղինակներն են՝ Դոկտ. Edward Franzuk, Գաբրիէլ Պամմաճեան եւ Նուրիան Ուզումեան:

ՀԱՅԱՋԳԻ ԵՆՈՒՍՈՒՖ ՔԱՐՇ "WHO'S WHO"Ի ԱՌԱՋԻՆ ՀԱՐԻԻՐԻՆ ՄԷՋ

«Գանատիւն փրէս» լրատու գործակալութիւնը պաշտօնական հաղորդագրութեամբ մը տեղեկացուց, թէ 20րդ դարու ամենէն ազդեցիկ դերակատարները որոշելու դժուար պարտականութիւնը ստանձնած Միջազգային "Who's Who" հրատարակչութեան խմբագիրները ամենէն ազդեցիկ առաջին 100 անձներուն շարքին դասած են հայագրի լուսանկարիչ Եոստոֆ Քարշը, որ մահու առջեւ գտնուող միակ զանաւանդին է: Ցանկին վրայ կան Այնրշայնի,

Փիքաստյի, Չորչլի, տը Կոլի եւ ձերոյ զիմանկարները լուսանկա-
այլ քաղաքական գործիչներու, րելով: Եռուստի Քարչի ստորագ-
արուեստագէտներու, մտաւորա- լութիւնը կրող զիմանկարներուն
կաններու եւ նոյնիսկ մեծատէր- ամենայնականչականը Ուինս-
ներու անուններ: քըն Չորչլի լուսանկարն է:
90ամեայ Քարչ իոչակաւոր Ե. Քարչ ներկայիս Պոսթըն
դարձած է աշխարհաւոչակ ան- կ'ապրի:

ԳԷՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՅԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ

Գ. Մ. Գ. Մրցանակի դափնակազմը կը յայտնէ, թէ բացուած է
2000ի համար նոր գործեր ներկայացնելու շրջանը:

Գ. Մ. Գ. Մրցանակի կ'ընդունի գրական թէ ուսումնասիրական
որեւէ նոր, անպիսկ կամ գիրքի չեւիճի փակ ցարդ լոյս չտեսած
գործեր՝ առ ի գնահատում եւ հրատարակութիւն:

Գրական, իմաստասիրական, պատմական, եկեղեցագիտա-
կան, քանասիրական եւ Հայ Մշակոյթի ալլ կալուածներուն վե-
րաբերող գործերը, հայերէն կամ օտար լեզուներով գրուած,
պէտք է դափնակազմին հասած ըլլան ամենաուշը մինչեւ 30 Ապրիլ
2000:

Անարուած գործերը պէտք է ըլլան մեքենագրուած եւ երեք
օրինակով:

Դափնակազմին կողմէ գնահատուած գործերը կ'արժանանան
հրատարակութեան:

Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ դափնակազմին
մաս կը կազմեն՝ Գերշ. Տ. Արքայաւորդ արք. Թրթռեան, Գերշ. Տ.
Զարեհ արք. Ազնաւորեան, Կիար Հրայ Տասնապետեան (արե-
նապետ), Կիար Պօղոս Սնապեան (արեւմտապի), Կիար Գեորգ
Գանդախարեան, Կոթք. Արմենակ Եղիայեան, Կիար Պեպօ
Սիմոնեան:

Դափնակազմի հասցէն-

Armenian Catholicossat of Cilicia

Antelias - Lebanon

ԴԻԻԱՆ Գ.Մ.Գ.Մ. ԴԱՏԱԿԱԶՄԻ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱՆՔ

«ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ»
- Աշխարհագրարի վերածեց՝ Զարեհ Եպս. Ազնաուրեան-
Հրատարակութիւն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան,
Ամբիլիաս, 1999, 128 էջ:



«ՆԱՄԱԿԱՆԻ»
- բանաստեղծութիւններ -
Վահրամ Թաթկեան, Պէյրութ, 1999, 94 էջ:



«ՅՈՒՇԵՐՍ ՉԵՉ ՅԻՇԱՏԱԿ»
- յուշագրութիւն -
Լուսին Ճէպէճեան-Պարսումեան, Հալէպ, 1999, 140 էջ:



**«ՌՈՔԵՐՏ ԱՆԴՐԷԱՍԵԱՆԸ
ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺ»**
- ուսումնասիրութիւն -
Շուշանիկ Ափոյեան, Ամբիլիաս, 1999, 150 էջ:



«ՏՕՆԱԿԱՆ»
- հազուեր խորհրդածութիւններ -
Միքայէլ Յ. Եսսուֆեան, Փասատենա, 1998, 390 էջ:



LA NOUVELLE CILICIE
- պատկերազարդ ուսումնասիրութիւն -
Հրատարակութիւն՝ «Վէորդ Մելիտինեցի» գրական մրցանակի-38
Ամին Ժիլ Իսքանտար, Ամբիլիաս, 1999, 144 էջ:

ԼԻՏԵՐԱՆ

Հաստատված առ 10.000 Լ.Ո.
Տարեկան բաժնեգին 40.000 Լ.Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

باكين
مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارثين كارنيك قزانيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԿԻՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր
ԳՕՂՈՍ ՍՆԱԳԵԱՆ

Խմբագրությունն անդամ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱՍՈՍԵԱՆ

Հասցե՝
Centre Culturel SHAGHZOYAN
Bordj Hammoud — Liban